

889  

---

12-64

3043

1881

613

Deposited - 1900  
MACTEC BANK  
E. B. Tappan  
Lancaster, Pa.

889

11-64 - 9330

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԹՕԻՏԻՍ

# ՅՈՎՀԱՆՆԱ ԲԱԲՈՒՀԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

—

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԳԷՈՐԳ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ



1002  
5635

2



ԻԶՄԻՐ

1881

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ՄՍԵՐԵԱՆ

գրք. թվ. Դասերը չեն յեղծորւա կարգու  
բւժն, 1880-81 թթ.

ՔՐԱՒԻ ԽՕԱՔ

Գ.Ա.Գ.Դ.Ի.Ս.Յ.Ի Թ.Ա.Ր.Գ.Մ.Ա.Ն.Զ.Է.Ն

Ձկայ անդ մը՝ ուր նպարավաճառի խանութները այնչափ լեցուած ըլլին մրտաուած թղթերով, որչափ Յունաստանի պզտիկ տէրութեան մէջ:

Հելլենական նոր գրականութիւնը թէպէտ հարուստ՝ բայց պէտք էնք խոստովանիլ որ ամենիկն բանի մը չձառայեր: Քանի մը երևելի գործերու քով՝ ամեն տարի չնչին թատրերգներ, քերթուածներ, անհամ թարգմանութիւններ կ'տեղան: Գպրոցի համբափներ ալ կան՝ որոնք կ'ելլեն Տ. Սօլօմոյի, Ա. Սուցոյի և Ա. Վալաօրիթիսի հաւասարելու երազով՝ տաղեր ու ոտանաւորներ կ'հրատարակեն: Իսկ յունական բնիկ վէպերուն թիւը հազիւ տասներկուքի կ'հասնի, որոնց մէջ առաջին կարգը բռնած է այս գիրքը՝ որ գրեթէ եւրոպական ամեն լեզուներու թարգմանուելով՝ մեծ վարկ և բնդունելութիւն գտած է: Երբ Յովհաննա բարուհին 1866ին հրատարակուեցաւ, կղերք յետին աստիճան զայրացած Պ. Էմմանուէլ Ռօթօիսի դէմ՝ ոտք ելաւ: Հելլենական Սուրբ Սինսօքը՝ եթէ ձեռքէն դար ողջ ողջ պիտի այրէր զանի, բայց բանադրանք մ'արձակելով դո՛հ եղաւ: Ասի աննշան պատիժ մ'էր հեղինակին համար, որ կղերք անգթութեամբ ծաղր ու ծանակ բրած և զան Գօփաիս լծին օձաձուկերուն նմանցուցած էր:

Յունական եկեղեցւոյն շանթերը կրակ շառին: Ամբողջ Յունաստան այս գիրքը կարգաչով՝ խնդալէն ճաթեցաւ. Աթէնքէ կ. Պօլիս և Տրապիզօնէն մինչև Գորֆու՝ հեղինակին բնտիր ոճը, զուարճախօսութիւնը, մտքի նրբութիւնը, կծու գարձուածքները կ'զոյլէին, և աս գովեստն ալ իրաւացի էր, վասն զի հեղինակը յաջողած էր օգտակարը հաճեցիկին, և պատմականը զուարճալիկին խառնելու:

Ընթերցողին կ'աղաչենք որ գիրքին իմաստը աղէկ ըմբռնէ: Հեղինակը ուզած չէ՝ զուարճախօսութիւն ծախել: Յանցանքը նկարագրած գարուն կ'վերաբերի որ ամեն տեսակ ծաղրելի, այլանդակ և յուսի գեպքերով լի էր:

1002

70 03

## ԱՄ ԽՆԹԵՐՅՈՒՆ

Հերոսով՝ Միլիտարի յաղթութիւնները և եգիպտացու-  
հիներուն այծերու հետ ըրած շուայտութիւնները զրելուն  
պատճառները իւր պատմութեան սկիզբը յայտնած է: Վեր-  
ջէն եկած պատմագիրներն ալ, Թուկիթիոս, Թասիթ, Սէն-  
Լիւք, Ժիպպոն, Կիզոկայն սոյն օրինակին հետեւելով՝ իրենց  
ամեն պատմութիւններու սկիզբը նախ ինքզինքնին արդարա-  
ցուցած են, ինչպէս բանահիւսք քերթուածին սկիզբը առ  
Մուսայն հրաւէր մը կ'կարգայ: Ես ալ այս պատմական ընդ-  
հանուր կանոնին հետեւելով՝ կ'փութամ ըսել թէ ինչ կեր-  
պով գացի Յովհաննա Բաբուհւոյն հանգստութիւնը վրդովե-  
լու, որ այնչափ դարերէ 'ի վեր կ'ննջէր: Կրօնական զգաց-  
մունքը շատ ծաղկած էր Արեւմուտք, այսինքն անանկ մար-  
դեր կային՝ որոնք ուրբաթ օրերը խեչեփառ կ'ուտէին և քա-  
հանաներու գօտին կ'պագնէին, երբ ես դեռ պատանի՝ Ի-  
տալիա գացի: Գիւղաբնակութիւնը ընդհանուր սովորութիւն  
եղած է հոն, ես ալ տարւոյն շատ ամիսները գիւղը կ'անցը-  
նէի, և աշնան երկայն գիշերները երբ խխունջները մերկ որ-  
թատունկերու վրայ կ'մագլխէին, երբ սունկերը շագանակելի-  
ներու տակ կ'բուսնէին, ես շատ անգամ այգեպաններու կրա-  
կին առջև կ'նստէի:

Այս գեղջուկներուն հետ ստէպ տեսնուելէս՝ որոնք միշտ  
սուրբ պատկերաց հրաշքներու, գերեզմանէն փախած ստուեր-  
ներու կամ քաւարանէն փստորած հոգիներու պատմութիւն-  
ները կ'ընէին միայն, ես ալ բաւական աւելորդապաշտ եղայ:  
Այնչափ շատ լսեցի թէ Բաբբ արքայութեան դռները կ'բա-  
նայ և կ'գոցէ, բարեկամաբար Հոգւոյն Սրբոյն հետ կ'տես-  
նուի, և նուիրական ոտքերն ալ թագաւորներուն պագնել

կ'տայ, այնչափ շատ լսեցի կ'քսեմ, որ ականջներս ալ խուլ-  
ցած էին, և զանի՛ իբր վերայեալ էակ մը, երկնից և երկ-  
րիս մէջ տեղ կախուած օդապարիկ մը կ'համարէի:

Ահա այս մտածմունքներով խելքս միտքս պաշարուած՝  
ձենովա կ'ընակէի, երբ յանկարծ 1848ի յեղափոխութիւնը  
սկսաւ որ ամբողջ Իտալիան սասանեց: Թէ կրօնքը և թէ քա-  
հանաները, ինչպէս ասիկա միշտ կ'պատահի Արևմտեան քա-  
ղաքական երկպառակութեանց մէջ, թագաւորներու և բռնա-  
ւորներու դէմ՝ արձակուած նղովքին մասնակից եղան: Արդէն  
քանի մը տարիէ ՚ի վեր դժնդակ ոգի մը այս տարաբաղդ թե-  
րակղզւոյն մէջ շրջելով՝ ամենուն սիրտերուն անհնազանդու-  
թեան և ազատութեան սէր կ'ներշնչէր: Գահերը խարխուլ՝  
կ'տատանէին, բայց թագաւորներու ակռաները աւելի ուժգին  
կ'բաղխէին:

Իտալացի ականջներու օտար և չարահնչիւն բառեր, ինչ-  
պէս՝ Սահմանադրութիւն, ազգային պահակ, մամլոյ ազա-  
տութիւն, ընչից հաւասարութիւն, ամեն կողմէ իժերու սու-  
լելուն պէս՝ կ'հնչէին: Կոյր հաւատքը՝ որ այնչափ դարերէ ՚ի  
վեր կոյրերու հետ ընտանեբար վարուելով՝ կ'քծներ, իբր  
նուստ մուրացիկ ամեն կողմէ վռնտուելով՝ դէպ ՚ի լեռնե-  
րը կ'փախչէր գիւղացիներուն խրճիթներուն մէջ ապաւէն  
փնտռելու՝ թէ և շատ անգամ զանոնք ալ գոց և անառիկ կ'գտնէր:  
Այն ինչայս խեղճը թափառիկ կ'շրջէր խաւարին մէջ, և ամեն  
մէկ քայլին կ'օհնէր, թագաւորները՝ որոնց զօրութիւնը անոր  
վրայ կ'կայանար, թագաւորները, կ'քսենք, կ'տատանէին: Ապս-  
տամբ ձենովան պաշարուած էր, ուումբերը տուններուն յար-  
կերը կ'խորտակէին, խեղճ բնակիչներն ալ սարսափած՝ այն  
ստորերկրեայ տեղերը կ'ապաստանէին՝ ուր ընդհանրապէս կահ-  
կարասեաց ամենէն գիւրբեկ բաները կ'պահուին, այն է շի-  
շերը: Ես ալ գիշերով մառանի մը մէջ կ'գանուէի տան մար-  
դեջու և գրացիներուն հետ՝ որոնք եկած էին Հելլենական  
դբօշակին ծալքերուն տակ ապաւէն մը գտնելու: Յիսունէն  
աւելի անձինք, այր և կին, իշխաններ և ձկնափաճառուհի-  
ներ, կոմսուհիներ և ամխավաճառներ՝ այս նեղ տեղը,

շիշերու և կուժերու, սխտորի և չոր թուղերու մէջ տեղ խառն  
ի խուռն դիզուած էին:

Վիկիթ օր էմմանուէլի մարդասպան ուումբերը իրենց բռնա-  
ւորական նպատակին չհասնելով՝ փոխանակ ընկերային ան-  
հաւասարութիւնը կործանելու՝ հին բերդերը կ'տապալէին, և  
իւր գունատ հպատակները եղբայրական սարսափով կ'միացը-  
նէին: Այս ստորերկրեայ ակումբին մէջ նախ մեծ տրոմու-  
թիւն մը և մահու լուծիւն մը կ'տիրէր: Բայց տունը հինգ  
գտնիկն ունէր, մառանին դմբէթները ամուր էին, և ում-  
բերէն չէին վախեր, անանկ որ շատ չանցու ընկերներուս ե-  
րեսը՝ որ մեր շուրջը դիզուած շիշերուն պէս կանանչ էր, կա-  
մաց կամաց աւելի մարդկային գոյն մ'առաւ: Աներկիւղ կը  
լսէինք դուրսի ումբակոծութիւնը՝ ապահով բլլալով որ մեր  
գլխերուն վրայ կախուած մահը այնչափ վար պիտի չիջնէր  
մեզ զարնելու համար:

Երբ վտանգը հեռացաւ՝ իտալացի լեզուները կամաց կա-  
մաց քակուեցան: Կամարին արձագանքը անիմանալի խօսքեր  
կ'կրկնէր: Աստուածածնայ մոմերու խոստմունքներ, Սուրբե-  
րու ուխտեր, անէծքներ, նղովքներ և պօմպարտած օրէին  
(ումբակոծողին) դէմ ալ սոսկալի հայհոյութիւններ կ'լսուէին:  
Բայց՝ ինչպէս Արիօսթոյի նկարագրած կռիւներուն մէջ՝ երբ  
երկու երեւելի դիւցազունք կռիւի սկսին, ուրիշները զէնքեր-  
նին վար գրած լռելեայն կ'դիտեն, նոյնպէս ալ հոս՝ հեազ-  
հետէ սկսան լռել երբ արբա Սէն—Մաթիէօ՝ սպիտակ մազե-  
րով ծերունի մը՝ և կազէթ տը Յէնի ծեր խմբագիրը տակառ-  
ներու վրայ իրարու գիմաց նստած՝ սկսան վիճիլ ազատու-  
թեան, թագաւորներու, յառաջադիմութեան և բարութեան  
վրայ:

Վտանգին մեծութիւնը, տեղոյն գիրքը այս վիճաբանու-  
թեան տարօրինակ ձև մը կ'տային: Արդէն հակառակորդնե-  
րը աղէկ պատրաստուած էին, ունկնդիրներն ալ բերաննին  
և ականջնին բացած՝ անոնց բոլորտիքը խոնած էին՝ ինչպէս  
կարթագիներցիք Ենէոսի շուրջը:

Իմբագիրը կ'հաստատէր թէ բոլոր այս սոսկալի աղէտք-

ները զոր կ'կրէինք կղերական ազդեցութեան արդիւնք են. արքան կ'սնդէր թէ այն արիւնը որ մեր շուրջը կ'հոսէր Աստուծոյ հաճելի զոհ մ'է: Սակայն ժամերը կ'անցնէին և վիճաբանութիւնը չէր լքնար: Երգիծարանութիւնները՝ երկու կողմէ մենամարտողներու սայրասուր թուրերուն պէս, իրարու վրայ կ'տեղային:

Ես ալ կամաց կամաց սկսայ այս խօսակցութեան բնականալ, ակամայ թմբուցութիւն մը պատեց վրաս, և եօթնևտասնամեայ գլուխս դբացիիս ծունկին վրայ դրած մոկի կ'ընէի՝ երբ յանկարծ այլանդակ պատմութիւններ ականջիս զարնելով՝ քունս աչերէս փակցուցին:

Աբբային յամառութենէ դիւրագրգիռ խմբագրին համբերութիւնը հատնելով՝ վերջապէս խօսքին ձեռք փոխեց: Ալ յուսահատելով այս բարի քրիստոնէին աչերը բանալ, որ խլուրդի պէս լոյսէն կ'վախնար, վիճաբանութիւնը ձգեց, և սկսաւ անոր պաշտած պատկերները իբր ծաղրելի և այլանդակ նկարագրել, բարերուն պատմութեան ամենէն աղտոտ և զաղիր էջերը բանալով գրուած բոլոր ամօթալի գործերը և ամեն արատները՝ օձի թոյնի պէս խեղճ արբային երեսք զարնել: Հետզհետէ մեզի ցուցուց ՊԷՆՈՒԱ Թ, ԿՐԷԿՈՒԱՐ Զ, ՍԻԼՎԵՍՏԻՆՍ Գ, որոնց երեքն ալ մէկ ատենուան մէջ իշխեցին և իբր եռագլխեայ Կերբերոս՝ զիրար կ'նզովէին և ամբողջ Իգալիան արեամբ կ'ողողէին. ՉԱՔԱՐԻԱ՝ որ հակոսանէից էութիւնը հաստատող աշխարհագէտները սյրելաուաւ, վասն զի ինք իր խելագատակին մեծութեամբ կ'կարծէր թէ Հակոսանէից հաւատալու համար՝ պէտք էր բնդունիլ նաև. որ երկու արև և երկու լուսին կայ: ՍՏԵՓԱՆՆՈՍ է՝ գերեզմաններու վատխառնիչը, որ իրմէ առաջ իշխող Փօրմօզա բարին գերեզմանը բանալով՝ անոր փտած դիակը ժողովքին առջև բերել տուաւ և հետք գատ վարեց: ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻԲ որ իւր կեանքը փիլիսոփայական քարը գտնելու յուսով անցուց, և վերջապէս գտաւ՝ ցանկ մը հրատարակելով, որուն մէջ ամեն մեղքի՝ այսինքն մարդասպանութեան, կուսապղծութեան և ուրիշ տեսակ ոճիրներու թողութիւն բնդունելու համար զատ

զատ գիներ որոշած էր: ՅՈՒԼԻՈՍ Գ՝ նոր Կալիգուլան, որ գաւաթներու մէջ և իւր սիրամուկ կանանց առջև իւր կապիկը կարտինալ անուանեց: ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԲ՝ որ սուրբ սեղանին գորգը սիրուհոյն ստիցք տակ կ'փռէր, սեղանին սկիհովք սիրուհոյն հետ կ'գինովար, և վերջապէս այս կնկան էրիկէն կամ սատանայէն սպանուեցաւ օր մը, ինչպէս կ'ըսեն պատմագիրները: Իրաւ է նաև որ սատանային կամ անպատուած էրկան մը գլխուն վրայ միևնոյն նշանը կար:

Ահաւասիկ ինչ որ կ'ըսէր ծերունին այն խոր լուծեան մէջ, որ երբեմն ձեղունի մ'անկմամբ կամ մեր շրջակաները ինկած ումբի մը պայթիւնովը միայն կ'ընդհատէր: Ունկնդիրներէն ոմանք խաչ կ'հանէին, ոմանք ականջին կ'գոցէին, իսկ կիները իրենց գոգնոցովը երեսնին կ'ծածկէին: Բայց ինչ եղայ ես, երբ անգութ ծերունին՝ արու բարերու ամօթապարս գործերը մի առ մի պատմելէ ետքը սկսաւ Յովհաննա բարուհոյն պատմութիւնն ալ ընել: Բարի մը շուայտութիւնները, յղութիւնը և հրապարակի վրայ ծննդաբերութիւնը, ինչ նախատինք, ինչ մեծ ամօթ:

Շատ չանցաւ արևը ծագեցաւ, ումբակոծութիւնները դադարեցան: Անառիկ ձենովան երեք օրուան պաշարումէ ետքը անձնատուր եղաւ և յեղափոխութեան մեծերը բռնաւորի յանձնեց, ինչպէս կ'անուանէին այնատեն Վիքթօր էմմանուէլը:

Վաճառականները, ազգային պահակներու ծախալ թեմուները և պարիթոնները՝ որոնք իրենց այտերուն սնդոյրը սրբէլէն ետքը միջին գարու սուրերը մէջքերնին կապած փողոցներու մէջ ազատութիւն կամ մահ կ'երգէին, ուսանողները՝ որոնք կ'պարծէին թէ բռնաւորին գունդերը իրենց գասագիրքերով պիտի կրնան ցրուել, ամենքն ալ թաղաւորական զէնքերու առաջին նշոյլով աներևոյթ եզան ինչպէս բուճըր՝ երբ արևը կ'ծագի: Իգալուհիք անգամ որոնք այնչափ դրօշակներ բանեցած էին և իրենց խոստովանահօր խրատները կ'իշէին, ամեն անգամ որ սպայ մը հրապարակի վրայ զանոնք կ'պագնէր, միւս այտերնին կ'ներկայացնէին: Քանի մը յրէն, կարմիր դրօշակ, ազատութեան երգեր, մարտիրոսն

բու արիւն, գնտակներ և աւերակներ, ամեն բան մոռցուեցան, բայց ես իմ բարուհիս չէի կրնար մոռնալ: Անկէ վերջը շատ անգամ Յովհաննային տխուր ստուերը՝ ձեռքը մեռածին տղեկ մը բռնած՝ քունիս մէջ կ'երևէր: Յորեկը ամեն կերպիւ կ'աշխատէի՝ իւր տեսակին մէջ եղական այս դիւցաղնուհւոյն վրայ տեղեկութիւններ առնելու:

Վարժապետներուն, ծառայներուն, գերեզման փորող գեղացիին, ինձմէ մէկ սու մուրացող գէր Գաբիւսէնին անգամ կ'հարցնէի: Մտնող ժամեր կ'անցնէի դրափաճառներու խանութները, մուկերուն կրծած հատորներու փոշիները հոտուտելով՝ և իմ բարուհւոյս հետքերը գտնելու յո՞ւսով: Սակայն այս հետքերը իդպիոյ քահանաներէն անանկ սղէկ աւրուած էին՝ որ շատ անգամ կեսարի անծեղին պէս *Tampus et labor abeunt* գոչելէն վերջը, հետաքրքրութիւնս անօթութենէ մեռաւ հացի փշրանք մ'անգամ չգտնելուն համար:

Քանի մը տարի վերջը Պերլին գացի:

Իեռ ծխափողի, գարեջուրի և հասարակաց պարահանդէսներու սովորութիւնը չէի գիտեր, հետևաբար օտար ուսանողներու մէջ՝ որոնք միշտ զբաղեալ կ'երևին, ես մեկուսի և անզբաղ կ'կենայի: Չանձրութիւնը և պարապ կենալը, աղէկ գիտած եմ, սիրոյ չքսնք միակ՝ այլ գլխաւոր շարժառիթներն են, նոր սիրոյ մը տեղ հին սէրը կ'ըրբեն: Ասանկով Յովհաննա Բարուհւոյն յիշատակը դարձեալ նորոգեցաւ սրտիս մէջ:

Տօն օրուան մ'առաւօտուն, այն ինչ Պերլինի երկինքը՝ կարծեմ թէ ուզելով Մովսէսի բնագրին խօսքը արդարայնել, իւր ջրվէժները կ'բանար, ես առանձին թանգարան մը մտայ, և ասդին անդին ժուռ գալէ ետքը բնդարձակ սրահի մը մէջ կանկ առի՝ ուր միջին դարու աստուածաբանական գիրքեր ձերմակ թանձր փոշուով պատած էր՝ ինչպէս մեռեալները սաւանով խաղաղ և խորուհկ քունով կ'ննջեն:

Պանիրի հոռէն Չուիցերցիք իրենց հայրենիքը կ'յիշեն, յարզի հոռէն էշերը իրենց ախոռը, ծաղիկներու հոռէն սիրահարներն ալ իրենց սիրուհիները կ'յիշեն . . . այս հին

թուղթերու հոռն ալ Բարուհւոյն յիշատակը միտքս բերաւ, «Հոս ըսի, փոշելից կոյտը նշմարելով, հոս պիտի գտնեմ այն առեղծուածքին ելքը որ զիս այնչափ կ'տանջէ»:

Թանգարանապետէն հրաման ինդրեցի որ այս գիրքերը խառնեմ և քուրջ մ'ուզեցի սրբելու համար, և սկսայ հատարէ հատոր, գլխէ գլուխ, էջէ էջ՝ դիւցաղնուհւոյս հետքը փնտռել: Երբ գործի սկսայ, հասկցայ թէ Յովհաննայի գործերու պարզ պատմութիւնս ընթերցողներուն շատերուն համար որչափ չոր և անհամ պիտի երևի, որոնցմէ շատերն անոր անունը անգամ չեն գիտեր: Ուստի որոշեցի ներածութիւն մը գնել և գիրքին միւս մասին մէջ միջին դարու և մասնաւորաբար իններորդ դարու եկեղեցական փիճակը պատմական ձեւով նկարագրել:

Բանահիւսներու, գրագէտներու և արուեստագէտներու շնորհիւ, չկայ ատեն մը, երկիր մը որ աշխարհիս ստեղծմանէն մինչև այսօր ամենէ ճանչցուած չըլլայ: Իւրաքանչիւր դար, իւրաքանչիւր ազգ՝ մեզի շէնք մը թողած է որ այն ատենուան մարդերը կ'նեղկայացնէ: Հրէաները՝ Սուրբ Գիրքը ձգած են, Եգիպտացիք՝ բարդերը, Յոյները՝ իշխականք: Եւայէն՝ որուն սէրը Մովսէս և Միլթոն երգած են, մինչև Միմոստէ, տյն վկայուհին՝ որուն Շաթ օպրիան անթառամ պսակ մը հիւսած է, այս շղթան բնդհատուած չէ: Չկայ անանկ ատեն մը ուր ճամբորդը ապաստանի, գետեզր մ'ուր մօտի առանց ծանօթ և խնդումներս դէմքեր գտնելու, առանց բարեկամներու հանդիպելու որոնք իրեն ձեռք կարկառեն, առանց հանդիպելու իւր ծարաւ չուրթերուն ջուր տուող Ռաքէլ մը կամ իրեն օթեան բնձայող Նաօլիքա մը: Բայց ի՞նչնք մեր Բեկասէն որ պայտերը կորուսած չէ դեռ, և իմացնենք որ ամեն մարդ կ'ճանչէ նահապետներու մօրուքը, Յոյն փիլիսոփաներու վերարկուն, Մակեդոնական փառանքները, Հռոմէյեցի պոռնիկներու խարտեաչ կեղծամը, Հիւսիսային բարբարոսներու պիտակաւոր մուշտակները, քրիստոնեայ մարտիրոսներու հանգուցաւոր չուանները, և ինչ որ գրած և մեկնած են պուէտները և գրագէտները զոր վարժարանի կամ թարգմանութեան մէջ կարգացած և մեկնած են:



Աւելի ազէկ ճանչուած են Միջին դարի վերջերք եղող երկաթապատ դիւցազները և ճերմակ գգեսպաներ հազած դիւցազնուհիները, ինչպէս Սմատիս, Թրիոթան, Գէօր-Տը-Լիօն, Տաճարահանները, Ապենսերածները, Իօլանաները, Հէրմիսները, և Արմիոները: Անոնց զինանշանները, զէնքերը, սիրահարութիւնները, քաջագործութիւնները ճանչուած են Վալթեր Սքօթի վէպերու, Վիքթոր Հիւկոյի տաղերու, Ռօսինիի և Մէյէրպերի օբերաներու շնորհիւ:

Բայց վեցերորդ դարէն մինչև մետասաներորդ դարը, Հռովմէական վերջին կայսրէն մինչև ասպետը, որոնք էին մեր մուրրակին բնակիչները, ինչ կ'ընէին, ինչ կ'ուտէին, ինչի կը հաւատային, ինչպէս կ'հազուէին: Ան միայն կրնայ այս հարցմանց պատասխանել՝ որ պատմութիւնը իրեն արհեստ ըրած է, իրեն պարտք համարած է միջին դարու պատմագիրներու ահագին հաւաքածոյները, փձուն առասպելները, և կրօնաւորներու փոխունքները խառնելու, զորս Միւրաթօրի Միջին դարու գրականութեան ամալի անապատները կ'անուանէ:

Եւ ալ այս անապատներու մէջ թափառեցայ Յովհաննայի հետեւելով: Այն ճամբորդին պէս՝ որ հեռաւոր տեղեր երթալով ամեն մէկ գացած տեղէն իւր պանդխտութեան մէջ մէկ յիշատակ կ'ժողվէ, ես ալ նոյնպէս այս յաւիտենական մոռացման դատապարտուած այս հատորներէն իբր յիշատակ հաւաքած եմ բազմամեայ սովորութիւններու նկարագրութիւն մը, տարօրինակ կարծիքներ, ռամկական աւելորդապաշտութիւններ, կռապաշտութեան հետքեր, վերջապէս ինչ որ նոր պատմագիրներու աչքէն սպրդած էր, որոնք ընդհանուր տեսականի մը հետեւելով՝ և կամ ուզելով իրենց ծառայած կուսակցութիւնը պատմութեան միջոցաւ արդարացնել, ո՛չ ժամանակ ունեցած են և ո՛չ միջոց այս տեսակ մանրամասն իրերը նշանակելու: Միջին դարու տղմուտ վտակներու եղերքէն ժողոված այս պզտի քարերով աշխատեցայ կոթող մը կանգնել, որ կարենայ այս խաւարչուտ ատենուան հաւատաբիւ պատկերը ընծայել: Ըստ իս՝ այս նիւթին վրայ գրուածները ամենուն գիւրամատչելի կերպով գրուած չէ: Չկայ գիրք

մը որ այն տանուան բարքերը և սովորութիւնները քաջ նկարագրէ, ինչպէս Թելեմաքի Սրկածները կ'նկարագրեն Դիւցազնական Յունաստանը, Շաթօպրիանի Մարտիրոսները Հռոմ և անկուսի և Իվանիօէ անկիլիական ասպետութիւնը:

Եւ ալ գիտնալով որ այս վերէր ասակ ծանր աշխարհիւն մը, և ասակ աշխարհիւն մը ընդէրէ ասելի սարքէ շքոյնուելա համար, ջանացի բռն պատմական ճշտութեան մասին զանոնք գերազանցել: ՅՈՎՀԱՆՆԱՍ ՌԱՐՈՒՀԻՈՅՆ ամեն մէկ մտք, գրեթէ ամեն մէկ բուռ ժամանակեց գրաբեռի մը վայոյնեան վրայ հասարակած է, ջանական պատմութիւնները այն արեւուստ վնասներու ժամանակագրութիւններէ բազմաթիւ են, հրաշքները միջին դարու Սրբոց վարդերէն, ճեւեռոն նկարագրութիւնները էթնոգրի, Սլոնիի նամակներէն, Առասածաբանական այլոնորակ կարծիքները այն արեւուստ հեղինակներէն, ինչպէս Սրբի Սկօպր, Հիւսթար, Ռապան-Մար և ուրիշ շարքէ: Վազաթի, շէնթի, զէնթի կամ կերպիւորի ամեն նկարագրները մանրամասն կերպով ճշմարէտ են:

Այս ճշտութիւնը պահած եմ ժողովուրդը յարգելու համար: Ժողովուրդը յարգելը թէպէտ ընտիր առաքինութիւն մ'է, բայց ընթերցողներուն չբաւեր որոնք կ'պահանջեն նաև որ հեղինակները իրենց քոն չբերեն: Տպուած թուղթերը՝ ժիւսքիամի տերևներուն պէս Յունացի վրայ քնաբեր ազդեցութիւն մ'ունէին: Կ'երևի թէ այս պատճառաւ է որ շատերը չեն ուզեր այս գիրքերը թղթատել, և առանց ձեռք դպցնելու՝ մեր մատենագրութեան պատուները ամբիծ և անարատ իրենց ժառանգորդներուն կ'թողան:

Անկիլացի մատենագիր մը, կարծեմ թէ Սուիթի կ'պատմէ թէ չեմ գիտեր ո՞ր տեղի մը բնակիչները այնչափ անտարբեր և այնչափ անզօյ են, որ հետերնին խօսուած աատեն երբեմն պէտք է պզտի գաւազանով գլուխնուն զարնել որ չքնանան:

Ես ալ Յոյն ընթերցողին անտարբերութեան գէմ հակաքնաբեր դեղ մը մտածեցի: Դիրքին ամեն մէկ երեսը անակընկալ վիճարանութիւններ, զանազան համեմատութիւններ, չսուած ոճեր գործածած եմ:

Ամեն մէկ գաղափարին դրեթէ շօշափելի ձև մը տուած եմ, աստուածաբանական ամենէն ծանր խնդիրները ոսկեզօծ ժապաւէններով և բոժոժներով զարդարած եմ, սպանիկ պարուհիի մը գոգնոցին պէս: Իրելու այս կերպը՝ զոր Պայրն՝ Անկլիա մոցուցած է, Հէն՝ Արմանիա, Միւրժէր և Միւսէ Ֆրանսա, իդալական գրականութեան անկման ժամանակի պուէտներու գիւտն է: Ասոնք Տանթէի և Բեթրարքի հաւասարելու յուսահատելով՝ աւելի դիւրին համբայ մտածեցին չէ թէ փառաց հասներու՝ այլ հասարակութեան հաճելի քլլալու համար: Այս գրականութիւնը ճիշտ այն սիրամուլ կանանց կ'նմանի, որոնք գեղեցկութենէ զրկուած և աւուայէ աւելի տարիք ունենալով ամեն կերպ հնարքներ կ'բանեցնեն շարով, ժպիտներով, կեղծ ու պատիր խոստմունքներով՝ չէ թէ մաքուր սէր մը այլ հանդիսականներու բաղձանքները, տուփական հաճոյքը քրքրելու:

Չեմ ուզեր հոս այս տեսակ գրականութեան դովեստը բնել, այլ կ'յուսամ թէ այս տեսակ աղով միայն կարելի է պատմութեան ամենէն անհամ կտորը համեմել, այն է՝ միջին դարու եկեղեցական պատմութիւնը: Հռչակաւոր խոհարար մը, կարծեմ Վաթէլ, կ'պարծէր թէ այժ մը կամ մուկ մը անգամ անանկ արուեստիւ կրնայ համեմել՝ որ ուտողը մատերն ալ կ'լիզէ:

Ես ալ ինքզինքս խիստ վարպետ պիտի համարիմ, եթէ որ և իցէ համեմանքի մը շնորհիւ կարող քլլամ չէ թէ հաճելի բնել այլ քիչ մը համոյցնել միջին դարու կրօնաւոր մը:

Խօսքս չվերջացուցած հարկ կ'համարիմ, քանի որ Յունաստանի մէջ կ'գրեմ, ինքզինքս արդարացնել դիրքիս մէջ շատ տեղ գործածած ազատութեանս համար: Շատ անգամ իրերը իրենց բուն բառով անուանած եմ, փոխանակ առաքինի գրագէտներու պէս լիրբ կամ անառակ բաները դարձուածքներով յայտնելու: Կրնայի դիւրաւ յաջողիլ եթէ ես ալ Վօլթէրի, Պայրքնի, Գասթիի և ուրիշ շատերուն գրած այս տեսակ գիրքերուն մէջ գործածած ոճերնուն հետեւէի, բայց ես երկար բարակ խօսքերէն չեմ ախորժիր: Ըստ իս ինչպէս

աղբ ծովուն, նոյնպէս ազատութիւնն ալ այս տեսակ գիրքերու մէջ անհրաժեշտ է: Ան որ Օրլէանի օրիորդը, Տօն ժուան կամ 16երորդ դարուն իդալիացի բանահիւանները կարգացած է, կարծեմ չկրնար բսել թէ ժան Բաբուհին կիտամերկ է, այն որ միջին դարը գիտէ, ան որ ժամանակագիրները, Եկեղեցւոյ Հարց գիրքերը կարգացած է, անտարակոյս պիտի խոստովանի թէ աս գիրքը ճիշտ Այի Վասիլիի երազած կոյսին կ'մանի, որ կուսութեան մարմարիոնեայ պատուանդանին վրայ դրուած պատկառելի արձանի մը պէս կ'կանգնէր, որ եւ է տենջանքի, որ եւ է հպուսի բոլորովին անտարբեր:

Գուցէ շատերն ալ բարկանան թէ ինչ մեծ համարձակութեամբ միջին դարու Արեւմտեան և Բիւզանդեան եկեղեցական տեղմը կ'խառնեմ: Բայց անաչառ բնթերցող մը կրնայ դիրաւ համոզուիլ որ այս մասին գիրքիս մէջ ամենեւին կուսակցութեան ոգի չկայ: Թէ Արեւմտեաց և թէ Արեւելքեաց ապուշ բնթացքները միեւնոյն անաչառութեամբ և միեւնոյն անտարբերութեամբ նկարագրած եմ ինչպէս նշաւակած եմ նաև միջին դարու աստուածաբաններու ցնորքները և գերմանացի դասախօսներու թուիքները:

Հոգս չէր ամենեւին, և եթէ ծաղրելու բան մը նշմարելի՝ ալ օձիքը չէի ձգեր առանց նայելու անգամ թէ այս բանը վանքի կամ ահագէմիայի մը մէջ պահուած է, քահանայի մը վեղարով կամ փիլիսոփայի մը վերարկուով ծածկուած է:

Կրօնական կամ փիլիսոփայական իմաստները աշխարհիս ստեղծմանէն մինչև ցայսօր միշտ անտարբեր կերպով նշանակուած են: Այի Վասիլ, Բասդալ և Շաթօպրիան քրիստոնէութիւնը պաշտպանած են, Լիպանիոս, Վօլթէր և Սթրաուս անոր դէմ յարձակած են յանուն մարդկութեան կամ փիլիսոփայութեան, սակայն ամենքն ալ մեծ եռանդեամբ գրած են և ինչպէս իրենք ալ կ'հաստատեն իրենց կրօնական կամ փիլիսոփայական սկզբանց վրայ լիովին համոզուած էին:

Բայց ամեն անգամ որ աս նիւթին վրայ՝ գիտմամբ և համոզմամբ գիրք մը կարգամ՝ իսկոյն Իզիտօրի այս խօսքը կը յիշեմ որ իր ժամանակակից աստուածաբաններուն համար

գրած է, «Փառասիրութենէ մղուած՝ անանկ կ'անւայնեն թէ համաձայն չեն երկնային եւ խելքէ վեր իրերու մասին»:

Ուղղափառ եկեղեցւոյ արդի արարողութեանց վրայ ըրած դատողութիւններու գալով՝ կ'ըսեմ թէ ինչ որ ըլլայ մարդու ներքին համոզումը, աստուածութեան արտաքին պաշտօն մը (culte) ամեն տեղ և ամեն առեն հարկաւոր սեպուած է: Պարզ քրիստոնեան եկեղեցի կ'մտնէ, հոն մխիթարուելու համար Արօքալիսի յայտնած արքայութեան դոհարները և աղանանդները յուսարով փիլիսոփան կ'մտնէ և հոն կ'մտածէ անհունութեան, իսկականի և մարդու ճակատագրին վրայ: Երկուքն ալ այս նուիրական վայրէն դուրս կ'եղնեն մխիթաւորուած և Յիսուսի այս խօսքերուն ճշմարտութիւնը կ'ըմբռնեն. «Մարդս միայն հացով ջայպիլը»: Բայց այս պաշտօնը իւր նպատակը լիովին կատարելու համար պէտք է որ մարդկանց գաղափարներու, բարուց և սովորութեանց համաձայնի, որոնք քաղաքակրթութեան պարզ փոփոխմունքներովը կամ օրըստ օրէ եղած յառաջադիմութեամբ միշտ կ'բարգաւաճին և ուրիշ ձևեր կ'առնուն: «Ճաճարը, կ'ըսէր Շաթոպրիան, պէտք է որ միշտ անշարժ մնայ, բայց իւր զարդերը խամանակին համեմատ օղէտք են փոխուիլ.»

Արեւմտցիք շատնց ՚ի վեր այս ճշմարտութենէ համոզուած աշխատեցան ինչ որ մեր ժամանակակիցներու ճաշակինչ էր համաձայներ՝ եկեղեցիներէն արտաքսել: Պատարազը մէկ քառօրդ կ'տեէ, ծումապահութիւնները անտանելի չեն, քահանաները աղէկ կրթուած են, պատկերները աչոյց հաճելի են, երաժշտութիւնն ալ ականջները կ'հրապուրէ: Ուստի ամեն մարդաւանց մեծ օգնութեան և առանց զըլուանքի կրնայ աղէկ քրիստոնեայ ըլլալ, բայց մենք Յոյներս՝ ինչպէս ոտարէները իրենց ժայտերուն՝ մենք ալ միջին դարուն սնտոի աւանդութեանց հաւատարիմ մնացած ենք: Մեր պատարազը, ինչպէս Այի Վասիլիի օրով, երկու ժամ կ'տեէ և ոչ ոք կ'երթայ Բահանաները՝ ինչպէս Պօղոս առաքեալին օրով՝ նշնպէս ալ այսօր երկրիս աղբանոցներէն ժողովուած են, և ոչ ոք անոնց խրատներուն ականջ կ'գնէ: Կրօնաւորները պարտին ծով պա-

1009  
5835

հել, կամ պահք բռնել, և ոչ մէկը կ'ծովէ կամ կ'պահէ: Պատկերները ահաւելի են և ոչ ոք զանոնք կ'հանգուրէ, իսկ մեր եկեղեցական ռեգային ձայներուն դալով՝ կարծեմ թէ անօգուտ է խօսքը անգամ ընելու: Այս ամեն բանէն կ'հեռուի որ միւս քրիստոնեայ ազգաց մէջ, մենք միայն (զոնէ կրթեալ մտք) զըրկուած ենք չէ թէ հաւատքէ, վասն զի աս զըրկումը ընդ հանուր դժբաղդութիւն մ'եղած է, այլ արտաքին պաշտօնէ (culte), պաշտօն մը՝ որ ինչպէս ըսինք վերը մեծ օգուաներ ունի, քանի որ մարդուս յիշեցնել կ'տայ թէ մարմնաւոր շուարճութիւններէ զատ ուրիշ զուարճութիւններ ալ կան: Ըստ իս ամեն անգամ որ գոթական եկեղեցի մը շամարներուն տակ ծուեր դրած եմ, ամեն անգամ որ Ռափայէի պատկեր մը կամ Մօզարի կամ Ռօսալիի նուիրական երգ մը լրած եմ, միշտ սրտիս մէջ կրօնական զգացմունքը վերստին ծնած է, և եկեղեցական պատմութիւնը մոռնալով կայլեէտին պէս գոչած եմ, «Eppur si muove»:

Ընդհակառակն երբ մեր եկեղեցին մտնենք, ուրիշ բան մը չենք զգար այլ շտապաւ գուրս ելլելու բաղձանք մը: Կոյր մը կամ կամաւ աչքերը գոցող մը միայն այս բաներու ստուգութիւնը կրնայ տրանալ կամ մերժել: Եթէ կան մեր մէջ անանկ խոհեմ անձեր որոնք կ'մտածեն թէ պէտք ենք դատարկ եկեղեցիներ, տղէտ և խոյտառակ կղեր մ'ունենալ, եթէ կան մարդեր որոնք կարծեն թէ քիթը զԱստուած փառաբանելու համար ամենէն յարմար գործիքն է, Վարք սրբոցը նորատի աղջկանց համար բարոյական գիրք մ'է, էհ, ան առենինչ ըսեմ, ես ալ անոնց համամիտ կ'ըլլամ եթէ որ մը խելքս գրուխս դայ. շատեր ալ կան՝ որոնք կ'ճանչնեն թէ իրաց այս վիճակը գէշ է, սակայն կ'պնդեն թէ պէտք է յարգել զան՝ մեր երախտագիտութիւնը յայտնելու համար եկեղեցւոյն, որ օտարին լուծէն մեզ ազատած է, այն եկեղեցին՝ որով կ'յոսանք որ մը՝ վաղ կամ անագան՝ հասնիլ այն մեծ նպատակին, այն է Եպիսոսի և Թեապիայի աղատութեան:

Աս ինչ տեսակ անհեղեղ երախտագիտութիւնը պատուար և նշաւակեալ, և միջին դարու



Թողունք այն եկեղեցին որ մեզ ազատեց, երբ պէտք ենք  
 բնդհակառակն աշխատել անոր վէրքերը դարմանել և վայել-  
 լուչ կերպիւ զարդարել: Անոնք որ կ'ջանան եկեղեցին իրենց  
 քաղաքական դիտաւորութեանց գործին բնէ, կարծեմ կը  
 մոռնան թէ ալ հրաշքներու ժամանակը անցած է, թէ արևը  
 ալ կանկ չառնուր, և թէ մեր քահանաներուն ռնգային ձայ-  
 ները կարող չեն մեր վտարանդի և օտարին լուծին տակ հե-  
 ծող հայրենակիցները մեզմէ զատող պարիսպները կործանել,  
 ինչպէս ինկան երկրովի պատերը Յետևի շեփորներովը: Այս  
 խօսքերը կ'ըսեմ չէ թէ գիրքը արգարացներու համար զոր  
 բնթերցողին ներողամտութեան յանձնած եմ, այլ ծուռու-  
 մուռ մեկնութիւններէ խոյս տալու համար: Իսկ քննադատ-  
 ներու գալով կ'յիշեցնեմ թէ ինչ որ պատմած եմ և ինչ որ  
 գրած եմ անժխտելի վկայութիւններու վրայ հիմնուած են:  
 Բարոյականի, բարոյականութեան, կամ բարոյացման (ինչ ա-  
 նուն կ'ուզեն թող տան խմբագիրները) անուամբ եղած ան-  
 հիմն և անորոշ բողոքումները ո՛չ միայն բան մը չեն նշանա-  
 կեր, այլ նաև Անկիտացի բանահիւսին այս խօսքերը յիշել կու-  
 տան մեզ. «Միայն անբարոյական մարդիկ բարոյականի վրայ  
 կ'խօսին»:

### ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՍՆ

Որ որ առասպել մը պետէ՛ հա-  
 րէ եղէ՛ որ երայ խորը թափանցելով պատ-  
 մութեան մը պիտի բարեւ հան :  
 (Vallet de Viriville, Études  
 sur l'alchimie.)

Ինչպէս Տանթէ վիրգիլիտոէ առաջնորդուած էր, ես ալ  
 միջին դարու ամենէն խորը թափանցելու ատենս՝ Պիւռոնը ա-  
 ռաջնորդ պիտի առնեմ այս սահուն ճամբորդութեան մէջ :  
 Չպիտի հետևիմ այն պատմագիրներու հետքերուն՝ որանք  
 թէպէտ իրենց սկեպտիկութեան վրայ կ'սպարծին, սակայն  
 շատ անգամ իրենց աղանդին հիմնական սկզբունքը կ'ու-  
 րանան : Հին Պիւռոնացիք ամեն բանի վրայ կ'կասկածէին բայց  
 չէին ուրանար և միշտ այս խօսքերով կ'վերջացնէին — «Ձեռք  
 գիտեր» : Այսօրուանները՝ ո՛չ միայն կ'ծաղրեն և անհնար կը  
 համարին ինչ որ տարօրինակ կ'երևի իրենց, այլ կ'ուզեն նաև  
 իրրև հաւատոյ մաս՝ իրենց թերահաւատութիւնը բնթերցող-  
 ներուն կլլեցնել :

Չկրնալով ճշմարտութեան հետքերը և ո՛չ տեղ մը գտնել  
 կ'յուսան թէ այս մերկ աստուածուհին՝ իրենց գիրքերուն մէջ  
 տպաւինած է, Եւային պէս մերկութիւնը տերևներով ծած-  
 կելով : Դժբաղդաբար աս տեսակ Պիւռոնաններուն ձեռքը  
 ինկած է Յովհաննա Բարուհէոյն պատմութիւնը, զոր առաս-  
 պելի տեղ գրած են :

Կնկան մը Սրբոյն Պետրոսի գահը բազմիլը՝ ամբողջ եօթ  
 դար իբր պատմական դէպք, իբր ճշմարտութիւն մը բնդու-  
 նուած է, և բարբուռ ժամանակագրութեանց մէջ՝ ամենէն ծանր  
 ժամանակագիրներէ ճանչուած և նշանակուած է : Յանկարծ՝ Կճրդ  
 դարուն սկիզբները՝ քանի մը բարեպաշտ պատմագիրներ, ո-  
 ռոնք կ'երևի թէ միջին դարու կրօնաւորներէ աւելի խղճա-

հար էին, տշխատեցան այս կնկան անունը բաբերու ցանկէն սրբել իբր կեղա և իբր արատ, և ինչ որ գրուած էր այս մասին՝ առասպելի տեղ գրին: Դիւրին է անաղան ուրացման պատճառը մակարերել, եթէ մտածեմք որ ատեն մը բաբերը՝ անյողգողդ և անսասան գահերնուն վրայ բազմած՝ ուր տգիտութիւնը և աւելարդապաշտութիւնը անառիկ պատուար մը շինած էին, իրենք գիրենք արդարացնելը թէ անօգուտ և թէ անարժան կ'համարէին:

Բայց երբ միջին դարու մշուշը փարատեցաւ և հերետիկոսները, վերջէն ալ փիլիսոփաները սկսան եկեղեցական պատմութեան գիւտանքը խառնել, վայրահաջութեան կամ պարսաւի նիւթ գանելու համար, Սրբոյն Պետրոսի յաջորդները արժան սեպեցին այս կինը մտադարմին հրէշի մը փոխելու, և անոնք որ այս դիւցազնուհւոյն փառաւոր գործերը անմահացուցած էին՝ ծեր և ցնդած վայրահաջներու տեղ գրին:

Անոնց յարարեւ շանքերը մտածմբ իւրիք յաջողեցան՝ թէ վերջէն այս նիւթերու մասին ամենուն ցցուցած անտարբերութեամբը և թէ քանի մը ծոյլ պատմագիրներու թեթևօլիկութեամբը: Ասոնք աւելի դիւրին գտան ըսել թէ ժան Թ. իւր կնամարդի բնաւորութեամբը այս առասպելին հնարուելուն պատճառ եղած է, քան թէ որդերէ կրժուած ահագին հատորներու և ալտոտ ձեռագիրներու փոշին կլլելով յոգնիլ, ուստի ամենէն դիւրին ճամբան բռնեցին և հասարակութեան կարծիքն ալ գրաւեցին: Ես ալ նախ դիտաւորութիւն չունէի այս երկու կողմի դրագէտներու Բաբուհւոյն էութիւնը հաստատող կամ ժխտող փաստերուն արժէքին վրայ խելք թափել, այլ կ'ուզէի հաւատարմաբար և ճշդիւ իններորդ դարու կրօնքը, բարքերը և սովորութիւնները նկարագրել: Վերջէն ալ մտածեցի թէ շատ մը լատին հեղինակներու գործերը խորունկ կ'ընանան թանգարաններուն մէջ, և ոչ ոք կ'երթայ անոնց քունը վրդովելու:

Այն ժամանակագիրները՝ որոնք Յովհաննայի յիշատակը մինչև մեզի հասցուցած են՝ շատերը քահանաներ կամ կարգաւորներ են և աւելի հետաքրքրականը այն է՝ որ իրենց գործերը բաբերու ձօնած են:

Բաբերն ալ յօժարակամ կ'ընդունէին այս ձօնը, և մտքերնէն անգամ չէր անցնէր թէ՛ կին մը սուրբ աթոռին վրայ նստած ըլլալուն սուրբ աթոռին պատիւը արատաւորի:

Այսօր մէկ կողմէն ջերմեռանդ կաթողիկոսները ամենևին չեն ընդունիր Բաբուհւոյն պատմութիւնը և զան ծագրելի և պիղծ գրպարտութիւն մը կ'համարին, բայց կ'մտնան թէ այս գրպարտիչները կարգաւորներ են և վեղար կ'հագնին: Միւս կողմէն ալ կղերային իշխանութեան թշնամիները այս խեղճ կնկան անունը առնելով՝ իբր ամօթ և նախասինք բարութեան ելքեղ կ'ապառակածեն: Ինչ է ուրեմն այս փոփոխման պատճառը և ինչու այնչափ յամառ կերպով կ'ջանան այս դիւցազնուհւոյն անունը պահել որուն վրայ մեր նախահայրերը մեծ հիացմամբ կ'խօսէին: Միթէ՞ մեր հայրերէն աւելի նուազ կ'յարգենք ի գական սեռը, միթէ՞ միայն մեքենական արուեստներու մէջ յառաջացած ենք և կանանց արժէքը աւելի արդար կերպով կ'կշռենք: Այնչափ բարեկրօն քահանաներէ վերջը՝ որոնք բաբուհւոյն սանդաղները պագին կենդանութեան ատեն՝ և մեռնելէն վերջն ալ փոշին՝ միայն նորերուն մէջ հերիախիտ Դրիւյէ համարձակած է ըսել:

«Յովհաննա խոհեմ, լեզուանի և գեղեցիկ ըլլալուն՝ առաքելական աթոռը՝ որուն վրայ այնչափ տգէտ և աղտոտ կրօնաւորներ նստան, աւելի պատիւ ստացաւ քան թէ անպատուութիւն:» Կերևի թէ Աստուած զուր տեղը շատոնց ՚ի վեր մարդկանց խելքը գլուխը բերելու համար՝ ջրհեղեղ, կրակ, բորոտութիւն և ժանտախտ զրկելէ վերջը՝ ալ ձանձրացած արտաքին նշաններով իւր բարկութիւնը յայտնելէ դադրած էր և հոգը անգամ չէր ընէր որ երկրի վրայ զինքը ներկայացնող բաբերը հերիախիտ, ամբարիշտ, անաստուած, կնամոլ և մողէնայ ըլլան, ուստի չենք հասկնար թէ ինչ պատճառաւ պիտի չներէր որ խեղճ Յովհաննա ալ այս խումբին մէջ գտնուի:

Պետք է ըսել նաև թէ այն դարուն մէջ, ինչպէս կ'ըսէ

Չերմեռանդն Պարօնիուս, «Յիւսուս և առաքեալները խորունկ կ'ընանային, և ամեն կողմէն ուժգին մրրիկներ փչելով եկեղեցւոյ նաւակը ըն'դմերու կ'ջանային»:

Մէկգի ճգեհնք կրօնաւորներու զառանցանքները և նայինք թէ «Յիսուս և առաքեալները խորունկ քնացած ատեն» դժուար էր որ կին մը ասնայի զգետտներ հաղած քահանաները խաբէ և Սուրբ Պետրոսի բանալիները գողնայ:

Նայինք հիմա թէ ան ատեն Հռովմ' ինչ փիճակի մէջ կը գտնուէր: Աւելի վեր չելլելու համար՝ միայն Յովհաննայի և հետևեալ դարին կանկ առնենք: Այն աստիճանն բոլոր պատմագիրներու ըսածին նայելով՝ «Արևմտեան ընկերութիւնը քահանաներու փառաստիքութեամբը, ծակաչքութեամբը և խայտառակութեամբը շատ գէշ փիճակի մէջ կ'գտնուէր: Ապա կանտիժիւնը այն աստիճանի հասած էր որ ամեն տեսակ ոճիր անպատիժ կ'մնար: Բարերու ընտրութիւնը բռնի կ'կատարուէր: Շատ անգամ երբ երկու հակառակ կուսակցութիւններ չմիաբանէին ընտրութեան մասին՝ երկու բաբ կ'ընտրէին. ուսմիկը գլուխին կ'հաւքէին, որ քարերով և բիրերով կ'կուռէր: Յաղթուող բաբը խեղանդամ ընելով բանտ կամ Տիբեր գետը կ'նետէին: Յովհաննա մեռնելուն պէս Անաստաս քահանան որ թէպէտ ժողովքին մէջ նզովուած էր, Պրանսայի դեսպաններուն միջոցաւ քանի մը խուզարարներէն կ'յաջողի բաբ ընտրուել, գունդ մը զինուորի գլուխը կ'անցնի Սուրբ Պետրոսի եկեղեցին կ'վազէ, գունդը կ'խորտակէ, ժողովքին արձանագրութիւնները կ'այրէ, վերջէն Սէն-Փան-Տը-Լաթրան եկեղեցին կ'վազէ, խոյրը Պէնուայի պատկառելի զլխէն կ'յափշտակէ կ'առնէ, և հովահան գաւազանը խեղճ ձերունւոյն կ'անակին վրայ կոտրտելէն վերջը, աքացի հարուածներով զան գուրս կ'վանտէ, և բարական աթոռը կ'եղնէ: Ասանկ բաներ միշտ կ'պատահէին և ան ատենուան բարերէն շատերը կամ կեղծ բարերը (pseudo-pontifes) ինչպէս կ'ըսէ Պարօնիուս, «Իրականերու վրայ քայլելով սուրբ աթոռը կ'եղնէին»:

Ասոնք որ կ'վախէին բռնի բաբ ըլլալ, խորամանկութիւն կամ կաշառք կ'գործածէին: Մարէն Բ. Թոսկանայի կոմսէն

գնեց խոյրը, Ֆորմօզա՝ Սիօլէթի դքսէն՝ Պուլիարներէ կորզած ստակներով: Պօնիֆատ 2, նողկալի հրէշ, կ'գրէ Պարօնիուս, թէպէտ աթոռէն վար առնուած էր մարդասպանութեան և շնացողութեան համար, նոյն օրը սուրբ աթոռին հետ մէկ տեղ ոճիրներուն թողութիւնն ալ գնեց, բայց շատ չանցաւ թունաւորուած գտնուեցաւ, կ'ըսեն ոմանք, թէ և Պարօնիուս գինովութեան հետեանքներէն մեռաւ կ'ըսէ:

Մէկ խօսքով բարերու ընտրութիւնը հասարակաց հրապարակին վրայ կ'կատարուէր ոսկւով, բիրերու հարուածներով և արինհեղութեամբ: Շատ չանցաւ գործերը փոխուեցան, բայց չէ թէ բարեկարգութեան մասն, Սուրբ աթոռը նիզակէ աղէկատի ինկաւ: Հրաշագեղն Թէօտօրա և իւր երկու աղջիկները, Մարօզի և կրտսերն Թէօտօրա Հռովմ' մէջ պաշտուած միակ Երրորդութիւնն է: Ասոնք միայն բարերը աթոռը կ'նստեցնեն, կամ անոնց մէջքերը գօտի կ'կապեն . . . շատ անգամ վիզերնուն կ'անցնեն: Կարտինալները, եպիսկոպոսները, հիւպատոսները, բաթրիկեանները, ամենն ալ կ'խոնարհին ասոնց աժօթալից ծիրանւոյն ծոպերը պապներու համար:

Ինչ կ'ընէիր, ո՛ր էիր ան ատեն, ո՛վ ամենասուրբ, բայց ամենաթշուառ եկեղեցի, կ'գոչէ Պարօնիուս կարգինալը Երեմիայի պէս, ինչ կ'ընէիր երբ Հռովմ' այս լիրբ և լկտի պողնիկներուն ամենափոքրիկ նշաններուն կ'հնազանդէր, որոնք թեմերը կ'բաժնէին, բարեր կ'ընտրէին և իբր վերջին աստիճան խայտառակութիւն, իրենց հոմանիւնները, կամ պոռնիկութեան պտուղ եզող զաւակները Սուրբ աթոռոյն վրայ կ'նստեցնէին»: Բարքերը կ'ամաքին, բռնութիւնը կ'վերցուի, և այն ընտրողները որոնց սիրտը ատեն մը գաւազանի հարուածով միայն կ'առնուէր, հիմա համայններով կ'հրապուրուին: Երբ Թէօտօրայի և աղջկանցը անխոնջ շուրթերը չեն բաւեր ամբօխին ծարաւը յագեցնել, ասոնք սկսան Հռովմ'ի բոզանոցներու կիսամերկ պոռնիկները իրենց օգնութեան կանչել, և աս նուսատ խուճիկն գլուխը անցած, կիսամերկ յաւիտենական քաղաքին փողոցները կ'վազեն, եկեղեցիները և գինետունները կ'մտնեն և իրենց կուսակիցներ կ'ժողվեն: Ասով հետզհետէ

ութը բաբ բնարուեցան որոնց ամենքն ալ այս կինեաւն սի-  
րահարները կամ զաւակներն էին, և այս բարերը՝ ժէնէպար  
եպիսկոպոսը Apostatique կ'անուանէ և ոչ թէ apostolique :

Անկիրոյ էտուար թագաւորը իւր տէրութեան եպիսկոպոս-  
ներուն գրած մէկ նամակին մէջ այսպէս կ'իտօի. «Հռովմի փո-  
ղոցներու մէջ միայն գինեակներ և լիտի մարգեր կ'աւանդին :  
Քահանաներու սենեակները բողբու և սոգամականներու որ-  
ջեր եղած են : Բարին պալատին մէջ անգամ ամեն գիշեր Մէ-  
ռալինի վայել տափական խնջոյքնէր կ'ըլլան : Փոխանակ ծա-  
մերդներու և սաղմոսերգերու, միայն բարոսեան երգեր և  
պարոզներու ազմուկներ կ'ըսուին » :

Այն ատենուան բարուց սպականութեան մէկ վկայութիւնն  
ալ Քլէրէ անուամբ կրօնաւորի մը քարոզէն կրնանք հասկնալ .  
«Ատեն մը, կ'ըսէ, սատանան չարերը մի առ մի կարթով կը  
բռնէր, հիմա ահագին վարմի մէջ գունդ գունդ կ'բռնէ : Ա-  
տենօք ամենքն ալ կ'կարգուէին, հիմա փողոցներուն մէջ շու-  
ներու պէս լիտի բաներ կ'ընեն : Ատենօք ծերացած, մաղերնին  
ձերմկցած սարկաւազներ չէին գիտեր՝ ինչ որ այսօր տանն  
և հինգ տարեկան տիրացուները չեն ամշար բնելու լրբօրէն,  
Ամենքդ ալ միջնորդ, ծակաչք վաշխաւուներ, հայհոյիչ, կո-  
ղոպտիչ, սատանայի թիկնապահներ եղած էք, որ ձեզի դժու-  
քին ահագին կաթսային մէջ պիտի եփէ, ուր ակումներնիդ  
պիտի կրճատէք » :

Յլոտօար Տը Ռէմս ժամանակազրին քսածին նայելով այն  
ատենուան քահանաները ոչ միայն գինեատուները կ'արբէին  
այլ եկեղեցիներու գաւթները գինետուն քրած էին, ուր  
հանգիստաւոր օրեր գինին առատ և ուղիսօրէն կ'վազէր : Շատ  
եկեղեցիներու և վանքերու խորանին ետին՝ գինիի տակառ-  
ներ գրած էին : Պատարագիչ քահանաները Սուրբ Հաղոր-  
դութենէն յառաջ փոխանակ ծով պահելու, շատ անգամ  
սեղան ելած ատենին՝ այնչափ լեցուած կ'ըլլային միտով և  
գինիով որ կ'սկսէին փոխել և Յիսուսի մարմինը Սուրբ Աե-  
ղանին վրայ կ'թափէին, և ասիկայ ոչ միայն պարզ քահանա-  
ներու՝ այլ նաև ոսկեհուռն շուրջառով պատարագիչ վարդա-  
պետներու ալ կ'պատահէր :

Խեղճ օրէնադիրները հասկցան որ կղերք կարգի կանոնի  
խօթել և անոր բարոյականը շտկել անկարելի է, ուստի կա-  
նոն մը դրին որով աշխարհականներուն կ'արգիլէին որ քա-  
հանաները եթէ բուն իսկ յանցաւոր անգամ ըլլան՝ մտքեր-  
նէն անգամ չանցնեն թէ յանցաւոր են. «Եթէ տեսնէք, կ'ը-  
սէ այս կանոնը, որ եկեղեցական մը ձեր կինը կ'պագնէ, պէտք  
էք կարծել ե՞տ ասանկ կ'ընէ զան օրհնելու համար» :

Կղերք այս աստիճան ճամբէ ելած էր : Եթէ տղիաութիւնն  
ալ բոսս չափ չունէր : Գործը այնչափ խայտառակութեան հա-  
սաւ, որ օրէնք մը դրին՝ որով ամեն քահանայ ստիպուած  
էր ապացուցանելու թէ Հայր մերը կ'հասկնայ :

Դէրէ՛ զոր վերը յիշեցինք արդէն, կ'ըսէ թէ՛ «Շատ մը  
գողեր հաղորդուելու դիտաւորութիւն ունենալով՝ բայց վա-  
խելով նաև որ գողցուած նիւթերէն խոստովանահայրը բա-  
ժին կամ մաս չուղէ թողութիւն տալու համար, թափառիկ  
քահանաներուն կ'դիմէին : Աս քահանաները ոչ իզալերէն գի-  
տէին և ոչ լաղիներէն, այլ միայն իրենց գիւղին ռամկական  
լեզուն կ'իտօէին և գիւղէ գիւղ կ'ըլլէին, ու շատ աժան գի-  
նով, շատ անգամ շիշ մը գինիի, մեղաց թողութիւն կ'ծա-  
խէին » :

Այս տեսակ օրինակներ շատ կան, ևս ալ առանց նպա-  
տակի կամ հմտութիւն ցուցնելու համար գրած չեմ, այլ  
որպէս զի ընթերցողը համոզեմ թէ անանկ ատեն մը՝ ուր  
բաբերու ընտրութիւնը խառնաշփոթ բան մ'էր, ուր պոռնիկ-  
ները միայն կ'իշխէին, քահանաները տգէտ եւ ժողովուրդն  
ալ անբան անասուններու խումբ մ'էր, խորամանկ, վարպետ,  
և յանգուզն կին մը որ մանկութենէ թ վեր իւր սեռը պա-  
հած էր առնայի զգեստներով, և հրապարակաւ աստուածա-  
բանութիւն դաս կ'սար, ասանկ կին մը՝ կ'ըսեմ, կրնար գի-  
րաւ աս տգէտ, անբան, և գինովութենէ նուստացած քա-  
հանաները խաբելով քթերնէն բռնել :

Բայց ինչպէս կրցաւ Յովհաննա անչափ ատեն իւր սեռը  
պահել :

Պատասխանը գիւրին է, եկեղեցական պատմութեան մէջ :

Քրիստոնէութեան առաջին օրէն անանկ բարեպաշտ կիներ զտնուեցան որոնք վանքերը մտան կրօնաւորի վեղարով: Աըր-բուհի Թեքը առնացի զգեստով՝ Սէն — Բօլի բնկերացաւ ա-նոր ամեն ճամբորդութեանցը մէջ: Մարկէրիթ լա Բէլաժիէն կարգուած գիշերը հարսանեկան սենեակը ձգելով՝ կրօնաւոր-ներու վանք մը քաշուեցաւ անունն ալ Բէլաժիէն գրաւ: Ե-թէ եկեղեցւոյ տարեգիրներուն ականջ դնենք ասանկ օրի-նակներ շատ պիտի տեսնենք, բայց մենք պատմութեան բն-դունած և հաստատած մէկ քանի օրինակները միայն մէջ բերենք:

Էօժէնի՝ Կալիէն կայսեր օրով՝ Աղեքսանդրիոյ կուսակալ Ֆիլիքի աղջիկը, բաւական տարի կրօնաւորներու հետ ապ-բեյէ վերջը յաջողեցաւ վանքին մեծաւոր ջնարուիլ: Ոչ ոք գիտէր իւր սեռը, մինչև որ օր մը կուսապղծութեան համար ամբաստանուելով՝ սոխնքը ցուցուց իբր անժխտելի ապացոյց իւր անմեղութեան: Ասկէ աւելի հետաքրքրական է Թէօտօ-րա անուամբ կնոջ մը պատմութիւնը: Ասիկա գիշեր մը իւր սիրահարին հետ անցընելէն վերջը, որ զինքը համոզած էր թէ «Աստուած կատուներու պէս մութի մէջ եղածը տեսնե-լու կարողութիւն չունի», հասկցաւ թէ Աստուծոյ գէժ մե-ղանչած է որ ամեն տեղ ներկայ է: Մոռցաւ իւր հարստու-թիւնը, տունը եւ կրօնաւորի վեղարով վանք մը քաշուեցաւ, բայց հոն ալ հանգիստ չգտաւ: Նորատի աղջիկ մը այս ան-մօրուս կրօնաւորին սիրահարելով՝ և չկրնալով հասկնալ թէ ինչո՞ւ վանական սովորութեանց հակառակ իւր սերը կ'մերժէ, ոխ պահեց և ուրիշ կրօնաւորի մը սիրահարեցաւ: Երբ տեսաւ որ փոքր կ'ուռի, խեղճ Թէօտօրան ամբաստանեց ըսելով թէ ան աս վիճակին հասուցած է զինք: Թէօտօրա բժուորովին ու-րացաւ, առանց ուզելու ինքզինքը յայտնել: Վանքէն վռն-տուեցաւ, օտարին զաւակը իբր իրը մեծցուց, թէպէտ կրնար դաաաւորներուն պզտի բան մը ցուցնելով այս զրպարտու-թեանէն ազատիլ: Երբ ապաշխարանքը լինցաւ, վանք դարձաւ: ուր մեծ հրաշքներ կ'ընէր, եւ նոյն իսկ գազանները անգամ կ'հնազանդէին իրեն: Մեռնելէն վերջը միայն իւր սեռը յայտ-նուեցաւ:

Մապիլիօնի Միւզէ իդալիէնը թղթատելով՝ պատմութիւն մը գտայ, զոր վեղարաւոր անաստուածը անձանօթ ժամանակա-գրութեանէ մը առած էր՝ Հէրէմպէր անուամբ կրօնաւորէ մը գրուած որ Բաբուհիէն գրեթէ երեսուն տարի վերջը Լօմ պարտիա կ'ապրէր:

Այս կրօնաւորին ըսածին նայելով՝ Արեքիս, Պէնէվէնի իշ-խանը երազին մէջ տեսնելով թէ Արևելեան եկեղեցւոյ գլու-խը կին մ'է, երազը Աստուծոյ մէկ յայտնութիւնը կարծեց և այս լուրը արտորնօք Կ. Պօլիս հաղորդեց դեսպաններու միջոցաւ: Քահանաները լսելուն պէս ապշեցան և յանկարձ պատրիարքին սենեակը մտան, և զան մերկացնելով տեսան որ այս նուիրական զգեստներուն տակ կին մը պահուած է, և իսկոյն պատրիարքարանէն բոլորովին մերկ վռնտեցին զան: Բայց եկու տես որ ամենին պատմագիր մը չկայ որ պատ-րիարք կնկան վրայ խօսք բացած ըլլայ, ասկէ զատ պատմա-գրօրէն կրնայ ապացուցուիլ թէ այն դարուն մէջ՝ Բիւզանդիոնի աթոռէն բռնի վռնտուող պատրիարք մը չկայ:

Ընդհակառակն Նիսէթաս՝ թէպէտ ներքինի էր Թէօֆանի ըսածին նայելով՝ պատրիարք մեռաւ: Անոր յաջորդը Բօլ, հրաժարականը տուաւ Թարասիոսը տեղը դնելու համար, աս ալ 806ին մեռաւ, սուրբի անուն ալ շահելով: Ասկէ վերջը Նիսէթօր՝ Հայ Լեոնէն վանքի մը մէջ բանտարկուելով մեռաւ, և ամեն պատմագիրերը կ'վկայեն թէ ամբողջ կեանքը աղօթ-քով և ծոմապահութիւններով անցուց: Ասկից կ'հետևի թէ Լաթինները իրենց մէջ տեղի ունեցած այս դէպքը ուղեցին Բիւզանդացւոց յատկացնել, և Հռովմի աթոռին ամբօրոյն Բիւզանդիոնի աթոռը արատել:

Պէտք է գիտել նաև որ Արևմտցիք (նոյն իսկ կրօնաւոր-ները, ինչպէս կ'հաստատէ Միւրաթորի) բոլորովին անխու-լու սովորութիւնը ունէին, և աս սովորութիւնը մեծապէս կ'օգնէր եթէ կին մը ուղէք իւր սեռը պահել: Հեղինակի մը ըսածին նայելով «Աստուծոյ ծառաները թէ մազերնին և թէ մօրուքնին կ'ածիլեն ՚ի նշան խոնարհութեան: Հռովմի մէջ գերիներն ալ ասանկ կ'ընէին», Ընդհակառակն Արևելքի մէջ



կ'կարծէին թէ քահանայի մը ածիլութիւնը մեղկութեան նշան է։ Մինչեւ անգամ մեծ մեղք սեպեցին որ Սրբեմատիք մօրուք քեն կրեր, կ'գրեր Նիզօլա բարը։

Վերջապէս Յովհաննա Գերմանացի կամ Անկլիացի է ըսելով՝ կ'յուսային թէ անոր բար ըլլալը պիտի ժխտեն։ Մեծապէս կ'սխալին։ Յովհաննա անանկ ատեն մը կ'ապրէր, ուր սուրբ աթոռը գեռ Հռովմէացի կարտինալներու բոլորովին յատկացած չէր, և Յոյներ, Սիրիացիներ, Թրէակեցիներ և Կօլուացիներ բար եղած են և ասոնցմէ շատերը Հռովմ' նոր եկած ըլլալով՝ լազիներէն անգամ չէին գիտեր։ Իսկ հանդէսի մը մէջ Յովհաննայի ծննդաբերութիւնը Լօնուա և Պլօնտէլ անգամ ընդունած են։

Բարուհւոյն պատմութիւնը հինգ հարիւրէ աւելի պատմագիրքեր հաստատած են, և ասոնցմէ շատերը անոր օրով՝ կամ անկէ քիչ վերջը կ'ապրէին, և թէ տեղը, թէ ժամանակը և թէ միւս ամեն պարագաները ճշգիւ գրած են։

Ահա պատմագիրքէն մի քանին յիշենք։

Նախ՝ ՄԱՐԻԱՆԻՍԷ սկիսինք։

Այս պատմագիրքը որ անատենուան սոխորութեան համեմատ՝ Սքօթիւս կ'անուանէր, Սկոտիացի ըլլալուն համար, իւր հայրենեաց լեռները ձգեց և ժող գարուն վերջերը Գօլօնեք գնաց, ուր կրօնաւորեղաւ, անկէ ալ Մայէնս գնաց ուր կեանքը ուսմունքով և ազօթքով անցուց։

Բարական աթոռը չափազանց կ'սիրէր, մինչև անգամ համարձակեցաւ Հանրի Դ կայսեր գծաթեան մէջ բարին կողմը բռնել։ Մարիանիւս այն կրօնաւորներուն չնամիր որոնց գիրքերուն ամեն մէկ էջերը աւանակութեամբ և սուտումուտ բաներով լեցուած են։ Իւր ժամանակակիցները զինքը այսչափ կ'սիրէին, որ Անկլիա, Սկոտիա, Ալմանիա կ'ապրծէին թէ իրենց քաղաքացին է, ինչպէ ատեն մը Եօթ քաղաքները Հոմերոսը իրարու ձեռքէ կ'յափշտակէին։

Եթէ ասանկ արժանահաւատ պատմագրի մը չհաւատանք, որ թէպէտ բարամու բայց կ'ստատովանի թէ Վեոն Դ.ի յաջորդեց Յովհաննա անուամբ կ'ինմը, որ Պետրոսի աթոռը նստաւ

երկու տարի, հինգ ամիս և չորս օր», որո՞ւ հաւատանք, որո՞ւ ականջ դնենք։

ՍԻԺԸՊԵՐ—Ժէմարու ըսուած պզտի քաղաքը ծնած, կրօնաւոր և պատուաւոր պատմագիր, որ միջին դարուն վերջերը կ'ապրէր, իւր տարեգիրներուն մէջ Յովհաննայի անունը կ'յիշէ պէտք եղած մանրամասն պարագաներով *sama est hunc Johannem feminam fuisse*, և այն որ բառ առ բառ թարգմանելով կ'նշանակէ, «կ'ըսեն թէ աս Յովհաննան կ'ին մ'է, զոր իւր մանրամաներէն մէկը կ'ճանչէր միայն, վերջէն յիշ մնաց և պզտի բարիկ մը ծնաւ։»

ՕՐԹՕՐ—Ֆրէսէնկի եպիսկոպոս, Գոնրատ Գ. կայսեր կրտսեր եղբայրը, և Հանրի Դ.ի թոռը, իւր տարեգիրներուն մէջ՝ որոնք մինչև 1146 կ'հասնին, կ'ըսէ, ժամ բարը կ'ըն մ'էր։ Միւսնոյն բանը կ'հաստատեն Ժիֆրիա Սըթիւր, և Կօալֆրուա Տը Վիթէրպ ժամանագիրքերը, որոնք նոյն ատենը կ'ապրէին, Յովհաննա Լէոնի և Պէնուայի մէջ տեղ կ'դնեն, ընթերցողին ալ փակագիծի մէջ կ'պատուիրեն որ այս կ'ինք բարբուր կարգը չդնէ։

ԺԳՐՈՐԳ գարուն՝ խել մը պատմագիրքեր Յովհաննայի վրայ կ'խօսին, բայց ամենէն աւելի ուշագրութեան արժանի է ՄԱՐԹԻՆԻՍ ԲՕԼՕՆԻՍ Դոմինիկեանին գրածը, որուն վրայ ժամանակակէց պատմագիրները մեծ դովեստով կ'խօսին։

Մարթինիւս տարիներով ժամ ի՞նչ և Նիզօլա Գ. բարբուր խոստովանահայրը ըլլելէ ետքը այս վերջինը զան Բօլօնիա դրկեց իրրե եպիսկոպոս։

Արդ՝ չեմ՝ յուսար թէ ասկէ զատ ուրիշ մէկը գտնուի որ թէ իր բնաւորութեամբ և թէ իւր պաշտօնովը ճշմարտութեան քաջ տեղեկանալու կարող ըլլայ։

Մեր գիտցածէն զատ մեզի կ'սարվեցնէ թէ Անկլիացի ընտանիքէ մը ծնած էր Մայէնս, և երկու տարի, հինգ ամիս, չորս օր բար ըլլալէ վերջը զաւակ ծնելու միջոցին հանդիսի մը մէջ մեռաւ, և մեռած տեղը առանց պատիւի թաղուեցաւ։ Բարերը, կ'յարէ, վերջէն այս փողոցէն չէին անցներ և Լադրանի մատուռը երթալու համար ուրիշ ճամբէ կ'անցնէին

Այս խօսքերէն վերջը՝ Մարթինիւս մեզի կ'պատուիրէ որ այս կինը բաբերու կարգը զոնենք:

Ընթերցողը կրնայ գիտաւ հասկնալ թէ ասանկ մարդու մը վկայութիւնը ինչ աստիճան բարուհւոյն հակառակորդներուն շիղերուն պիտի դպչէր: Ուստի այս խօսքերուն ազդեցութիւնը շնջելու համար ամեն ջանք 'ի գործ դրած են: Ու մանք կ'պնդեն թէ Մարթինիւս ինք անգամ չերնիր թէ հաւատացած ըլլայ իր պատմած բանին, ուրիշներն ալ կ'պնդեն թէ այս գրածը առասպել մ'է՝ որ զուարճանալու կամ ուրախութեան մը ատեն գրած է:

Ասանկ մարդու մը դէմ այս տեսակ զրպարտութիւններ ծաղրելի է:

ԱԼԼԱԹԻՈՍ Գիտցի, աւելի յարմար սեպեց բսել թէ Բարուհւոյն պատմութիւնը՝ Մարթինիւսի ձեռագիրներուն մէջ, Եկեղեցւոյ Թշնամիները այսինքն բողոքականները աւելցուցած են վերջէն. Հ. Շիֆֆլէյի կարծիքն ալ այս է, և բսածք հաստատելու համար կ'պնդէ թէ հօրը մատենագրանին մէջ՝ որ վերջէն այրեր է եղեր, Մարթինիւսի ձեռագիր մը տեսած է ուր Յովհաննայի վրայ խօսք մը չկար:

Ինչ անպիտան, ինչ ապուշ մարդեր են այս կաթոլի գրագէտները որ ամեն խօսքին շարունակ կ'պնդեն թէ ձեռագիրներու մէջ բողոքականներու մատը մտնելով՝ աւրուած են: Այլաթիոսի պէս սուրերես ըլլալ պէտք է մէկը բողոքականները զրպարտելու համար՝ որոնք ժՁ դարուն երեցան, թէ Մարթինիւսի տարեգիրներու մէջ անանկ դէպք մ'աւելցնեն, զոր այնչափ կաթոլիք գրագէտներ նոյն իսկ ժամանակագրին գիրքէն քաղած են բողոքականութեան երևան ելնելէն երկու դար վերջը: Մանաւանդ եթէ այս ձեռագիրներուն մէջ մատ խաղացուած է, աս ալ կաթոլիքներուն գործը պէտք է ըլլայ, որոնց քով կ'գտնուէին ձեռագիրները, և խել մը ամօթալից գործեր սրբելու և անհետացնելու ալ

<sup>1</sup> Ասի ճիշդ այս առակին կ'նմանի, «Անցեալ տարի զիս ինչո՞ւ նախատեսիր, կ'ըսէր գայլը. — Ես այս տարի ծնած եմ, կ'պատասխանէ գառնուկը:

պէտք ունէին: Խեղճ բողոքականները ինչպէս բրած կ'ըլլան, քանի որ աքսորուած էին, և մատենագրաններու դռներուն անգամ չէին կրնար մօտիլ: Նաև չկայ բողոքական մը որ ամբաստանուի թէ ձեռագիրները խառնած ըլլայ, այն ինչ կրօնաւորները իրենց պատմագիրներուն շատերէն անգամ՝ պարտաւորած են վանքերուն մէջ ասանկ կեղծ բաներ ընելուն համար:

ՊԵՐՆԱՐ ԿԻՅ, որ ժամ ի թ. ի օրով հաւատաքննիչ մ'էր, այսպէս կ'գրէ. «Միաքս դրի բաբերուն երեկի գործերը գըրել, ուստի խել մը ժամանակագրութիւններ կարդացի և համեմատեցի, ամեն բանի ճշմարտութիւնը քննելու համար, մանաւանդ դիտած եմ որ Հռովմի բաբերու ժամանակագրական դասակարգութեամբ՝ և ինչ որ աւելի ծանր է անոնց գործերուն մէջ անգամ՝ շատ տարբերութիւններ կ'տեսնուին»:

Այս յառաջաբանութենէ վերջը բաբերուն կենսագրութեան կ'սկսի, և Յովհաննան կ'դնէ՝ ուր որ պէտք էր դրուիլ և ճիշդ Մարթինիւսի գրածին պէս անոր պատմութիւնը կ'ընէ:

Արդ՝ անանկ պատմագիր մը՝ որ հին ժամանակագրութիւնները սրբագրելու եւ բանիբուն քննադատութեամբ իրարու համաձայնելու եռանդով վառուած էր, հաւատաքննիչ մը, Ալպիցւոց հալածիչ մը, որուն համար բարուհւոյն պատմութիւնը մեծ ամօթ և նախատինք կ'համարուի, ասանկ պատմագիր մը կ'ըսենք, կրնար երբէք իւր տարեգրութեանց մէջ արձանագրել՝ եթէ իր օրով ընդունուած չըլլար: Ընթերցողը կրնայ դատել:

Չգենք ուրիշ շատերը և գանք ԱՄԱԼԱՐԻՔ ՏՕԹԵՐԻ: Ասիկա 1363ին Իւրպէն է բարին նուիրեց Հռովմի քահանայապետներու ժամանակագրական դասակարգութիւն անուամբ գիրքը: Այս գիրքը Բարուհւոյն վրայ նոր տեղեկութիւններ կ'տայ, «Ի սկզբան, կ'ըսէ, առաքինօրէն վարուեցաւ, վերջէն շատ պարարտնալով՝ ցոփ կեանք մը վարեց, և իւր ծառաներուն մէկէն յղի մնաց»:

Չանց ընենք խել մը առանց արժէքի վկայութիւններ ձգենք Ամալարիքը, որուն գործերը Լէյաթի մատենագրան,

որդերը կրճած են և դանք ԲԵԹՐԱՐՔԻՆ որուն սիրահարուկաներգերը թէ մատենադարաններու և թէ իգալուհիներու սիրաներու մէջ պահուած են: Ասիկա Լօրի գերեզմանին վրայ կարագի երգը արտասանելէ վերջը Վենետիկ քաջուեցաւ, ուր իր վերջին օրերը անցուց, «Կայսերաց եւ բաբերու կեանքը» (մինչև Գրիգոր Թ) գրելով, ասոնց մէջ կ'գտնուի նաև մեր յաւիտենական Յովհաննան, ուր ուրիշ շատ մը մանրամասն պարագաներէ զատ կ'յաւելիւր թէ՛ Աստուած սուրբ աթոռին պղծուելուն սաստիկ բարկանալուն՝ ահագին մարտիներ դրկեց: Բէթբարքի օրով՝ Ֆիօրէնցայի մէջ կ'ապրէր Ժան Պօքաչիօ Տէքամէրօնի շնորհալից և հեշտամուկ հեղինակը, որ մինչև իր վերջին շունչը կանանց խորամանկութիւնները երգեց, և ծեր հասակին մէջ լազիներէն գիրք մը գրեց De claris mulieribus անուամբ, որուն մէջ Յովհաննա առաջին կարգը բռնած և Շամիրամի հետ բազդատուած է:

Հոս՝ պէտք է կանկ առնել: Այս երևելի կնկան պատմագիրներու ամենէ հուշակաւորները միայն յառաջ բերենք:

Ժե դարուն պատմագիրներէն՝ կրնանք մէջ բերել, Ա. ԹԵՕՏՕՐԻՔ ՏԷ ՆԻՒՄ, Ժան ԻԲԻ քարտուղարը, որ 1443ին Ֆիօրէնցա գտնուելով՝ գիրք մը հրատարակեց Կայսերաց առանձնաշնորհութիւններու եւ իրաւանց վրայ, որու շատ մը ծանօթութիւններ գրած է: Այս ծանօթութիւններէն մէկուն մէջ կ'ըսէ. «Յովհաննա Հոովմի յունական դպրոցին մէջ հրատարակու գաս սուաւ, ուր սուրբն Օգոստինոս ալ ատենոք գասախօսութիւն ըրած էր: Որչափ ատեն որ աղքատ էր՝ ուսման պարագայեցաւ, բայց երբ բաբ եղաւ, անատեն մեղկացաւ բոլորովին, և իր սենեկապաններուն մէկէն յղի մնալով՝ հանդիսաւօր օր մը արու զաւակ մը ծնաւ խաղաղութեան տաճարին մօտ՝ ուր ի յիշատակ այս գէպքին մարմարինեայ արձան մը կանգնեցին»:

Այս արձանին վրայ վերջէն պիտի խօսինք: Բ. ԺԱՆ ՇԱՐԼԸ ԺԵՐՍՕՆ, Բարիզի համալսարանին Դիւանապետը, որ մը Թարասքօն գտնուելով՝ Պէնուա ԺԳ.ի ներկայութեանը քարոզ մը խօսեցաւ Կայիքան եկեղեցւոյն ա-

ղատութեանցը վրայ և այսպէս ըսաւ, «Հոովմ ալ խաբուած է, քանի որ կին մը բաբ ճանչցաւ այնչափ ատեն»:

Գ. ԹԵՕՏՕՐ ԷՆԺԷԼԻՒՍԻՒՍ, ուրիշ շատ մանրամասն կէտերէ զատ կ'պատմէ թէ բաբուհոյն ծննդաբերութեան Ժամանակ սատարան օգին մէջ երևելով գոչեց.

Papa pater patrum peperit papissa papellum.

Գ. ՖԷԼԻՔՍ ԱՄԵՐԼԷՆ և ՄԱՐԹԷՆ ԼԸ ՖՐԱՆ կ'պատմեն թէ իրենց օրովը Յովհաննայի գրած պատարագի գիրքերը կը գտնուէին դեռ, ինչպէս նաև ծակ աթոռը որուն վրայ վերջէն եկող բաբերը կ'նստէին, որպէս զի նոր բաբուհի մը չքնտրուի դարձեալ.

Է. ԼԱՕՆԻՔՕՍ ԳԱԼՔՕՆՏԻԼ, Աթենացի, յոյն հեղինակ մ'որուն մէջ միայն դտայ բաբուհոյն վրայ քանի մը խօսք.

«Հոովմ բաբին վրայ խօսիմ՝ ձեզի: Երբ քուէարկութիւնը կ'ընենայ, և բաբը կ'ընտրուի, եկեղեցւոյ դուրս կ'անուանուի և զան ժողովքին մէջ կ'պահեն մինչև որ ուրիշները այս ընտրութիւնը հաստատեն, վերջէն զան ծակ աթոռի մը վրայ նստակցեցնելով կ'գան իր սեռը հասկնալու: Ստոյգ է որ կին մը Հոովմի բաբ եղած և յղի մնալով՝ կրօնական հանդէսի մը մէջ, կղերին և հասարակութեան առջև զաւակ մը ծնած է: Ասոր համար է որ կասկածի տեղի չտալու համար այս քննութիւնը կ'ընեն: Երբ ամեն մէկ կարտինալ զատ զատ կ'գայ և բաբին արական սեռը կ'ստուգէ՝ կ'գոչէ, «Մեր բաբը մարդ է» Այսպէս կ'գրէ Լաօնիքօս, բայց Հոովմայեցւոյ բացազան չութիւնը աւելի կարճ է: Փոխանակ ըսելու «Մեր բաբը մարդ է», պարզապէս HABET! (ունի) կ'գոչէին:

Ուրիշ շատ տեղեկութիւններ կրնանք գտնել Յովհաննայի վրայ անոր Ժամանակակից պատմագիրներէն, ինչպէս էնէ Բիքօլմինի, որ վերջէն Պիոս Բ. անուամբ բաբ եղաւ, և Ժան Հիւս՝ որուն վրայ պիտի խօսինք ետքը. Վեշտասաներորդ դարուն տպագրութիւնը ծաւալելով՝ բաբուհոյն պատմագիրները այնչափ շատցան որ մենք ալ կ'զարմանանք թէ որք առ-

ներք և զով ձգենք, ուստի ձենովայի դերձակին պէս կը-  
ներք որ Զատկի նախնթաց օրը շատ մը լաթեր շինելու ստի-  
պուած ըլլալով և ուրկէջ սկսելն ալ չգիտնալով՝ ճրագը մա-  
րեց և քնացաւ :

Աս միայն կ'ըսենք և իրաւունք ալ ունինք բերու Տօսի-  
թէյի հետ «Քանի որ պատմութիւնը այնչափ ապացոյցներով և  
այնչափ վկայութիւններով հաստատուած է, և վկաներէ շա-  
տերն ալ բարականներ են, յայտնի է որ ուրանալը մեծ ա-  
մօթ է :»

Եթէ բարուհւոյն հակառակօրդներուն մօտիկ ընենք, աս  
վկայութիւններու շատութիւնը մեծ նշանակութիւն չունի, վասն  
զի ժամակագիրերը սովորութիւն ունին փոխադարձաբար ի-  
րարմէ օրինակել, իրաւացի է՝ եթէ խնդիրը տարբեր չըլլայ :

Անկարելի է ենթադրել թէ բարամու Մարիանիւս՝ բարու-  
հւոյն պատմութիւնը ընդունած ըլլայ առանց քննելու, տե-  
ղեկանալու, մանաւանդ թէ վերջէն եկող պատմագիրներն ալ  
ամենեւին հերքած չեն : Ըսել է թէ անուրանալի ճշմար-  
տութիւն մ'է :

Ենթադրելով թէ միւս ժամանակագիրերը հոգ տարած  
չեն աններելի անտարբերութեամբ բարբուռ այս կեղտը սրբել  
ինչպէս կարելի է որ Պէրնարտ Կիւյ, որ այնչափ սխալմունք-  
ներ սրբագրած և քննած է, ոչ միայն բարուհւոյն պատ-  
մութիւնը ընդունած այլ նաև իր պատմութեան մէջ ալ ար-  
ձանագրած է՝ հերետիկոսներու ձեռքը զէնք տալով իր դէմ :

Թէօտօրիք Տը Նիէմ որուն վրայ արդէն խօսեցանք վերը  
և Հռովմի արքունեաց ամեն քսութեանց մասնակից եղաւ  
այսպէս կ'ըսէ «Հռովմի մէջ մարմարիոնեայ արձան մը կայ որ  
դէպքը եղածին պէտ կ'ներկայացնէ, այսինքն յղի կին մ'որ  
զուակ կ'ծնի : Այս արձանը Պէնուա բարը կանգնել տուած  
է որպէս զի աս գայթակղութեան յիշատակը ամենուն սրտին  
մէջ մնայ :»

Ուրիշ պատմագիրեր ալ կ'պնդեն թէ այս արձանը կռա-  
պաշտութեան դիցուհի մ'է : Բայց Պլոնտէլ անգամ այս կար-  
ծիքը կ'ըրէ և կ'ծաղրէ : Եթէ աս արձանը հին գեղարուեստի

մը բեկորն էր, չենք հասկնար թէ ինչու Սիքստու Ե. բա-  
բը Տիրբեր գետը նետեց, ան որ հնութիւնները շատ կ'սիրէր  
և այնչափ արձաններ և շէնքեր նորոգել տուած էր :

Միւս կողմէն՝ եթէ արձանը կին մը կ'ներկայացնէր բա-  
բը իրաւունք ունէր գետը նետել աս անվայել շէնքը որ բա-  
բութեան մշտնջենաւոր ամօթ մ'էր, և արուեստի ամենեւին  
արժէք մը չունէր :

Ասկէ զատ՝ Թէօտօրիք իր կենացը մեծ մասը Հռովմ ան-  
ցուց և սուրբ աթոռին կ'ծառայէր, ուստի եթէ աս առաս-  
պելը ինք հնարած ըլլար կամ Տիրբեր գետը պիտի նետէին  
զինքը կամ պիտի նզովէին :

Ուրիշ Յովհաննայի արձան մը ևս Սիէնի Մայր Եկեղեց-  
ւոյն մէջ քանի մը դար կեցաւ : Լօնօյ կ'ըսէ թէ ձով որ կոյր  
չէր, կրնար աս արձանը տեսնել Լէօնի և Պէնուայի արձաննե-  
րուն մէջ տեղ դրուած, տակն ալ այս արձանագրութիւնը փորագ-  
րուած ՅՈՒՂՆՆՆՆԱ Ը, ԱՆԿԼԻԱՅԻ ԿԻՆ : Հոս Հայր Նօէլ կ'ըսէ  
թէ, աս արձանը տգէտ եւ ցոյի քանդակիչի մը գործն է  
որ ուզած է կատակ մ'ընել :

Միամիտ քահանան կ'երևի թէ մոռցած է որ ան ատեն  
բարբուռ հետ կառակ ընողները ողջ ողջ կ'այրէին :

Վերջէն եկող ամեն բարբուռ աս խեղկատակ քանդակիչին  
մտացածին կարծիքը յարգեցին, և այս կինը կ'երևի թէ իբր  
օգտակար գէշութիւն մը սեպեցին : Ինչ որ ըլլայ, աս արձա-  
նը անսասան մնաց իւր պատուանդանին վրայ մինչև որ Յով-  
հաննայի անողք հալածիչը Պարօնիւս՝ Թօսքանայի դքսին  
միջամտութեամբ յաջողեցաւ մէջ տեղէն վերցնել տալ աս  
պատրուակաւ թէ հաւատացեալներուն գայթակղութիւն կ'տայ,  
կամ Մապիլիօնի ըսածին նայելով մարդու արձանի փոխել  
տուաւ, և Յովհաննա Ը. Անկլիացի կի'ն արձանագրութիւնը  
վերցնելով՝ Զաքարիա դրաւ :

Ընթերցողին ուրիշ մարմարիոնեայ վկայութիւն մ'է ևս պի-  
տի ցցունենք հիմայ :

Աս վկայութիւնը Հռովմ գացող բոլոր ճամբորդները կրնան  
հաստատել, և անոր սկիզբը և սովորութիւնը Սուրբ Աթոռին

հաւատարիմ ծառաներէ շատերը՝ ինչպէս Բլաթինա, Վադիկանի թանգարանապետը, Բանտուլֆօ կարտինալը և ուրիշ շատեր գրած են, թէպէտ Շիֆլէ և Ալլաթիոս կ'ուրանան:

Այս երկու վերջինները իրենց բարամուլ եռանդեամբ կը մոռնան թէ այնչափ քահանաներ, զորս իրենք ստախօս և խաբեբայ կ'ձևացնեն, Հռովմի աթոռին աւելի նախատինք կը բերեն քան թէ բար եղած կին մը:

Վերջ յիշուած պատմագիրերուն ըսածին համեմատ՝ բարին պալատին մէջ ծակ աթոռ մը կար կարմիր մարմարիոնէ, որու վրայ ժանի յաջորդ բարերը կ'նստէին իրենց առնական սեռը ապացուցանելու համար: Աս ապացոյցէն վերջը սրբոյն Պետրոսի բանալիները կ'ընդունէին: Աս անվայել արարողութիւնը մինչև վեշտասաներորդ դարը տևեց, և Ալեքսանտր Պօրճիա անգամ աս փորձին ենթակայ եղաւ:

Գորիօ՝ Միլանի պատմագրին վկայութեան համեմատ Ալեքսանտր դեռ սուրբ աթոռը չնստած՝ ստիպուեցաւ ծակ աթոռին վրայ նստիլ, թէպէտ չորս չափահատ աղայ ունէր՝ զորս պարծանօք կ'ցցուէր անոնց որ կ'գային ամործիքը բռնելու, և Լուքրէցիան ալ հոն է, որ անոր թէ կինը, թէ հարսը և թէ աղջիկն էր միանգամայն:

Լեոն Ժ.է վերջը աս ծաղրելի արարողութիւնը վերցուեցաւ, բողոքականները շատ կ'խնդային և ինչպէս կ'ըսէ ժան՝ Հինգ—Եկեղեցիներու եպիսկոպոսը, Ամենեւին հարկ չկար բարերը ասանկ փորձի մը ենթարկելու, որովհետեւ ասոնց ամենքն ալ բողոքով եւ անոնցմէ ճնած զաւակներով պաշարուած էին, ուսկից իրենց առնուցի սեռը յայտնի կ'տեսնուէր: Բարուհւոյն ամենէն խելացի ոտիները հասկցան թէ աս ծակ աթոռը իրենց դէմ փաստ մ'է, ուստի փոխանակ ուրանալու այս այլանդակ արարողութեան ուրիշ մեկնութիւն մը տալու ախտեցան:

Ուստի Մապիլիօն կ'պնդէ թէ բարը ստիպուած էր ծակ աթոռի մը վրայ նստիլ, որպէս զի յիշէ թէ մարդ է և բնութեան ամենէն գարշահոտ պէտքերուն ենթակայ: Հմուտ Բենեդիկտեանը այս ծակ աթոռը ուրիշաթոռի մը հետ կ'չփոթէ

որուն վրայ կ'նստեցնէին բարը ցցունելու համար թէ աշխարհի բաները միշտ կ'փոխուին և Մաղմուսին այս խօսքերը կ'արատասանէին. «Աստուած աղքատը փոշիէն կ'բարձրացնէ»: Մանաւանդ թէ նոր ընտրուած բարը ծակ աթոռին վրայ նստած ատեն Մաղմուսին խօսքերուն տեղ այս բառը միայն կ'արտասանէին, Habet! որ արարողութեան նպատակը աղէկ կ'յայտնէ:

Մանաւանդ անատենուան բարերը ամենքն ալ թէ գինեմուլ և թէ որկրամուլ ըլլալով Կիրոսի ժամանակուան պարսիկներուն չէին նմաներ որոնք ջրկոտիմն միայն կ'բռնէին և ամօժ կ'ոնցէին երթալ որ և է տեղ մը միզել կամ այս տեսակ պէտք մը կատարել»: Ուրեմն փոսնդ չկար եթէ բարերը երկար ատեն մարդկային բնութեան պէտքերը մոռնային:

Հիմա մենք ալ նախնի ճարտարախօսներուն պէս՝ որոնք ամենէն զօրաւոր փաստերը վերջարանին համար կ'պահէին, մինչև ցարդ ուրիշ վկայութիւն մը յուռալ չբերինք որուն առջև միւս ամեն վկայութիւններ կ'նսեմին ինչպէս աստղերը արևուն նշոյլներէն: Աս վկայութիւնը ոչ փոշոտած ձեռագիրերէ առնուած է, և ոչ շուրջ նետուած մարմարիոններէ, այլ պատմութեան մէջ երևելի և բազմաթիւ Եկեղեցականներէ կազմուած ժողովքի մը վկայութիւնէ որ անժխտելի կերպով Յովհաննայի էութիւնը կ'հաստատէ: Հիմա՝ թող ընթերցողը մէկգի ձգէ բոլոր մեր այնչափ աշխատութիւններով՝ ութ տարի փոշիները թօթ վերով ժողոված փաստերը, թո՛ղ մոռնայ քահանաները և պուէտները, պատմագիրերը և մարտիրոսները՝ զորոնք զերեզմաններու խորերէն դուրս հրաւիրեցինք, և աչերը միայն այս վկայութեան վրայ յառէ, որ կարող է ամեն մթութիւն, ամեն հակասութիւն և ամեն անստուգութիւն բուրրովին փարատել:

1410ին Երկնից սուրբ և անբաժանելի Երրորդութիւնը երկրիս վրայ խռովութեանց և յուզմանց երրորդութենէ մը ներկայացուած էր որ կ'բաղկանար ժան ԻԳ.է, Կրէկուար ԺԲ.է և Իւրպէն Գ.է: Ասոնք երեքն ալ բար էին, երեքն ալ զիրար յափշտակիչ, նեռ և հակաբար կ'անուանէին:

Ժան՝ որ բար չեղած ծովահէն էր, Իդալիան կ'արշտկէր,

Իւրպէն Սպանիոյ մէջ հերետիկոսները կ'այրէր, և ծեր կրէ-  
կուար՝ իւր ընկերները և ակռաները կորսնցնելէ ետքը՝ Ան-  
քոնայէն բոլոր աշխարհքը կ'նղովէր: — Սակայն դաշտերը չը  
մշակուած կ'մնային, քաղաքներու բնակիչները երթալով կը  
նուազէին, Վիքլէֆ յԱնկլիա և ժան Հիւս 'ի Պոհեմիա կղե-  
րական իշխանութեան դէմ կ'կանգնէին, Տաճիկները դար-  
ձեալ Երոպան կ'սպառնային: Ոչ ստակ մնացած էր, և ոչ  
մարդ: Այս եռագլխեայ Հիգրան ամեն բան կուլ տուած էր:

Գործերը յետին աստիճան աւրուած էին, և աղէտքը եր-  
թալով կ'մեծնար: Սիժիամոն կայսրը իբրև վրկութեան միակ  
միջոց ժողովք մը կազմել տուաւ Գոնսդանցիայի մէջ հերե-  
տիկոսութիւնը ջնջելու և Եկեղեցին վերանորոգելու համար:

Սուտումուտ խոստմունքներով ժան ԻԳ.ի սիրտը բռին որ  
ասով կ'յուսար միւս հակառակորդներէն ազատիլ:

Գոնսթանցիայի լիճին եղերքը Գոնսթանսթէն քաղաք մը  
չինած էր նոյն լիճին անուամբ, նախ անշուք՝ վերջէն ժողով-  
քին միջոցաւ շատ անուն առաւ: Աշխարհիս ամեն կողմէն  
1413ի վերջերը թագաւորներ, իշխաններ, աստուածաբաններ  
և քահանաներ վազեցին:

Հետերնին 50 ոսկերիչ, 340 սափրիչ, 900 խոհարար, 300  
գինեվաճառ, անթիւ ծառաներ, մանկլաւիկներ, պարուհիներ  
և 718 պոռնիկ կար: \*

Բոլոր ասոնք փայտեայ տուներու մէջ օթեանեցան Եկե-  
ղեցւոյ շուրջը՝ ուր պիտի վճռուէր քրիստոնէութեան բաղդը:

Շատ չանցաւ բաբը եկաւ և ժողովքը բացուեցաւ: Կաթո-  
լիկութեան հովիւները իրենց օրերը հէրետիկոսները այրելով  
կ'անցընէին, կամ Եկեղեցական զարդերու, գոյնի, թեզանիք-  
ներու լայնութեան վրայ կ'վիճէին, և գիշերներն ալ կ'երթա-  
յին գեղեցիկ Իմբէրիայի կամ ընկերուհիներուն գիրկը նե-  
տուելու:

(\*) Վեննայի արքունի մատենադարանին մէկ ձեռագիր յիշատա-  
կարանը կ'ըսէ թէ այն ատեն պոռնիկներու թիւը 1,500է աւելի էր:  
Սերբի թէ այսչափ շատ կին բերած էին հետերնին՝ կղերային վե-  
րանորոգման հարկը ցուցնելու համար:

Բայց մտնենք ժողովքին նուիրական Տաճարը: Մեծ թե-  
ւաթուներու վրայ գերապայծառ կղերականներ նստած են և  
կ'վիճին: Անոնց ետին՝ իրենց արբանեակներու նիզակները կը  
չոզան, իրենց համեստ զինանշանները գլուխնուն վերեւ կա-  
խուած: Հոն ուր որ մեր աչքերը դարձնենք՝ կ'տեսնենք:

Électeurs de drap d'or, cerdinaux d'écarlate. (V. Hugo)\*

Հոն՝ կ'տեսնուին եկեղեցւոյ ջահերը, ժէրսոն՝ ամենա-  
քրիստոնեայ վարդապետը, Տ'էյլի կարգինալ՝ բանիրուն գի-  
տունը, Մաթիէօ Ռօէտէր՝ նոր երէմիան, և Գրիսօլորաս որ  
յունական մատենագրութիւնը Իդալիա բերաւ:

Հոն կ'գտնուին աշխարհիս մեծ իշխանները, Ամէտէ՝ Սա-  
վոյի դուքսը՝ գաւազան ի ձեռին, Ասօլֆ՝ կլէվի կոմսը՝ ան-  
մօրուս պատանի մը, որ իր հասակէն մեծ սուրի մը կռթնած  
էր, Սոսկալին Էրնէսթ՝ որուն միայն աչերը և մօրուքը կ'տես-  
նուին ճերմակ փետուրով զարդարուած սաղաւարտին տակէն,  
և Ռօտոլֆ՝ Սաքսի իշխանը, ճերմակ արջի մը մորթին մէջ  
փաթթուած:

Հոն՝ կային չորս պատրիարք, ամեն ազգերէ 27 դեսպան,  
Սարակինոսներ անգամ կ'գտնուէին: Երբէք ասկէ աւելի վեհ  
և պատկառելի ժողովք մը տեսնուած չէ: Առաւօտեան ժամը  
եօթն էր, և յունիսի արևուն ճառագայթները Եկեղեցւոյն  
ապակիներուն մէջէն թափանցելով՝ ոսկիի և ծիրաններու  
վրայ կ'շողար, երբ տաճարի դուռը շղթաներու և զինուցձայն  
մը լուռչաւ: Ամենուն աչերը գէպ ի ան կողմը կ'գառնան:  
Յանկարծ արևուն լոյսը կ'անհետի, խոր մութ մը կ'տիրէ ա-  
մեն կողմ, քահանաները ահաբեկ՝ ձեռքով վիզերնէն կա-  
խուած մատունքները կ'բնտուեն, իշխաններն ալ՝ սուրերնուն  
երախակալները: Բայց շատ չանցնիր արևուն խաւարումը կ'ան-  
հետի: Ժողովքին մէջ՝ խումբ մը պահապաններով՝ շղթայա-  
կապ անձ մը կ'երևի, գէմքը տփգոյն և կրած ցաւերէն բո-  
լորովին նիհարցած: Երկայն զգեստ մը հագած էր, մօրուքը

(\*) Ոսկեզգեցիկ ընտրողներ, ծիրանագգեստ կարգինալներ:

երկայն, գլուխն ալ թղթէ գդակով մը ծածկուած, որուն վրայ երկու սատանայի պատկերներ կային: Ասիկա Պօհէմիայի առաքեալ ժան Հիւսն էր, որ մեզի Յովհաննայի անժխտելի վկայութիւն մը պիտի բերէ: Այս մարտիրոսը Պօհէմիայի մէջ քարոզած էր թէ՛ Բաբին սրբութիւնը իւր հարստութեանց կամ թագաւորութեան վրայ չկայանար, այլ Քրիստոսի աւանդած վարդապետութեան վրայ, թէ քրիստոնեայ մը՝ եթէ բաբէն անգամ նզովուի, Աստուծոյ շնորհքովը կրնայ ազատիլ, թէ՛ ան որ իր հօտը կ'յօշէ հովուի անունը կրելու արժանի չէ, թէ Յուդա Յիսուսի կեղծ աշակերտն է, և ասոր նման ուրիշ հերետիկոսական հայհոյութիւններ: Այս պատճառաւ շղթայակապ ժողովք բերուած էր դատուելու և ապա կրակը նետուելու համար,

Հարցումը կ'սկսի: Հիւսի գիրքերը կ'բանան, և հետզհետէ դատապարտուած տեղերը կ'կարդան: Ասոնցմէ մին այսպէս կ'ըսէր:

«Քիսուս ֆրիստոս առանց կրնայ երեւելի գլուխի իւր եկեղեցին կառավարել երկրիս վրայ՝ աշխարհիս ամեն կողմը տարածուած առաքեալներուն միջոցաւ»: Ամբաստանեալին կը հարցնեն թէ ի՞նչպէս յանդգնած է ասանկ բաներ գրել:

Հիւս կ'պատասխանէ,

«Մի՞թէ եկեղեցին առանց գլուխի եւ առանց մեծաւորի ջէ՞ր, երբ երկու տարի եւ հինգ ամիս Յովհաննա Հոովմի աթոռը նստաւ»: Հիւսին կ'հարցնեն թէ ինչո՞ւ ըսած է «Միայն ջբաւեր քաբ ընտրուլլ եկեղեցւոյ իրապէս գլուխ ըլլալու համար»: Հիւս կ'պատասխանէ, «Աս վարդապետութիւնը քարոզած եմ որպէս զի քրիստոնեայ մը զսխալի եւ Բաբուհին եկեղեցւոյ գլուխ ջ'կարծէ»: Ժողովքին անդամներէն և ո՛չ մէկը ոտք ելաւ անոր պատասխան ապուր, կամ պարտաւելու, և կամ խնդալու համար: Ի՞նչպէս կ'ըլլայ որ հետեւեալ կտորը ոչ ոք նշմարեց. «Կաթուղիկ եկեղեցին պէտք է որ ամեն տեսակ արատէ, կեղտի, խորշոմներէ զերծ եւ անբիծ ըլլայ, բայց բաբերը եւ կարդինալները միշտ մաքուր եղած ջեն»: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԻՆԱՍԻՍՏԱՆԻ ՄԵՂԱՆՁԵՑԻՆ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵԻ ՅՈՎՀԱՆՆԱՆ

ՆՍ. ԲՍՏՈՒՀԻՈՅՆ ԸՆՏՐՈՒԹԵՅՆ ԱՏԵՆ, ՈՐ ԿԻՆ Մ'Է: Պէ՛տք եմք ուրեմն այս կինը՝ որ ժողովուրդին առջեւ զաւակ ծնաւ, իբրեւ անբիծ եւ անարտա ընդունիլ:

Յանցաւորը երկու երեք անգամ Յովհաննայի անունը դատաւորներուն երեսին զարկաւ՝ որոնք սուրբ Աթոռին անսխալականութիւնը կ'հաստատէին: Սակայն այս 22 կարդինալներէն, 49 եպիսկոպոսներէն, 272 աստուածաբաններէն ո՛չ ոք կրցաւ զան անբաստանել իբր ստախոս և հայհոյիչ:

Ասանկ վկայութիւն մը՝ որ ժողովքին արձանագրութեանց մէջ անցած է անանկութ բողոքին քարտուղարներէ՝ ուրիշ մեկնութեան պէտք չունի: Հիւս՝ բաբին անսխալականութիւնը չուզելով ընդունիլ իբր հերետիկոս այրուեցաւ այն քահանաներէն՝ որոնք վերջէն ժան ԻՒ բաբը՝ ժողովքին նախագահը՝ բանտ նետեցին իբր մ'ծղնեայ, թունաւորիչ, շնացող և սիւմնական:

Հիւս խարոյկին վրայ ելլելով՝ իւր բանտապահներուն և դահիճներուն շնորհակալ եղաւ: Այն ինչ բոցերը այս մարտիրոսին ոտքերը կ'լափէին, գիւղացի մը՝ որ անտառէն կը դառնար փայտի ահագին կոյտով մը բեռնաւորուած, իւր եռանդը ցուցնելու համար փայտերը խարոյկին մէջ նետեց:

Հիւս դէպ ի անոր դարձաւ և քաղցրիկ ժպիտով մը «Ո՛վ սուրբ միամտութիւն» գոչեց և իսկոյն հոգին աւանդեց կանանչ ճիւղերուն մուխէն խղզուած: Իւր մոխիրները Ռէն գետը նետեցին:

Արդ՝ ամեն անգամ որ հարկ ըլլայ ցուցնել թէ միջին դարու կաթողիկոսութիւնը արեամբ չաղախուած է, թէ Յովհաննայի բաբական աթոռը ելլելը պատմական իրողութիւն մ'է, և թէ Ալլաթիոս խաբերայ մ'է, ժան Հիւսի խարոյկին նայեցէք, և ցորեկ ատեն ասկէ աւելի փայլուն աստղ մի փնտռէք:

Իսկ ես, երկար ատեն խնդիրը պարզելու համար ամեն բան խառնելէ և յուզելէ վերջը՝ կ'ընդունիմ այս կնկան էութիւնը: Իմ համապումն ուզեցի ընթերցողին ալ հաղորդել:



հաստատու և ստոյգ վկայութիւններով, ուսկից կ'հետեւի որ թէ նախ՝ ան ժամանակուան մարդերը և բարքերը նկատենք, Յովհաննայի պատմութիւնը ամենեւին անհաւատալի պիտի չերևի, և երկրորդ՝ այնչափ պատմագիրերու և շէնքերու վկայութիւնները չընդունելու համար կամ կոյր ըլլալ, կամ գիտամար չհամոզուիլ ձեռքսեղ պէտք է:

Հիմա՝ ազատ է ամեն մարդ իր ուղածը հաւատալ: Բայց ան որ չպիտի հաւատայ չեմ յաւար թէ ուրիշ պատուակ մ'ունենայ և ճիշդ ան Եկեղեցւոյ տիրացուին պիտի նմանի որ Մեծին Կոստանդիանոսի բորոտութեան չէր հաւատար պատճառ բերելով թէ իր Աղօթագիրքին մէջ աս մասին բան մը զրուած չէ:

# ՅՈՎՀԱՆՆԱ ԲԱԲՈՒՅԻՆ

ՊԵՏՐԱՎԵՆ ՎԷՊ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Il y a bien de la différence entre rire de la religion et rire de ceux qui la profanent par leurs opinions extravagantes. (PASCAL, XI provinciale.)

Ընդհանրապէս մեծ բանաստեղծները նիւթի մը մէջ տեղէն կ'սկսին: Այսպէս կ'ընեն նաև վիպասանները որոնք տասը հատորի մէջ կ'պատմեն Բօրթօսի և Արամիսի դէպքերը, և վարձկան օրագրի մը կ'պատուիրեն որ Արիստօսի հրամանաքերթուածի անուն տայ: Վերջը՝ երբ առիթը կ'գայ, դիւցազնը քարայրի կամ պալատի մէջ գտնուի, կամ կանաչագեղ դաշարիքի մը կամ կակուզ անկողնի մը վրայ՝ կ'սկսի նիւթին առաջին մասը իւր սիրուհւոյն պատմել:

Ովրատիոսի Բանաստեղծական արուեստը ասանկ կ'պահանջէ, գրավաճառներն ալ ասանկ կ'պատուիրեն, որոնք ամենեւին չեն ամչնար հեղինակի մը ապստրեւու գիրքի մը թէ երկայնութիւնը, թէ լայնութիւնը և թէ նիւթը իբր թէ իրենց գերձակին լաթ կ'ապստրեն: Այս է ընդհանուր կանոնը, բայց ես կ'ուզեմ սկիզբէն սկսիլ: Եւ եթէ ընթերցողներէն ոմանք այն կերպը կ'ախորժին, նախ՝ թող գիրքին վերջին ե-



րեաները կարդան, վերջէն ալ առաջին երեսները, ասով՝ իմ պարզ և ճշմարիտ պատմութիւնս բանահիւսական վէպ մը կ'ըլլայ :

Պայրն՝ համբերութեամբ Սէփիլի պառաւներուն շաղակ-րաաութիւնները մտիկ քրաւ անոնցմէ հասկնալու համար թէ Տօն ժուանի մայրը Հայր մերը լաղիներէն կ'ըսէ, թէ՛ երբա-րայերէնը գիտէ, և թէ՛ պատիսմէ շապիկ և կապոյտ գուլպայ կ'հագնի թէ ո՛չ: Ես ալ շատ կ'ըրազայի ընթերցողին հասկը-ցնել թէ ինչպէս կ'անուանուի դիւցազնուհոյս հայրը, և միջին դարու ամեն Հերոտոթներու փոշոտած ահագին հա-տորները խառնեցի, բայց դժբաղդաբար՝ ինչպէս բանաստեղծ-ները Արամազդին՝ Հնդիկներն ալ սատանային զանազան ա-նուններ կ'տան, այս գիրքերն ալ դիւցազնուհոյս հօր տար-բեր անուններ տուած էին: Եթէ քանի մը տարի ևս աշխա-տելով՝ ձեռագիրները խառնէի գուցէ կրնայի տեղեկանալ թէ Յովհաննայի հայրը Ուիլիպատ կամ Ուալլաֆրիտ կ'անուան-ուի, բայց շատ կ'կասկածիմ որ աս աշխատութեանս համար ընթերցողին հոգը անգամ չպիտի ըլլար: Ուտաի նախամե-ծար կ'սեպիմ՝ այս օրուան գիտուններուն նմանիլ, որոնք կար-դալու համար շատ քիչ ատեն կ'վատնեն գրելու աւելի ժա-մանակ ունենալու համար, և կ'շարունակեմ, կամ լաւ ևս ը-սելու համար պատմութիւնս կ'սկսիմ:

Դիւցազնուհոյս անանուն հայրը Անկիւացի կրօնաւոր մ'էր, չկրցայ հասկնալ թէ ո՞ր գաւառէն է, վասն զի անատեն Մեծն Բրիտանիա հարկահաններու դիւրութեան համար կոմսութիւն-ներու բաժնուած չէր: Այն յոյն առաքեալներէն սեռած էր որոնք առաջին անգամ Իռլանտիոյ մէջ խաչը կանգնեցին, և էրիժէնի աշակերտն էր, որ հին ձեռագիրքը շինելու արուես-տը հնարեց, որոնցմով իր ատենուան հմուտները կ'խարէք, ինչպէս խորած էր Սիմօնիաէս Պերլինի գիտունները:

Պատմութիւնը միայն այսչափ տեղեկութիւն պահած է Յովհաննայի հօրը վրայ: Մօրը անունն էր Ժիւթ, խարտեաչ գոյնով, և Սաքսօն պարօնի մը սագերը կ'պահէր: Այս պարօնի անջոյքի մը նախընթաց օրը պարարտ սագ մ'ընտրելու համար

բակը իջնելով՝ աղջկան համար ախորժակը բացուեցաւ, և հաւնոցէն իր սենեակը առաւ: Ետտ չանցաւ՝ ձանձրանալով մատուակին տուաւ, մատուակն ալ խոհարարին, խոհարարն ալ իր սպասաւորին: Ասիկայ՝ մոլեռանդ էր, և կիւթլաք ճըզ-նաւորին մէկ ակռան տանելով՝ Ժիւթը մեր կրօնաւորին տուաւ: Ահա այս կերպով Ժիւթ իշխանի մը սենեակէն կրօնաւորի մը գիրկը ինկած էր:

Իւր վիճակը ճիշդ Անկիւոյ մէջ երկայն փեղոյրներուն վի-ճա'ին նմանեցաւ, որոնք քաղաքագէտի գագաթէն մուրա-ցիկի մը գլուխը կ'անցնին, վասն զի այս այլանդակ տեղը ե-թէ կան շատեր որոնք անօթութենէ կ'մեռնին, և շատեր ո-րոնք շապիկ չունենալու մերկ կ'ըլլին, գրեթէ ամենքն ալ թէ խորհրդարանի անգամ, թէ մեռելաթաղ, թէ կոմս և թէ քեռնակիր, երկայն փեղոյր կ'հագնին, որ հոն՝ սահմանդրա-կան հաւատարութեան Բալլատիոնը կ'սեպուի:

Երիկ կնիկ երջանիկ կ'ապրէին: Յորեկը՝ կրօնաւորը չըջա-կայ դղեկները կ'պաքատէր, աղօթք և վարդարան ծախելով: Գիշերը իրճիթը կ'դառնար ձեռքերը քրիստոնէից համրոյր-ներով թըջած, պայուսակն ալ հացով, միսով, կարկանդակնե-րով և ընկոյզներով լեցուած: Գետնախնձոր չկար դեռ անատեն Անկիւա, վերջէն մայուցին ժողովուրդին տրուած սահմանա-դրութեան հետ, երբ հաւասարութիւնը հաստատուեցաւ ծա-ռաները ալ սկսան պարարտ միտեր չուտել իրենց տէրանցը սեղանը,

Երբ Ժիւթ հեռուանց էրկանը երգը լսէր, իսկոյն սեղանը կ'պատրաստէր, այլինքն կոշտ տախտակներու վրայ փայտէ դգալ մը կ'դնէր, երկաթէ պատառագող մը, և գաւաթի տեղ՝ կովի եղջիւր մը, կրակարանին մէջ չոր փայտեր կ'սե-տէր սենեակը լուսաւորելու համար: Սփռոցները, շիշերը և մամերը միայն եպիսկոպոսները կ'ճանչնային: Կերակուրը լմն-նալուն պէս՝ ոչխարի տերևներ կ'փռէին չոր տերևներուն վրայ, և աս մորթերուն վրայ պառկելով գայլի մորթով մը կ'ծած-կուէին: Որչափ հովը ուժգին փշէր դուրսը, ձիւնը որչափ ա-ռատ ընկնէր երկու ամուսիններն ալ այնչափ աւելի զիրար

կ'սեղմէին, սուրբ Անթոնի բսածին հակառակ, որ կ'պնդէր թէ պաղք սիրոյ կ'մըաստէ, ինչպէս որ նախնի Յոյներն ալ Չմեռք կ'ներկայացնէին իբր կանանց թշնամի ծերունի մը:

Ժանի ծնողքը խաղաղ և հանդիստ կեանք մը կ'անցընէին: Երբ առաւօտ մը այն ինչ՝ քունը աչքերէն, և կնոջ քանի մը խարտեաչ մազերն ալ մօրուքին վրայէն կ'թօթուէր, երկու անկլօ-սաքսօն աղեղնաւորներ բոկոսն և սրունքնին մերկ՝ ձեռքերնին պզտի վահան մը բռնած և ուսերնուն վրայ նետակալ մը խրճիթը ներկայացան և Էփթարք էկպէրի անուամբ հիւղին տէրը հրաւիրեցին որ երկար ճամբորդութեան մը համար պէտք եղած պաշարը առնելով իրենց ընկերանայ: Կրօնաւորը՝ ահաբեկ պայուսակը ուսին վրայ զարկաւ, աջ ձեռքով կինը բռնեց, ձախ ձեռքով գաւաղանք, աղօթագիրքն ալ թևին տակ դնելով՝ իւր բարբարոս առաջնորդներուն հետեւեցաւ:

Ամայի ընունքու և ձորերու մէջ երեք օր և երկու գիշեր քաղցին, ճամբան ուրիշ կրօնաւորներու ալ հանդիպեցան որոնք իրենց պէս աղեղնաւորներու ընկերութեամբ կ'երթային:

Չորրորդ օրը կարիանօրում հասան (այսօր Պիւրքկասթլ, Եարմուրի մօտ) որ ծովեզրեայ պզտի և աննշան աւան մ'էր:

Նաւամատոյցը խուռն բազմութիւն մը ժողվուած էր: Վօլսիւս, Էպօրաքումի եպիսկոպոսը աթոռի մը վրայ կեցած իր օրհնութիւնը կ'տար հաւատացեալներուն, և սաքսօնմեծնաւ մը նաւահանգստին մէջ կ'սպասէր՝ ցամաքէն փչած հովին առագաստները բանալու անհամբեր: Այն վախճուն կրօնաւորի խումբը՝ որ Անկլիոյ չորս անկիւններէն ժողված էր, պատկառելի Վօլսիւսին մօտեցան, ան ալ զանոնք մի առ մի պազաւ և ամեն մէկուն ձեռքը երկերկու դենար տալով՝ «Գացէք, բսաւ, ամեն ազգերուն սորվեցուցէք»: Եպիսկոպոսին թևերէն կրօնաւորները նաւին կողերը ինկան, և սկսան Հիւսիսային ծովուն պզտոր ջուրերը ձեղքել, առանց գիտնալու թէ պարարտ վանք մը շահելու կ'երթան կամ թէ մարտիրոսի գափնին:

Ձգենք ասոնք որ խաչին հովանաւորութեան տակ նաւեն, և ընթերցողին պատմենք թէ ինչու Վօլսիւս եպիսկոպոսը՝ Անկլիոյ եկեղեցւոյն այս շահերը ալեաց հաճոյիցը կ'յանձնէր: Ասոր համար պէտք է որ Պրթօններու կղզիին մեր մնասրաւրեաւր տանք և Թրանկաց երկիրը անցնինք:

Շարլմաններ՝ ամբողջ Եւրոպա դառնալով՝ իւր ահագին սուրովը գլուխներ և դափնիներ հնձելէ վերջը, սաքսօններու երեք մասը տանջելէ, խղդեղէ, կուրցնելէ, և այս կերպով ողջ մնացողներու սրտին ահ ու սարսափ ազդելէ վերջը, ալ էքս—լա—Շափէլի մէջ կ'հանգչէր, որ թէ ասեղներովը և թէ նշխարներովը երևելի քաղաք մ'էր: Իւր ընդարձակ տէրութեան մէջ ամեն բան ուղածին պէս կ'քալէր:

Ալբուին գիտնականը մկրտութեան ջուրերով Շարլմանեի աղտոտ հպատակները կ'լուար, անոնց կարմիր մօրուքները և ահագին եղունգները կ'կտրէր և իւր անսպառ հմտութեան գանձը բանալով՝ մէկուն շուրթերը սուրբ խօսքերու մեղրով կ'օծէր, ուրիշի մը քերականական արմատներ կ'ջամբէր, ուրիշ մէկու ալ կ'սորվեցնէր թէ սագին փետուրները, որոնք նտի կ'գործածէին, գրելու ալ կ'ծառայեն: Երջանիկ կայսրը իւր ժամանակը կ'անցընէր հաւերուն հաւկիթները համբելով, ժամացոյցները և տէրութեան գործերը շակելով, աղջկանցը և Հարուն—էլ—Ռաշխտի ընծայ տուած փիղին հետ խաղալով, գողերէն և մարգասպաններէն թեթև տուգանքներ առնելով, և ուրբաթ օրերը միս ուտող կամ հաղորդութենէ վերջը թքնող հպատակները պարտէզին ծառերէն կախել տալով:

Արդ՝ երբ կայսրը կ'հանգչէր, Սաքսօնները իրենց յանդուգն և գէշասնարուած գլուխները վերցուցին, և ձեռքերնին չէ թէ ցուլերու այլ մարդկային զոհերու արեամբը թաթխեցին, և թէօթադէսի, Իրմինսուլի և Արմինիւսի վրայ երդւընցան Շարլի լուծը թոթուել կամ իրենց արեամբը էլպայի և Վէզէրի ջուրերը լեցնել: Իր սովորութեան համեմատ անյաղթելի կայսրը եկաւ, տեսաւ և յաղթեց, յաղթեց ան նիզակով՝ զոր Աւետարանիչներուն բսածին նայելով՝ Հռովմայե-

ցի զինւորը Յիսուսի կողք խօթած էր, և Միքայէլ հրեշտակապետն ալ գիշեր մը Շարլի երևելով՝ անկողնին վրայ դրած էր, կայսրը վարձաարեւու համար, կ'ըսեն պատմագիրերը թէ՛ մեծ պահոց առաջին օրէն ո՛ր եփած միս կ'ուտէր եւ ոչ հուսմ եւ առանձին կ'պառկէր:

Աս յաղթութենէ վերջը սուրբ կայսրը վախնալով որ այս բարբարոսները դարձեալ կ'ապստամբին և իր բարեպաշտական զբաղմանց արգելք կ'ըլլան, որոշեց զանոնք կամ բոլորովին ջնջել, և կամ կամայ ակամայ ամենքն ալ մկրտել: Երբէք քարոզիչ մը այսչափ բաղմութիւն հաւատքի բերած չէ ասանկ քիչ ատենուան մէջ, բայց Գաղղիացի աշխարհակալին ճարտարախօսութիւնը չափ չունէր, «Հաւատա՛ թէ ոչ կ'սպաննեմ», կ'ըսէր սաքսօն բանտարկեալներուն և իբր համոզիչ փաստ դահիճին կացինը անոնց աչքին կ'շողացնէր, և բոլոր աս ամբօխը մկրտութեան ջուրը կ'նետուէին, ինչպէս սագերը մօրերը կ'նետուին երբ անձրեւէ: Բայց որչափ որ զօրաւոր ըլլայ հաւատքը, դարձեալ քրիստոնեայ մը պէտք է գիտնայ թէ ինչի կ'հաւատայ. ան ատեն Եւրոպա սովորութիւն կար նորընձաներուն տեսակ մը համաուօտ քրիստոնէական վարդապետութիւն կ'ստրվեցնէին, ինչպէս որ կ'ընեն այսօր Թաիթիի կամ Մալագորի մէջ: Շարլի տանապետները կ'աւանդէին աս վարդապետութիւնը, զանոնք կարգաւ կ'չարէին նոր զինւորներու պէս, և ամեն անգամ որ Հաւատամքի դժուարին բառ մը չկրնային արտասանել զանոնք անգթութեամբ կ'ապտակոծէին:

Ահա աս կերպով Քրիստոս իր առաջին առաքեալներուն կրած չարչարանքներուն վրէժը կ'ըլծէր կռապաշտութեան ատուածներէն, երբ աս խեղճ առաքեալները Ներոնի օրով կ'այրէին և Դէսկիէսիէնի օրով կ'խորովէին: Ասկից ելած է աս Գաղղիական առածը, թէ վրէժխնդրութիւնը աստուածոց զուարճութիւնն է:

Որչափ որ պատերազմը տևեց, զինւորները իրենց եկեղեցական պաշտօնը շարունակ կատարեցին, բայց երբ խաղաղութիւնը հաստատուեցաւ, և աս զինեալ քարոզիչներուն աս-

տուածաբանական գիտութիւնները սպառեցան, ամեն մարդմանաւանդ կայսրը, քարոզիչներու պէտքը զգաց, բայց դժբաղդաբար Փրանսայի մէջ գտնուած քահանաները աւելի դարեջուր չինել գիտէին քան թէ քարոզութիւն բնել: Տղաքները կ'մկրտէին յանուն Հայրենեաց, Աղջկան և Սուրբ Շունչի (au nom de la Patrie, de la Felle et du Saint Souffle,) կ'պընդէին թէ սուրբ կայսր ականջէն յղացած է, հաղորդութիւն չառած կ'ճաշէին և պատարագէ վերջը ձեռքերնին լուացուած ջուրը խեղճ սարկաւագին խոնջել կ'տային բռնի: Շարլը աստանկ քարոզիչներու Սաքսօնները անգամ յանձնելու չհամարձակեցաւ վախնալով որ նոր պատերազմ մը չսկսի կուռքերը տապալելու համար, այսինքն Բաքոսի և Վորֆէյի կուռքերը: Կայսրը աս մտմտութիւն մէջ՝ Ալքուինէն խորհուրդ հարցուց, ասոր պատգամները Փրանկերը մտիկ կ'ընէին ինչպէս նախնի Յոյները Բիթէայի պատգամները: Ալքուին Անկլիացի էր, Անկլիան ինչպէս այսօր չոգեկառքերու՝ ան ատենն ալ աստուածաբաններու մենավաճառը ունէր: Նաև մը դրկեցին հոն՝ առաքեալները բերելու համար որոնք Սաքսօններուն հաւատքի խորհուրդները պիտի ստրվեցնէին:

Քրիստոնէութեան վրկարար աս տապանը՝ ուր մտած էր ժանի հայրը կնոջը հետ՝ ութ օր ջուրերու վրայ ծփաց իններորդ օրը Ռէն գետը մտնելով Նիմէկ քաղաքին տուր խարխախ նետեց, ուր աս հոգիի որսորդները առաջին անգամ գերմանական հողը կոխեցին: —Ասկից՝ քարոզիչները, ոմանք նաւակով, ոմանք էջով, ոմանք ոտքով առաքեալներուն պէս ճամբայ ելան, և վերջապէս յոգնած, խոնջեցած, անօթի ծարաւ Բատերպօքն հասան ուր Շարլը խաչերու, նիգալներու մէջ տեղ բանակած էր: Անմիջապէս կայսրը Սաքսոնիան աս նոր եկողներուն բաժնեց, և հրաման տուաւ որ նուաճած երկիրներուն ամեն մէկ խրճիթին վրայ մէյ մէկ խաչկանգնեն: Ժանի հայրը հրաման ընդունեցաւ դէպ 'ի հարաւ երթալ Իրմինսուլի կուռքը տապալելու համար որուն շուրջը կ'հաւքուէին այն ատենուան ապստամբները (ինչպէս այսօր Աթէնքի յեղափոխականները Հաֆթայի սրճարանը կ'հաւքուին) մարդկային զոհեր

և ամեն օր նոր նոր դաւաճանութիւններ բնելու համար : Խեղճ քարոզիչը կինը և չորս սև սաքսոնեան հացեր իշուն վրայ դրաւ, իշուն պախուցքը քաշեց, և աչերը հայրենական խրճիթին քաղցր յիշատակներէն արցունքով լեցուած՝ ճամբայ ելաւ :

Ամբողջ ութ տարի Յովհաննայի հայրը Վէսթֆալիայի անտառները թափառեցաւ մկրտելով, սորվեցնելով, խոստովանեցնելով և թաղելով : Պողոս առաքեալէն աւելի վիշտեր կրեց : Շատ անգամ ծեծ կերաւ, տասն անգամ քարկոծուեցաւ, հինգ անգամ Ռէն գետը և երկու անգամ Էլչա նետուեցաւ, չորս անգամ այրեցաւ, երեք անգամ կախուեցաւ, բայց և այնպէս բոլոր աստանջանքներէն անձնաս ազատեցաւ Աստուածամօր պաշտպանութեամբը : Եթէ մէկը կասկածի թէ անհաւատալի բաներ կ'պատմեմ, թող անտենուան պատմութիւններուն դիմէ, և պիտի տեսնէ թէ ինչպէս խարտեալ Մատոնան իր ճերմակ ձեռքերովը կ'պաշտպանէր իւր քարոզիչները երբ կախէին, խարոյկները կ'մարէր հրեշտակի փետուրներով շինուած հովանացով կամ ճերմակ գօտին քակելով խրդդուողներուն կ'նետէր, ինչպէս Ինօ իր քօղը Ուիսեսին նետեց :

Այսչափ աղէտքներով անխոնջ առաքելութիւն եռանդը չմարեցաւ երբէք, բայց իր անձը անճանաչելի եղաւ :

Ճիւղօնները ալ կողմի աչքը հանեցին, Լոմպարաները ալ կանջները կտրեցին, Թիւրէնփէնները քիթը քերծեցին և Հէրսինիի անտառին բարբարոս բնակիչները քարոզիչներու ճետը ջնջելու համար Թեւթադէսի սեղանին վրայ կրօնաւորին երկու զաւակները զոհեցին, վերջէն միւլենոյն գանակով աս անգութ վայրենիները հայրութեան յոյսը անգամ կտրեցին :

Այս վերջին աղէտքէն ետք Ժիւթ գեռ հաւատարիմ մնաց իր էրկան : Ամեն ճիգ կ'թափէր անոր ցաւերը մեղմելու համար : Երբ կրօնաւորը գիշերը տրթնալով՝ գողտրիկ կերպով իւր միակ աչքը կնկանք վրայ կ'յառէր և զաւակացը կորստեան ու իր անցեալ երջանկութեանը վրայ կ'լար, կինը զան գրկելով կ'բսէր, «Ամեն օր Սուրբ Բաթերնի առջև կանթեղ մը կը Դառեմ, գուցէ բեղմնաւորութեան աս պաշտպանը հրաշք մը բնէ և գեռ զաւակներ ունենանք» :

Ժիւթի աղօթքը շուտով կատարուեցաւ, աւանդ, չէ թէ Սուրբ Բաթերնի հրաշքով այլ էրֆուրթ կոմսին երկուազեղ նաւորներուն միջոցաւ : Այս բիրտ մարդերը օր մը Փիլա գետին եզերքը զան մինակ գտնելով՝ ուր եկած էր էրկանը միակ շապիկը լուալու, բռնի իրեն յիշեցնել տուին թէ ինչ է կնկան բուն պաշտօնը աշխարհիս վրայ :

Իսկ կրօնաւորը ասանկ պարագայի մէջ (այսինքն երբ շապիկը կ'լուացուէր) ունեցած սովորութեան համեմատ՝ Ուիսեսի պէս պահուած էր չոր տերեւներու տակ՝ սպասելով որ շապիկը չորնայ : Աղեղնաւորներուն մեկնելէն վերջը պահուած տեղէն դուրս ելաւ, թաց թաց շապիկը հագաւ, և վշտագին կնկանք հետ հեռացաւ այս տեղերէն անիծելով սաքսոնները որ իր կունս ճակտին վրայ մարտիրոսի պսակէն զատ եղջիւրէ պսակ մ'ալ աւերցուցեր էին :

Ճիւղ ինք ամիս վերջը 818ին Ինփէլհէմի կամ Մայէնսի մէջ աշխարհք եկաւ ան՝ որ վերջը երկնից բանալիները պիտի գողնար : Հայրը՝ կամ մօրը էրիկը ուզելով որ աս մանկիկը թափառիկ կենաց խստութեանց սովորի, Մէյն գետին սառած ջուրերուն մէջ մկրտեց զան, ուր տեղացիք իրենց սուրերը կ'թաթիխէին կարծրացնելու համար :

Պատմագէտները հինուց ՚ի վեր սովորութիւն ունին իրենց դիւցազուններուն խանձարուրը հրաշալի դէպքերով պատմել :

Հերակլէս մանկութեան ատեն երկու օձ խղցեց, և Գրիէլօթիս արջ մը, Բինտարի շուրթերուն վրայ մեզուներ կ'նստէին, Բասքալ տասը տարեկան եղած ատեն երկրաչափութեան սկզբունքը գտաւ : Պայրնի դիւցազնը դայեակին գիրկը՝ պատարագի ատեն աչքերը անճոռնի պատկերներուն վրայէն դարձնելով՝ հիացմամբ սրբուհի Մագթաղինէին վրայ կ'սեւեռէր, մեր դիւցազնուհին ալ՝ որ օր մը եկեղեցական ասպարէզի մէջ երեւելի պիտի հանդիսանար՝ երբէք չուզեց չորեքշաբթի, և ուրբաթ օրերը կաթ ծծել, և ամեն անգամ որ մայրը պահք օր ստինքը կ'երկնցնէր, զգուանքով գլուխը ետ կ'քաշէր : Իր դիւաւոր խաղալիկներն էին սուրբ նշխարներ, խաչեր և վարգարաններ : Ակոսները չհանած Հայր վերը անկիներէն, յու-

նարէն, լաղիներէն գիտէր, ահուաները հանելուն պէս հօրը կ'օգնէր քարոզութեանց մէջ: Ութ տարեկան էր երբ մայրը մեռաւ, մեռելաթաղին ուսերուն վրայէն մօրը գերեզմանին վրայ դամբանական ճառ մը խօսեցաւ:

Երբ Յովհաննա՝ թէ գեղով և թէ իմաստութեամբ կ'աճէր ու կ'զարգանար, հայրն ալ կ'զգար որ օրէ օր իր ոյժը կ'նուաղի: Ձեռքերը ան աստիճան կ'դողային որ օր մը ժիզլա անուամբ արքասուհւոյն հաղորդութիւն տուած ատեն, փոխանակ Գրիստոսի մարմինը կոյսին վարդագեղ բերանը խօթելու, ալպատրեայ կուրծքին մէջ ձգեց զոր՝ Աստուծոյ այս աղախինը Սէրժ բաբին մասնաւոր արտօնութեամբ բաց կը ձգէր միշտ:

Գայթակղութիւնը մեծ էր, արքասուհին կարմրեցաւ, կոյսերը երեսնին ծածկեցին ձեռքերով, քահանաներն ալ սրբապղծութիւն դուչեցին:

Սրբապղծութիւն, կրկնեցին իբր արձագանգ բարեկրօն կոյսերը, և խեղճ ծերունւոյն վրայ վաղելով՝ նուիրական ըզգեսաները հանեցին վրայէն, և ողորմելի վիճակի մէջ զան վանքէն դուրս նետեցին:

Գրեթէ տասնևհինգ օր, տարաբաղդ առաքելալը Ֆրանքֆորթի և Մայէնսի ամայի անտառներուն մէջ թափառեցաւ: Դիշերը ծառերուն տերեւներուն տակ կ'պառկէին և Վէսթֆալիայի խողերուն հետ վայրի կաղնիներ կ'ուտէին, բայց այս կերակուրը՝ որ սուրբ Անթօնի ընկերները անչափ կ'պարարացնէ, քիչ օրուան մէջ մեր փախստականները Փարաւոնի երազին եօթ եզերէն աւելի նիհարցուց: Ի զուր կ'աշխատէր մեր կրօնաւորը իւր հայրենակից Սուրբ Բաթրիսի հրաշքը նորել, որուն մէկ ձայնովը իրլանտայի լեռներու վարազները պարարտ Ժամայօնի (խողի ապուխտ) փոխուած էին, ՚ի զուր գլխուն վերև սլացող արծիւներուն կ'պաղատէր որ իրեն կեքակուր տան ինչպէս տուած էին Սրբոյն Ստեփաննոսի: Յովհաննա արտասուակից աչերը հօրը վրայ յառելով կ'ըսէր,

«Անօթի եմ»:

Առաջին օրերը պատուական ծերունին իր նիհար բազուկ-

ները դէպ ի վեր բարձրայնելով Մէտէայի պէս կ'ըսէր, «Երակներս պիտի բանամ արեամբս ծարաւդ յագեցնելու համար»: Բայց քիչ քիչ անօթութիւնը ան աստիճան կսկորդը և սիրտը չորցուց որ խեղճ աղջկան տրտունջներուն լակոնական ոճով կ'պատասխանէր, «Քալէ»:

Օր մը տօնավաճառի մը մէջ տեսաւ որ թանձր մուշտակով չորքոտանիներէն մին՝ զոր մենք արջ կ'անուանենք, կը խաղայ և տէրն ալ ստակ կ'ժողվէ: Ինքն ալ արջին տիրոջը պէս ուղեց Յովհաննայի տաղանդը ՚ի գործ ածել և առօրեայ հացը և գարեջուրը ճարել: Էրազմ՝ իրաւունք ունէր բսելու թէ խելացի մարդ մը արջէ անգամ կրնայ շատ օգտակար բաներ սորվիլ: Կրօնաւորը իսկոյն սկսաւ աղջիկը այս նոր արուեստին կրթել, անոր տասնամեայ դուլսը փցուն շաղակրատութիւններով լեցնելով, զորս անատենուան գիտունները Վարդապետական, Սատանայախօսական և Դպրոցական և կամ ուրիշ կերպով կ'անուանէին:

Երբ տեսաւ որ Յովհաննա իր գերը քաջ կատարելու յարմար է սկսաւ Վէսթֆալիայի դղերները ժուռ գալ:

Ներս մտած ատեն մինչև գետին ծուելով տեղւոյն իշխանը կ'ողջունէր, իշխանուհին կ'օրհնէր, գօտին կամ ձեռքերը ծառաներուն պագցնել կ'տար, Յովհաննան սեղանի մը վրայ կ'դնէր և ներկայացումը կ'սկսէր.

— Աղջիկս, կ'ըսէր, ինչ է լեզուն:

— Օգին խարաղանք:

— Ի՞նչ է օդը:

— Կենաց տարրը:

— Ի՞նչ է կեանքը:

— Հարուստներուն համար զուարճութիւն մը, աղքատներուն համար տանջանք մը, մահուան յոյս մը:

— Ի՞նչ է մահը:

— Դէպ ի անձանօթ ծովեզերք ճամբորդութիւն մը:

— Ի՞նչ է աս ծովեզերքը:

— Ծովուն սահմանը:

— Ծովը ինչ է:

— Չուկերուն պանդակը:

- Ի՞նչ են ձուկերը :
- Սեղանին համեմանք :
- Համեմանքը ի՞նչ է :
- Խոհարարի մը հրաշակերտը :

Երբ այս ներկայացումը լմննար՝ Յովհաննայի հայրը դղե-  
 ւին ողորմաբաշխը կ'հրաւիրէր որ մարդկային գիտութեանց  
 որ և իցէ ճիւղին վրայ ուղած հարցմունքները ընէ աղջկան :  
 Յովհաննա խելքին ովկիանոսին մէջ կարթը նետածին պէս՝  
 յարմար պատասխան մը կ'բռնէր Սուրբ Գիրքէ կամ Սուրբ  
 Պօնիֆատէ քաղուած խօսքով մը հաստատելով : Վերջէն գող-  
 նոցը բռնած՝ ամեն մէկ հանդիսականներուն կ'ներկայէր քաղցր  
 ժպիտով անոնց վեհանձնութիւնը հայցելով : Ոմանք պղնձէ  
 դրամ մը կ'նետէին, ոմանք արծաթէ, ոմանք հաւկիթ և ու-  
 րիշներ ալ խնձոր կ'տային : Անոնք որ բան մը չէին ունենար  
 տալու ճակտին համար մը կ'տային :

Աս կերպով հինգ տարի ապրեցան : Խեղճ առաքեալին ե-  
 ոանդը մարած էր, ալ չէր ուղեր մարդիկը բռնի հաւատքի  
 բերել, և միայն էլպայի կամ Ռեւնոսի ափունքը գտած դիակ-  
 ները առանց իրենց կամքը հարցնելու կ'մկրտէր, վասն զի  
 ան ատենուան կարծեաց համեմատ, մեռնելէ վերջ անգամ  
 եթէ մէկը մկրտուէր շիտակ արքայութիւն կ'երթար :

Անչափ ճամբորդութիւններէ և անչափ տանջանքներէ ետ-  
 քը՝ վերջապէս ծերունին մեկնեցաւ դէպ ի ան անձանօթ ծո-  
 վափունքը՝ ուսկից ճամբորդ մը ալ չվերադառնար : Արքուլֆ  
 ճգնաւորին խրճիթին մէջ մեռաւ որ Մէյն գետին եզերքը  
 Սուրբերուն համար գովեստներ կ'գրէր, և ձկնորսներու համար  
 ալ կողով կ'հիւսէր :

Յովհաննա՝ հօրը աչքը փակեց անապատականին օգնու-  
 թեամբ և գետին մօտ թաղեց ուռենիի մը շուքին տակ՝ ո-  
 րուն բունին վրայ հանգուցելոյն առաքինութիւնները գրեց :  
 Խեղճ աղջիկը շատ լացաւ այս հողին վրայ որ իւր միակ պաշտ-  
 պանին նշխարները կ'ծածկէր, և Օթէլլոյի ամուսնոյն պէս իր  
 դառն արցունքները գետին ալիքներուն խառնեց :

Մեզի սիրելի եղող անձի մը համար զգացած կսկիծնիս

ճիշդ ակուայ մը քաշել տուած ատեննիս զգացած ցաւին կը  
 նմանի, դառն՝ բայց վայրկենական : Միայն կենդանի մնացող-  
 ները մեզի տեղական ցաւեր կ'պատճառեն :

Երբ Յովհաննայի արցունքները դադրեցան, շուրին վրայ  
 գճկուեցաւ աչքերը լուալու համար : Անատեն առաջին ան-  
 գամ ուշադրութեամբ ինքզինքին պատկերը տեսաւ : Մենք  
 ալ անոր կռնակին վրայէն գճկուելով՝ տեսնենք թէ ի՞նչ կ'ար-  
 տադրէր աս հեղուկ հայելին : — Տանսկեց տարեկան դէմք  
 մը խնձորի պէս կլոր, խարտեաշ մազեր, կարդինալի փեղոյրի  
 պէս կարմիր շուրթեր որոնք անպատմելի հաճոյքներ կ'խոս-  
 տանային, կաքաւի կուրծքին պէս՝ յուզմունքէ թունդ ելած  
 գեղեցիկ կուրծք մը : Այսպէս տեսաւ Յովհաննա ինքզինքը  
 շուրին մէջ, ես ալ զան այսպէս տեսայ Գոյծնեի ձեռագրին  
 մէկ պատկերին մէջ : Այս երևոյթը իր սրտին կսկիծը քիչ մը  
 ամոքեց : Խոտերուն վրայ երկնցաւ, և գլուխը ձեռքին կըռ-  
 թնած՝ սկսաւ իւր գեղէն և գիտութենէն օգուտ քաղելու  
 միջոցներուն վրայ մտածել :

Ի՞նչ ընել պէտք էր, փիլո՞ն հագնիլ, թէ ոչ իրեն պաշտ-  
 պան մը գտնել հօրը տեղը բռնելու համար : Երկար ատեն  
 աչքերը բաց մտածեց, բայց վերջապէս օրուան տաքէն յաղ-  
 թուած՝ ծառերուն շուքին տակ քնացաւ :

Չեմ գիտեր թէ Յովհաննա Լիւսիէնը կարդացած էր թէ  
 ոչ, բայց հաղիւ թէ աչքերը գոցեց՝ ճիշդ Սամոսաթի փիլի-  
 սոփային պէս երազ մը տեսաւ :

Երկու կին երևցան որոնք կարծես թէ շուրէն կ'ելլէին :  
 Մէկուն կուրծքը բաց էր, գլուխը ծաղկեայ պսակ մը կար,  
 երեսը քնոցը կ'ժպտէր : Միւսը սև նափորտ մը հագած էր,  
 կուրծքին վրայ խաչ մը կար, և ծանր կերպարանք մ'ունէր :  
 Երկուքն ալ գեղանի էին, բայց առջինին գեղը զուարթ խըն-  
 ջըքներ, բաժակներու ընդհարումներ և պարողներու աղմու-  
 կը յիշեցնել կ'տար : Երկրորդին խոնաւ աչքը, վանական  
 գաղտնի ուրախութիւնները, լոխ խնջոյքները և խղճուկ համ-  
 բոյրները կ'յիշեցնէր : Առաջինին տեսքը՝ մարդուս գրգիռ մը  
 կ'տար զան պարահանգէսի աղմկալից սրահի մը մէջ սեղմել,

բաղմամբիւ հանդիսականներու առջև և անթիւ մամերուն լուսով, իսկ երկրորդին տեսքը գրգիռ պիտի տար լսին խուցի մը մէջ անոր դօտին քակել, սուրբի մը պատկերին առջև կախուած կանթեղի մը աղօտ լուսովը:

Երբ աս երկու կիները մօտեցան՝ առաջինը միւսէն աւելի շուտ քալելով,

«Յովհաննայ, ըսաւ մատերովը մեր դիւցազնուհւոյն խարտեաչ մաղերը գգուելով, կ'տեսնեմ որ կ'վարանիս երկրիս բերկրութեանց և վանային խաղաղութեան մէջ ընտրութիւն մ'ընելու. ուստի վազեցի որ անփորձ քայլերդ առաջնորդեմ ճշմարիտ երջանկութեան շաւիղին մէջ: Ես եմ սրբուհին Իդա. Աշխարհիս ամեն զուարճութեանց համբ առած եմ: Երկու էրիկ ունեցայ, երեք հոմանի և եօթը զաւակ: Ռէնի գինիի շատ շիշեր պարպած եմ, և շատ գիշերներ ալ խնջոյքներով անքուն անցուցած եմ: Ուսերս ամենուն ցուցուցած, ձեռքերս ամենուն երկնցուցած եմ, մէջքս ալ պարողները սեղմած են: Բոլոր ասով հանդերձ դարձեալ իբրև սրբուհի ճանչցուած և յարգուած եմ: Աս վերջին փառքին արժանանալուս պատճառն ալ այս է որ սեղանիս փշրանքները քահանաներու անյագ բերաններուն նետած եմ, և հին լաթերս ալ սուրբ Կոյսին արձաններուն: Եթէ իմ խրատներուս հետևիս, ապագադ իմինիս պիտի նմանի: Աղքատ ես, տուն չունիս և ցիցատիներ հագած ես, բայց ես ալ էկպէր կոմսին կինը չեղած՝ ձմեռը մատուրներուս կ'փչէի տաքնալու համար, կարմրագեղ շուրթերս էին իմ հարստութիւնս, ասոնց միայն կ'պարտաւորիմ հարստութիւն, պատիւ և սրբութիւն: Օ՛ն ուրեմն, քաջալերուէ, Յովհաննայ, ծաղկի պէս գեղանի, Հինքմարի գերքին պէս գիտուն, Սև անտառին աղուէսին պէս ալ խորամանկ ես: Աս ձիրքերով կենաց ամեն հաճոյքները կրնաս վայելիլ: Բայց նայէ որ պողոտաներուն մէջ քալես և բարձր գագաթները անմիտներուն թողուս: Երիկ մը գաիբ որ քեզի երանունը և սպանիական սանդախներ տայ, սիրահարներ ունեցիր որ աս սանդախները պագնեն, զաւակներ բրէ որ ծերութիւնդ մխիթարեն, եթէ կ'ուզես խաչ մ'ալ ունեցիր, որու քով ա-

պատանիս երբ կենդանիներէ ձանրանաս, կամ եթէ անոնք քեզմէ ձանձրանան: Աս ճակրանքեզի ուղղակի երջանկութեան կ'տանի, ես ալ 30 տարի աս ճամբան քալած եմ ծաղիկներու, խնջոյքներու, ձիերու և երգերու մէջ, բոլորտիքս ալ ունէի էրիկ մը որ զիս կ'սիրէր, հոմանիներ որոնք գեղեցկութիւնս կ'հռչակէին, և հպատակներ՝ որոնք անունս կ'օրհնէին: Եւ երբ օրս հասաւ, ծիրանի անկողնի մը վրայ հոգիս աւանդեցի՝ զաւակներուս գիրկը՝ և արքեպիսկոպոս մը հաղորդութիւն տուաւ: Եւ հիմա աներկիւզ՝ վերջին դատաստանին կ'սպասեմ մարմարիտնի մը տակ՝ որու վրայ ոսկեզօծ տառերով առաքինութիւններս քանդակուած են»:

Այսպէս խօսեցաւ Սրբուհին Իդա. Իեռ այսօր շատ փորձառու մայրեր միւսնոյն խրատները կ'փոփսան իրենց աղջկանցը ականջին: Հաղիս թէ Սրբուհին Իդա աս աշխարհային զուարճութեանց նկարագիրը վերջացուց միւս փիլոնաւոր ընկերուհին յառաջացաւ և Սիլօէյի աղբիւրի պէս քաղցր հոսող ձայնով մը սկսաւ:

«Ես, Յովհաննայ, Լիօպէ սրբուհին եմ, քեզի պէս Մեծին Իրիտանիոյ աղջիկ, և այս երկրին պաշտպան Սուրբ Պօնիփասի տոհմուհին, և հայրդ ալ կ'ճանչեմ որ աս տեղ կ'հանգչի: Ընկերուհիս արդէն աշխարհային զուարճութիւնները պատմեց քեզի, ամուսնութեան, մայրութեան, սիրոյ և ձիերու խառնուրդ մ'ընելով՝ ոսկեզօծ դեղահատեր շինեց և առջևդ նետեց ինչպէս ձկնորսները խայծը ձուկերուն կ'նետեն: Բայց աս խղճմտանքաւոր միջնորդուհին ոչ ծախած ապրանքին գինը յայտնեց և ոչ թերութիւնները: Հարցուր իրեն, թէ ինչ դառն արցունքներ թափել առած են էրկան մը նախատինքները, սիրահարի մը անհաւատարմութիւնը, զաւկի մը հիւանդութիւնը, և հայրի մը կծու խրատները երբ վարդէ շուշանի տեղ երեսի փոթերը կ'ցոլային:

«Առաջին կոյսերը՝ ոչ մոլեւանդ էին և ոչ անմիտ, երբ աշխարհիս զուարճութիւնները ուսնակոխ ընելով վանք մը կ'ապաւինէին անոր հանգստութիւնը վայելելու համար: Գիտէին թէ ամուսնութիւնը մեծ հոգեւր կ'մնի. յղի կամ էրիկէն ծեծուած կանանց ճիշերը լսած էին, տեսած էին թէ ինչպէս

ասոնց փորը կ'ուռի և կաթը ստինքներէն կ'վաղէ, անոնց ճակատին վրայ չէ թէ տարիներու այլաքնութիւններու և վիշտերու դրոշմած փոթերը համրած էին: Եւ մենք չէ թէ երկնային տեսիլներէ կամ չոր հաց ուտելու բաղձանքով՝ ինչպէս կ'պնդեն միամիտ պատմագիրները՝ վանք կ'մտնենք, այլ կարգուած, յղի կամ զաւկին կաթ տուող կանանց տեսարաններէ զզուելով: Հոն՝ հովանաւոր և զով խուցերու մէջ լիովին ազատութիւն և հանգստութիւն կ'վայելենք, և այս հանգստութիւնը՝ ոչ մանկիկներու ճիչերը կ'զան ընդհատել, ոչ էրիկի մը բռնութիւնները և ոչ աշխարհային մտմտութիւններ: Բայց որպէս զի մեր վայելած երջանկութիւնը լսելով՝ ամեն աղջիկները վանքեր չթափթփին և աշխարհս պարպուի, մեր ապրելու կերպին վրայ տեսակ տեսակ շուկներ տարածած ենք:

Անանկ կլեցուցած ենք թէ գիշերները ցուրտ մարմարիոններու վրայ ծունր դրած կ'անցնենք, մոխրի վրայ կ'նստինք և մեր մարմինը կ'զանաւորենք: Ասանկ բրած են նաև կեղծ դրամահատները: Հետաքրքիրները հեռացնելու համար ասդին անդին կ'տարածեն թէ սոսկալի ուրուականներ, չար ոգիներ կ'բնակին այն դղեակները կամ քարայրները, ուր իրենք կեղծ դրամ կ'շինեն: Մի վախեր բնաւ ոչ Սուրբ Բագօս ըստած պաքսիմատէն և ոչ գիշերային զանգակէն որ միայն պարզամիտները կ'արթնցնէ, և ոչ մեր զգեստին խեղճութեան: Նայէ՛ ինչ պահուած է աս հաստ ասուին տակ:

Եւ աս խօսքերը ըսելով՝ Լիօպէ սրբուհին փիլոնը դետին ձգեց և Սէօսի նուրբ լօգիկով մ'երևեցաւ, որ բարակ մետաքսէ հիւստած ըլլալուն՝ բանաստեղծները հովէ ասուի անուանած են: Մարմինը աս զգեստին տակ կ'փայլէր, ինչպէս կ'փայլէ գինին Պօհէմիայի նուրբ ապակիներուն մէջ:

Եւ Յովհաննայի ականջին մօտելով՝ «Աղջիկս, ըսաւ, ձայնը աւելի քաղցրացնելով՝ հակառակորդուհի հրճուանքներ խոստացաւ, բայց հարցնուր իրեն, կ'աղաչեմ, որ երբ անպատում սուփանք մը զգար և սիրահարին հետ դտնուէր՝ փոխանակ անոր քաղցր խօսքերուն միա դնելու միթէ աչքերը շուրջը յածելով, միշտ ամենափոքրիկ դժգոհութենէ մը զան չէր հրեք գունատ և այլ յայլմէ եղած:

«Տեսած ես երբէք կատու մը որ սեղանին վրայ ցատկելով՝ գողունի տիրոջը կաթը կ'խմէ: Աչերը խոժոռ բացուած են, ականջները անհանգիստ, վախէն մազերը քստմնած, և ոտքերն միշտ փախչելու պատրաստ: Ահա ասանկ են նաև աշխարհային կիները որոնք արգիլեալ պտուղին կ'մօտին: Իսկ մենք ամեն հոգէ, ամեն մտմտութէ ազատ, լրտեսներէ չենք վախեր, բարձր պատեր և թանձր անտառներ կ'ծածկեն մեր շուրջը:

«Մեր օրերը՝ նախնի փիլիսոփաներու պէս հեշտութեան վրայ խօսելով կ'անցնինք, երբ հրճուանքի ժամը հասնի մեր խուցերը կ'քաշուինք, և անուշահոտ իւղերով՝ զոր ապուշները տանջանքի գործիք կ'համարին, մեր մարմինը այնչափ կ'չփենք որ վարդի պէս կասկարմիր և զգայուն կ'ըլլի. վերջէն մազերնիս կ'քակենք, սուրբ պատկերները կ'ծածկենք, և ձմեռը փայլուն կրակի մը քով, ամառն ալ զով պատուհանի մ'առջև նստած՝ կամ սոխակին երգին ականջ կ'դնենք, կամ Երգ երգոց մրմնջելով՝ քաղցր երազներու մէջ կ'իյնանք, մինչև որ մեր սիրելւոյն սանդաղներու ձայնը լսենք, որ կ'զայ աս գեղեցիկ երազներուն իրողութիւն տալու:

«Արևելքից կրկին վանքերը հնարած են, ուր՝ Աստուծոյ ծառաները և Քրիստոսի կիները միևնոյն յարկին տակ կ'բնակին և միայն պատով մը բաժնուած են իրարմէ, բայց մենք Յունաց գիւտը կատարելագործեցինք աս պատերուն մէջէն ճամբաներ բանարով՝ ուսկից մեր Սուրբ Պէնուայի եղբայրները անվտանգ և անչուկ կ'ընդունինք միշտ:

«Նախ մենք հարթեցինք վանքերուն պարտէզին ան անուշաբոյր ճամբան որ մայրութեան հոգերէն կ'աղատէ, մենք գտանք ան քաղցրաւէտ խոտը որ շութերուն անյագ տենչմը կ'տայ, և այն դառն բոյսը՝\* ուսկից մեր սիրահարները՝ ինչ-

\*Աս խոտերուն և բոյսերուն դեղագիրները քանի մը ժամանակազիրք գրած են: Ասկէ զատ միջին դարու կիները մարմիննին մեղրու և իւղով կ'չփէին ու ալիւրի մէջ կ'թափ խուէին, և աս ալիւրը որ մի սերնուն վրայ կ'փակչէր կարկանդակներ շինելով՝ իրենց հոմանիշներուն կ'կերցնէին:



պէս Անդէոս՝ երկրէն միշտ նորանոր այժ կ'ստանան։ Սակայն մի յուսար, Յովհաննա, թէ մեր կեանքը չորս պատի մէջ փակուած է և մեր երջանկութիւնն ալ միայն աս տեսակ վայելքներէ կ'բաղկանայ։ Շատ անգամ ձանձրութիւնը կ'սպրդի հեշտութեանց գիրկը, արուուն ընթացքը մեր պատուհաններուն փեղկերէն մեզի յամր կ'երևի, զրահաւոր ասպետներ գեր ՚ի վեր կ'դասենք կրօնաւորներէն։ Ան ատեն բարեպաշտական ուխտագնացութիւն մը պատրուակ կ'բռնենք և աշխարք կ'դառնանք, պաշտները և խրճիթները մանելով՝ թատրոնները և հանքային ջուրերու քաղաքները շրջելով և ամեն տեղ ջերմ ընդունելութիւն, գրկաբաց թեւեր, և խոնարհ ճակատներ կ'գտնենք։

«Ես երբ Շարքմանեի արքունիքը գացի, Հիլաբկարտի կարգուելու գիշերն էր։ Կոմսեր, տիկիններ, ասպետներ և եկեղեցականներ է.քս—Լա—Շափէլի պալատը հաւքուած էին։ Բանաստեղծները յաղթական ամուսիններու քաջագործութիւնները կ'երգէին, խեղկատակները և պարուհիները ամենու ծիծաղը կ'քրքրէին, և գինին յորգառատ արծաթէ բաժակներու մէջ կ'հեղուր։ Բայց երբ սև փիլոնս դրան սեմին վրայ երևցաւ, երբ անունս «Լիօպէ Սրբուհին, Լիօպէ արբասուհին» որահին մէջ թնդաց, ամենքն ալ ձգեցին կիները և բաժակները և աչքերնին վրաս սեւեռեցին։

«Ոմանք գօտիի ծոպերը կ'պագնէին, ոմանք ոտիցս հեռքերը, միայն կայսրը ձեռքս պագաւ։ Քամը օթէ զգեստս մետաքսեայ զգեստներու և գոհարներու, չգարեալ այտերու և մերկ ուսերու փայլը նսեմացուց։ Աս բազմութեան մէջ տանուութ տարեկան մանկլաւիկ մը նշմարեցի Ռօպէրթ անուամբ որ իր տամուկ աչերը վրաս կ'յառէր ձեռքերը միացուցած, քօղիս ծալքերուն տակէն երեսս տեսնելու աշխատելով։

Երբ խնջոյքը վերջացաւ կայսրը անձամբ զիս պալատին ամենէն փառաւոր սենեակը տարաւ, որ ապակեայ դուռով մը պարտէզին կ'միանար։ Կէս գիշերին արթննալով դուռը բացի սենեկին անուշաբոյր հոտերը մեղմելու համար, դիմացս Ռօպէրթ տեսայ, որ արմուկը ծունկերուն վրայ, գանգրահեր սիւրուն գլուխն ալ ձեռացը մէջ՝ պատուհանիս կ'նայեր։ Ինձի

տեսնելով ահաբեկ սուք ելաւ փախչելու համար։ Փոքրիկ նշանով մը զան ներս հրաւիրեցի, ան ալ մէկ ցատկելով առջևս ծունր դրաւ, բայց խեղճ երիտասարդը ոչ կ'համարձակեր մօտիլ, ոչ բառ մը արտասանել, և ոչ աչերը վրաս սեւեռել։ Բայց երբ իր երկայն մազերը մէկգի ընելով շուրթերս ճակտին հպեցի, սա վախնալով՝ որ գիշերային թուիքի մը խաղալիք չըլլի՝ զգեստներս կ'բռնէր, ձեռքերս և սիւրս մագերս կ'չայեր համազուելու համար թէ իրօք Սրբուհին Լիօպէ՝ կիսամերկ և զուարթ իր առջևն կեցած է։ Միթէ աշխարհային տիկին մը աս աստիճան պաշտուած է իր հոմանիէն։ Միթէ կեկան մը շուրթերը ասչափ արբշուած են երբէք սիրահարի մը սիրտը՝ զան երախտագիտութեամբ լեցնելով։

«Ամբողջ երկու ամիս Շարքմանեի արքունիքը կեցայ, և երբ ալ խնջոյքներէ, ձեռքի համբոյրներէ և աղմուկներէ յագեցայ, մեկնեցայ աս ասպնջակուն պալատէն, կայսրը ինք անձամբ ձիուս սանձը բռնած էր, կայսրուհին և իշխանուհիները լալագին կ'պաղատէին որ մնամ, իսկ Ռօպէր յուսահատ մագերս կ'փեթթէր։ Ահա, Յովհաննա, ասէ խոստացած կեանքս։ Աշխարհիս կասկածեցի զուարճութիւններուն տեղ՝ ամեն ցաւերէ զերծ հեշտութիւններ, ստրկութեան տեղ ազատութիւն, աղեկատի տեղ՝ արբասուհոյ դաւաղան և մահկանացու երկի մը տեղ՝ Յիսուս։ Իդա արբասուհին կարգուելու խրատ տուաւ, բայց ես կ'յորդորեմ որ վանք մտնես։ Ըն որէ ուրեմն, Յովհաննա։»

Ընտրութիւնը դիւրին էր, աչքերը գոց կրնար ընել։ Ուստի առանց դեղեկելու մեր քնացող դիւցազնուհին ձեռքերը ճարտարախօս կուսին երկնցուց։ Միւս սրբուհին ակնկոր մուխի պէս յօդս ցնդեցաւ ճիշդ ան սատանուհիներուն պէս՝ որոնք սուրբ Բագոսի երևելով՝ անոր ջերմեամբ խորհրդածութիւնները կ'խանգարէին աչքին առջև կամ աղօթագրքին վրայ սպիտակ ստինքներ և կարմիրագեղ շուրթեր դնելով։

Լիօպէ սրբուհին նորքնայ կոյսը պագնելով՝ զուարթութեամբ յարեց,

«Ընտրութեանդ անկեղծութեանը բողբոլին ապահով ըլլալու համար, քեզի սահմանուած փառաւոր ասպագան դեռ

չյայտնեցի: Շամիրամ՝ Ասորուց թագուհի եղաւ, Մօրկան Պրքթօններու և Պաթիլտ՝ Փրանսայի: Բայց դուն, Յովհաննա, նայէ ինչ պիտի ըլլիս»:

Եւ իսկայն տարօրինակ տեսիլ մը, երազի մէջ ուրիշերազ մը մեր դիւցազնուհւոյն աչերը խաղտեց: Ինքզինքը անանկ բարձր աթոռի մը վրայ նստած գտաւ որ գլուխը եռակի պսակով զարդարուած ամառերուն մէջ կ'կորսուէր: Ճերմակ աղաւնի մը բոլորաբը կ'սաւառնէր, փետուրներովը զինքը զովացնելով, և անթիւ բազմութիւն մը աթոռին առջև ծուր դրած էր: Ոմանք ոսկեղէն բուռվարներով կ'իննկարկէին, ոմանք ալ բարձր սանդուղներու վրայ ելած՝ ակնածօրէն ոտքերը կ'պագնէին:

Միթէ երազիդ մէջ տեսած ես երբէք, սիրելի ընթերցող, որ քեզ կ'կախեն կամ բարձր տեղէ մ'անդունդի մէջ կ'գլորեն: Երբ չուանը վիզդ պիտի խեղդէ կամ մարմինդ պիտի տրորի, տաք անկողնի մը մէջ կ'արթննաս, գիշերուան գգալը գլուխդ և շունդ ալ ոտիցդ առջև: Աս արթննալը շատ քաղցր կ'գայ քեզի: Անդամներդ կ'զննես և կ'ուրախանաս ողջ առողջ գտնելով, վերջը աչերդ և պատուհանները կ'բանաս որ աս գէշ երազը դարձեալ չգայ: Բայց ընդհակառակն եթէ երազ մը տեսնես որ փիլիսոփայական քարք կամ խոհեմ կ'ին մը գտեր ես, և արթննաս ճիշդ այն պահուն՝ որ ձեռքերդ կ'երկնցնես դէպ ի ան երեւոյթական գանձերը, անատեն սրչափ կ'ցուես, սրչափ դառն և անհաճոյ կ'թուի արթննալդ: Գլուխդ վերմակին տակ կ'խօթես, կ'աշխատիս, կ'ջանաս իրողութիւնը վանել և փախտական սրուականները բռնել ուրոնք շտապաւ կ'խուսափին:

Ճիշդ աս վիճակին մէջ կ'գտնուէր Յովհաննա երբ իւր հիանալի տեսիլէն ետքը՝ ինքզինքը խեղճ և լքեալ, հօրը նոր փորուած գերեզմանին քով գտաւ:

Հիւրասէր Արքուլթ եկաւ խեղճ որբին մխիթարութիւն և կերակուր տալու: Բայց Յովհաննա բարեսիրտ ճգնաւորին սփոփանքը և խոտերը մերժելով՝ «Ո՛ւր է, ըսաւ, ամենէ մօտ վանքը»: — «Մաչէզպախի մէջ՝ Պիթրիւտ սրբուհւոյն վանքը», պատասխանեց ծերունին ապշած, զողորմուն ձեռքը դէպ ի

արեւէք երկնցներով: — «Շնորհակալ եմ» պատասխանեց Յովհաննա, և դատին սեղմելէն վերջը ճամբայ ելաւ Լիօպէ սրբուհւոյն խոտացած երանաւէտ կեանքը մէկ ժամ յառաջ ձեռք ձգելու յուսով,

Բարեկրօն ճգնաւորը Յովհաննայի արտօրնօք քայլը տեսնելով՝ օրագրութեան մէջ արձանագրեց թէ իր աղօթքովը խրճիթին շուրջը պատող ծառերը՝ իրենց հովանւոյն տակ պառկողներուն վանական կենաց փափաքը ներշնչելու զօրութիւն ստացած են:

Յովհաննա արտօրնօք ճամբայ ելլելուն՝ երթալիք տեղւոյն վրայ տեղեկութիւն աննելու մոռցեր էր: Հալածեալ եղնիկի պէս ուղղակի կ'վազէր, բայց շատ չանցաւ անհարթ և ծուռ ումուռ նեղ ուղիներու մէջ մայրելով՝ Իեմէտրէի պէս ջրհորի մը քով ինկաւ թէ խմելու և թէ ինչ ընելիքը մտածելու համար:

Գիշերը հասած էր, ամպամած և առանց լուսնի գիշեր մը: Անտառին մէջ տերեւներու մէջ տեղէն գայլերու և բուերու սպառնալից աչերը կ'տեսնուէին: Խեղճ աղջիկը, աս սոսկալի առանձնութեան մէջ միս մինակ: մերթ հինաւուրց եղևնիի մը բունին տակ կ'կծկտուէր և մերթ իր երկիւղին մեծութենէն նոր ոյժ առած՝ գիշերային ստուերի մը պէս ծառերու մէջ տեղէն կ'վազէր: Ասանկ թափառած ատեն, անտառին խորը աղօտ լոյս մը նշմարելով՝ դէպ ի հոն ուղղուեցաւ անապատականի մը խրճիթը գտնելու յուսով: Ափսոս, ծառի մը փապարին մէջ դրուած Սուրբ Կուսի արձան մը գտաւ, որուն վրայ՝ այն ատենուան պատմագիրներուն ըսածին համեմատ, ան կանթեղներէն մին գտաւ՝ որոնց իւրը երբէք չէր սպառեր, կամ ուրիշներուն ըսածին նայելով՝ ամեն օր հրեշտակները կ'նորոգէին: Յովհաննա արձանին առջև ծռնը դնելով՝ սուրբ կուսին աղաչեց որ իր պաշտպանութիւնը և առաջնորդ մը զրկէ աս անել բաւիղէն ազատելու համար: Իւր խնդիրքը կատարուեցաւ:

Նորատի աղջկան աղօթքին իշու եռակի զուլմը պատասխանեց, և շատ չանցաւ էշերը երեցան երեք պարարտ կրօնաւորներու բեռին տակ ճնշուած: Չորրորդ էշ մ'ալ կար

որուն վրայ երկու երկայն սնտուկներ բռնաւորած էին, և  
 աս սնտուկները աքձաթէ բանուած ծանրագին լաթով մը ծած-  
 կուած էին: Աս երեք հշապանները, վերապատուելի Ռալիկ,  
 Լիկուն և Ռէժիպալթ Յովհաննայի հօր բարեկամներն էին,  
 և սուրբ Պետրոսի և սուրբ Մարտէլէնի երանաւէտ մարտիրոս-  
 ներուն մասունքները Միւհլէնհէյմ կ'փոխադրէին: — Մեր  
 դիւցազնուհւոյն հրաման տուին որ աս պատկառելի սնտուկ-  
 ներուն մէջ տեղ նստի: Այս բարեկրօն հայրերը Յովհաննայի  
 պատմութիւնը սեղէ վերջը՝ իրենք ալ պատմեցին թէ էժին-  
 հարտ արեղային հրամանաւ սուրբ մասունքներ գնելու հա-  
 մար Հոսմ գացած էին՝ բայց զինի մասին չկրնալով յարմա-  
 րել՝ գիշերով լապտերակիր հրեշտակի մ'առաջնորդութեամբ  
 սուրբ Թիպուրսի ստորհրկրեայ եկեղեցին իջած էին և սուրբ  
 Պետրոսի և Մարտէլէնի գերեզմանները բանալով՝ ուր հան-  
 դարա կ'քնանային, ոսկերտաիքը գողցած Ալմանիա կ'բերէին  
 բիւր վտանգներ և բիւր յոգնութիւններ յանձն առնելով:

Իսուն հառաչանքներ կ'լուէին աս դադարներուն մէջէն  
 և ամեն օր յորդարին մը կ'վազէր: Սակայն կ'սկսէին վերջա-  
 պէս իրենց վաղեմի սովորութիւնները ձեռք առնել և հրաշք-  
 ներ գործել, կազերը, կոյրերը և անդամալոյծները կ'բուժե-  
 ին գէշ ոգիները կ'վանէին, գարեջուրը գինիի կ'փոխէին,  
 ագռաները աղանիի՝ և կռապաշտներն ալ քրիստոնեայի:  
 Ահա աս էր վերապատուելի հայրերուն պատմածը: Իրենց  
 սուրբերուն հրաշքները մինչև երկինք կ'հանէին, ինչպէս կ'ը-  
 նէին ցովերը Ասորի աստուածուհւոյն հրաշքները:

Բայց խեղճ պարմանուհին, որուն ականջները գեռ Լիո-  
 պէ Սրբուհւոյն ոսկեփայլ խոստումներով կ'թնդային, ասոնց  
 առասպելներուն ականջ չէր կախեր: Երկու երեք անգամ յօ-  
 րանջելէ ետքը՝ Սուրբ Պետրոսի և Սուրբ Մարտէլէնի մէջ տեղ  
 քունը տարաւ: Մենք ալ գիտնալով որ Հայկազն պարմա-  
 նուհւոյն քունը եկած է, աս ճշգրիտ պատմութեան շարու-  
 նակութիւնը հետեեալ գլխին կ'թողունք:



## ՄԵՍՆ ԵՐԳՐՈՐԳ

Regrettez-vous le temps où nos vieilles romances,  
 Ouvraient leurs ailes d'or vers un monde enchanté;  
 Où tous nos monuments et toutes nos croyances  
 Portaient le manteau blanc de leur virginité?

(ALFRED DE MUSSET, Rolla.)

Միթէ՛ երբէք պատահած է քեզ, սիրելի ընթերցող, որ  
 ամբողջ օր մը անցնես միջին դարու վէպ մը կարդալով, և  
 գիրքը ձեռքէդ ձգես՝ այն դարերը մեր դարուն հետ բազ-  
 դատելով:

Քեզի պիտի երևի թէ այն ոսկեղէն դարուն մէջ կրօնք,  
 հայրենասիրութիւն և անբիծ սէր մը կ'իշխէին աշխարհիս  
 վրայ, երկաթէ զրահներու տակ անկեղծ սիրտեր կ'բաղխէին,  
 ջերմեռանդ շուրթեր Խաբեցելոյն ոտքերը կ'պագնէին, թա-  
 գուհիներ իրենց էրկներուն շապիկներ կ'հիւսէին և նորատի  
 աղջիկներ ամբողջ տարիներ իրենց դղեկին տանիսին վրայ կ'ան-  
 ցընէին՝ իրենց նշանածին վերադարձին սպասելով: Պիտի տես-  
 նես հոչակաւոր Ռոլան՝ որ քարայրի մը մէջ քաշուած՝ իւր

սիրուհւոյն գտնուած վանքին դիմացը՝ ամբողջ երեսուն տա-  
րի անոր պատահանին լայր կ'դիտէր: Պիտի յիշես Ռօպեր  
կոմսը որ իւր արքայազն սիրուհւոյն պատիւը ազատելու հա-  
մար ինքզինքը դղելի մը վերի յարկէն վար կ'նետէր:

Այս յիշատակներով շատ անգամ իմ աչքերս ալ թրջուե-  
ցան, և արիւնս աւելի տաք վազեց երակներուս մէջ: Բայց  
երբ ռափսոտները մէկգի թողլով սկսայ ճշմարտութիւնը փըն-  
առել դարերու փոշիներուն տակ, ժամանակակիցներու պատ-  
մաւթեանց, թագաւորաց հրովորակներու, բարբրու կոնդակ-  
ներու և եկեղեցական ժողովներու արձանագրութեանց մէջ,  
երբ Հէրոսարիտեղ՝ Պարոնիուսի և Միւրաթորի գիրքերը թղթա-  
տելով Միջին դարը մերկ ներկայացաւ առջին, ան ատեն  
սկսայ հառաչել չէ թէ ան հաւատքի և դիւցազնութեան օ-  
րերը անցած ըլլալուն, այլ լիովին համազուելուս համար թէ  
ասանկ օրեր երբէք եղած չեն: Գիրքս զգուելի և տգեղ դէմ-  
քերու դահլիճ մ'է, որոնք՝ եթէ ներելի է բսել, լուսանկար  
պատկերներու փորձեր են: Ինչոր գրեր եմ անժխտելի ապա-  
ցոյցներով կ'հաստատեմ, ինչպէս թագաւորները իրենց հրո-  
վարակները կ'հաստատէին նիզակին ծայրով:

Յովհաննան երկու սուրբերու, երեք կրօնաւորներու և չորս  
էջերու բնկերութեամբը ձգեցինք: Ճամբան մութ և խորտու-  
փորտ էր. թէ մաքդերը և թէ կենդանիները յոգնած էին,  
երբ երկու ժամ ևս նեղ ճամբաներու մէջ քայլելէ վերջը՝ բը-  
լուրի մը դադաթը պանդոկի մը կարմիր լապտերը տեսան,  
արտորնօք սկսան դէպ 'ի հոն վազել, ճիշդ այնպէս՝ ինչպէս  
երեք մոգերը այն աստղին կ'հետեւէին որ ծագած էր Փրկչին  
մտւորը իրենց ցուցներու համար:

Թախիթին օրէն մինչև այսօր որկրամոլութիւնը և բնպե-  
լիքը գերմանացուց մահացու մեղքերը եղած են, միայն աս  
տարբերութեամբ որ երբ նախնի Գերմանիոյ հիւրասէր բնա-  
կիչները՝ իրենց տնակներուն մէջ յոգնած ճամբորդին հետ կը  
գիտովնային, թէ ուտելիք և թէ օթեան ալ կու տային ի-  
րեն: Միջին դարու քահանաները՝ այն օրէն որ Սուրբն Բե-  
նեատիկոսս վանքերու սեղաններուն դարեջուրի սովորութիւնը

գինիի փոխեց, քահանաները կ'ըսենք ալ սկսան գինետուն-  
ները ապրիլ, ինչպէս նախնի յոյները հրապարակները կ'ապ-  
րէին: Լևոն բարին և եկեղեցական ժողովներու՝ թէ գինի  
ծախողներուն և թէ խմողներուն դէմ արձակած բանադրան-  
ները կ'արհամարհէին, կ'ծաղրէին նաև այն բարեմիտ ճգնա-  
ւորները որոնք հեռաւոր ճամբաներու վրայ կամ անտառնե-  
րուն մէջ մենաստաններ կ'չինէին, ուր՝ յոգնած ճամբորդը ձի,  
օթեան մը, կերակուրի համար թարմ և քնանալու համար  
չոր խոտ կ'գտնէր: Շատ անգամ քահանաները ուղևորութեան  
ժամանակ երբ անձրևէ բռնուէին աս ճգնաւորներուն խրճիթ-  
ները կ'ապաստանէին, բայց անձրևը դադրածին պէս արտոր-  
նօք մօտակայ գինետունը կ'վազէին: Այսօր պանդոկները ճամ-  
բորդներուն համար շինուած են, միջին դարու քահանաները  
ճամբորդ կ'ըլլային պանդոկներուն համար:

Մեր երեք վերապատուելիները էշերը ախոռը կապեցին,  
սուրբերուն մատունքներն ալ պանդոկապետին անկողին  
վրայ դրին, իրենք ալ վառարանին առջև շարուելով (այն  
տեղը ամառուան գիշեր չկայ) խոհանոցին անուշաբոյր հոտե-  
րը վայելելու համար քիթներուն ծակերը խոշոր խոշոր բա-  
լին: Պարարտ սագ մը բոցավառ կրակի մը վրայ կ'դառնար,  
մօտը՝ Ինժէլէէմի վեհանձն գինի մէջ ուրիշ սագ մ'ալ մեղմից  
կ'եփէր: Շամիուրին տեսքը և խոհարարին երգերը աս բա-  
րեմիտ հայրերուն սիրտերը ուրախութեամբ լեցուցին: Մար-  
մարէ սեղանի մը շուրջը նստած՝ արդէն իրենց գանակները  
ակուածները կ'սրէին որսերնին ջարդելու համար (dépecer), եր-  
անպառեհ ձայն մը ասոնց ուրախ զուտթ գէմքին վրայ ան-  
ամպ մը ծածկեց, «Ուրբաթ» գոչեց Ռալիկ տնակը հսկող:  
«Ուրբաթ» կրկնեց Լիկուն պատառաքաղը նետելով. «Ուրբաթ»  
հառաչեց Սէփիպալտ ահագին բերանը գոցելով: Եւ ամենայն  
ալ ցաւալից աչերով աս մաշկոտ անասուններուն կ'նայէին,  
ինչպէս Ադամ կ'նայէր կորուսեալ զրախախն, և յուսահա-  
տաբար աս պարարտ կտորներուն տեղ եղունգնին կ'կրծէին:

Իրաւ է ան ատենուան մարդիկը, գինեմոլ, ստախօս, սր-  
րիկայ, խարբրայ և անամօթ էին, բայց դեռ արգիլուած օ-

րերը միս ուտելու: չափ վատթարացած չէին: Ան աստեոուան դրախտին մէջ՝ ինչպէս նախնեաց Ոլիմպոս, գինեմուլութեան պաշտպան սուրբեր կային\*, երկրիս վրայ ալ քահանաներ կային որոնց կ'օգնէին էքլէսիասթի և Սուրբն Նգոստինոսի օրինակին հետեւելով: Բայց վայ անոր որ պահքը չէր բռներ, կամ Ռօքօլէն դքսին պէս երկնից կրօնով կ'պատժուէր կամ կայսեր արքանեակներէն կ'կատուէր: Յովհաննա՝ որ փորձով գիտէր թէ ինչ է անօթութիւնը, մեղքացաւ իւր անօթի բնկերներուն վիճակին: Եւ որովհետեւ քաղուխմիքի մէջ շատ վարպետ էր, որ Արևելքացոց անձանօթ գիտութիւն մ'է և միշտ ամեն բանի հակառակ կողմը հաստատելու կ'ջանայ, ինչպէս սևը ճերմակ, լուսինը՝ քառանկիւնի, և ամլութիւնը առաքինութիւն, իւրովի ճար մը մտածեց որ թնթրեն: Վայրկեան մը գլուխը քերկէն վերջը — Այս սազը, բուս, ձուկի մկրտեցէք, և աներկիւզ կերէք, հայրս ալ ասանկ ըրաւ երբ կուպաշաներուն ձեռք իյնալով մահու սպառնալիքով սախաւեցաւ Զատկին ճրագալոյցին օրը ամբողջ ոչխար մ'ուտելու: Մանաւանդ ձուկերը և թռչունները միևնոյն օրը ստեղծուած բլլալով՝ իրենց մարմինը մերձաւոր ազգականութեամբ կապուած է»:

Թէպէտ աս փաստը աղէկ չէր, բայց յարմար էր: Աս կէ զատ՝ անօթութիւնը՝ որ չոր հացը անգամ հաճելի կ'ընէ, կ'երկի թէ դեռ այսօր տկար փաստերը անգամ՝ զօրացնելու կարող է, եթէ ոչ ամեն տեղ՝ գոնէ յոյն դատաւորներուն քով՝ որոնք շատ անգամ գողերը չեն դատապարտեր աս պատրուակաւ թէ գողութեան ժամանակ շատոնց ՚ի վեր անօթի էին: Պէտք չէ որ միևնոյն պատճառաւ կուսպիղծներն ալ անպարտ արձակեն, երբ ասոնք հաստատեն թէ իրենք ալ նոյն միջոցին անօթի էին, ինչպէս կ'ըսէ Թէօփրիթ: Հայր Ռալփի ի նշան շնորհակալութեան ազմկալից համբոյր մը զեանդեց Յովհաննայի այրին վրայ, ձեռքը գաւաթ մ'ս ջուր առնելով երեք անգամ սագերուն վրայ՝ րակեց և ջերմեռանդութեամբ բուս, In nomine Patris, et Filii et Spiritus Sancti

\* Սուրբն Մայթէն և Սրբուհին Ախուսթակերթ:

hoc erit hodie nobis piscis. «Ամեն» պատասխանեցին ընկերները և շատ չանցաւ աս նոր մկրտուած ձուկերուն ոսկորները միայն մնաց: Բարեպաշտ հայրերուն անօթութիւնը անցածին պէս սկսան իրենց ծարաւը մարելու մտածել: Ան աստեոուան քահանաները Հաղարեւմէկ գիշերներու արարներուն պէս նախ՝ մինչև ճաթեւիսին կ'ուտէին, վերջը ապուխտի (salaison) և գինիի վրայ կ'իյնային՝ իրենց անխոնջ կոկորդը հետզհետէ թքրջելով և չորցնելով, և Միհրդատի հիւրերուն պէս խմելու մասին զիրար գերազանցելու կ'մրցէին: Գինեմուլութիւնը ամեն սատիճանի մարդկանց դիւրին էր: Եօթ դենարով չափ մը գինի կ'առնուէր, ուսկից կ'հասկցուի թէ ինչ պատճառաւ աս ըմպելիքը ոչ միայն սուներու ալ նաև դռեհներու, եկեղեցիներու և կուսանոյցներու մէջ անգամ՝ յորդառատ կը զեղուր, իւր բնդհատ հոսմամբ թէ բարերուն կանգակները կ'քշէր կ'սանէր և թէ եկեղեցական ժողովներու վճիռները, ինչպէս գետ մը կ'քշէ ծառերը:

Մեր երեք վերապատուելիները խմելու չսկսած՝ անատեոուան սովորութեան համեմատ հրեշտակի անուններ առին, մին՝ Գաբրիէլ, միւր՝ Միքայէլ, երրորդն ալ Ռօկէլ և սկսան եղջերեայ գաւաթնին հետզհետէ պարպել, չէ թէ իրենց կենաց կամ հայրենեաց և կամ բացականերու կենաց բարեմաղթութիւններ ընելով, այլ սուրբ կոյսին, սուրբ Պետրոսին և արքայութեան բոլոր բնակիչներուն կենացը խմելով: Ժամանակին ջերմեռանդութիւնը ասանկ կ'պահանջէր, գինեմուլութիւնը անգամ իբր Աստուծոյ հաճելի պարտաւորութիւն մը կ'կատարէին: Սակայն գիշերը կ'յառաջանար: Պանդոկապետը քնացած էր: Կանթեղին իւզը և կուծին գինին կ'սպառէին, բայց քահանաներուն եռանդը ամեն մէկ գաւաթին երթալով կ'աւելնար: Իրենց աչերը Քարօնին աչերուն պէս կ'փայլէին, բերաննին անիմանալի բառեր կ'արտասանէր, սուրբ կոյսին հայհոյանքներ և մաղթանքներ, և այլևայլ բազոսեան երգեր: Մէկ խօսքով երեքնին ալ գինիով զեղուած էին, ինչպէս Պայրն՝ երբ հոգւոյն անմահութեան վրայ կ'մտածէր, կամ սուրբն Ավիգ՝ երբ Եւայի սէրը կ'երգէր:

Յովհաննա գիտէր՝ թէ շութիւնք գինիին և յանդբգ-  
 նութիւնն ալ գինովութեան մէջն է, ինչպէս կ'ըսէ Սողոմոն,  
 որ եօթ հարիւր կիներու և երեք հարիւր հարճերու գիրկը  
 ժուժկալութիւն կ'ըտրուէր, Յովհաննա կ'ըսենք գնաց սենե-  
 կին մէկ մութ անկիւնը կծկառուած նստաւ. բայց հոն ալ հան-  
 քսաութիւն չգտաւ, վասն զի մեր բարեկրօն հայրերը իրենց  
 քաղցը և ծարաւը յաղեցնելէ վերջը մեր տարաբաղդ գիւ-  
 ցազնուհին հալածելու ելան ։

Անանկ շուտով մի կարմիր, սիրելի քնթերցուհիս, ան եր-  
 կաթէ գրիչը, որով կ'գրեմ աս ճշգրիտ պատմութիւնք, Սմի-  
 թի գործարոնէն ելած է, սակայն Ասորա — Մանչի խարտեւչ  
 աղջիկներուն պէս ամօթխած է, որոնք իրենց կուսական ու-  
 պան չաղտոտելու համար մինչև կէս ծունկերնին զան վեր կը  
 փրցնեն և հաստ կոչիկներու մէջ ուղղորդ ոտքերնին կ'ցու-  
 ցընեն անցորդներուն, Ուստի բնաւ մի վախնար որ իմ բեր-  
 նէս անանկ բառ մը լսես ուր անվայել լինի աղջկան մը լսել\* ։

Յովհաննա այս երեք հայրերէն հալածուած սենեկին շուր-  
 ջը կ'վազէր, սեղաններու և աթոռներու վրայէ ցատկելով, և  
 մերթ պնակ մը կ'նետէր և մերթ Սուրբ Կիրքէ խօսք մը ։  
 Բայց իւր սրբազան պերճախօսութիւնք և պնակները 'ի զուր  
 կ'կտարէին աս գինովներուն վրայ, ինչպէս ալիքները ժայռե-  
 րուն դէմ ։

Թանկարժ' սուրբերուն մատունքները պարունակող անտուկ-  
 ները տեսնելով, ետին պատապարուեցաւ, ինչպէս Աժաքս իր  
 վահանին ետին ։ Աս նուիրական պատուարէն մ'ը վերապատ-  
 ուելի հայրերը նախ ետ քաշուեցան, ինչպէս գայլերը կ'քա-  
 շուին հովիւներուն վառած կրակը տեսնելով. բայց իսկոյն մնա-  
 ցան այս թանկագին նշխարներու համար ունեցած յարգանք-  
 նին, և անտուկներուն վրայ յարձակեցան որոնց ետին խեղճ  
 պարմանուհին կ'ողողզար, ինչպէս կ'ողողզայ արտոյտը հաւոր-  
 ակն վարմին մէջ ։ Հոս՝ յարձակումը անչափ քնդոտաւ և անչափ  
 ուժգին եղաւ որ անտուկները խորտակեցան և երանաւէտ մար-

\* Եւրիփիտ — Օբե-թ, երգ 28 ։

տիրոններուն ոսկորները գետին թափեցան ։ Յովհաննա ան ատեն  
 յիշեց որ Սամիսոն իշու ծնօտով մը հազար փղշտացի հալա-  
 ծած էր, Աստուծոյ աղաչեց որ աջը զօրացնէ և սուրբ Մար-  
 սէլէնի մէկ ոսկորը բռնելով սկսաւ իր շուայտ հալածիչներուն  
 զարնել ։ Բայց կ'երևի թէ մեր բենեգի կտեաններուն ոսկորնե-  
 րը սուրբին ոսկորներէն աւելի կարծր էին, վասն զի շատ չանցաւ  
 աս զէնքը մեր առաջինի դիւցազնուհոյն ձեռքը կտրեցաւ,  
 և ուժգին կռիւէ մը ետքը անգէն մնաց ։ Բարեբաղդաբար  
 ան ատեն երկինքը դեռ սուրբեր և սրբուհիներ կային որոնք  
 վտանգի մէջ գտնուած կոյսերու պատիւը ազատելու համար  
 հրաշքներ կ'կատարէին ։ Արդէն վերապատուելին Ռալից իր  
 գարշահոտ շունչովը նորատի աղջկան աշնադէմ երեսը կը  
 գգուէր, երբ յանկարժ' տարօրինակ փոփոխմունք մը, անլուր  
 հրաշք մը կատարուելով՝ ահաբեկ ետ քաշուեցաւ ։ Յովհան-  
 նա՝ ոչ Տափնէի պէս ծառի փոխուած էր, ոչ սրբուհի ժէր-  
 թրիւտի պէս աղանիի, և ոչ որդակեր կմախքի՝ ինչպէս ե-  
 ղած էր Պագէն Տօմ Ռիւփէրի գիրկը, այլ իւր կուսական  
 կզա'էն յանկարժ երկայն, թանձր և ցցուած մըրուք մը բու-  
 սած էր, ճիշդ բիւզանդեան սուրբերուն մօրուքին պէս ։ Ա-  
 հա աս կերպով անատենները Տիրամայրը կոշտ քահանաներէ  
 հալածուած կոյսերը կ'ազատէր, և ինչպէս կ'ըսէ սուրբն ժէ-  
 րօմ, Վնախանձոտ զոքանչի մը պէս իր որդուոյն հարսերուն պատ-  
 ոյն վրայ անքուն կ'հսկէր\* ։

Յովհաննա՝ ջերմեռանդութեամբ Աստուածածնայ շնորհա-  
 կալ եղաւ իւր փրկաւէտ միջամտութեան համար, ոտք ելաւ,  
 և Մեդուսայի գլխուն պէս՝ երկայն մօրուքը ահաբեկ հալա-  
 ծողներուն երեսին ցցունելէն վերջը, սենեակէն դուրս ելաւ  
 և ախոռէն էջը քաշեց, հեծաւ և արտորնօք հեռացաւ աս  
 սոսկալի որջէն ուր քիչ մնաց պիտի կորսնցնէր ան միակ օ-

\* Աս հրաշքը սրբուհի Վիլքըֆօրի պատմութենէն առնուած է, որ  
 բարբարոս գինւորներու ձեռք իյնալով ասանկ մօրուքով մ'ազատած  
 էր Աստուածամօր շնորհիւ ։ Տե՛ս Աստուածամօր հեռագրութիւն  
 Բարիզ, 1881. Էրես 270 ։

ժիտը զոր իւր երկնային ամուսնոյն պիտի նուիրէր: Ասօգուտ է ըսել որ մտուքը վտանգին հետ աներևոյթ եղաւ:

Գիշերուան խաւարը և անտառին ծառերը սկսան կամոց կամոց աղօտ գոյն մը առնուլ: Մեր թափառիկ դիւցազնուհին շատ չանցաւ ընդարձակ դաշտ մը հասաւ, սուրբն Սթօրմի պէս՝ ամպհովանիի տեղ պարզ և փայլուն երկինքը և սրունքներուն մէջ տեղն ալ սև էջմ' ունենալով միայն: Նորատի ազջիկը ճամբան չէր գիտեր, կ'երթար ուր որ կ'տանէին զինքը իշուն չորս սուքերը: Սակայն փերջապէս յաջողելով Մէքիի եզերքը գտնել, ջուրին մանրապտոյտ ընթացքին հետեւեցաւ, ինչպիսի թէսէոս Արիանի գերձանին և արևուն մարը մտածատեն իւր ուղևորութեան նպատակին հասաւ:

Մայէզպախի վանքը լեռի մը ստորոտը կ'բարձրանար, ուր սրբուհին Պիտաթրիւտ կանգնած էր որպէս զի կոյսերուն ջրմեռանդութիւնը հիւսիսային հովէն չպաղի:

Յովհաննա հասած ատեն երեկոյեան աղօթքը լմնցած էր Վանափակ կոյսերը իրարու ձեռքէ բռնած կարգաւ մատուռէն դուրս կ'ելնէին: Կարծես թէ սև մարգարիտներու վարդարան մ'էր: Յովհաննան տեսնելով շուրջը հաւաքուեցան, և կ'հարցնէին թէ ո՞վ է, ո՞ւսկից կ'գայ և ի՞նչ կ'ուզէ: Երբ իմացան թէ հաստ կտաւէ զգետ, սանդաղներ և խցիկ մը կ'ուզէ՝ զան արբասուհւոյն տարին, ան ալ մեր դիւցազնուհին Քրիստոսի հետ նշանեց, և տասը ամսուան պէտք եղած նորքնծայութեան պարտաւորութենէն ալ ազատ բրաւ լուսահոգի հօրը կրօնքի բրած ծառայութեանց փոխարէն:

Նորատի կոյսը շատ չանցաւ սրբուհի Պիտաթրիւտի համարումը գրաւեց, որ տեսնելով թէ Յովհաննա Հայր մերը քաջ կ'հասկնայ և ջերմեռանդութեամբ ձեռքերը կուրծքին վրայ դնելը աղէկ գիտէ, զան վանքին մատենադարանին պահապանը անուանեց, ուր 60 հատոր գէրք կար որ անատենուան համար անգիւտ գանձ մը կ'սեպուէր: Յովհաննա առաւօտէն մինչև իրիկուն սենեկին մէջ միամիտակ՝ առաջին օրէն սկսաւ ան վանական վհատութեան մէջ ընկնիլ, որու ամեն նորքնծաները ենթակայ են, ինչպէս առաջին պեգամ նաւ մտնող

ճամբորդները ծովու ախտին: Միշտ սենեակը կ'մանէր, կ'ելնէր, գիրքերը, զգեստները և եղունգները կ'մաքրէր, վարդարանը կ'համբար և արևուն բնթացքը շատ յամր կ'գտնէր: Ընկերուհիները տեսնելով որ արբասուհին զան շատ կ'ոիրէ՝ կ'նստանձէին, և ինչպէս Պրահմանները Բարիաներէն՝ անոնք ալ Յովհաննայէ կ'խորշէին: Բիւր անգամ զբօսանքի խամբուն, էրբ միւս կոյսերը ուրախութեամբ պարտէզին մէջ կ'ցրուէին ուրախ զուարթ խօսելով և խնդալով, պատանները ծաղրելով, գիշերուան երազները իրարու պատմելով, իրենց սիրահարներու նամակները մէկմէկու տալով, ոտքերնուն երկայնութիւնը չափել վ կամ՝ շուրթերնուն և մագերնուն գոյնը բաղդատելով, Յովհաննա միւս միտակ կ'մնար, ինչպէս կոթող մը հրապարակի մը մէջ, ծառերուն բարձրութեան կ'նայէր և սրբուհին Լիօպէին կ'գանգատէր որ վանքին մէջ տաղտկութենէ և զզուանքէ զատ ուրիշ հրճուանք մը չէր գտներ: Բաղդախնդիներն ալ աս կերպ կ'գանգատին և կ'հայհոյեն խմբագիրներուն ամեն անգամ՝ որ սպիկի տեղ Գայիֆօրնիայի մէջ միայն խիճեր և տենգ կ'գտնեն:

Ամեն տեղ և ամեն ատեն ձանձրութիւնը և դատարկութիւնը բարեպաշտութեան միակ շարժառիթներն եղած են: Երկինք կ'նայինք երբ երկրի վրայ բան մը չունենանք, սուրբ պատկերները կ'պագնենք երբ պագնելու ուրիշ բան մը չենք գտներ:

Երբ Յովհաննա ինքզինքը չորս պատի մէջ փակուած տեսաւ, կեանքը իրեն խիստ անտանելի երևցաւ և սկսաւ իր ապագան մտածել: Տարօրինակ զբաղմունք եօթնուամսնամեայ աղջկան մը համար: Աս ալ իրաւ է որ վանքերը շատ դարերէ 'ի վեր ամեն տեսակ այլանդակ ճաշակներու պալատները եղած են: Եգիպտացի կրօնաւորները ցիցերը անչափ կ'ուռուցէին որ ալ պտուղ կ'տային: Հունգարիայի սրբուհիները ո՞րչի կ'ուտէին\*: Գիւթիւթները § ամբողջ տարիներ աչերնին

\* Տես Մօնթալամպէրի սրբուհւոյն Եղիսաբէթի պատմութիւնը «Ա. հա թագուհին ապափը բաւական չսեպելով ջուրի տեղ մէջ կ'խմէ»: § Տեսակ մ'աղանդաւորներ են:

փորձերուն վրայ տնկած կ'մնային իբր թէ ճշմարտութեան լայսք անտեղէն պիտի ցայտէր: Յովհաննա՛ այս բնազանցական մտածմանց մէջ ընկղմած՝ իր օրերը կ'անցնէր մերթ Ս. Օգոստինոսի գիրքերը կարդալով, որ իբր ականատես վկայ ընտրելոց երանաւէտ կեանքը և դժոխքին բոցերը կ'նկարագրէ, և մերթ մատերը խարտեալ մազերուն մէջ դրած իւրովի այն հարցմունքները կ'ընէր մերն երկայ և ապագայ կենաց վրայ զոր արտասուեաց հովտին ամեն բնակիչները կ'ընեն յուսահատաբար և որոնց աստուածաբանները ու խոստովանահայրերը միշտ սուտ ու մութ խօսքերով և հասարակ տեղիքով կ'պատասխանեն, ինչպէս կ'ընեն մեծ պաշտօնեաները գլխի ցատուող գործ ուզողներուն: — Թեղճ աղջկան քունը միշտ այլանդակ երազներով կ'վրդովէր:

Ալ Լիօպէ սրբուհին չէր երևեր իւր անվերջանալի զուարճութեանց ոսկեղէն խոստումներովը, այլ առև սատանաներ կ'երևէին սպառնալից եղջիրներով՝ կամ զինեալ հրեշտակներ: Մերթ դրախտին երանաւէտ կեանքը կ'յուսար, մերթ սատանայի՛ ճիրաններէն կ'վախնար: Եթէ օր մը հաւատար քերիստոնէութեան ճշմարտութեանց՝ Աւետարանէն սկսեալ մինչև սուրբ Մարթէնի հրաշքները, երեք օր ալ ամեն բանէ կ'կասկածէր: Մերթ մեր վրայ ծանրացած երկնային վճիռին առջև գլուխը կ'հակէր, շատ անգամ ալ երկինքը խորտակելու համար զան քարկոծել կ'ուզէր: Մէկ խօսքով ան տեսակ մեղամաղձոտութեան մէջ ինկած էր որով կ'պաշարուին ամեն անոնք որ կ'ջանան մեր ճակատագրին խորհրդաւոր գաղտնիքը թափանցել. Ի՞նչ ենք, Ո՛ւսկից կ'գանք, Ի՞նչ պիտի լինի մեր ապագան: Ահա՛ աս խնդիրները կ'ուզէր պարզել, որոնք մարդուս ուղեղին մէջ անլուծելի են, ինչպէս միմք ջուրին մէջ:

Ահա՛ այս մտածմունքներով պաշարուած՝ խեղճ Յովհաննան վրան գլուխը չէր նայեր, մազերը չսանտրած կ'ձգէր, ակռաները անգործ, աչքերը անբուն կասկարմիր եղած էին, եղունգներն ալ սեփսև: Եթէ Բասթալին ըսածին նայինք՝ աս պէտք է ըլլալ երկրիս վրայ ճշմարիտ քրիստոնէին բուն վի-

ճակը: Պէտք է որ քրիստոնեան միշտ դժոխքի վախին և արքայութեան յուսոյ մէջ դեղեկելով ապրի և հառաչանաց ուխտարին մէջ արքայութեան անձուկ ճամբան փնտռէ: Որչափ որ գովեստից արժանի է աս վիճակը բայց ես չեմ մաղթեր զան, սիրելի ընթերցող: Ես նախամեծար կ'սեպեմ անբարի քրիստոնէից վսեմ և անկեղծ բարեպաշտութիւնը, որոնք սուրբերը փառաբանելով և ուրբաթ օրերն ալ խեցգետին ուտելով՝ անվեհեր արքայութեան երանաւէտ կեանքը վայելելու կ'յուսան: Ետեր կան որոնք խելքի մեծութիւն կամ փիլիսոփայութիւն ծախելու համար կ'ցաւին աս երջանիկ մահկանացուաց վիճակին, բայց ես կ'նախաձեռնեմ անոնց հոգւոյն պարզութեան և վիզերուն եռակի ծալքերուն:

Եթէ տաճիկ մը կամ կուսակալ մը ուզէ քրիստոնեայ ըլլել, պիտի խրատեմ որ Հռոմէական առաքելական եկեղեցին ընտրէ, որուն տօները անչափ վսեմ են, պատարագը կարճ, պահքերը կերակուր՝ երով լի, երաժշտական նուագները ականջները կ'հրճուեցնեն և պատկերներն ալ աչքերը, և խոստովանահօր տեղն ալ չէ թէ վայրենի Պասիւէ մը կամ Լաքորտէր մ'առնու՝ որոնք միշտ իր աչաց դժոխքը և իւր բնակիչները պիտի ներկայացնեն, այլ էսքօպարի հեղ աշակերտ մը բնորէ որ սնդուսէ գորգի վրայէ զան ուղղակի երանելոց բնակութիւնը տանի:

Քանի որ Աստուած՝ ինչպէս կ'ըսեն Ս. Օգոստինոս և Լաքութանս, չ'տտեր ան ծաղիկեայ ուղիները, բաւական է որ իրեն առաջնորդեն, ինչ հարկ փուշերու, տատակներու և ջուրով խաշուած խոտերու մէջ արքայութիւնը փնտռել, ոնգային ձայները մտիկ ընել և տգեղ պատկերները պագնել: Բայց դառնանք մեր նիւթին:

Կրողը տանի սա Աթէնքի օրագիր ցրողները և ուսական եկեղեցւոյն չորս զանգակները, որոնք միշտ պատմութեանս թելը կ'ընդհատեն:

Տարափոխիկ ախտերը, ժանտամահը, ծաղիկը և անկէ հետեւած բոլոր չարիքները աս աղէկութիւնը ունին որ մարդս միայն մէկ անգամ կ'ենթարկուի: Այս էր ահա Յովհաննայի



բնագոնացական հիւսնադրութիւնք: Աս անմեկնելի առեղծուածք յուծելու համար ամբողջ երեք ամիս գլուխք քերելէն վերջը՝ գիրքերը գոցեց, պատուհանք բացաւ և սկսաւ գարնան անուշաբոյր հոտերը ծծել: Ապրիլի վերջը մտ էր, դաշտը կանանչ, զուարթ և քաղցրաւէտ՝ ճարտար սենեկապանուհիի մը ձեռքէն նոր ելած մանկամարդ աղջկան մը կ'նմանէր: Գարնան ծառալած բուրմունքները խեղճ կոյսին զգայարանքները կ'թմբեցնէին, որ երեք ամիսէ ՚ի վեր իւր խուցին և բնագոնացական խաւարին մէջ բնկղմած՝ մեծ ուրախութեամբ կը վայելէր մարգագետիններու դալարեաց տեսքը և մանիշակներու քաղցրաբոյր հոտերը:

Գեղեցիկ եղանակի և սրտի մը մէջտեղը պուկաններու և բծիչկներու բաժին նայելով՝ խորհրդաւոր կապ մը կայ: Տերեւաղարդ ծառերու, կանաչագեղ մարգագետիններու և հովանաւոր քարայրներու տեսքը մեզի գրգռու մը կ'ազդէ աս երանաւէտ տեղերը եւս մ'ունենալու: Ներոն մեղամաղձոտ ժամերը կ'բաղձար որ բոլորմարդկային սեռը միայն մէկ գլուխ ունենայ, որպէս զի կարենայ մէկ հարուածով կտրել զան՝ եւ դուն, սիրելի բնթերցող, գարնան օր մը եղևնիի կամ՝ նունենիի մը շուրթին տակ նստած ատենդ միթէ՞ չբաղձացիր երբէք որ ամեն կիները միայն մէկ բերան մ'ունենան որ կարենաս ամենքը մէկտեղ պագսել: \* Յովհաննա՝ որուն սիրաբ ծովուն արեաց պէս կ'ուռէր վանքը մտած օրը ունեցած ակնկալութիւնները յիշելով՝ և ուր միայն ձանձրութիւն, հին գիրքեր և տաղտկալի մտածմունքներ գտած էր, «Լիօպէ, Լիօպէ, գոչեց, երբ պիտի կատարես խոստմունքներդ» և յուսահատութենէն պատուհանին վանդակները խորտակել կ'ուզէր, բայց վանդակները երկաթէ էին և աղջկան ձեռքերն ալ անգործ մնալուն՝ մամէ աւելի փափուկ և ճերմակ եղած էին: Եւ որովհետեւ ոչ շուն ունէր ծեծելու և ոչ ալ անօթ կտրելու, սկսաւ լալ: Արցունք թափելը միշտ քաղցր է մանաւանդ երբ բարեկամ ձեռք մը կամ՝ սիրալիր շրթունքներ

\* Պայրն, Տճճ Ժ. Կ. Երգ Զ:

պատրաստեն սրբել սրտի աս անձրելը, ինչպէս կ'ըսեն Հնդիկները. բայց երբ առանձին կ'լանք, ան ատեն արցունքները թէ դառն են, թէ անկեղծ և թէ ճշմարիտ աշխարհիս բոլոր ճշմարտութեանց պէս:

Աս ախուր մտածմունքներով պաշարուած էր երբ դուռը բացուելով՝ արբասուհին ներս մտաւ անմօրուս երիտասարդի մը ձեռքէն բռնած որ սուրբն Բենեդիկտոսի համազգեստը հագած էր և աչերն ալ համեստութեամբ սանդաղներուն վերայ յառած:

« Յովհաննա՛, քսաւ արբասուհին՝ երիտասարդ տբեղանմեր գիւցաղնուհւոյն ներկայացնելով, Ռապան—Մօր Յիւլի մեծաւորը Թիւրէնժի մէջ քարոզիչներ պիտի խրկէ, ուստի կ'ազաչէ որ Պօղոս առաքեալին թուղթերը թանկագին մագաղաթի վրայ ոսկեղօծ գիրերով օրինակենք, \* որպէս զի ոսկւոյն փայլը աս կարծրասիրտ բարբարոսները ամոքէ և Աւետարանին ճշմարտութեանց համոզուին դիւրաւ: Աս երիտասարդ բենեդիկտեանը Հայր Յրիւմանս կ'անուանուի, քեզի պէս բարեպաշտ և գեղագրութեան մէջ ալ մեծ համբաւ ունի: Աշխատեցէք միատեղ մինչև որ մեր Ռապան եղբօր յանձնարարութիւնը կատարէք: Ահա ասիկ ոսկեգոյն մեղան, գրիչ և ունիք, կերակուրն ալ իմ սեղանէս պիտի խրկեմ: Մնաք բարեաւ, զաւակներօ: » Ըսաւ և սենեկէն դուրս ելաւ դուռը գոցելով ինչպէս կ'ընեն Մոլտավիայի գիւղացիները երբ գիւղին տէրը կ'գայ իրենց կնիկներուն այցելութիւն բնելու: Բայց սրբուհին Պիլտթրիւտ առաքինի կին մ'էր, որու մտքէն չար խորհուրդ մ'անգամ չէր անցներ: Եթէ տեսնէր որ կրօնաւոր մը վանքին կոյսերէն մին կ'պագսէ՝ անանկ պիտի կարծէր թէ զանի կ'օրհնէ: Մանկութեանը ժամանակ երեսը ծա-

\* Սուրբն Պօնիֆաս Իյուպէրժ արբասուհւոյն աղաչեց որ Պօղոս առաքեալին թուղթերը ոսկեղէն գիրերով օրինակել տայ, որպէս զի կրապաշտները ոսկւոյն փայլէն շացած քրիստոնէութեան դառնան: Հոս գաղղիական առակը շատ յարմար է որ կ'ըսէ, «Ռեղաւոր ոսկեղծելու համար—pour dorer la pilule.

դիկ ախտէ արուելով միայն անմեղ համբոյրները գիտէր և  
 Երբէք չէր կարծեր որ ուրիշ տեսակ համբոյր ալ գտնուի :  
 Մանաւանդ ան դարուն սուրբն Բենեգիկտոսի աշակերտները  
 այր և կին վանքերուն մէջ մէկտեղ խառն ի խուռն կ'ապրե-  
 ին, ինչպէս տղրուկները ջուրի յուրանի մը մէջ : Քսենի մը  
 ժամանակագիրներու ըսածին նայելով՝ ասանկ խառն ապրելով  
 ասենին գէշ հետևութիւն մը չէր ծագեր : Աս տեսակ օրի-  
 նակներ շատ կան ան ատենուան սուրբերուն մէջ, ինչպէս  
 սուրբն Ամուն՝ որուն կինը կոյս մեռաւ տասնութ տարի Լը-  
 կանք հետ պառկելէն վերջը : Իսկ ընդհակառակն Միւրաթո-  
 րիի ըսածին նայելով աս կերպ ապրելէ շատ գայթակղութիւն  
 ներ և շատ զաւակներ կ'ծնէին : Բայց այս զաւակները սովո-  
 րաբար Ֆիւլտ գետը կ'նետուէին, ասով թէ վանքերուն պա-  
 տիւր չէր աւրուեր և թէ ձուկերը կ'գիրնային :\*

Երբ առանձին մնացին աս երկու արեղիկները գիտնալով  
 թէ որչափ սուղ են ժամերը սօթաուեցան և գործի՝ այսինքն  
 Պօղոս առաքեալի թուղթերը օրինակելու սկսան : Ամբողջ  
 տասնեւհինգ օր շարունակ երիտասարդ արքան առաւօտուն  
 Յովհաննայի սենեակը կ'մանէր ուր մինչև իրիկուն անոր հետ  
 կ'աշխատէր : Աս տասնութ տարեկան երիտասարդը որ իր  
 անտիական հասակէն ՚ի վեր Եկեղեցական պաշտամանց գիր-  
 քերը օրինակելու միայն զբաղած էր, ոչ Սուրբ գիրքը կար-  
 գացած էր, ոչ Օգոստինոսի Խոստովանութիւնները, և ոչ սուրբ  
 Վասիլի զրած ճառը հետևաբար գեռ անբիծ և անարատ էր  
 ճիշդ ան ձիւնին պէս որու մէջ սուրբն Յրանսուա կ'թաւալէր  
 մարմնոյն փորձութիւնները զսպելու համար : § Օրինակութիւնը  
 շուտ կ'յառաջանար բայց Յովհաննայի հետ յարաբերութիւն-

\* Ան ատենուան բոլոր սուրբերը՝ Սուրբ Անթօնէն զատ, պաղջու-  
 րով կ'լուացուէին իրենց կիբերը զսպելու համար :

§ Աին մը որ Պէլօֆօհէմի վանքին աղբիւրը զգեստները կ'լուար (ո-  
 րուն արբասուհին էր սրբուհին Վիօպէ) օր մը նորածին մանկան մը  
 գիակը գտնելով ընկերուհիներուն ցուցուց : «Նայեցէք, ըսաւ, կոյ-  
 սերը ի՞նչպէս կ'մկրտեն իրենց զաւակները» : (Յւէօրէ, Եկեղեցական գոր-  
 ծոցիւն) :

ները քայլ մ'առած չէին դեռ : Ամեն անգամ որ ձ ոք մեր  
 գիւցազնուհւոյն ձեռքին դպչէր կամ երբ ձեռագորին վրայ  
 հակած մազերնին իրարու կ'խառնուէին կ'զգար որ սիրտը ուժ-  
 գին կ'բաղխէ, ինչպէս կ'բաղխէ դղեկի մը զանգակը վտանգի  
 ատեն : Բայց չէր կրնար բսել թէ աջ կողմը կ'բաղխէր թէ ձախ :

Իսկ Յովհաննա՝ Օրիփէն, Ոսկերբերան և սուրբն Յովհաննու  
 Ծումպահին կանոնները ստեպ կարգացած ըլլալով՝ աս բա-  
 ները քաջ գիտէր, բայց ոչ գործնական կերպով : Աս նիւթին  
 վրայ կրնար հակաճառութիւններ անգամ ընել ան արուեստա-  
 կան բառերը գործածելով՝ զորս միայն բժիշկները, պոռնիկ-  
 ները և աստուածաբանները գիտեն :

Մանաւանդ՝ աս առաջին անգամն էր որ երիտասարդի մը  
 հետ առանձին մնացած էր և սրտին շփոթը օր ըստ օրէ կ'ա-  
 ւելնար, ինչպէս կ'աւելնայ Անկիւացի ճամբորդներու շփոթու-  
 թիւնը Եգիպտական գերեզմաններուն մէջ՝ զորս աշխարհա-  
 գական տախտակներուն վրայ քաջ սորված են :

Աս երիտասարդներուն վիճակը երթալով կ'գժուարանար :  
 Ֆրիւմանս չէր գիտեր թէ ինչ ուզէ, Յովհաննա ալ չէր գի-  
 տեր թէ ո՞ւր կ'ից սկսի :

Թուղթերուն օրինակութիւնը լմնալու վրայ էր : Միայն  
 եբրայեցոց թուղթը մնացած էր որուն պիտի յաջորդէր դառն  
 և անխուսելի բաժանմունքը : Ետ անգամ Յովհաննա՝ Բէնէ-  
 լտիին պէս, ցորեկուան գրածը գիշերը կ'աւրէր : Ընկերը կ'հաս-  
 կընար աս խորամանկութիւնը, նպատակը կ'իմանար և սաս-  
 տիկ կ'կարմրէր անանկ խոր հառաչանքներ հանելով՝ որոնք  
 կարող էին աղօրիք մը դարձնել : Բայց ասչափ էր միայն և  
 նոյն օրն ալ կ'անցնէր ընդունայն տենջանքներով և անհիմն  
 յոյսերով :

Բայց, սիրելի ընթերցող, ոչ դուն ժամանակ կորսնցնել  
 կ'ուզես և ոչ ես : Մանաւանդ ես՝ որ ճշգրիտ պատմութիւն  
 մը կ'գրեմ և չեմ ուզեր ան բանահիւաններուն և հեղինակ-  
 ներուն նմանիլ՝ որոնք սրտի յուզմունքներ, արցունքներ, ե-  
 րեսի կարմրութիւն և ուրիշ պլատոնական նիւթեր կ'դիզեն,  
 և իրենց քաղցր տաղերը երկերկու կ'լծեն, ինչպէս կ'լծեն եզե-

զերը արորին կամ Աստղիկի ստինքներուն պէս կըրիկ դարձուածքներ կ'յիդ յեղեն: Մեծն Տանթէ սա մարդերը միջնորդ կ'անուանէ: Ես ոչ առ անունէն կ'ախորժիմ և ոչ իրէն: Զգենք ուրեմն սա ձևերը Պլատոնին, Օվիտին, Բեդրարքին և անոնց հետևող լալիաններուն և միշտ ճշմարտութիւնը ցուցնենք մերկ և հերարձակ՝ ինչպէս որ ելած է իր ջրհորէն: Երկու սիրահարները Առաքեալին վերջին թուղթերը օրինակած էին և աբելը զոր Կալիլէոս դեռ անշարժութեան դատապարտած չէր, իւր առօրեայ շրջանը լմնցնելու մտ էր: Ճիշդ ան ժամն էր ուր եզերը մտաբեր կ'դառնան և բրիտանեայսերն ալ Ave Maria քսելով՝ Աստուածածինը կ'փառաբանեն:

Վանքին զանգակը կոյսերը աղօթքի կ'հրաւիրէր:

Սրահներուն մէջ ամենին շուկ մը չէր շուեր: Յովհաննա պատահանին քով նստած՝ սուրբ Գիրքը կ'թղթատէր: Փրիւմանս՝ զմայլած աչերը բնկերուհւոյն վրայ յառած էր ուրուն գլխին վրայ արևուն մարբ մտնող ճառագայթները խուցին կարմիր ապակիներէն թափանցելով\* փայլուն պակ մը կ'ձևացնէին ճիշդ ան պակին պէս զոր ուռս պատկերահանները կ'դնեն իրենց սուրբերուն գլխին: Մեր դիւցազնուհին անատեն տաննեօթ տարեկան էր և ոչ ան հրեշտակային ու սպիտակ կոյսերուն կ'նմանէր որոնց չենք համարձակիր դպչելու վախճալով որ թևերնին չբացուի, և ոչ վարդի մը կուրնին, այլ աւելի Պաշտասինի ան ծառին կ'նմանէր որ ոստի մը վրայ անօթի ճամբորդին թէ անուշաբոյր ծաղիկներ կը նուիրէ և թէ քաղցրահամ պտուղներ: § Սեսեկին ստուերը և վանքին համադամ կերակուրները մ'ըթը կակուղցուցած և մարմինն ալ պնդացուցած էին: Մազերը զոր մէկ անգամ միայն կտրած էր աւելի առատ կ'ծփային ուսերուն վրայ: Նորատի աղջկան ձևերը իրաւ է որ քիչ մը վայրենի, անմշակ

\* Գունաւոր ապակիներն հռոմայեցւոց ատենն ալ կար:  
 § Պրօբար կ'պատմէ թէ Պաղեստինի մէջ ծառեր տեսած է, որոնք թէ պտուղ ունէին և թէ ծաղիկ: Գուցէ Մովսէսի լռանի պատշաճ ըսածը աս է:

և անխնամ տեսք մ'ունէին, բայց՝ ինչպէս կ'ըսէ Շէքսպիրը, «Անարատ սակին սակեղօծել, վարդին անուշ հոտեր տալ, շուշանը սնգուրել պէտք չկայ», մենք ալ կ'աւելցնենք թէ եօթհատանամեայ աղջիկ մ'ալ ոչ անուշ հոտերու պէտք ուն, և ոչ զանգուրի: Փրիւմանս դեռ կ'լռէր: Յովհաննա գիրքին էջերը կ'դարձնէր մերթ մ'մնջելով, մերթ բարձրտձայն կարգալով: Յանկարձ՝ անանկ քաղցր ձայնով մը, որ օձերու թովի նորատի հնդկուհիի մը ձայնին կ'նմանէր, հետևեալը կարգաց:

«Երգ երգոց Սողոմոնի. Բերնէդ համբոյր մը տուր: Ստինքներդ գինիէն աւելի հրաշալի են, եւ մարմնոյդ ծաւալած բուրմունքները ամեն հոտերէ աւելի քաղցր: Անունդ վերքի վրայ դրուած սպեղանի է: Ասոր համար աղջիկները քեզ կ'սիրեն: Գեղեցիկ ես, ո՛վ սիրեցեալդ իմ, սքանչելի ես, եւ մեր անկողնին վրայ ծաղիկներ սփռուած է: Գիշերը ստինքներուս ստուերին տակ պիտի անցնես: Եկո՛ւր, սիրեցեալդ իմ, դաշտը երթանք: Հոն համբոյրներով պիտի լուամ երեսդ: Հոն ստինքներս պիտի տամ քեզի: Քաղցր բուրմունքներովդ զօրացուր զիս, խնձորներ դիր շուրջս, վասն զի սէրէ վիրաւորուած եմ: Կսիքի պէս զիս սրտիդ վրայ դրօշմէ: Մերը մաւ հուլանէ աւելի զօրաւոր է: Մեծ ջուրերը պիտի ջկրնան զան մարել, գետերը պիտի ջկրնան ընկղմել:»

Փրիւմանս զմայլած մտիկ կ'ընէր և որովհետև չէր գիտեր թէ խնձորները, ստինքները և համբոյրները մարգարէական այլաբանութիւններ են և Քրիստոսի իւր եկեղեցւոյն համար ունեցած ապառնի սէրը կ'նշանակեն, մարմինը հեշտութեամբ կ'քստմնէր, ինչպէս կ'քստմնէր Յորի մարմինը երկիւղէն: Աս երգին ամեն մէկ վերջակէտին՝ մէյմէկ քայլ յառաջ դացած էր, վերջին կտորին Յովհաննայի առջև ծուր դրաւ:

Ան ատեն Յովհաննա աչերը գիրքին վրայէն վերցնելով՝ երկու սիրահարներուն հայուածքը իրարու զարնուեցան:

Կ'ըսեն թէ ճամբորդ մը երբ գահաւանդի մը եզերքէն կ'անցնի (մեր դիւցազնուհւոյն գլուխը եկած փորձանքն ալ ասոր պէս բան մ'էր) պէտք է որ աչերը դոցէ, թէ ոչ գլուխը կը

դառնայ և անդունդին մէջ կ'գլորի: Յովհաննա աչերը չգոյեց և աս պատճառաւ ինկաւ . . . գիրքը ձեռքէն և

*Quel giorno più non vi leggero avanti.\**

Խրիմի պատերազմէն վերջը Բրուսիոյ դեսպանը արծուի փետուր մը կ'ուզէր հաշտութեան դաշնագիրը ստորագրելու համար, § ես ալ Գուբիտոնի թեէն փետուր մը կ'ուզեմ՝ աս նորատի ամուլին վազանցուկ երջանկութիւնը նկարագրելու համար: Առանձնութիւն, հանգստութիւն, առատ կերակուր, գարնան զով սիւք, վերջապէս ինչ որ պէտք է սիրահարներու երջանկութեան, բան մը չէր պակասեր: Յովհաննա՝ վանական ամեն պարտաւորութիւններէ զերծ՝ առաւօտէն մինչև իրիկուն: Ընկերին հետ սենեկին մէջ փակուած կ'մտար:

Յունիս ամսոյն մէջն էին, սակայն օրերը աս երիտասարդաց անյագ շուրթերուն խիստ կարճ կ'երևէին: Շատանգամ երեկոյեան ժամերգութեանց ատեն բաց պատուհանին քով նստած՝ այն ինչ քանգակները տխրագին հնչելով՝ իբր թէ կը ցաւէին օրուան կորստեան վրայ, մեր սիրահարները կ'հառաչէին և Յովսէփն պէս արևին կ'ըսէին. — «Կեցի՛ր»: Բայց արևը կ'երթար հակոտնեաները լուսաւորելու և մեր սիրահարները հետեւեալ օրուան կ'սպասէին:

Տասը օր ևս անցուցին աս նեղ սենեկին մէջ ուտելով, խմելով, գրելով, կարդալով, պագնուելով, և . . . ժամանակին ուրիշ յանցանք չէին գտներ թէ ոչ շուտ կ'սահի կ'երթայ:

Վերջապէս բաժանման օրը հասաւ: Գիրերուն օրինակութիւնը արդէն շատոնց 'ի վեր լմնցած էր: Ռապան—Մօր Փրիւմանսի ջորի մը և խստիւ հրաման մը դրկած էր որ արտորնօք հօտը վերագառնայ: Խեղճ երիտասարդը կ'անիծէր իր ուլս-

\* Այն օրը աւելի չկարգացին: Տանթէ, Դժոխ, եք Ե: § Բադը՝ որուն փետուրներովը գրիչ կ'շինենք գերմաներէն Ente կ'ըսուի, բայց այս բառը ֆրանսերէն canard բառին պէս «որ կ'նշանակէ, զոր արդի յոյները չձլու կ'ըսեն: Աս պատճառաւ է որ Բրուսիոյ դեսպանը կատակով արծուի փետուր կ'ուզէր:

տը, մեծաւորը և բոլոր սուրբերը, և վշտագին՝ ճամբորդութեան զաւազանը ձեռքը՝ եկաւ իւր վերջին բարիք տալու: Խեղճը չէր կրնար արցունքները զսպել: Իսկ Յովհաննա չէր լար, վասն զի ընկերուհիներուն մէկ քանին ներկայ էին և կիները թէպէտ խիստ զգայուն են, միայն պէտք եղած տեղերը կ'լան: Եթէ աս ըսածիս կ'կասկածիս, սիրելի ընթերցող, հարցուր նաւապետներուն և պատմութեան:

Յուզիթ կայսրուհին՝ այն ինչ տարաբաղդ Ռօպէրը զան ազատելու համար գղեկին վրայէն ինքզինքը վար կ'նետէր, ժպտելով՝ էրիկը դիմաւորելու կ'երթար: Մարկօ թագուհին ամենևին կասկածի հետք մ'անգամ չձգելու համար ուրախ զուարթ կ'իսնդար երբ իր դիմացը և իրեն պատճառաւ Պօնիֆատի գլուխը կ'կտրէին: Գարուժ կոմսուհին՝ իւր ահռելի բարբարոսը կ'գրկէր որուն ձեռքերը դեռ իր սիրելոյն արեամբը ներկուած էին: Պատմագիրերը աս վեհանձն կիներուն քաջասրտութիւնը շատ կ'գովեն: Իսկ ես ամենևին չեմ գարմանար ոչ աս գիւցաղնուհիներուն և ոչ ան փափկասիրտ Անկլուհիներուն համար, որոնք երբ Սրբերա կ'երթան Փառուսի և Հիւլըն օտերու լուսանցքին վրայ՝ լալու պէտք եղած տեղերը մ'ստիտով կ'նշանակեն:

Բայց երբ Յովհաննա առանձին մնաց՝ կուրծքին վրայ ան անձանօթ բռնը զգաց զոր միշտ կ'զգանք երբ կերակուր շատ ուտենք կամ մայր մը, սիրուհի մը և կամ մեր հարստութիւնը կորսնցնենք: Մեր Պլուծարքի ըսածին նայելով՝ կիները ճշմարիտ սիրոյ ստուերը անգամ չեն ճանչեր: Իսկ ես առանկ կ'յուսամ թէ սէրը կանանց տեսակ մը հիւանդութիւնն է որ տաղտկութենէ կամ առանձնութենէ կ'ծնի ինչպէս ոչիւր աղտէ: Կիները ամեն գիշեր մէկուն գիրկէն միւսին գիրկը անցնելու սովորած ըլլալով (պարահանդէսներու մէջ ըսել կ'ուզեմ, խօսքս գէշի մի տանիք) ոչ հառաչելու ժամանակ ունին և ոչ իրենց հողմահարէն զատ ուրիշ բան մը սիրելու: Այն իշուն կ'նմանին որ շորս գէղաուուոյտի առջև անսթի կը մնար վասն զի չէր գիտեր թէ որ գէզէն ուտէ:

Գուցէ կ'սխալիմ, բայց ան ամեն կիները որոնք կ'ճանչեմ

Թէ սէր ունին կամ փակուած և աղէկ հսկուած աղջիկներ են  
 Եսպերեան պարտիզին խնձորներուն պէս և կամ տարիքնի՛  
 առած կիներ են, որոնք Պարպ—Պլէյօյի ունեցած կիներէն վեց  
 անգամ աւելի տարիք ունին: Խեղճ աղջկան յուսահատու-  
 թիւնն երթալով կ'աւելնար երբ ինքզինքը փակուած և ա-  
 ռանձին կ'տեսներ աս չորս պատերուն մէջ՝ ուր դեռ նախըն-  
 թաց օրը այնչափ համբոյրներով կ'թնդար: Ամեն անգամ որ Ս.  
 Օգոստինոս տրտումէր ալմի մէջ կ'Թաւալէր իբր Թէ անուշա-  
 բոյր բաղնիք մը կ'առնու: Ասանկ պարագաներու մէջ սրբու-  
 ճին ժէնքվիէվ այնչափ շատ կ'լար որ շապիկը փոխելու կ'ըս-  
 տիպուէր: Սուրբն Պրահսուա ձիւնով ծածկուած արձանները  
 կ'գրկէր: Սրբուճին Լիպանի երկաթէ սանտրով մարմինը կը  
 բերէր, և սրբուճին Լիւթպիրժ մուկերը կ'խղզէր: Մեր դիւ-  
 ցազնուճին բոլոր աս սուրբերէն աւելի խոհեմ՝ սենեկին մէկ  
 անկիւնը քաջուած հանգիստ կ'նստէր և աղանիի փետուր-  
 ներէ շինուած հողմահարով (միւս հողմահարները խստիւ ար-  
 գիլուած էին) կ'ջանար ճանճերը և տրտմութիւնը վանել:  
 Յունիսի տաքը իւր վիշտերը աւելի անտանելի կ'ընէր, օրերը  
 շատ երկայն կ'երևէին, ինչպէս ձեռ հօրեղբօր մը օրերը՝ իւր  
 ժառանգորդներուն:

Յուսահատութիւնը ան աստիճանի հասած էր և առփա-  
 կան տենչանքն ալ անչափ բորբոքած՝ որ զսպելու համար  
 Սրբոց վարքը գրողներուն գեղազիրերը կ'գործածէր մերթ  
 մարմինը գանակոծելով, մերթ սաւանները պաղ ջուրով թրթ-  
 ջելով, կամ էքլէսիասթի խրատին համեմատ տրտմութիւնը  
 գինիով փարատելու աշխատելով, բայց բոլոր աս հրաշագործ  
 գեղերը օգուտ մը չէին ընէր: Չմոռնանք նաև հագնին \* ու-

\* Agnus castus. Նախնի պատմագիրերուն ըսածին նայելով մէջքէն  
 կամ վիզէն կախուած հագնիի կոթով գանակ մը ամեն տափական  
 տենչանք կ'վանէր: Աս դանակը կ'երևի թէ ճերմակ պէր ըսուած փայտն  
 է, որ Արիսթօթի ըսածին նայելով Ֆալ գետին եզերքը կ'բուսնի և  
 նախանձոտ էրիկները գայն իրենց պառկելու սենեակը կ'դնէին ամուս-  
 նութիւնը չպղծելու համար:

րուն հոտը միայն՝ պատմագիրերու ըսածին նայելով, կ'բուս-  
 տիրոյ տենչը վանելու ինչպէս երիցուկի հոտը՝ մլուկները:

Ժամանակը, կ'ըսեն, ամեն վէրքերը կ'բուժէ. բայց սէրը  
 և անօթութիւնը չկրնար բուժել: Ապաքէն՝ մարդս որչափ խո-  
 հեմ կամ անօթի կենայ ասորժակն ալ այնչափ կ'աւելնայ,  
 մինչև անգամ կ'ստիպուի կօշիկները ուտել, Ռուսիայի մէջ  
 Նաբոլէոնի զինուորներուն կամ Պիւռէնեան լեռանց հովիւնե-  
 րուն պէս ընել: Ահա այսպէս էր մեր դիւցազնուճուոյն վի-  
 ճա՛ք, երբ իրիկուն մը այն ինչ վշտաբեկ՝ իւր կերակուրը լի-  
 ճին ծածաններուն կ'տար՝ վանքին պարտիզպանը տեսաւ որ  
 հաւնոցը մտնել ուզող աղուէսի պէս չորս դին կ'նայէր և  
 կարմիր մեղանով փոքրիկ գառնուկի մը մորթին վրայ գրուած  
 նամակ մը գրաւ ափը: Նամակին վրայ ծաղիկայ պսակներ,  
 նիզակով խոցուած սիրտեր, աղանիներ, բոցալառ ջահեր և  
 ուրիշ սիրահարական գողտրիկ նշաններ գրուած էին անա-  
 տենուան սիրահարներու սովորութեան համեմատ, որոնք ի-  
 բենց նամակները աս կերպով կ'զարդարէին ինչպէս կ'ընեն  
 մեր օրուան նաւաստիները իրենց թևերը և սրունքները:

Այս սիրահարական պատկերներուն մէջ Յովհաննա հե-  
 տեւալը կարդաց:

ՃԻՒԻՄԱՆՍ ԻԻՐ ՅՈՎՀԱՆՆԱ ՔՐՈՁԸ ԱՂՁՈՅՆ Ի ՏԵՐ

« Ինչպէս ծարաւի եղնիկը առուակէն հեռի կ'հառաչէ՝ իմ  
 » հոգիս ալ քեզ ծարաւի է, <sup>1</sup> ովքոյրդ իմ: Սիրտս վիշտե-  
 » րով հալած է և արտևանունքէս ալ ջուր կ'հոսի <sup>2</sup>: Գիշեր  
 » ցորեկ արցունքով կ'սնանիմ <sup>3</sup>: Ինչպէս անօթի մարդը երա-  
 » զին մէջ հաց կ'տեսնէ, ես ալ քեզ կ'երազեմ, Յովհաննա <sup>4</sup>:  
 » Իայց արթնցայ և քեզի քովս չգտայ: Ուստի սև էշը հեծ-  
 » նելով դէպ ՚ի սուրբ բնակարանդ ուղևորեցայ: Սրբուճի

1. Սաղմոս ԽԱ. 2:  
 2. Երեմիա Թ. 18:  
 3. Սաղմոս ԽԹ. 6:  
 4. Կսայի ԻԹ 8:

» Պօմպայի գերեզմանին մօտ կ'սպասեմ: Եկուր, աղաւնիդ իմ,  
 » որ արևի պէս կ'փայլիս<sup>5</sup>, եկուր պայծառութեամբդ գիշե-  
 » րուան աստղերուն նշոյլը նսեմես»:

Ահա աս էր Յրիւմանսի նամակը: Այսօր երբ կնկան նա-  
 մակ մը գրենք Իւկօ Յօս.քօլօյէն կամ Ժօրժ Սանէ փոխ կ'առ-  
 նունք: Անատենուան սիրահարները Սաղմոսներ և Մարգարէ-  
 ները կ'օրինակէին, ասոր համար է որ անոնց նամակներն ալ  
 անապատի աւազին և Սինամէթին կնկան շուրթերուն պէս  
 հրակէզ էին: Գիշերուան հինգերորդ ժամուն երբ զանգակը  
 կոյսերը աղօթքի կ'հրաւիրէր, Յովհաննա ալ ձեռքով սան-  
 դախները բռնած՝ ձախ ձեռքով ալ սիրտին բախմունքը ար-  
 գիլելու համար, վանքին սանդուղէն լռելայն վար իջաւ,  
 խոտին վրայ սողացող օձին պէս սահելով: Լուսինը՝ որ մաք-  
 սանենգներու և անհաւատարիմ կանանց հաւատարիմ լապ-  
 տերն է, և զոր բանահիւսները հակագարձաբար պարկեշտ  
 կ'անուանեն ինչպէս կատաղիքն ալ պատկառելի, այս միջոցին  
 վանքին ետեւէն կ'երէր մեր փախստական գիւցազնուհին լու-  
 սաւորելու համար: Յովհաննա արտորնօք ժամագրեալ տեղին  
 կ'երթար անգթաբար պարտիզին հազարները և լախուրները  
 կոխկրտելով:

Գրեթէ կէս ժամ քայլել վերջը վանքին գերեզմանատու-  
 նը հասաւ որ բարձր նոճիներով և թանձր գեղձիներով պա-  
 տած ըլլալով՝ ոչ արեւուն ճառագայթները կ'թափանցէին և  
 ոչ հովերը: Յրիւմանս՝ էջը սրբուհոյն Պօմպայի գերեզմանին  
 քովը գտնուած ծառի մը կապած էր, ինքն ալ գերեզմանին  
 վրայ նստած գաւազանին ծայրը եղջերեայ լապտեր մը ան-  
 ցուցած իւր սիրուհոյն փարոս մը ձևացուցեր էր: Երբ տե-  
 սաւ որ Յովհաննան երկչոտ կերպիւ դէպ իրեն կ'յառաջանայ՝  
 դէպ ՚ի նէ սլացաւ արտորնօք, ինչպէս Գաբիւսէն մը Մեծ  
 պահքին վերջը ժամայօնին վրայ կ'ցատկէ: Սակայն տեղը սի-  
 րահարութիւն բնելու յարմար չէր: Լապտերը իշուն վիզը կա-

խեց, և ինքն ալ Յովհաննայի հետ վրան հեծնելով մեկնե-  
 ցաւ այս մահաբոյր տեղերէն: Խեղճ անասունը աս կրկնակի  
 բեռին տակ ճնշուած՝ չորս կրուկէ ալ խթուած սկսաւ բողո-  
 քել անանկ բարձրահնչուն զուարով՝ որ (եթէ արժանահաւատ  
 պատմագրի մը ըսածին նայինք) ան տեղ թաղուած կոյսերէն  
 շատերը աս ձայնը վերջին դատաստանի փողը կարծելով զը-  
 լուխնին գերեզմանէն դուրս հանեցին:

Յովհաննա՝ բարեմիտ Յրիւմանսի թեւերը իրեն դօտի և  
 կուրծքն ալ նեցուկ մ'ըրած դաշտերուն ազատ օդը կ'ծծէր:  
 Շատ չանցաւ արեւ ծագեցաւ: Բենեդիկտեանը իւր բնկերու-  
 հին ցորեկուան աստղին ճառագայթներէն պահպանելու հա-  
 մար աղօթքով մեծ արծիւ մը կանչեց որ թեւերը իրենց գլխին  
 վրայ բանայ: \* Ասանկ հրաչքներ շատ սովորական բաներ էին  
 անատենուան քրիստոնեաներուն, որոնց սիրտը մաքուր, հա-  
 լատքը պարզ և աղօթքնին ալ զօրաւոր էր Աստուածածնի  
 քով: Իսկ մեր օրերը դարուս իմաստունները ամենքն ալ ան-  
 հաւատ մարդեր են և խաչափայտի և վարդարանի տեղկար-  
 կին և մանրադէտ կ'գործածեն, և իրաւ է, թէպէտ գիտեն  
 թէ ամեն մէկ թռչունի պոչը քանի փետուր կայ և մէն մի  
 ծաղիկի ձուիկին մէջ քանի կուտ, բայց երբէք պիտի չկրնան  
 ոչ արծիւները մէկ նշանով բնտելացնել և ոչ մէկ արցունքով  
 փուշերը շուշանի փոխել: Ուստի վերապատուելի արքա կէ-  
 րէն իրաւունք ունի երբ զանոնք կ'կշամբէ և կուսալաշտ  
 կ'անուանէ, վասն զի քրիստոնէից երկինքը դրած են Հէրմէս  
 և Աստղիկը §, անասուած՝ վասն զի տունկերուն և բոյսերուն  
 անունները կ'փոխեն և Երեմիայի պէս կ'սկսի գոչել, «Նղովք,  
 նղովք, և դարձեալ նղովք յառաջադիմութեան և գիտու-  
 թեան»:

Չորս ժամ քայլել վերջը մեր փախստականները քիչ մը  
 յոգնութիւն առնելու համար պզտի լճի մ'եղերքը կանկ ա-

\* Կ'ըսեն թէ Ս. Մէտար, Նիմէկի եպիսկոպոսը անձրևի ասեռն լայ-  
 նաթև արծիւ մը կ'հրաւիրէր որ անձրևնոցի տեղ ծառայէ իրեն:

§ Աս անուամբ մուրաբակները:

«ին ուր ասեն մը Իրմինսուլի հսկայաձև արձան մը կար: Աս կուռքը՝ սուրբն Պօնիֆաս բերնին մէկ շունչովը լիճին խորը տապալած էր: Իւր վաղեմի երկրպագուները թէպէտ քրիստոնեայ եղած էին, սակայն իրենց ընկղմեալ աստուածոյն համար ունեցած յարգանքնին պաղած չէր: Միշտ ընծաներ կ'նուիրէին և ամեն տարի որոշեալ օր մը լիճին մէջ կարկանդակներ, մամեր, մեղրի և պանիրի կտորներ կ'նետէին ՚ի մեծ ուրախութիւն ձուկերուն՝ որոնք աս նուէրներով Ռէտի քահանաներէն և Նօզր — Տամ — Լօրէթի կանոնիկոսներէն աւելի կը գիրնային:

Փրիւմանս՝ որ մօր կողմէ Ուիթիքինտի դիւցազն ընկերներէն սեռած էր, իբր ճշմարիտ զաւակ Մաքսօնիաի՝ աւելորդապաշտ էր: Յովհաննա ալ թէպէտ քաջ աստուածաբան, Սոկրատի պէս իւր ժամանակակիցներուն նախապաշարմունքներէն զերծ չէր: Ան ատենուան քրիստոնեաներէն շատերը Քրիստոսի և կուռքերուն մէջ տեղը կ'վարանէին և Քրիստոսի ան պառաւ կրօնամուկ կնկան կ'նմանէին որ ամեն օր մէյմէկ մում կ'վառէր թէ Այի Եօրկիի և թէ Սատանային առջև, քսելով թէ ամեն տեղ բարեկամունենալը շատ աղէկ է: Երկու սիրահարները լիճին եզերքը ծունր դրած իրենց նախաճաշին մնացորդը, գլուխնէն քանի մը թել մսոց և քանի մը կաթիլ արին Իրմէնսուլի նուիրեցին: Ասով իրենց միաւորութիւնը մշտնջենաւոր և նուիրական պիտի ըլլար Վենետիկի Տօմին՝ ծովուն հետ բրած միաւորութեան պէս:

Փրիւմանս՝ այս արարողութիւնը լմնցածին պէս պայուսակէն վանականի զգեստ մը հանեց և բարեկամութիւն ցոյց տալով՝ աղաչեց որ հագնի զան, որպէս զի իբրև նորընծայ կարենայ Փիւլտի վանքը ընդունուիլ:

«Վասն զի աս կերպով միայն, ըսաւ երիտասարդը կարմրելով, կրնանք միևնոյն սենեկին մէջ պառկիլ, մէկ պնակէ ուտել: Իսկ եթէ իբրև կին ներկայիս հոն՝ մեծաւորները քեզի կանանոցը պիտի նետեն՝ ուր իրենք միայն իրաւունք ունին մանուր, և անատեն ևս ալ յուսահութենիս դրանդ սեմին վրայ պիտի մեռնիմ»:

Յովհաննա ամբարշտութիւն կ'սեպէր ծպտիլ և սիրահարին պաղատանացը Սուրբ Գրոց աս խօսքովը կ'պատասխանէր, «Ոջ կինը մարդու զգեստ պիտի հագնի եւ ոք մարդն ալ կինի»: Փրիւմանս ի պատասխանի Ս. Գրոց այս խօսքին Օրիժէնի կարծիքը մէջ կ'բերէր որ կ'պնդէ թէ կիները վերջին դատաստանին օրը էրիկ մարդու պիտի փոխուին: Յովհաննա պատասխանեց թէ Օրիժէն հերետիկոս և ներքինի էր, բայց Փրիւմանս սրբուհոյն Թեքլայի, Մարգարիտի և Եւգինէի օրինակները յատալ բերաւ որոնք արեղայի կնգուղի տակ հրեշտակներու պէս ցերմակ մարմիններ պահած էին և մարդերու հետ ապրելով սրբութիւն ալ շահած էին, ինչպէս Տաճիկները կանանց մէջ ապրելով արքայութիւն կ'շահին:

Աս անմերուս աստուածաբանին երիտասարդութիւնը, գեղը և սէրը համարիչ փաստեր էին, անանկ որ Յովհաննա կանացի զգեստները և Ս. Գրոց աւանդութիւնները քնքուշ ոտքերուն տակ կոխելով կնգուղը հագաւ և սանտալները ոտքը անցուց զոր քանի մը տարի ետքը մեծ իշխաններուն անդամ պագնել պիտի տար: Երբ այսպէս փոխուեցաւ Փրիւմանս զան լիճին եզերքը տարաւ որ ինքզինքը շուրին մէջ տեսնէ: Մեր դիւցազնուհոյն երեսը վանական վեղարին տակ կ'փայլէր, ինչպէս մարգարիտը խեցիին մէջ: Փրիւմանս՝ Յովհաննէս եղբորը նայելէ չէր յագենար: Առջևը ծունր դրաւ, ձեռքերը միացուց և սկսաւ սիրուհոյն գեղեցկութիւնները գովել այն խորհրդաւոր անդամազննական երգերով որով միջին դարու քահանաները սովորութիւն ունէին Ս. Կոյսին մօրմնոյն ամեն մասերը փառաբանել, մտղերը, այտերը, ստինքները, որովայնը, սրունքները և ոտքերը\*, ինչպէս կ'ընեն ձիավաճառ

\* Աս երգը ամբողջ ուղղը կրնայ Curiosités théologiques բուած գիրքին մէջ գտնել: Միայն որովայնի մասին գրուածը թարգմանենք, «Ողջոյն քեզ, ո՛վ հրաշալի որովայն, անօթ՝ ուր եփուեցան Աստուծոյ հրաշալիքը: Հարսանեկան անկողին՝ ուր Աստուածութիւնը մարդուս հետ փառաւորուեցաւ և»: Միւս կտորներն ալ հետաքրքրական են: Կոյսին այտերը անուանած են պարտէզ՝ որուն ծաղիկները երկնային գոյնով ներկուած են, մտղերը երկնային գիւտարտութեան չուաններ:



ները երբ ձի կ'ծախեն : Երբ աս տաղտուկ խօսքերը վերջացուց մեր երկու սիրահարները դէպ 'ի Փիւլտի վանքը ուղևորեցան ուր Յովհաննա սուրբն Բենեդիկտոսի հօտը պիտի մտնէր : Մեր փախտականները տաներկու օրուան մէջ հասան Մաչեղպախէ մինչև Փիւլտ որ 30 մղոն միայն հեռի է, ճամբան հովանաւոր ծառերուն տակ հանգչելով, ամեն գետի մէջ լուացուելով և ծառերուն վրայ անուննին գրելով :

Պէտք է բտել նաև որ Փրիւմանս աս տեղերու պատմութիւնը քաջ գիտէր, ուստի ամեն անգամ որ ուղէր իջնել ջերմեռանդ պատրուակ մը մէջ կ'ըբերէր : Երբեմն կ'իջնէր ան ծառին տակ ազօթելու համար ուր սրբուհին Թեքլա՝ իր կուսական ստինքներուն քանի մը շիթ կաթովք կոյրի մ'աչքերը բացած էր : Երբեմն կ'իջնէր սուրբն Պօնիֆատի արեամբը ուսողուած հողը համբուրելու համար, որուն մէն մի կաթիլք՝ ինչպէս Ատօնիսի արիւնին, մէյմէկ անէմոն ծնած էր : Յովհաննա ժպտելով սիրահարին առաջարկութիւնը կ'ընդունէր :

Երկրագործները և հովիւները աս երկու արեղիկներուն բարեպաշտութեան և շնորհալից ձևերուն կ'զարմանային : Ասոնց անցած ատեն եռանկիւնի փեղոյրնին հանելով՝ արտորնօք կ'վազէին ձեռքերնին պագներու կամ հաց, մածուն, գարեջուր և պտուղներ իրելու : Երբեմն ալ մեր փախտականները կիսավերկ էսքրավօններու կ'հանդիպէին որոնք եղէգի պէս գետերու եզերքը բնակելով ամեն ճամբորդներէն անցքի տուրք կ'պահանջէին և չտուողներուն ալ ջուր կ'նետէին : Բայց Փրիւմանս սուրբն Միքայէլի լողօթք մ'ըրածին պէս աս երկակենցաղ աւաղակներէն արտորնօք կ'հեռանային ինչպէս փեղերը կ'հեռանան խօզի խանչիւնէն :

Առաւօտ մը՝ այն ինչ մեր սիրահարները հինաւուրց եղևնիի մը տակ՝ դափնիներու վրայ կամ լաւ ևս բտելու համար կոյտ մը առուոյտի վրայ կ'հանգչէին (վասն զի դափնին Ալմանիայի մէջ միայն դիւցաղանց գլուխը կ'բուսնի) երկու կին

ստինքները վտակ՝ ուսկից կ'բլխի մանանան, թևերը՝ եկեղեցոյ նաւակին թիակները ևն :

տեսան ոտքերնին թեթև շղթայով մը կապուած՝ այտերնին սնգուրած և բոլորովին մերկ \* : Աս մերկ ուխտաւորները իրենց խոստովանահայրէն հրաման քնդունած էին իրենց մեղքերուն թողութիւն գտնելու համար մերկ և շղթայակապ Ս. Մարտիէնի գերեզմանը համբուրելու երթալ :

Աս ուխտագնացութիւնները քնդհանրապէս գարնան վերջերը կամ ամառուան սկիզբը կ'կատարուէին : Աս Մագդաղենիներէն շատերը գիտնալով որ սուրբ Մասունքները զիրենք ամեն պղծութենէ պիտի մաքրեն, արձակ համարձակ ճամբան ուրիշ մեղքեր ալ կ'գործէին : Գեղացիներէն օթևան և ճամբորդներէն ողորմութիւն կ'ուղէին և զանոնք՝ Եգիպտացի Մարի սրբուհոյն նաւավարին վճարած ստակով կ'վճարէին : Աս տուրևառները շատ դիւրաւ կ'կատարուէին իրենց ազամական մերկութեան պատճառաւ : Մեր երկու մեղաւոր ուխտագնացները չգիտնալով թէ ինչ պահուած է Յովհաննայի կնգուղին տակ՝ մօտենալով երկու գետար ուղեցին որուն փոխարէն կ'խոստանային ապագայ կենաց մէջ երկնից դռները և ներկայ կենաց մէջ իրենց թևերը բանալ :

Փրիւմանս՝ որ Յովհաննայի վահանի տեղ կ'ծառայէր ամեն փորձութեանց դէմ, աս լրբենի սիրենաներուն առաջարկութիւնները մերժեց մէջքի չուանէ գօտիովք զանոնք հարուածելով, և հեռացաւ Յովհաննան գրկած՝ ինչպէս կ'ընէին անապատականները խաչափայտը գրկելով՝ երբ մարմնային սատանայէն փորձութեան մէջ կ'իյնային, աս տարբերութեամբ միայն որ երբ այս խոտակեաց անապատականները փորձիչէն սոսկալով՝ մէկ աչքերնին կ'դարձնէին, միւս աչքերնին մալեկան ցանկութեամբ վրան կ'յառէին ինչպէս անօթի հրեայ մը ժանպօսին վրայ : Փրիւմանս՝ որ իբր Արևմուտքի ճշմարիտ զաւակ, վայելումը տուրական բաղձանքի դէմ իբր գեղ կը գործածէր, կրնար դիւրաւ աչքերը դարձնել աս տեսակ տե-

\* Աս մերկ ուխտագնացները այնչափ շատցած էին անատեն և այնչափ ամօթալից գործեր կ'ընէին ճամբաները որ կայսրը հրաման հանեց որ զանոնք ուր որ գտնեն բանտարկեն :



սարաններէ, բայց մեր Արեւելքի խեղճ սուրբերը, որոնք ան-  
քուն կ'հսկէին, մարմիննին կ'աանջէին և անչափ ծով՝ կ'պա-  
հէին որ բերաննին որդերով կ'լեւուէր, հազիւ կրնային մար-  
մնական տենչանքները զսպել: Ասոնք գիշերցորեկ ստիպուած  
էին գեղեցիկ կիներու փոխուած սատանաներու դէմ մաքա-  
ռիլ, այծերը և հաւերը անգամ մենաստանին մէջ չէին ըն-  
դուներ իրենց առաքինութիւնը վտանգի մէջ չդնելու համար:  
Իսկ ընդհակառակն Փրանկերը մարմնային տենչանքները յա-  
գեցնելէ վերջը կրնային հանգարտ հոգինուն փրկութեան ալ  
պարապիլ, սուրբ Անթոնին պէս առանց ստիպուելու ամեն  
մէկ վայրկեան աղօթքը ընդհատել պաղ ջուրերու տուչե-  
րով սատանան վանելու համար:

Հմուտ Արշիթէնի բսածին նայելով՝ ժուժկալութիւնը գբբ-  
գռիչ գեղ մ'է, ուստի Փրանկերը շատ իրաւունք ունէին որ  
իրենց վանքերէն արտաքսած էին զայն:

Արեք՝ տարուան ամենէ երկար օրը լուսաւորելէ ետք՝ մա-  
րը կ'մտնէր երբ մեր ճամբորդները Ֆիւլա վանքին մօտեցան:  
Ձով և առանց լուսնի գիշեր մ'էր, աստղերը գետին ջուրին  
մէջ կ'ցուլային: Մեր երիտասարդները որչափ որ վանքին կ'մո-  
տէին՝ ծառերուն մէջ տեղէն ահագին հրդեհի մը բոցը կը  
տեսնուէր: Աղուէսներ, եղնիկներ, վարաղներ իրենց քովն  
անցնելով ահաբեկ կ'փախչէին, գիշերային թուշուններն ալ ի-  
րենց բոյներուն խաւարը կ'փնտռէին: Յովհաննա՝ ահուգողով  
քնկերոջը կուրծքին կ'յենուր, էջը անգամ՝ ականջները տըն-  
կած վախով և զգուշութեամբ կ'յառաջանար, պատերազմի  
երթող բաբի գինուորի մը պէս: Հրեղէն սիւներ, մուխի ամ-  
պեր, զանգակներու և երգերու հնչիւններ, խունկի և խո-  
հանոցի հոտեր սկսան մեր դիւցազնուհւոյն աչքերը, ականջ-  
ները և քիթը անհանգիստ ընել, որուն զարմանքը և սար-  
սափը երթալով կ'աւելնար. իսկ Ֆրիւմանա՝ անոր ամեն մէկ  
հարցմա՛ւ, բարձրաձայն քրքիջներով և համբոյրներով կ'պա-  
տասխանէր:

Քանի որ մենք չենք կրնար աս կերպով պատասխանել  
քեզ, սիրելի ընթերցուհիս, աս միայն կ'ըսենք թէ այն օրը

կամլաւ ևս բսելու համար այն գիշերը յունիսի քոանքչորսե-  
րորդ օրն էր, և ութ հարիւր տարի առաջ՝ ճիշդ այն օրը որ  
Յովհաննու Մկրտչին գլուխը կտրուելով՝ Հէրովդէսի աղջկան  
ընծայ տրուած էր խաղացած պարին փոխարէն ինչպէս այսօր  
ծաղկեփունջ մը կ'նուիրենք Տիկին Ժիւտիքի կամ Լա Սէր-  
փօլէթոյի:

Սուրբն Աթանաս այս սուրբին ոսկորները գերեզմանէն հա-  
նելով՝ Ժամանակին սովորութեան համեմատ բոլոր աշխարհք  
կ'պաքտցնէր ամեն տեղ հրաշքներ գործելով: Սուրբին գլու-  
խը գաղղիացի քահանայ մը Աղեքսանդրիայէն Ֆրանսա բե-  
րած էր\*: Միջին դարու Փրանկերը Արեւելքի եկեղեցիներ-  
ներէն սուրբերու մասունքները կ'յափշտակէին ինչպէս այսօր  
ալ իրենց սերունդները մեզմէ հնութեան գեղարուեստներու  
բեկորները կ'կորգեն:

Սրբոյն Սէրփի մէկ մատը կամ սրբուհւոյն Ֆէպրօնիոյի  
սրունքը աւելի սուղ կ'ծախուէր քան թէ այսօր Հէրմէսի գը-  
լուխը կամ Աստղիկի մէկ բաղուկը: Սրբոյն Յովհաննու գլու-  
խը Սէնթ Անժըլի եկեղեցւոյն մէջն էր և շրջակայ բնակիչ-  
ներուն իբր դեղ կ'գործածուէր տենդի դէմ, ինչպէս այսօր  
քինինօն: Աս հրաշագործ գլխին համբաւը կամայ կամայ բու-  
րը Արեմուտք տարածուեցաւ: Ամեն տարի ՚ի պատիւ սուր-  
բին կրակներ կ'վառէին ամեն տեղ, և հաւատացեալները աս  
կրակին շուրջը կ'պատէին և կ'ցատկէին, ինչպէս կ'ընէին ի-  
րենց նախնիքն ալ Բալէսի Չահերուն շուրջը. Բալէս աստուա-  
ծուհին արդէն շատոնց ՚ի վեր մոռցուած էր, բայց իւր հին  
բարեկամները՝ որոնք միշտ կ'սիրէին թէ գինին, թէ խաղերը

\*Սուրբ Յովհաննէս Մկրտչին մասունքներու և մասնաւորաբար գըլ-  
խը մնաին այնչափ տարօրինակ և հակասական աւանդութիւններ կան,  
որ պէտք ենք կարծել թէ աս սուրբը կամ բազմազլխի էր լերնային  
վիշապին պէս, կամ միջին դարու սովորութեան համեմատ աս մա-  
սունքները շատցած են քրիստոնէից Չերմեռանդութեան բաւելու հա-  
մար: Միայն Ֆրանսայի մէջ եօթը եկեղեցի կայ որոնք կ'պարծին թէ աս  
սուրբին մասունքները ունին:

և թէ զուարթ երեկոյթները, Որիմպոսի մերկ և անմօրուսաստուածութեանց նուիրուած ձօներնին քրիստոնէից դրախտին մօրուսաւոր և կնգուղաւոր սուրբերուն կ'մատուցանէին :

Երբ մեր երկու ճամբորդները վանքին գաւիթը մտան՝ հանդէսը եռանդուն ձև մ'առած էր : Վանականներէն ոմանք յարդի դէզեր և պարապ տակառներ կ'նետէին կրակին մէջ, ոմանք ալ կնգուղին քղանցքները վերցնելով աս նուիրական խարոյկին վրայէն կ'ցատկէին, և երբ մերկ սրունքնին այրեր ջուրի աւազանը կ'նետուէին : Ոմանք խարոյկին շուրջը կ'պարէին ինչպէս Դաւիթ Տապանին շուրջը, կամ խոտին վրայ երկնցած՝ պատառաքողը կաթսաներուն մէջ կ'խօթէին, բաժակներն ալ տակառներուն մէջ : Շատերն ալ ձեռքերնին ջահեր բռնած պարտէզին մէջ կ'վազէին բազէախոտի ճիւղմբ գանելու համար, զորս նոյն գիշերը գանողը դժօխային ոգիները հնազանդեցնելու զօրութիւնը կ'ստանար : Զուարթ վանականները Ծրիւմանսի վերագարձին չափազանց ուրախացան : Ան ալ Յովհաննան ներկայացուց անոնց իբր իր ազգականը, և իբր որբ ու Անսիժէլ գ. քսին ծառայ, որ այս ծառայութեան շղթան շատ ծանր գտնելով՝ կ'ուզէր կրօնաւորի չուանին փոխել : *Dignus, dignus est intrare in nostro sancto corpore,* (Արժանի է, արժանի է մեր ուխտը մտնելու) պառացին միաբերան Բենեդիկտեանները, երիտասարդ նորքնծան ալ պարին մէջ քաշելով :

Ասով Յովհաննա՝ վանք մտածին պէս կ'սկսէր պարել սորովիլ, Բայց այն ատեն պարը՝ զոր այսօր խոստովանահայրերը խստիւ կ'արգիլեն նորատի աղջիկներուն իբրև սատանայի գիւտ, ոչ աշխարհական բան մ'էր և ոչ կրօնքի հակառակ : Պարզապէս ոտքերու աղօթք մը կ'սեպուէր այն, ինչպէս սաղմոսերգերը որ շուրթերու աղօթք են : Նա մանաւանդ այս երկու

\*Սրբոյն Յովհաննու տօնին օրը կրակ վառելը՝ ինչպէս նաև քրիստոնէութեան ժողովրդային միւս տօնախմբութիւնները կռապաշտական ժառանգութիւն մ'են : Առապաշտները արդէն սովորութիւն ունէին ամառուան ան երկար օրերը կրակ վառել 'ի պատիւ Բալէսի որ հովիւներու աստուածուհին էր : Երբ կուռքերը վերցուեցան, աս տօնախմբութիւնը սուրբ Յովհաննու անուանը փոխուեցաւ :

աղօթքներն ալ Դաւիթ բարեմիտ թագաւորը հնարած է, և երկուքն ալ եղբայրական կապերով միացած են : Աստղերը վերը կ'նսեմանային և խարոյկներն ալ երկրիս վրայ կ'մարէին, երբ զանգակին ձայնը գինով և քունաթափ վանականները առաւօտեան աղօթքին հրաւիրեց : Այն օրն ալ՝ ինչպէս միշտ կ'պատահի տօն օրի մը հետեւեալ օրը փոխանակ եկեղեցական երգերու ծանր խորդիւններով կ'հնչէր եկեղեցւոյն կամարները. կ'ըսեն թէ ասկից մնացած է քահանաներուն քիթէն երգելու սովորութիւնը արթուն եղած ատեննին անգամ : Աս սովորութիւնը ինչպէս նաև իշու տօնախմբութիւնը և ուրիշ միջին դարի գովական սովորութիւններ Արևմտեան եկեղեցիէն արտաքսուելով մեր եկեղեցին ապաստանած են, ուր ոչ առողջ կ'ապրին, այս պատճառաւ է որ մեր եկեղեցիները օր ըստ օրէ դատարկ կ'մնան, հաւատացեալներու ջերմութեան թիւնը կ'պաղի, և անոնց նուէրներն ալ աւելի կ'թեթեւան :

Կրօնքը կ'իներու կ'նմանի : Թէ կրօնքը և թէ կ'իները երբ ծաղկահաս են ոչ սնգուրի պէտք ունին և ոչ զարդի՝ անձնուէրներ ունենալու համար որոնք պատրաստ լինին միշտ իրենց կեանքը անգամ զոհել, ինչպէս նախնի քրիստոնեաները և Ասիաղիայի սիրահարները : Բայց քանի տալիքնին առնելով պառաւնան կ'ստիպուին պչրաւիրական հնարքներ գործածել ատեն մ'ևս իրենց հաւատարիմները բռնելու համար : Հռոմէական եկեղեցին աս ճշմարտութիւնը շուտ ճանչցաւ : Երբ տեսաւ որ կրօնամոլներու եռանդը կ'նուազի, պատկերահաններու և քանդակիչներու դիմեց ինչպէս Հերա պառաւցած ատեն Աստղիկի գօտիին՝ իր մարմնոյն փոթերը և մերկութիւնը ծածկելու համար : Ընդհակառակն Արևելեան եկեղեցին, թէպէտ իր քոյրէն աւելի պառաւ կամ չքաւոր ու հպարտ, դեռ մինչև յայսօր իր հաւատացեալները ռեզական ձայներով և այլանդակ նկարներով զմայլեցնելու կ'ջանայ : Շատոնց 'ի վեր բարեպաշտութիւնը աշխարհիս երեսէն աներևոյթ եղած է : Բայց Ռափայէլի և Լաքօրտերի կամ Բարին ներքինի երգեցիկներուն ձայնը Բանթէօնի կամ Սիքսթին

մատուան կամարներուն տակ կարող են դատարկասունները հաւքել . այն ինչ մենք տարին անգամ մը միայն եկեղեցին կ'երթանք ան ալ ականջնիս խցելով :

Ժամերգութենէ վերջը Թրիւմանս Յովհաննան իւր նոր վանդակին մէջ տեղաւորեց :

Փիւլտի վանքը աւելի ամրոցի մը կ'նմանէր քան թէ վանականներու հանգրուանի մը : Չորս կողմէն հրաբուխներ պատած էին , զորս Սուրբն Սթուրմ՝ քանի մը կաթիլ օրհնեալ շուրով մարած էր բոլորովին , միևնոյն անուամբ գետն անգամ աս վանական դղելին իբր պարիսպ կ'ծառայէր : Անատենները սո րբն Բենեդիկտոսի աշակերտները ոչ միայն գինիով և քունով կ'յղփանային այլ նաև խիստ կ'ախորժէին քիթերնին ալ միշտ քաղաքական երկպառակութեանց մէջ խօթել . և երբ իրենցմէ զօրաւորագոյնը զիրենք կ'հալածէր վանքէն՝ պարտէզներուն ետին կ'ապաստանէին ինչպէս կ'ապաստանին մեր խմբագիրները Սահմանադրութեան յօդուածներու ետին : Շարքմաներ աս պատերազմասէր վանականներու բնութիւնը շատ կակուղցուցած էր , անոնց զինարանին մէջ միայն հոգևոր զէնքեր ձգելով , բայց ասոնք իրենց պատերազմական ձևը փոխած չէին :

Յովհաննա հետզհետէ ժուռ եկաւ խշտեակները , նորբնծայներու սահմանուած սրահը , ճաշարանը որ տասներկու առաքեալներու հսկայաձև ուրուականներովը զարգարուած էր\* , ստորերկրեայ բանտերը՝ ուր յանցաւոր արեղաները ողջ ողջ պատի մէջ կ'հիւսէին , բնդարձակ խոհանոցները , և վերջապէս մատենադարանը ուր վաթսուն օրինակոյնքեր գիշեր ցորեկ հին մագաղաթները քերելով Հերակլէսի և Անիբալի քաջագործութեանց տեղ սուրբ Պապիլասի և սրբուհւոյն Բրիսքոյի հըրաշքները կ'գրէին : Պարտէզը անխնամ մնացած էր , վան զի բարեսիրտ Հայրերը ծաղիկները չէին հոգար և բանջարեղէն-

\* Շատ վանքերու մէջ 12 արձանի տեղ 13րդ մ'ալ կար , այսինքն Յուդայինը՝ վիզը չուանով : Արեղաները երբ ներս կ'մտնէին 12 առաքեալները կ'բարեւէին և 13րդին ալ երեսը կ'թքնէին :

ները կ'անարգէին , բսելով թէ ստամբսին մէջ շատ տեղ կը բռնեն . իսկ սագերու լանջքերը և խոզի զիստերը խիստ կ'սիրէին և Ս. Գրոց վճիռներուն կ'նմանցնէին ուր քիչ բանի մէջ շատ մը մնդարար հոգևոր կերակուրներ պարունակուած են :

Տունէն վերջը մէջի բնակիչներն ալ նկարագրենք : Կրօնական կարգերը ան աստիճան շատցած են և անչափ տարբեր անուններ ունին , ինչպէս՝ Թէաթէն , Ռէքօլէ , Գարմ , Թրանչիսկեան , Գարիւսէն , Գամալտիւլ , բոկոտն , մուճակաւոր , մօրու բաւոր , անմօրուս , ճերմակ , սև և խել մը ուրիշ անուններ , որ Պօրն անուամբ երևելի բնագէտը չչփոթելու համար ստիպուած էր անոնց անուան յատուկ նշաններովը դասակարգել իրենց սեռովը և տեսակովը , ինչպէս բրած է Լինէոս անասունները և տունկերը :

Երբ աս Լինէական վանախօսութիւն բառգրքին մէջ բնետիրութեան բառը բանանք հետեւեալ հետաքրքրական նշանակութիւնք պիտի գտնենք .

« Անմօրուս երես , կուլակ գանկ , երկայն մութ գոյն բղգեատ կ'հաղնի որ ոտքերը կ'ծածկէ , վերարկու մը որ մինչև չև ներբանները կ'իջնէ , օրը երկու անգամ և գիշերն ալ մէկ անգամ կ'կուկուայ , ամենակեր է և շատ քիչ կ'ձոմէ » :

Ահա ասոնք էին աս կարգին յատկութիւնները : Բաց ասկէ Ալմանիայի բենեդիկտեանները իրենց կնդուղին վրայ Ս. կոյսին մէկ պզտի պատկերը կ'կարէին գէշ մտածմունքները և ոջիւղները վանելու համար\* : Երեսնին՝ գիրերը սրբուած վանական մագաղաթներու շատ կ'նմանէր , որոնց մէջ մինչև ցայսօր միջին դարու հագներգութիւններու տակ Անաքրէօնի և Սաֆոյի սիրահարական տաղերը կ'նշմարենք : Օրը չորս անգամ բարեկրօն հայրերը սեղան կ'նստէին : Կարագի տեղ խոզի ճարպ՝ և պատառաքաղի տեղ ալ մատերնին կ'գործածէին . եթէ կանոնի գէմ գործէին քանի մը շաբաթ ճարպ չուտելու կը

\* Սա սովորութիւնը դեռ այսօր Ալմանիայի գեղացիները պահած են :

պատժուէին, ինչպէս մեր մէջ սուրբ Հաղորդութենէ կ'զրկուինք։ Ամիսը երկու անգամ կ'ածիլուէին։ Աւագ ուրբաթ օրը ամենքն ալ ոտքերնին կ'ըլաւային և տարին երեք անգամ ամենէն գէրերը արիւն կ'առնէին մարմիննուն ախորժակը մարելու կամ ուրիշ ժամանակագիրերու քսածին նայելով՝ կ'աթուածին առջևը առնելու համար։ Ասանց մեծագոյն մասը կարգալ գրել չէր գիտեր, մէկ քանին Հայր մերը միայն գիտէր, գրել գիտցողներ ալ կային։ Աս վերջիններուն՝ ինչպէս Հոմերոսի գիւցազուններուն, կրկնապատիկ կերակուր կ'տային և գարեջուրի տեղ ալ գինի։ Ամենքն ալ շաբաթ օրը սուրբ կ'պահէին։

Եւ որովհետև ապահով չէին թէ ո՞ր օրը Աստուած արարչագործութիւնը լմնցնելէ վերջը հանգչած է, սխալմունքը քնդով չմեղանչելու համար ամբողջ շաբաթը դատարկ կ'կենային։ Աս վանականները ան աստիճան քաջաւորով և պնդակազմ էին որ մեռած ատեն ոտքի վրայ կ'մնային ուսս զինուորներուն պէս որոնց համար կ'քսեն թէ մեռնելէն վերջը պէտք է ետանէն հուել, որպէս զի գետին ընկնին։ Ռապան — Մոր աս վեղարաւոր հօտին հովիւն էր, և աս երեւելի կրօնաւորին խելքին մէջ դեղագործի մը խանութէն աւելի տուփ կար։

Գիտնական արքան որ ամեն ծովերու վրայ ճամբորդութիւն քրած էր՝ ամեն լեզուները գիտէր թէ՛ կենդանի թէ՛ մեռեալ։ Ասոնցմէ զատ քաջ գիտէր նաև աստղաբանութիւն, մոգութիւն, աստուածաբանութիւն և մանկաբարձութիւն։

Գործիք մ'ալ հնարած էր որով երեխաները մայրերնուն որովայնին մէջ կ'մկրտէր որպէս զի եթէ վիժին՝ չերթան ան մութ տեղերը ուր կ'թափառին առանց մկրտութեան մեռնող մանկիկները, ինչպէս կ'թափառէին թաղմանէն զուրկ կռապաշտները Ստիւքս գետին եզերքը։

Երբ Յովհաննա Ֆիւլտի վանքը մտաւ արդէն սուրբն Ռապան ծեր և հինգած անմարտողութիւն մ'ունենալով միայն հոգւոյն փրկութեան կ'նայէր (ինչպէս նաբուգոդոնոսոր կենացը վերջին տարիները երբ ցուլի փոխուեցաւ,) և՛ ի պատիւ ճշմարիտ խաչին երգեր կ'յօրինէր։ Աս մէն մի երգերը երեսուն ոտանաւոր

կ'պարունակէին, և մէն մի ոտանաւոր երեսուն գիր ամենն ալ խաչի ձևով կարգադրուած։ Փրանսայի բանահիւաներուն խմելու համար գրած երգերն ալ շիշի կամ տակառի ձևերունին։ Աս հրաշակերտները ընելու համար գեղադրութեան մէջ խիստ վարպետ ըլլալ պէտք է։ Աս վերջին տաղանդին մէջ Ֆրիւմանսի և Յովհաննէս նոր եղբօր հաւասարող չկար։ Ուստի կնգուղաւոր բանահիւսը պուէտական խաչերը անոնց յանձնեց, ասով Ֆրիւմանսի մարգարէութիւնը կատարուեցաւ որով քսած էր թէ «Մեր գրիչը միւսնոյն կաղամարին մէջ պիտի թաթխենք»։

Երջանիկ սիրահարները ան բարեբաղդ ժողովուրդներուն կ'նմանին որոնք պատմութիւն չունին։ Մեր երկու արեղաները խաղաղ և հանգիստ կեանք մը կ'անցնէին։ Ապաքէն, սիրելի ընթերցող, երևակայէ, ի՞նչ քայցը և երջանիկ բան է սիրուհի մ'ունենալ որ մարդու զգեստներով իւր ձիրքերը պահէ, մ'այն քեզի յայտնելու համար։ Ո՛չ նախանձ պիտի զգաս և ո՛չ ան հազարումէկ խայթերը, որոնք սուրբն Պաղիւլի հետ մեզի բսել կ'տան թէ կինը վիշտերու գործարան մ'է։

Առնայի զգեստ մը կրնայ սիրուհիդ աւելի պաշտպանել ծակաչրններուն գէմ քան թէ Տաճիկ հարէմներու բանայինները և Իթալացոց հնարած պահպանողական գօտիները։ Սիրուհւոյդ ո՛չ երեսը նայուածքներով կ'պղծես, ոչ ականջները անվայել խօսքերով և ոչ ձեռքերը հպումներով, այլ հրեշտակի թևի պէս մաքուր և Այի Վասիլիի երազին մէջ տեսած իտեական կոյսին պէս անբիծ կ'մնայ։ Թիպուլի նախանձոտ հառաչանքները և Պայրնի՛ կանանց դէմ քրած հայհոյանքը քեզի անիմանալի պիտի մնան, ինչպէս կենացը մէջ չլացող մարդու մը երէմիայի լացերը։ Ահա ասանկ էր Յովհաննա Ֆրիւմանսի համար, առանց փուշի վարդ մը, առանց ոսկորի ձուկ մը, և առանց ճանկի կատու մը։ Մանկութենէ ՚ի վեր մարդերու հետ ապրելուն ոչ ան ճոտացածին հաճոյքները ունէր և ոչ ան սիրուն թերութիւնները որոնցմով Եւայի ազջիկները սիրենաներէն աւելի երկիւղ կ'ազդեն մեզի, որոնք գոնէ մէջքերնէն մինչև վար օձ էին։ Մեր երիտասարդները

եօթ տարիէ ՚ի վեր խաղաղ և հեղիկ կ'ապրէին աս վանքը : Արեղաները բան մ'իմացած չէին , և ամենին վախ ալ չկար որ դաղանիքը իմացուի :

Խաչակիրներէն յառաջ Արեմուտքցի մը երբէք չէր հարցններ թէ ինչ պահուած է Պատօնի կնճռալի պարբերութեան մը մէջ կամ մարդու մը շապիկին ծալքերուն տակ : Միայն վանքին սափրիչը եղբայր Յովհաննէսը կ'ծաղրէր երբ ասի իւր ածելիներուն կ'ներկայացնէր փայլուն և յստակ այտերը :

Բայց՝ Յովհաննայէ զատ դժբաղդարար Ֆիւլտի մէջ ուրիշ արեղայ մ'ալ կար որ մտուք չունէր և անունն ալ Հայր Գօրպէն էր որմէ ամենքն ալ խոյս կ'տային : Աս խեղճ Բենեդիկտեանը երիտասարդութեան ժամանակ Մայանի եպիսկոպոսին քովը աղջկան սիրահարուած էր : Ինք այս եպիսկոպոսին սարկաւազի տեղ կ'ծառայէր, արարողութեանց ժամանակ կարմիր նափորտին քղանցքը վերցնելով և Հաղորդութենէ վերջը նորին Վերապատութեան լուացուած ջուրը խմելով : Պարմանուհին նախականջները վերջէն ալ թեւերը բացաւ աս պղտի սարկաւազին : Սակայն աղջկան վեղարաւոր խնամակալը գիշեր մը տեսաւ որ երկու սիրահարները եպիսկոպոստան պարտէզին մէջ արգիլեալ պտուղ կ'քաղեն : Եպիսկոպոսը աղջկան մազերը կտրեց , Գօրպէնն ալ ներքինի ընելով՝ Ֆիւլտի վանքը զրկեց որպէս զի հոն իւր մեղքը ապաշխարէ : Երիտասարդ արքան առաջին օրերը իւր կորուստը լացաւ , ինչպէս լացած էր ժէֆթէյի աղջիկը կուսութիւնը կորսնցնելով , բայց ժամանակը թէ հողւոյն և թէ մարմնոյն վէրքերը դոցած էր :

Կամաց կամաց սկսաւ կիները ատել , և առակին աղուէսին լոյս ընկերներն ալ կ'համազէր որ իր օրինակին հետեւին : Գօրպէն այսպէս փիլիսոփայօրէն կ'ապրէր արգիլեալ պտուղին տեղ պարարտ միսեր ուտելով և արքայութեան սպասելով՝ երբ օր մը հրաման ընդունեցաւ մուկերը հալածելու , որոնք արքային մատենադարանը կ'աւերէին : Հոն՝ Այի Վասիլեի կուսութեան վրայ գրած ճառին թարգմանութիւնը գտաւ : Գիրքը բացաւ Աստուծոյ փառք տալու նոր առիթ մը գտնելու յուսով՝ որ իւր անբաւ ողորմութեամբը կորստեան ամեն մի-

ջոց կտրած էր , և սև բաղդէն ալ ճիշդ ան տեղը ինկաւ ուր կեսարացի եպիսկոպոսը առաքինի աղջիկներուն կ'խրատէ որ իրենց ներքինիներէն անգամ դպուչանան , «Վասն զի , կ'ըսէ , ինչպէս եղջիւրները կտրուած եղբ դարձեալ իր բնութիւնը չկորսնցնեն և կ'ուզէ եղջիւրը ելած տեղովը զարնել , ասանկ ալ ներքինիները յուճահատ կրնան դեռ . . . » Բայց եթէ ընթերցողը ուզէ աս պարբերութեան հետևութիւնը տեսնել , թող եպիսկոպոսին ճառը կարդայ :

Քննադատներուն ըսածին նայելով՝ կ'երևի թէ Թասոյի երուսաղէք մը վահանի մը վրայ գրուած է , ինձի ալ կ'երևի թէ սուրբն Վասիլի կուսութեան վրայ գրած ճառը պարմանուհի մը կուրծքին վրայ գրուած է :

Ասի կարդալով՝ մեր արեղային սիրտը տակնուվրայ եղաւ : Օձերը , գայլերը , վիշապները , յովազները և ուրիշ ամեն գաղանները զորս աստուածաբանք գործածած են մեր կիրքերը անձնաւորելու համար կատաղի կերպով արթնցան և սկսան ոռնալ և իրարու պոչը խածնել այս վշտաբեկ սրտին մէջ , որ դաղաններու որջ մ'եղած էր :

Արշիմէտ՝ ուրախութենէն այլ յայլմէ Eureka (գտայ) կ'պուռար՝ իւր կնճռալի խնդիրը լուծելէն վերջը , մեր Բենեդիկտեանը վանքին մէջ վեր վար վազելով՝ Մթենտօրի ձայնով Possum (կրնամ) կ'պուռար : Ան օրէն ՚ի վեր սոսկալի կատաղութիւն մը տիրեց վրան , զոր ոչ վանքին կառնները , ոչ ծոմապահութիւնները , ոչ ցուրտ բազնիքները և ոչ ուրիշ որևիցէ վանական դեղարաննրն դեղերը կրնային զսպել : Այի Վասիլիի պերճախօսութենէ այլայլած՝ գիշեր ցորեկ գիրքը ձեռքէն չէր ձգեր ինչպէս նորատի մայր մը իւր անդրանիկ զաւակը : Մերթ կ'պաղէր , մերթ կ'օրինակէր կամ բարձրաձայն կ'կարգար աս նուիրական էջերը , և կնիկ մը տեսածին պէս արտօրնօք դէպ ՚ի անոր կ'վազէր ինչպէս ծարաւի եղնիկ մը դէպ ի առուակը կ'վազէ : Բայց Սաքսօնիաի խարտեաչ աղջիկները անորմէ կ'խուսէին Կեսարացի եպիսկոպոսին խօսքին համեմատ : Ես անանկ կ'յուսամ որ եթէ աս խրատներն անգամ չըլլար , աս աղջիկներէն ոչ ոք պիտի ուզէր անոր մօ-

տիւ : Ահա ասի էր անձը որ մեր սիրահարներուն խաղաղ կեանքը պիտի վրդովէր : Ամեն գիշեր Փրիւմանս և Յովհաննա վանքին մօտակայ քարայրը կ'ըսաւէին որ ատեն մը Բերիափոսին նուիրուած էր : Աս չաստուածը դեռ Ալմանիաի մէջ կ'պաշտուէր սուրբն Վիգ անուամբ\*, բայց նպատակը միևնոյնն էր, քրիստոնեայ կանանց շուրթերը, ինչպէս ատեն մը լլտի կռապաշտուհիները, կ'շարունակէին անորմէ տուփական հաճոյքներ կամ գեղեցիկ զաւակներ խնդրել, և բարեսիրտ սուրբն ալ շատ քիչ կ'պատահէր որ անոնց աղօթքը չլսէ, պէտք է բսել նաև որ աս արձանները սովորաբար արեղաներու մենաստանին շուքին տակ կ'դրուէր, ասով՝ եթէ քանի մը վայրահաչ պատմագիրներու քսածին նայինք, կրօնամուկ կիներու աղօթքը աւելի յաջողութեամբ կ'կատարուէր : Աս նուիրական քարայրին խորը, սուրբին փայտեայ արձանին ետին մեր սիրահարները բոյն մը շինած էին սիւնիկի անուշարոյր տերևներով, աղսէսի մորթերով և Սաքսոնիաի տիկիներու սուրբին ընծայ բերած թանկագին կերպաններով : Աս անկողնոյն վրայ ընտիր լեզուներ, աղած ձուկեր, Մոզէլի պատուական գինիներ և ուրիշ բմպելիքներ կախուած էին, և մեր երկու երիտասարդները սուրբն Կրքիւշօնի փառաբանելէ դադրածնուն պէս աս ուտելիքներուն և բմպելիքներուն ձեռք կ'զարնէին, վասն զի աս սուրբին աղօթք բնելը՝ ինչպէս նաև Աստղիկին, ամենեկին համ չունենար առանց Բագոսի և Դեմէտրէի ընծաներ նուիրելու : Մեր երկու տարփածունները հոն կ'գտնուէին ամեն բարիքները վայելելով, երբ եղբայր Գորպէն շատոնց ի վեր անքուն՝ ան կողմերը կ'չըջէր իւր գառն վիշտերը լուսնին պատմելով : Բայց աս պահուս լուսինն անգամ կարծես աս խեղճ արքային հառաչանքներէն ձանձրացած՝ սև ամպե-

\* Բրիաբոս կամ Փալլիւս մինչև ժԲրդ դարը Ալմանիայի մէջ կը պաշտուէր, միայն թէ անունը փոխուած է : Շֆիցերհօֆէնի մէջ սուրբն Վիգ կ'անուանէին, ուրիշ տեղ սուրբն Պուլթէն և շատ տեղեր ալ սուրբն Կրքիւշօն : Այնտեղ աս սրիկա արձանները կ'քերթէին և փոշին իրենց էրկանը կամ տարփածուններուն գինիին մէջ կ'խառնէին կամ եթէ ամուլ ըլլային իրենք կ'խմէին :

րու ետև պահուեցաւ և շատ չանցաւ անձրևը ստիպեց սուրբն Գաղիլի աս աշակերտը որ սուրբ Կրքիւշօնի քարայրին մէջ ապաստանի : Եւ որովհետև քարայրին յատակը բարակ աւազով ծածկուած էր, որպէս զի ուխտի եկող կանանց՝ որոնք ստիպուած էին մուճակին հանել, մերկ ու փափուկ ստքերը չը ֆլսասուն՝ մեր արեղան առանց լսուելու մինչև այս երկու տարփածուններուն անկողինը հասաւ, ուր գիրկընդխառն խորունկ կ'քնանային : Սենեակը կանթեղով մը միայն լուսաւորուած էր որ քրիստոնեայ եղած Բրիափոսի պատկերին առջև կ'վառուէր : Յովհաննա Ոլիմպոսի դիցուհւոյ մը պէս կիսամերկ անանկ հրաշալի պատկեր մը կ'ընծայէր որ սուրբն Ամուն անգամ իւր ուխտը, Օրիփէն իւր դժբաղդութիւնը և Թէմիսթօքը Միլթիատի յաղթութիւնները պիտի մոռնար : Հայր Գորպէն ալ Փրիւմանսը մոռցաւ որ կ'քնանար և իսկոյն մտածեց Կեսարիոյ եպիսկոպոսին բնագիտական տեսութիւնները փորձով գործադրել : Եթէ մեր սիրահարները կ'քնանային՝ Սուրբն Կրքիւշօն արթուն էր : Ի՞նչպէս յանձն պիտի առնուր որ անարգ և նուաստ ներքինի մը գայ իւր գաղտնիքը պղծէ : Երբ տեսաւ որ ասի իւր յանդուգն ձեռքը քնացող քրմուհւոյն վրայ կ'երկնցնէ, բարկութենէն երեսը կասկարմիր եղաւ, ինչպէս կ'ըլլայ Նօդր—Տամ տը Լօրէթ երբ ամբարիշտ շուրթեր կ'յանդգնին իւր այտերուն հպիլ, գլուխը սկսաւ սպառնալից երերալ, և կանթեղին իւղը բորբոքիլ : Աս հրակէզ իւղէն կաթիլ մը Փրիւմանսի երեսին վրայ իյնալով՝ իսկոյն արթնցաւ և տեսաւ որ ընկերուհին կէս քուն՝ ձեռքովը հայր Գորպէնը կ'հրէ, ինչպէս կ'ընենք երբ գէշ երազ մը մեր քունը վրդովէ : Փրիւմանս դիւրագրգիռ էր և Ալմանիայի արեղայի պէս հուժկու, հետևաբար սովորած էր որևիցէ կռիւի՝ աստուածաբանական վէճերու մէջ անգամ, համոզիչ փաստերու տեղ բռունք գործածել : Առանց որևիցէ մեկնութիւն ուզելու մէջքի չուանէ գօտիով ուժգին կ'հարուածէր խեղճ Գորպէնի ուտերը : Այն ինչ մէկ կողմէն բռնցի հարուածներ կ'տեղային, և արիւնը կ'սկսէր վազիլ, որ բարեբաղդաբար քիթէ կ'գար, անդին Յովհաննա ալ արաբթնալով

արտորնօք կնգուղին տակ կ'ծածկէր կռիւին բուն պատճառները: Սոսկալի կռիւէ մ'ետք Գորպէն յաջողեցաւ կծիկը դնել կնգուղը զայրացած ոսոխին ձեռքը ձգելով, ինչպէս Յովսէփ իր վերարկուն ձգած էր Բիւթիֆարի կնկան, բայց կարծեմ Յակոբի զաւկին հետ ունեցած նմանութիւնն աչափ էր միայն:

Երբ պատերազմի գաշտին վրայ առանձին մնացին՝ մեր երկու սիրահարները վշտաբեկ իրարու նայեցան. աղէկ դիտէին որ այս գանակոծ սաթիւրը քարայրին գաղտնիքը երևան պիտի հանէր, ինչպէս բրաւ Պ. Էտմօն Ապու Յունաստանի գաղտնիքը երբ իւր ակնկալութիւնները 'ի դերև ելան:

Ուստի ստորերկրեայ բանտէն և չոր հացէ պրծելու համար հարկ էր ժամ առաջ հեռանալ աս հաճոյական վայրերէն, ուր անչափ քաղցր օրեր անցուցած էին աշխարհիս ամեն տեսակ երջանկութիւնները վայելելով: Վանքին քաղցրիկ հանգստութիւնները և համազամ կերակուրները յիշելով ահուդողով կերևակայէին թափառիկ կենաց յոգնութիւնները և զրկումները: Աս մասին սուրբ Անթօնի համամիտ էին որ կը պնդէ թէ ինչ որ է ծովը ձուկերուն նոյնն է վանքը արեղաներուն, և ինչպէս որ ձուկերը ծովէն ելնելով կ'մեռնին ասանկ ալ արեղաները՝ երբ վանքէն կ'ելնեն: Առաւօտեան ժամերգութեան զանգակը զանոնք աս տրամագին մտածմունքներէն արթնցուց և վտանգին մեծութիւնը յիշեցին:

Մութ գիշեր մ'էր: Ախոռը հեռի չէր: Դեռ ան քաջասիրտ էջը հոն էր որ եօթը տարի յառաջ Յովհաննան Փիւլաբերած էր: Վանական ախոռին աս ալիւր նահապետը տարիքներէն ճերմկցած պատկառելի կերպով պառկած էր իւր սերունդներով և առուստի գէզերով չըջապատուած: Մեր փախստականները զան քակեցին և ոտքի պայտերն ալ աղմուկ չհանելու համար խծուծի կտորներով փաթթելով (ինչպէս կ'ընեն ծովահէնները իրենց թիակները) դուրս ելան վշտաբեկ և սաստիկ կ'վախնային որ մի գուցէ իրենց չորքոտանի ընկերը միւս կենդանիները արթնցնէ ան բարձրահնչիւն ձայնով՝ որով եօթը տարի յառաջ մեռեալները գերեզմանէն դուրս հանած էր:

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԻ

But the fact is that I have nothing plan'd  
Unless it were to be a moment merry.  
BYRON, Don Juan. cant, IV.

Շարքմաննի մեռնելէն վերջը Գերմանիայի մէջ ոչ սուրհանգակ կար, ոչ ժանտարմ և ոչ պահակ: Իսկ սաքսօններուն ձիերը՝ ինչպէս այսօր անատենն ալ, անանկ պարարտ և ծոյլ անատեններ էին որ մեր փախստականները հալածուելու ամենևին վախ չունէին: Մանաւանդ իրենց էջը Բիսուի Երուսաղէմ մտած իշուն ընտիր սերունդէն էր որուն կռնակը նշան մնաց, ինչպէս սուրբ Դիմաց պատկերը Վէրօնիքայի քողին վրայ: Աս էջերը՝ որոնց ողնայարին վրայ երկու սեգիծ երկան, Խաչանիչ կ'անուանէին և արագութեան մասին կրնային ձիերու և նապաստակներու հետ մրցիլ: Իրենց տեսակը սպառած է Եւրոպայի մէջ, բայց Պաղեստինի և Եգիպտոսի մէջ առանց խառնուրդի մնացած է գեռ: Եթէ երբէք հոն երթաս, սիրելի ընթերցող, պիտի զարմանաս աս առանձնաշորհեալ անասուններուն որոնք ոսկեղէն սանձերով զարդարուած են և յախճապակեայ պնակներու մէջ խաշուած ոլոռն կ'ուտեն: Ահա ասանկ անատունի մը վրայ նստած մեր արեղիկները, կը քչէին զան՝ ապագային համար բիւր խորհուրդներ պատրաստելով իրենց մտացը մէջ:

Շատ չանցաւ արևը տաք և առանց ամպի Պիպրասթէյնի գագաթներուն ետևէն ծագելով՝ եկաւ իրենց խորհուրդները

գլխերնուն մէջ հասունցնելու . որոշեցին իրենց իշուն վրայ աշխարհիս շրջանը բնել երկրիս զօրաւորներէն ապնջականութիւն խնդրելով, ձեռքերսին հաւատացեալներուն շուրթերուն երկնցնելով և անհաւատները դարձի բերելու հոգը ուրիշներուն ձգելով: Իրենց ուղեորութիւնը սկսան դէպ 'ի Մայանս ուր կ'փափաքէին Լուգովիկոսի՝ իւր զաւակներուն հետ հաշտուելու հանդիսին ներկայ գտնուիլ: Բայց երբ երեք օր վերջը հոն հասան փոխանակ զուարթ նուագներու՝ զանգակի տըխուր ձայներ կ'լսուէր, և խունկերու մահաբոյր հոտերուն տեղ՝ խորոված միսերու հոտեր կ'տարածուէին: Տարաբաղդ Լուգովիկոսը Բարեպաշտ կամ Բարեմիտ (աս երկու ածականներն ալ կ'տային իրեն) նախքնթաց օրը իւր հոգին Աստուծոյ աւանդած էր ներելով իր զաւակներուն՝ ինչպէս իւր դահիճներուն կ'ներէ զոհ մը: Մարմինը էր վերջին բնակարանը կը տարուէր չորս սև ձիերէ քաշուելով՝ սրոնք նախքնթաց օրէն 'ի վեր ծով քլլալնուն՝ մեղամաղձոտ կերպով կ'յառաջանային երկու կարգ կրօնաւորներու մէջտեղէ սրոնք մսմերով զինուած հանգուցելոյն գովեստներ կ'երգէին որ Սարաենիան, Գօրսիգան և Սիկիլիան եկեղեցւոյն կտակած էր: Իրաւ է նաև որ աս կղզիները Սարակինոսներու և Յոյներու ձեռքն էին և ճիշդան կերպով կ'վերաբերէին իրեն ինչպէս այսօր Կիպրոսը և Երուսաղէմը Իտալիոյ թագաւորին կ'վերաբերին: Սակայն թագաւորը իւր բարի դիտաւորութեամբը թէ գովեստի, թէ խունկի և թէ ժամերգութեանց արժանի էր. ուստի արեղաները կնգուղնին գլուխնուն վրայ իջեցնելով արտմագին մեռելին գացած ճամբուն հետևեցան, որ՝ ինչպէս կ'բսէ Պիաս, ամենէն շիտակ ճամբան է քանի որ գոց աչքով կ'գտնենք զան, արարողութիւնը լննցածին պէս աս սուգով համակուած քաղաքէն հեռացան:

Բարեպաշտ կայսեր մեռնելէն վերջը Գերմանիոյ օգը քահանաներուն ամենևին յարմար չէր, ուստի ասոնցմէ շատերը սկսան գաղթել ան կաթուածահար անկլիացիներուն պէս որոնք Նիսը Ֆրանսայի անցնելէն 'ի վեր կ'մեկնին անկից՝ բսելով թէ իրենց բժիշկը հրաման տուած է Իգալիայի օգը

Ֆծերու և չէ թէ Ֆրանսայի: Լուգովիկոսի զաւակները զէնքով հայրական ժառանգութիւնը իրարու ձեռքէ կ'յափշտակէին: Ասոնց անդրանիկը՝ Լօթէր, սաքսօններուն սիրտը իրեն զբաւելու համար սկսաւ այն բոլոր ապականութեան միջոցները գործածել զորս այսօր շատ պաշտօնեաներ սովորաբար կը գործածեն: Ահա այս դիտմամբ անոնց հրաման տուաւ որ իրենց նախնի կուռքերը վերստին կանգնեն և անոնց սեղաններուն առջև շատախօս քարոզիչ մը կամ պարարտ Բենեափկատեան մը զօհեն: Քանի մը վայրահաչ պատմագիրեր ալ կ'աւելցնեն թէ ամբարիշտն Լօթէր նոյն իսկ իւր պալատին մէջ Իրմէսուլի և Թէվթիթի արձաններ շինել տալով Սաքսօններէն և Թիւրքէնիներէն բնգունած պարզեներուն փոխարէն բնծայ կ'ղրկէր: Ասի անհաւատայի պիտի թուէր մեզի եթէ այսօր աչքովս չտեսնէինք որ վարպետորդի Անկլիան իր գաղթականներուն Լօնսբայի գործարաններուն մէջ շինուած Հնգիկ և Աւստրալիացի կուռքեր կ'ղրկէ իւր բարեկրօն Գուռքերներու և խստակեաց մարդկրօններու ձեռք. և այս կուռքերը Աւետարանական բնկերութեան յուղարկած քանի մը հակ Սուրբ Գիրքերու քով իրը հակադեղ միևնոյն նաւուն մէջ կ'բեռնաւորեն, անանկ որ թէ Աւետարանները և թէ կուռքերը հանդարտ՝ բրիտանական գրօշակին պաշտպանութեան տակ կ'նաւեն:

Լուգովիկոսի զաւակներուն երկդառակութիւններովը Գերմանիա անբնակելի եղաւ: Մեր սիրահարներուն էջը մէն մի քայլին դիակի մ'առջև կ'ընկնէր կամ արեան լիճի մը մէջ կը սահէր: Ո՛չ գարի կ'գտնէր ուտելու, ոչ յարդ և ոչ թարմ տերևներ, ուստի խեղճ կենդանին ստիպուած էր անօթի ակոսաներովը փուշեր և տատակներ ծամել: Չմեռը արտորոսք կ'հասնէր, սաքսօնեան ձմեռ մը անանկ խիստ և անանկ սուկալի է որ ադուաները անգամ անօթի կ'ստակէին 'ի զուրիւր իրենց կտուցը ցուրտէն սառած դիակներուն վրայ բթացնելին վերջը: Խեղճ փախստականները անպատասպար ճնճուկներու պէս՝ սառնապատ դաշտերուն մէջ կ'թափառէին, անիծելով ան ներքինի սամիւրը որ իրենց կրած բոլոր թշուառութիւն





ներուն պատճառ եղեր էր: Թշնամիներու վախը և ձմեռուան խստութիւնը սաքսոններու անհիւրասէր բնաւորութիւնը ան աստիճան կարծրացուցեր էր որ մեր արեղիկները շատ անգամ զուր տեղ վանքերու կամ խրճիթներու դռները կ'զարնէին: Երբեմն ամենեւին պատասխան չէին ընդուներ, երբեմն ալ պատուհանի մը ետեւէն սաքսոնեան դլուխ մը կ'երևեր, ցուրտէ կարմիրցած կամ վախէն կապարագոյն դարձած, որ մարդասիրաբար կ'յորդորէր զանոնք որ ճամբանին շարունակին: Շատ քիչ կ'պատահէր որ ողորմասէր ձեռք մը սև հացի կտոր մը կամ աղած ձուկ մը նետէ: Աս կերպով երկու ամիս թափառեցան ագռաւներու պէս բանակներու ետեւէն երթալով, կէս մարած կրակով մը տաքնալու կամ երեսէ ձգուած հացկերոյթի մը ոսկորները լիզելու բարեբաղդութիւթիւնը ունենալու համար: Օր մ'ալ եղաւ որ անօթութիւնը իրենց աղիքները կրծեց Պրոմէթէի անգղին պէս, ան ատեն սկսան շնագայլերու բաղդին նախանձիլ որոնք Լօթերի զինւորներուն զիակները կ'ուտէին, և Գրիզիփի կարծեաց համաժառ եղան որ իր աշակերտներուն կ'սորվեցնէր թէ մեռելներու միտք ուտելը ներելի է:

Յովհաննա առանց տրանջելու բոլոր այս խեղճութիւնները կ'կրէր, անօթութեան և ցուրտին կ'դիմանար, ինչպէս կ'դիմանայ անապատի ուղտը տաքին և ծարաւին: Ոչ գանգատ կ'եղէր իւր գունատ շուրթերէն և ոչ տրտունջ, և մանաւանդ կ'ջանար ընկերին արցունքները որբել, որ շատ անգամ աս տաժանելի ճամբորդութեան ժամանակ կ'օրհնէր ան ժամը ուր աս խարտեաչ մարդարիտը որսած էր իր կենաց գետին մէջ: Կանանց բնութիւնը Կորնթոսի ան արոյրին կ'նմանի որ հազար տեսակ մետաղներու խառնուրդ մ'է և որուն մէջ զուտ ոսկի ալ կ'գտնուի: Ասանկ ծովելով, լալով, զիրար մխիթարելով, մատերնուն ծայրը փչելով, և ծիծեռնիկներուն կամ ծիւրական ախտէ բռնուած անկուհիներուն պէս միշտ դէպ 'ի հարաւ երթալով՝ Պալիերայի ձիւնապատ դաշտերը և Գօնութանցիայի լիճը անցան և Սէն Կոյի արեղաներու վանքը հիւրասէր ընդունելութիւն գտնելով Լօթերի զինւորներէն և գայ-

լերու վախէն ալ ազատեցան: Բայց հաղիւ թէ մեր երկու սիրահարները կ'մտածէին հոն հաստատուիլ երբ հետաքրքիր արեղայ մը ուշադրութեամբ Յովհաննան դիտելով՝ տեսաւ որ ականջները ծակուած են, ասով սկսաւ թէ կասկածիլ և թէ տարօրինակ բաղձանք մը զգալ: Անատենները՝ կնկան մը ահանջին ծայրը անգամ կ'բաւէր կրօնաւորներու հանգիստը վրդովելու համար: Մեր օրերը՝ կնկան մը նամակին հոտն անգամ Սուրբ—Լերին բնակիչները տակնուվրայ կ'ընէ\*: Յովհաննա վախելով որ իւր գաղանիքը յայտնուի և Վերապատուելի հայրն ալ վերջէն պահանջմունքներ բնէ՝ Յրիմանաց համագեց որ աս հետաքրքիր Զուիցերցուց հօտէն հեռանան շուտով: Սէն—Կոյէ Յուրիք անցան որ Հելլեդիայի ամենէ հին քաղաքն է և թէ իր բնակիչներուն և թէ օրի ուժին համար խիստ անուանի է: Յուրիքէ Լիւսերնա գացին ուր գիշեր ատեն հասան ան հրաշալի լապտերը տեսնելու համար՝ որուն լոյսը, ժամանակագիրերու ըսածին նայելով, աստղերուն լոյսը կ'նսեմէր և լիճերը կ'լուսաւորէր, ուր ատեն մը շատ ճամբորդներ կ'ընկնէին Միլէի փիլիսոփային պէս:

Լիւսերնայէ դէպ 'ի Ավէնտիքում ուղևորեցան որ նախնի Հելլեատիոյ մայրաքաղաքն էր: Հոն կարծր ժայռի մը վրայ՝ Աթիլայի կօշիկներուն հետքերը տեսան ինչպէս այսօր Յիսուսի հետքերը կ'տեսնուին Ձիթենեաց լեռան վրայ: Ասիկց Սևաուսնէօմ հասան ուր նաւ մը գտնելով Ռօնէն մինչև Լիօն գացին:

Աս նաւը հրեայ վաճառականներու կ'վերաբերէր, որոնք Մարսիլիա կ'երթային Սպանիոյ սարակինոսներին գրիստոնեայ գերիներ ձախելու համար: Ան ատենները Իսրայիլի թուռները ոչ միայն հարստահարեալ չէին այլ նաև բացարձակապէս Կօ-

\* Բարեկամներէս մին պատմեց թէ Մթոս լեռան վանքը գտնուած ատեն գիշեր մը իւր խուցը մտնելով տեսաւ որ յիսունէն աւելի արեղաներ հաւքուած՝ անյագութեամբ Վալաքիայի սիկիլէ մ'ընդունած նամակը կ'հոտւրտային: Հոտէն հասկեցած էին թէ կնիկէ մ'է այն նամակը:

լի հարաւային կողմը կիշխէին: Կայսրը ամեն օր անոնցմէ ա-  
հագին գումարներ փոխ կ'առնուր և աս գումարներուն տու-  
կոսին փոխարէն անոնց թող կ'տար որ իւր հպատակներէն առ-  
նուն հրեայ ընեն, ինչպէս որ մենք Յոյներս այսօր աչք կը  
գոցենք Ողորմութեան քոյրերուն, Աւետարանական ընկե-  
րութեան թարգմանութեանց և ամեն ազգի քարոզիչներուն.  
Լիօնի հրեաները կայսրէն ծախու առած հրամանագիրերը  
ակոյսի տեղ կ'գործածէին քրիստոնեաները փարատելու հա-  
մար, խողերը կ'ապանէին, տղեկներ կ'գողնային, զերկները  
կ'ստիպէին որ շարաթ օրը սուրբ պահեն և կիրակի օրը բա-  
նին, սպտամքները անասունի պէս կ'ծախէին և շատ անգամ  
ալ քահանաներու սիրուհիները հրեայ կ'ընէին: Խեղճ եպիս-  
կոպոսները աղերսագիր աղերսագրի վրայ կ'դրէին կայսեր,  
հրեայներն ալ քսակի վրայ քսակ: Կայսրը առջիններուն չէր  
պատասխաներ, միւսներուն ալ զինուոր կ'զրկէր որ անոնց տու-  
ներուն վրայ կ'հսկեն և կամակոր պարտաւորաններն ալ խեղճի  
մտքի բերեն, ինչպէս այսօր քրիստոնեայ նուիրակներ Ռօչիլ-  
տի պարտաւորանները կ'բանտարկեն: Ուստի ամենեկին իրաւունք  
չունինք մեր դարը ամբաստանելու թէ անցեալ դարերէն ա-  
ւելի արծաթասէր է: Ոսկին միշտ և ամեն տեղ երկրիս վրայ  
պաշտուած միակ աստուածն է, հրեաներն ալ իւր մարգա-  
րէները, մանաւանդ անանկ ատեն մը՝ որ Աւետարանը ան-  
գամ պէտք էր սկիզբէն տառերով գրուիլ աւելի ակնածու-  
թիւն ազգելու համար:

Նստին ճամբորդներուն մէջ ծեր ռաբբի մը կար Իսաքար  
անուամբ որ ժամանակ անցնելու համար ուզեց մեր երիտա-  
սարգ արեղաները հրէութեան դարձնել, նաւողչէքի փոխա-  
րէն չարածճի վաշխառուն անոնց հոգին պահանջելով: Ուստի  
սկսաւ պատմել թէ Յիսուս ստորին բնտանիքէ հրեայ մ'էր,  
և Յովհաննէս Մկրտիչ անուամբ կախարդէ մը մոգութիւն սոր-  
վելէ յետոյ Տիրբեր կայսեր աղջկան խոստացած էր որ առանց  
որ և է մարդու մը միջամտութեան յղանայ, աղջիկն ալ անոր  
խրատներուն հետևելով զաւկի տեղ քար մը ծնած էր: Այս  
պատճառաւ կայսրն ալ բարկանալով՝ Պիղատոսին հրաման

տուած էր որ աս խարերայ կախարդը խաչեն, վերջէն մար-  
մինն ալ ազուգայի մը քով նետուած ըլլալուն գիշերը ան-  
ձրեէն քշուած տարուած էր, ասով Նազարէթցիք կարծած  
էին թէ յարութիւն առած է\*: Աս և ասոր նման բիւր հայ-  
հոյութիւններ փոխելէ վերջը զազրալի հրեայն Իւրայէլի Աս-  
տուծոյ ամպերու եւ աստեղց պսակ մը սկսաւ հիւսել: Զան  
ներկայացուց չորս յովաղէ լծուած կառքի մը վրայ ստամ-  
Բաքոսի կառքին պէս, ալ ձեռքով հազար գրկաչափ փողմը  
բռնած որով իւր հրամանները կ'տար Մարգարէներուն,  
գլխէն սպառսպուռ զինեալ սատանաներ կ'յղանար, ինչպէս  
Արամազդ յղացած էր պատերազմասէրն Արեւք. բարեկամօրէն  
այբուբենի գիրերուն հետ կ'խօսակցէր որոնք թեաւոր հրեշ-  
տակներ էին, և ահագին ազօրիքի քարով մանանան կ'աղէր  
որով արքայութեան բնակիչներուն հացը կ'չաղուէր: Մեր ե-  
րիտասարդ Սաքսոնները մերթ կ'ինդային թալմուտեան այս  
այլանդակ աւանդութեանց վրայ, մերթ վախելով որ այս հայ-  
հոյութիւններով նաւը չընկղմի՝ սուրբ Մէրարի աղօթք մը կը  
մրմնջէին որ մեր նախնեաց Պոսիգոնին և այս օրուան Այի  
Նիքօլան պէս ալիքները յուզելու և խաղաղցընելու զօրու-  
թիւնը ունի:

Աս աղօթքով և օղին գեղեցկութեամբ նաւը երկու օր  
վերջը Լիօն հասաւ ուր կ'գանուէր սուրբ Ակօպար, որ միջին  
դարու տուրբերուն ամենէն արդարն էր և ասոր միայն քղանց-  
քը կ'ուզեմ պագնել: Ասի կ'համարձակէր քարոզել թէ Յի-  
սուս յաւիտենական է և ամեն տեղ ներկայ, և ամեն անոնք  
որ իւր վարդապետութեան համեմատ կ'ապրին՝ մկրտուած  
ըլլան կամ ոչ, Աւետարանը ճանչեն կամ չճանչեն՝ քրիստոնե-  
այ անունը կրելու և երկնից ժառանգութեան մասնակից ըլ-  
լալու իրաւունքը ունին:

Սուրբ պատկերները համբուրելու կամ մոմ վառելու սո-  
վորութիւնը կ'մերժէր, ըսելով թէ մեծ ամբարշտութիւն է ան-

\* Բոլոր աս առակները՝ որոնցմով անատենուան հրեայները ձրան-  
ոայի մէջ հրէութիւն կ'քարոզէին, Թալմուտէն քաղուած են:

նիւթական աստուածութեան մը մարդկային ձև տալով պաշտել, և եթէ նախնի քրիստոնեաները Յիսուսի, աշակերտներուն և մարտիրոսներուն պատկերները կ'պահէին (ինչպէս մենք այսօր բացակայ բարեկամներու լուսանկար պատկերները կ'պահէնք) չէ թէ աւերադապաշտ պաշտօն մը մատուցանելու համար այլ իրենց ծանօթ և սիրելի մարդկանց յիշատակը անմուռաց պահելու համար: Բարեկրօն եպիսկոպոսը ծաղրելի կը համարէր հաւատալը թէ Աստուած սուրբ Գիրքը բառ առ բառ նորվեցուցած էր Մարգարէներուն ինչպէս հրեշտակը Բազմակիշտուութեամբ իշուէն: Հաւատացեալներուն կ'պատուիրէր որ երկար բարակ աղօթքներ չընեն, իրենց ողորմութիւնները աղքատներուն բաժնեն և չէ թէ եկեղեցիներուն, վասնզի, կըսէր, մեծ մեղք է երբ այնչափ խեղճեր պղնձէ դրամ անգամ չունին հաց գնելու համար՝ ոսկին քահանաներուն նետել որ կէսօր ատեն մամ վառեն, տաճարներուն արձանները կամ իրենց սիրուհիներու կուրծքերը զարդարեն:

Ասոնք հերետիկոսական վարդապետութիւններ են, բայց քաջախիտ եպիսկոպոսը կ'յանդգնէր արձակ համարձակ քարոզել: Եթէ քանի մը դար վերջը քարոզէր անտարակոյս դասնի ժամ Հիւսի պէս պիտի այրէին կամ Գաիրիսի պէս կոյաւնոցը պիտի նետէին: Սակայն բարեբաղդաբար անատենները Արևմտեան քահանաները բոլորովին բնաւ չէին և սիմօնականութեամբ զբաղած բլլախուն՝ մարդիկը դատելու և այրելու ժամանակ չէին ունենար:

Աս ընդհանուր ապականութեան և տգիտութեան մէջ եթէ մէկը առաքինութիւնը մշակելու տարօրինակ ճաշակը զգար իւր ընկերակիցները կ'խնդային անոր պարզմտութեան վրայ, անոր բաժինը իրենք կ'կլլէին և կամովին կ'ձգէին որ սուրբի տիազօրը ստանայ՝ որ ան ատենները ամեն կարգի քահանաներուն կ'տրուէր սովորաբար, ինչպէս այսօր առհասարակ Ն. Վսեմութիւն ախաղաք կ'տրուի յոյն բժիշկներու: Այսպէս էր սուրբն Ակօպար, խիճերու մէջ աղամանդ մը, ագռաւներու երամին մէջ կտրապ մը, և իններորդ դարու խաւարին մէջ կ'փայլէր ինչպէս կ'փայլի մարգարիտը խոզի կոկորդին մէջ:

Աս աղտոտէր քահանային գեղանի դէմքը տեսայ երբ այնչափ յոգնութեամբ միջին դարու ափզմը կ'խառնէի և ուզեցի վայրկեան մը անոր մօտը հանդիլ, ինչպէս յոգնած արաբացին անապատին վտակին քով կ'հանդիլ:

Յրիւմանս և Յովհաննա զայն բարեսիրտ եպիսկոպոսին ձեռքը պաղնելու. անատենուան ճամբորդները երբ օտար քաղաք մը հասնէին եպիսկոպոսատունը կ'հարցնէին ինչպէս այսօր հիւպատոսարանը կ'հարցնեն: Հոն իրենց յանձնարարական նամակները կ'ցուցնէին, պէտք եղած տեղեկութիւններ կամ ճամբան շարունակելու համար դրամական նպաստ կ'խնդրէին և փոխարէնը իրենց քաղաքի սուրբին մատուցանէր կ'նուիրէին: Անատենուան քրիստոնեաները սովորութիւն ունէին ամեն քաղաքի և ամեն ատենուան սուրբերու մատուցանելու հաւաքածոյ մ'ընել, ինչպէս մենք այսօր սովորութիւն ունինք նամակադրոշմերն ընել:

Մեր ճամբորդները՝ որոնք Ն. Վերապատուութենէ շատ բան պիտի ուզէին և ոչինչ ունէին տալու, տմօթով և վախով ներկայացան ինչպէս կ'ներկայանային Անկախութեան պատերազմներու դուրսգալանց այրիները պալատներու գաւիթը. բայց սուրբն Ակօպար՝ որ խոստովանահայրերու և բժիշկներու պէս սովորած էր մէջքերը եւ սիւստերը քննել, ցնցոտիներու տակ անգամ մարդուս արժանիքը դիւրաւ կ'ճանչէր:

Չանոնք իւր սեղանը հրաւիրեց, զարմացաւ անոնց գեղոյն, իմաստութեան և եղբայրական մտերմութեան վրայ, զանոնք Գասթօրի և Բօլլիւքսի նմանցուց և երբ ճամբայ ելան անոնց լաւ խրատներ, նոր մուճակներ, օրհնութիւն և քիչ մ'ալ ստակ տուաւ:

Ռօնէն իջնելով՝ մեր ճամբորդները վեց օր վերջը Մլրլը հասան որ Մեծին կոստանդիանոսի օրով Կօլերու մայրաքաղաքն էր և այսօր թուղերովը և կիներուն գեղեցկութեամբը շատ անուանի է, և աս գեղեցկութեան (կիներու գեղեցկութիւնը ըսել կ'ուզեմ) պատճառն ալ անկիլիական ձիերուն պէս արաբական արեան խառնուրդ մ'է: Մեր ճամբորդները կայսերական պալատին աւերակները, մատուռը, ամփիթատրոնը և կո-

Թողը տեսնելէ վերջը ստամոքսնին ալ լեցնելու պէտքը զգացին որ Աթենասի տաճարին պէս դատարկ էր և որուն առջև կ'գտնուէին ճիշդ աս միջոցին: Դէպ ի կանանց վանքը սկսան երթալ, որ Կօլի ամենէն հին վանքն էր, և սուրբն Սէզէր շինել տուած էր վեցերորդ դարուն, կանոններն ալ իր արեամբը գրած էր ինչպէս Տրաքօն օրէնքները և Հէնրի Գ. ալ սիրուհւոյն գրած նամակները: Աս վանքին կանոնները ան սուրբին կնգուղին պէս կարծր էին. որ և է օտարական մը թէ այր և թէ կին չէր կրնար հոն մտնել, կոյսերը պատահանէն անգամ չէին կրնար նայիլ: Անոնք որ գաղտնի կ'լուսացուէին, կամ մազերնին կ'սանտրէին, կամ դուրս ելած ատեն ակռանին և կամ քալած ատեն ոտքերնին կ'ցուցնէին՝ անխնայ առչարաջիլով կ'գանակածուէին կամ շղթայակապ ստորերկրեայ բանտերը կ'նետուէին: Սակայն այս խիստ կանոնները ամենևին չէին յարմարեր Բրովանսի աղջկանց տաք արիւնին:

Խեղճ կոյսերը կ'թողուէին բուսաբանի մը տուփին մէջ փակուած տունկերուն պէս, մինչև որ օր մը իրենց սանդալներու տակ պառաւ արբասուհին և Սէզէրի բարբարոս կանոնները ոտնակոխ ընելով ազատութեան հետ իրենց թարմ գոյները և զուարթ բնաւորութիւնը վերստին ստացան:

Ան ատենէն ի վեր սահմանադրական կերպով կ'կառավարուէին, վանքին մէջ թատրոն ունէին, շաբաթը երկու անգամ դուրս կ'եւնէին և ակռանին ցաւած ատեն ալ ծով կը պահէին: Երբ բարեպաշտն Լուզովիկոս ուզեց աս միջոցաւ դառնուկները Սուրբն Բենեդիկտոսի լուծին տակ բերել, ժողովքին մէջ արձակ համարձակ պատասխանեցին թէ կրցածնուն չափ ծովը և կուսութեան ուխտը պիտի պահեն, բայց անհրաժեշտ էր չառնուն երգմամբ կապուիլ վախելով որ անժողկալութեան մեղքին վրայ երգմնազանցութեան մեղքն ալ քաւելցնեն: Ահա այսպէս էր կանանց վանքերու մեծագոյն մասին վիճակը, զորս սուրբն Իամիանոս կորստեան որջեր կ'անուանէ, Արևը՝ կարծես մոռնալով թէ ձմեռ է, իւր ճառագայթներովը վանքին դաւիթին քարերը կ'լուսաւորէր երբ մեր երկու ճամբորդները սեմին վրայ կանկ առին:

Իննապանուհին բաց դրան առջև կ'խորթար, ուստի ասոնք վանդակներէն ներս մտան: Քիչ մ'ատեն ամայի բակերը և լուին նրբագուլթները շրջելէն ետք ննջարանը հասան, ուր տաք երկ'րներու սովորութեան համեմատ կոյսերը կը հանգչէին:

Եղգէ վարագոյրներ սա քնացող աղջկանց արտեանունքը կ'պաշտպանէր արևուն ճառագայթներուն դէմ, և աս ալ զօտ լոյսը աս նորահաս Աստղիկներուն գեղեցկութեան նոր փայլ մ'ևս կ'տար: Յիսուսի այս հարսերուն մէջ, ինչպէս Սուրբ Թանի մը կանանոցը, ամեն աղգէ և ամեն գոյնէ կոյսեր կային, խարտեալ զուիցերուհիներ՝ որոնք իրենց այծերուն կաթէն աւելի ճերմակ և իրենց երկրի լիճերէն աւելի հանդարտ էին: Նոր բրիտանացիութեան դարձած սարակինոսուհիներ՝ փայլուն գոյնով և անուխի պէս սև մազերով, Կօլի զուարթ և Պիւռենեան լեռանց կորովի աղջիկներ:

Վանքին ննջարանը ան բուսաբանական պարտէզներուն կը նմանէր ուր անթիւ ծաղիկներ թէ գոյնով թէ բուրմունքով և թէ հայրենիքով տարբեր՝ բայց ամենքն ալ գեղեցկութեամբ իրարու քոյր, ապակեայ բանախ մը մէջ քովէ քով կ'ծաղկին: Աս քնացող կոյսերէն ոմանք քաղցր երազով պաշարուած անկողնին մէջ կ'կանգնէին ձեռքերին կարմրագոյն այտերնուն վրայ դրած, այն ինչ վիզերնին ճել մակ շապիկին տակ կ'դողդղար ինչպէս լուսինը ամպերուն ետև: Ոմանք ալ տոժգոյն և թախծագին կարծես թէ իրենց քունին մէջ անգամ ցաւելով կ'իշխէին իրենց մօրը շուրթերը կամ հայրենեաց յիշատակները. ուրիշներ ալ կայ, ն որոնք կարծես թէ անհամբեր ձեռք մը կ'կարկառէին դէպ ի արբասուհւոյն գաւազանը, կամ իրենց երկնային ամուսնոյն թեկերնին կ'բանային: Շատերն ալ հեղ և հանդարտ կ'ընանային մեծ բիրանոյն Փարաւոններուն պէս, ամանք ալ կ'խորթային, բայց ասոնք պառաւ էին և հանգերձեալ կենաց երանաւէտ վիճակը կ'երազէին:

Երկու սիրահարները Մորփէոս աստուածոյն աս զանազան անձնաւորութիւնները տեսնելով՝ իրենց անօթութիւնը մոռցած

էին երբ ննջարանին ժամահարին արծաթէ աքաղաղը սկսաւ հնչել որ արարական հրաշակերտ մ'էր, և Սարակինոս իշխան մը վանքին մէջ գտած հիւրասէր ընդունելութեան փոխարէն պարզև զրկած էր, ուր՝ կ'ըսեն քանի մը վայրահաչ պատմագիրներ, իւր պալատին ամեն տեսակ հրճուանքները վայելած էր:

Աս աղմուկէն՝ խումբ մը սև, ճերմակ, շագանակագոյն և կապոյտ արտևանունքներ քունը աչերնէն թոթուելով ննջարանին մէջ աստղերու պէս փայլեցան և հետաքրքրութեամբ երկու օտարականներուն վրայ ուղղուեցան:

Ան ատենուան կոյսերը ոչ վախկոտ էին և ոչ մեծամիտ: Մանաւանդ որ մեր գիւցազուններն ալ սարսափ ազդող երեւոյթ մը չունէին: Եղբայր Պրիւմանս Հօլանտայի մեկոնի մը փայլը և վեհութիւնը ունէր, եղբայր Յովհաննէս ալ մանիշակի թարմութիւնը: Կոյսերը՝ որ ամեն բանտարլեաներու պէս ծաղիկները խիստ կ'սիրէին, ծովուն ալիքներուն պէս աս երկու արեղաներուն շուրջը խոնելով կ'հարցնէին թէ ո՞ւրսկեց կ'գան և ի՞նչպէս բուսած են իրենց ննջարանին մէջ: Երբ իրենց հետաքրքրութիւնը յագեցաւ բարեսիրտ քոյրերը մտածեցին որ աս հիւրերը անօթի են և զանոնք իրենց սեղանը հրաւիրեցին: Հոն՝ առաջին անգամ հիւսիսի աս զաւակները հարաւի քաղցր պտուղները ճաշակեցին, ան թուզերը և խաղողները որոնց համար աստուածարան Յովհաննան մատերը լիզելով կ'հարցնէր թէ արգեօք լօթիս ըսուած քաղցր պտուղը ա՞ն է:

Ամբողջ երեք ամիս երկու սիրահարները աս հիւրասէր կոյսերուն քով հանգչեցան որոնց կանոնը կ'ներէր որ պարտիզպաններ և խոստովանահայրեր ունենան թէ իրենց հոգին մը շակելու եւ թէ վանական պարտէզը ոռոգելու համար, ինչպէս գրած են միամիտ պատմագիրները առանց մտածելու թէ աս խօսքերը ինչ բառախաղ և ինչ երկգիմի նշանակութիւններ կը պարունակեն և ի՞նչ մեծ զէնքեր եղած են կրօնքի թշնամիներուն ձեռքը:

Գործերը շատ աղէկ կ'երթային:

Երկու բենեալիտեանները կ'գիրնային և իրենց հայրենիքը կ'մտնային Բրօլանսի ան քաղցր կլիմային տակ ուր Բիոսցիք անգամ իրենց հոտաւէտ կղզին կ'մտնան, «Մարգս՝ ուր որ երջանիկ է հայրենիքը հոն է» կ'ըսէ Եւրիփիտ: Ս.մենկլիմաներու տակ լօթիսի մեղրայից պտուղը կ'բուսնի, և տարբեր ձևերով մահկանացուաց անյագ շուրթերուն կ'ներկային: Թագաւորներու համար գահ, սիրահարներու համար պաշտելի հումանի, փոճառականներու համար ոսկի, արհեստագիտին համար ծափահարութիւն: Լեռանց ձիւնապատ գագաթները և անապատին տօթակէզ աւազին մէջ անգամ լօթիսը կ'աճէր երբ մենեկեացները սրբութեան կ'զբաղէին և գերիններն ալ ազատութեան: Այսօր լօթիսը պրասի պէս ընտանի բանջար մ'եղած է, և կ'երևի թէ աս պատճառաւ է որ բանահիւսները զանի Հելիկոնէն արտաքսած են: Կ'ըսէինք թէ մեր երկու արեղաները հանգստութիւնը գտնելով շատ գոհ կ'ապրէին արլէզեան կանանոցը, բայց շատ չանցաւ Յովհաննա անծանօթ և սոսկալի ախտէ մը բռնուեցաւ: Այտերը Աքայեցւոյ սուրբերուն պէս խոռոչաւոր եղան, աչերը առաւօտեան աստղերուն պէս աղօտ: Կերակուրի տեղ եղունգները կ'կրծէր և փոխանակ քնանալու ամբողջ գիշերը հառաչելով կ'անցնէր: Ընկերը միշտ ասոնց պատճառը կ'հարցնէր, բայց պատասխանի տեղ արցունք և հառաչանք կ'ընդունէր: Եթէ զան պագներու համար մօտենար՝ այտերուն տեղ կունակը կ'գարձնէր, և կ'ստիպէր որ երթայ մերթ քոյր Մարթան պագնէ, մերթ քոյր Մարթիլոը կամ ուրիշ կոյս մը: Բարեմիտ Պրիւմանս՝ որ սովորած էր բարեկամուհւոյն ամեն հրամանները կատարել, արտորնօք կ'փութար այս պատուէրը փորձագրելու: Բայց երբ դառնալով իւր հնազանդութեան վարձքը կ'պահանջէր, համբոյրի և շնորհակալութեան տեղ միայն հայհոյանք և ճանկի հարուածներ կ'ընդունէր:

Աս ախտին երևոյթները նկարագրելէ վերջը ախտին անունը տալ անօգուտ է: Մեր գիւցազնուհւոյն վիճակը շատ ցաւալի էր, վան զի չափազանց նախանձով կ'տագնապէր, և չէր կրնար մխիթարուիլ իւր սիրահարին միևնոյն տազնապը

տարով Առնացի զգեստովը անգէն էր ինչպէս էգ վագրը երկաթէ վանդակին մէջ:

Կոյսերը են յաղորութիւն ենթադրութեան վրայ կ'դիզէին, ինչպէս հսկաները լեռները լեռներու վրայ՝ հասկնալու համար թէ ի՞նչ է աս նորատի և չքնաղ արեւոյսին տարօրինակ հիւանդութիւնը որ ոչ միայն իրենց համբոյրներէն կ'խուսէր ինչպէս կատաղի շունը ջուրէն, այլ նաև ամեն անգամ որ տեսնէր թէ իր բնկերը իրենց հետ կ'խօսակցի՝ բարկութենէ կ'դողար: Մեր դարուն սկիզբները անանկ կ'կարծուէր թէ բոլոր հիւանդութիւնները ստամոքսի գրգռումէն կ'ծագին, ուստի առանց բացառութեան փորախտ կ'անուանէին և տղրուկներ կ'դնէին արիւնամու Պրուսէի հետևելով: Իններորդ դարուն՝ բոլոր ախտաւոր հիւանդութիւնները թէ մարմնաւոր և թէ հոգևոր սատանային ներգործութեան կ'յատկացնէին և դեւորը հանելով ու սուրբերու մասունքներով կ'ջանային բուժել:

Թէ բժշկութիւնը և թէ աստուածաբանութիւնը՝ որոնց մէկէն մարմնային և միւսէն հոգևոր բժշկութիւն կ'սպասենք, զգեստի պէս նորերուկի ենթակայ գիտութիւններ են: Ինչ որ կ'հաւատային մեր նախնիքը մեզի համար առասպել է և դիւզի տէրտէրներն անգամ Կալիէնի և Բարասէլցի գեղազիրներուն վրայ կ'խնդան: Աստուած գիտէ ինչ պիտի բան մեր թոռներուն թոռները երբ բերսինի կամ նօգրը ճամ աը Լուրատի հրաշքները կարգան կամ . . . — կրնանք աւելցնել մեր կողմէ — երբ Իզմիրի Ազգ. հիւանդանոցի մատուան Ս. Գրիգոր Լուսաւորչի պատկերին քրանիլը լսեն\*:

Կոյսերը ժողովք բնելով՝ միաբերան որոշեցին Նղբայր Յովհաննէսը Սէնթ—Մարի—Մատթէի քարայրը զրկել ուր հրաշագործ ծառ մը բուսած էր և որուն հտը սատանաները վանելու զօրութիւն ունէր ու կոյրերուն աչքը կ'բանար ինչպէս ձուկին իւզը թօպլի օրով:

Ձրիւմանս՝ իւր սիրուհին հաւատարիմ իշուն վրայ նստեցնելով՝ ցաւազին գէպ ի քարայրը ուղևորեցաւ, անիծելով

\* Այս հրաշքը մօտ օրերս կատարուեցաւ Իզմիրի մէջ Մակար վարդապետին աղօթքովը: Մ. Թ.

այն ներքինները և սատանաները որ զինքը Թափառական Հրէին պէս միշտ հոս հոն կ'մղէին:

Նախանձը՝ երբ բնախտ (idiopathie) կամ կազմածքի արդիւնք մը չէ, ինչպէս ազատասիրութիւնը Յունաստանի մէջ, դարձեալ տաժանելի հիւանդութիւն մ'է, բայց այս աղէկութիւնը ունի որ երբ պատճառները վերնան ախտն ալ կ'անհետի ինչպէս ծովուն ախտը կ'անհետի երբ ճամբորդները ցամաք կ'հասնին: Մեր դիւցազնուհին տանջող չար ոգին ալ անհետացաւ երբ իւր հակաաւորդու հիւները տեսնելէ, եղունգները և ակունքները սրելէ դադրեցաւ:

Դեռ հազիւ կէս ճամբան հասած էին երբ Յովհաննէս թէ իր ախորժակը գտաւ և թէ զուարթութիւնը անանկ որ սրբուհին Մատթէի գործ չ'մնաց ալ: Երեքօրեայ ճամբորդութենէ ետքը հասան գէպ ի այն լեռը որուն գագաթին վրայ կ'բացուէր քարայրը: Արեղաները գծուարաւ կ'երնէին վեր, էջն ալ կ'գար անօթի ծարաւ և տրամագին գլուխը կ'օրէր իբր թէ ալ զգուած էր աս տաժանելի կեանքէն, կ'երևի թէ աս խեղճ կենդանւոյն նախահայրերն ալ արգիլեալ գարիէն քանի մը հատ կերած էին որ իրենց զաւակներն ալ մեզի պէս մեղաց սկզբնական հետևանքները կ'կրեն: Երկու ժամ երնելէ վերջը ծառախիտ սարահարթ մը հասան որուն մէջտեղը կ'բացուէր հովանաւոր քարայրը ուր ժէնէզարէթի խարտեայ աղջիկը ամբողջ երեսուն տարի երիտասարդական մեղքերը ողբաց: Քարայրին կեդրոնը՝ ժայռի մը մէջտեղ աս սրբուհւոյն արցունքներովը փորուած աւազան մը կար: Աս արցունքները աչերէն հոսած ատեն մարգարիտի կ'փոխուէին զորս գեղանի մենակեացը աղբատներուն կ'բաժնէր: Աս աւազանին քով կ'հանդէր իւր մարմինը ուր թաղուած էր սուրբն Լազարի, Թրօֆիմի և Մաքսիմի ձեռօք որոնք Կօլերու երկիրը եկած էին ուր ան ատենները կ'ապաստանէին Յիսուսի հալածեալ աշակերտները, ինչպէս նոր օրերս Մաժինիի կուսակիցները մեծն Իրիտանիա կ'ապաւինէին: — Տերևախիտ և միշտ կանաչ ծառ մը կ'հովանաւորէր ան գերեզմանը և եկող ուխտաւորներուն ալ կ'ցուցնէր ան տեղը ուր պէտք էին ծունր դնել, սովորական աղօթքէն վերջը մեր

ուխտաւորները ցած և սրտաուռ ձայնով դարձի եկած պոռ-  
 նիկին փառաբանութիւնը բրին, որուն մուրթիւնը այնչափ  
 կնիկներու մուրման պատճառ եղած է, իսկ ապաշխարանքը  
 ամենեւին մէկը դարձի բերած չէ: Ամենքս ալ մեծ օրինակ-  
 ներու հետեւելու կ'ընանք, անոնց պակասութիւնները կ'օրի-  
 նակենք որ չկրնանք անոնց առաքինութեան նմանիլ: Եւ  
 տեր Մեծն Աղէքսանդրի նմանելու համար գինեմոլ եղած են:  
 Լուի ԺՊի պալատականները ահուանին կ'հանէին թագաւորին  
 պէս ժպտելու համար: Բայց գեղանի Մատթըլէնի թէ մեղքը  
 և թէ քառութիւնը աւելի հետեւողներ ունեցած են: Մնացած  
 բարի քրիստոնէայ կանանց թիւը զանի իրենց կուռքը և օրինա-  
 կը բրած են, որչափ ատեն որ ահուայ ունին արգիլեալ պոռ-  
 զը կ'ուտեն, և երբ ահուանին չմնայ իրենց փոթերը և կեղծ-  
 ծամները Աստուծոյ կ'նուիրեն փոխարէն արքայութիւնը շա-  
 հելու յուսով: Այն ինչ մեր երկու ուխտաւորները սրբուհւոյն  
 պաշտպանութիւնը կ'հայցէին՝ էջը որ իրենց ետեւէն քարայրը  
 մտած էր զով տեղ մը գտնելու համար՝ անյագ կերպով աչ-  
 քը ծառին վրայ տնկած էր: Խեղճ անասունը երկար ատենէ  
 'ի վեր կանաչ բան մը կերած չէր, բայց առած վանական կր-  
 թութեանը համեմատ սուրբերը յարգելը գիտէր: Իւր սրտին  
 մէջ անօթութիւնը և ջերմեանդութիւնը ստիպելի կուռ մը  
 բացին: Աչերը կ'ընկնէին, քիթերուն ծակերը խոշոր խոշոր  
 կ'բացուէր, բերանը կ'բանար կ'գոցէր յուշիկ՝ հոտաւեա տե-  
 րնները լիզելով, ինչպէս կ'ընէ սիրահար մը իւր քնացած սի-  
 բուհւոյն ձեռքերը՝ վախելով որ զան չարթնցնէ: Վերջապէս  
 անօթութիւնը յաղթեց, երկայն ահանջները իջեցուց ինչպէս  
 կ'ընեն իր նմանները երբ կ'պատրաստուին ապուշ գործ մը  
 գործել, և անանկ ուժգին թօթուեց հրաշագործ ծառը որ  
 արմատախիլ՝ իւր ամբարիշտ բերանէն կախուեցաւ մնաց: Մեր  
 սիրահարներն՝ երբ տեսան սր ան սեղանը՝ որուն առջև կ'ա-  
 ղօթէին՝ աներևոյթ եզաւ, սարսափած ոտք ելան և սկսան ի-  
 բարկացայա աչերով իրենց սրբապիղծ իշուն նայիլ: Արիւնը  
 ծառին արմատէն յորդառատ կ'հոսէր, և բացուած ծակէն  
 կակծալի հառաչանքներ կ'լսուէին: Աս տխուր հառաչանքնե-

րուն մէջ կանաչի ձայն մը լսուեցաւ, որ որկրամու անասունը  
 կ'նղովէր: « Աս արիւնը, կ'գոչէր ձայնը, սրտէսկ'հոսի և ոչ  
 « թէ անիկեղան բունէս: Իուն որ զան խլեցիր, անիծեալ ե-  
 « զիր: Միշտ ծանր բեռի տակ պիտի ճնշուիս և ամեն օր  
 « զանակոծ պիտի բլլիս »: Ահա ան ատենէն 'ի վեր էջերը  
 հրեայներուն պէս կրկնակի անիծուած են: Թէ էջերը և թէ  
 հրեաները աշխարհիս չորս գին՝ ցրուած, նախատուած, զա-  
 նակոծ, խաչք ու խայտառակ սկզբնական մեղքէն զատ երկ-  
 րորդ մեղքի մը տակ կ'հեծեն, հրեաները աստուածասպանու-  
 թեան համար, էջերն ալ իրենց որկրամուրթեան համար: Իսկ  
 մեր էջը որ այս երկրորդ անկման պատճառ չըլած էր, Աղա-  
 մին պէս արգիլեալ պտուղը մարտելու ժամանակ չունեցաւ:  
 Չարաչար տանջանքով հոգին փչեց ինչպէս Օզա՝ Աստուծոյ  
 տապանին քով: Ան օրէն 'ի վեր Բրովանսի կոյրերը, կաղերը,  
 այսահարները և անդամալոյժները՝ որոնք ատեն մը Մագ-  
 թաղինի ծառէն կ'բժշկուէին, ամեն տարի հոն կ'հաւքուին՝  
 ուր դիզուած են ամբարիշտ իշուն սկոյրները որ աս աղէտ-  
 քին պատճառ եղած էր՝ և անոր յիշատակին բիւր անէժք  
 կ'կարգան ու իր սերունդին կրնակին ալ բիւր հարուած կը  
 տեղան: Մեր երկու ուխտաւորները որոնց մազերը քստմնած  
 էին և ահուանին ուժգին կ'զարնուէր սպանիկ պարուհիի մը  
 ծնւղաներուն պէս, արտորնօք Պիւռենեան լեռանց ձիւներուն  
 պէս վար իջան և մինչև որ Միջերկրականին կապոյտ ջուրերը  
 չտեսան չհանդիպեցան: Մէկ քանի ժամ եղինիի մը շուքին  
 տակ նստելէ վերջը բոլոր գիշեր քալեցին: Առաւօտուն Թու-  
 լօն հասան, բայց իրենց ահանջները միշտ սրբուհւոյն իշա-  
 պան անէժքներովը և խեղճ հոգեվար անասունին հառաչանք-  
 ներովը կ'թնդար:

Թուլօնի նաւամատոյցը գրեթէ գատարկ էր: Միայն վե-  
 նետիկան ցռկանաւ մը կար որ սուրբն Մարկոսի մասունքնե-  
 րը Աղէքսանդրիայէն Վենետիկ փոխադրած էր և Բրովանսի  
 ծովեզերքը կ'նաւէր գերիներ գնելու և զանոնք Արևելքի  
 նաւահանգիստները խունկի, բամբակի և սուրբ մասունքնե-  
 լու հետ փոխանակելու համար: Ան դարը՝ մարդկային միտի

վաճառականութեան ոսկեղէն դարն էր: Վենետիկցիք, Ամուֆիցիք, ձենովացիք դրփիններու պէս Միջերկրական ծովը պտըտելով իրարու հետ կ'մրցէին ծովահէններէն և աւաղակներէն գերի գնելու, որոնք Շարլի մեռնելէն վերջը Փրանսան և Իտալիան կ'աւրչտկէին և արձակ համարձակ իրենց արհեստը կ'գործէին ինչպէս քանի մը տարի առաջ ալ Ատիկէի աւաղակները: Սակայն առաջինները աս վերջիններուն պէս փրկանք պահանջելով փոխանակ ծնողքներն ալ կողոպտելու՝ ծովուն եզերքը ահագին կրակ մը կ'վառէին նաւով անցնող վաճառականները հրաւիրելու համար որոնց հետ սակարկելով գերիներ կ'ծախէին և ասով փոխանակ վնաս տալու ժառանգորդներուն մեծ բարիք մը բրած կ'ըլլային:

Աս տուրևառին համար քահանաները հազար անգամ նըզովք կարգացած էին, բայց վաճառականները ոսկեհուռն կերպաններ, թանկագին հոտեր, կիպրոսի դինի, ագամանդակուռ խաչեր և ուրիշ յարմար ընծաներ ղրկելով բերաններն կ'գոցէին: Ասոնց կ'նմանին նաև Ամերիկայի սևերը պաշտպանողները: Գերեվաճառութիւնը արգիլելու օրէնքներ կը դնեն, կ'հրատարակեն բայց իրենց թէյին մէջ շաքար և ուսմ կ'նետեն որ սևերուն արիւնն ու քրտինքն է: Քանի մը վայրահաչներ ալ կ'ըսեն թէ՛ պապական արքունեաց քանի մը պաշտօնակալներէն՝ գլխաւորաբար Մեծ արարողապետը, գաղտնի յարաբերութիւններ հաստատած էին աւաղակապետներուն հետ եկեղեցիները զարդարելու և հարստացնելու դիտմամբ: Նաւը ճամբայ ելլելու պատրաստուած էր: Ծովեզերքը երկաթէ շղթայի կապուած նաւակ մը նաւապետին դարձին կ'սպասէր՝ որ իւր նաւը բեռնաւորելու համար Հրեայ թղթակիցը տեսնելու գացեր էր: Շատ չանցաւ աս առաքինի մարգը երեցաւ, ետեէն ութ նաւաստի կ'գային որոնք քաջ քով մէյմէկ խարազան բռնած էին և ձախ ձեռքով չուան մը որուն ծայրը նոր ծախու առնուած տասնութեց գերի կապուած էր զոյգ զոյգ ինք արու և եօթը էգ: Էգ կ'ըսենք, վասն զի անատեն դեռ աս կնճռալի խնդիրը լուծուած չէր թէ կիները մարդկային սեռին կ'վերաբերին թէ ոչ:

Անոնք որ չէին ընդուներ թէ կիները մարդկային սերունդէ են աս փաստը յառաջ կ'բերէին թէ կիները եգիպտոսայծեր սիրած են և թեսալիա ալ ձիեր, Արիսթօտի կարծիքը, անոնց չարամտութիւնը և Արիստօքսէնի աղջիկը օրինակ կը բերէին որ իշու ոտքեր ունէր, և վերջապէս Եօթանասնից մէկ պարբերութեամբ կ'ուղէին իրենց կարծիքը հաստատել:

Աս նաւապետը Ռակուզացի էր: Երիտասարդութեան ատեն կռապաշտ էր և ձկնորս, վերջէն դարձի գալով ուզած էր Առաքեալին նմանիլ անոր պէս մարդկանց ձկնորս ըլլալով, զորս կ'առնէր և կ'ծախէր՝ ինչպէս կ'ծախէր ատեն մը իւր բռնած ձուկերը: Մեր երկու բաղդախնդիրները՝ որոնք նաւաբեկեալներու պէս նաւամատոյցին սանդուղին վրայ տրամազին նստած էին, իւր ուշադրութիւնը դրաւեցին: Մըտածեց որ շատ աղէկ պիտի ընէ սուրբն Բենեդիկտոսի աս երկու աշակերտները հետը առնելով որ դահիճին օգնեն յաւիտենական կրակով գերիները վախցնելու, այն ինչ դահիճն ալ կախաղանով կ'սպառնար: Աս ծեր ծովահէնը քաջ քաղաքագէտ մ'էր, վասն զի թագաւորներու պէս հասկցած էր թէ առանց քահանայի և առանց դահիճի անկարելի է ժողովուրդը հլու գառնուկի փոխել որ իւր բուրգը գողղին մեկրատներուն ներկայացնէ հանգարտ:

Մեր երկու տարաբաղդները որոնք ամեն տեսակ դառնութիւնները ճաշակած էին աս մարդկային միտի վաճառականին առաջարկութիւնները սիրով ընդունեցան. կ'յուրային ովկիանոսին մէջ քիչ մը հանգստութիւն գտնել ինչպէս նոյնահասկետը իւր տապանին մէջ ուր ամենին չար արարած մը ընդունուած չէր բայց ՚ի վագրերէն, օձերէն և կարիճներէն, իսկ ոջիւնները նահապետին մօրուքին մէջ պահուած էին: Թխակները ալիքները կ'ճեղքէին, շատ չանցաւ նաւաստիները, գերիները, նաւապետը և արեղաները Մէն Բօրքէրի (աս էր աս բարեպաշտ նաւուն անունը) յարկին վրայ կ'խայտային:

Մեր տարփածունները նաւուն ետևի կողմը պարաններու կոյտի մը վրայ նստած էին: Կանաչագեղ Բթօվանսի եզերքը



կ'դիտէին որ իրենց աչերէն կ'խուսէր: Նախանձը Յովհաննայի սէրը արծարծած էր և ասոր մտայածին հաճոյքներն ալ Ֆրիւմանսի սէրը: Զիրար կ'սեղմէին հաշտութեան քաղցր հեշտութիւնները վայելելով և ապագային բիւր խորհուրդներ պատրաստելով: Յուկանուը Ալեքսանտրիա կ'երթար, բայց ասոնք միտք ունէին Աթէնք մնալ և իրենց նոր բոյնը Բարթեւոնի սիւներու և Իրիսի դափնիներու մէջ հաստատել: Յովհաննայի հայրը յոյն սերունդէ էր և աղջկանը իւր նախնեաց պատմութիւնը և լեզուն սորվեցուցած էր, անանկ սր մեր դիւցաղնուհւոյն փոքրիկ ոտքերը անհամբերութեամբ կ'խայտային երբ կ'մտմտար որ ան հողերը պիտի կոխեն որ Բերիքլէսի և Ասփաղիայի տճիւնը կ'ծածկէ:

Նաւը Սէնթ—Մարկէրիթի անուշաբոյր եղերքէն կ'անցնէր: Տաք օր մ'էր, արևը կաթնագոյն ամպերուն ետև կ'փայլէր, ինչպէս մանկամարդ տաճկուհիի մը երեսը իւր քողին ետև, ծովը կ'ննջէր կերակուրէն վերջը քնայող եպիսկոպոսի մը պէս, և ճերմակ կռուներ մթնոլորտին մէջ կ'թռչէին:

Ի՛նչ քաղցր է ասանկ օդով արագքնովաց նաւու մը յարկին վրայ պառկել զլուխը սիրուհւոյն ծունկերուն վրայ դրած և անոր հետ երկնից, երկրի և ջուրերու պայծառութիւնը նկատել, նոխաճաշէն ետև ընթրիքի սպասելով. պէտք է որ մարդու թէ ստամբոքը և թէ սիրտը գոհըլլան որ բնութեան հրաշալեաց վրայ զմայլի ապա թէ ոչ, գոնէ ըստ իս, արեւը պիտի երևի սեխերը հասունցներու համար շինուած մեքենայ մը, լուսինը դողի լապտեր մը, ծառերը՝ վառելու փայտ, ծովը աղի հեղուկ մը, և կեանքն ալ ջուրի մէջ եփուած դդումէ աւելի անհամ:

Երեք օր վերջը նաւը Ալեզիա՝ Գօրսիքայի մայրաքաղաքը հասաւ ուր նաւաստին դուրս ելաւ ջուր առնելու համար: Մեր դիւցազուններն ալ ցամաք ելան կղզւոյն հրաշագործ և անուանի մասունքները համբուրելու համար: Հոն պահուած են Մովսէսի գաւազանը, ան հողէն մէկ քանի կտոր սրով Ադամ շաղուեցաւ, Բառնարաս առաքեալին մէկ կողք, սրուակի մը մէջ սուրբ Կոյսին քանի մը կաթիլ կաթը, իւր ձեռ-

քով գործուած սիւնոց մը և ուրիշ թէ իրենց սրբութեամբ և թէ ստուգութեամբ երևելի հնութիւններ զորս մինչև ցայսօր ճամբորդներուն կ'ցուցնեն: Հետևեալ օրը յաջող հովով Սարաենիայ կղզին անցան, զոր բանահիւաները շատ կ'գովեն թէ պանիրի աղւորութեան և թէ բնակիչներուն խորամանկութեան համար:

Չորրորդ օրը՝ հովը քիչ մ'աւելի սաստկանալուն սկսաւ . . . Բայց համբակ լուղորդ մ'եմ և չեմ կրնար նաւուն հետքերուն հետևիլ ինչպէս ատեն մը կ'հետևէի լուսահոգի իշուն: Մանաւանդ նաւային նկարագրութիւնները, ալիքները, պարանները, կպրածիւթը թղթատան ցրուիչի մը մուճակներուն պէս հինցած են և ընթերցողին ալ գլխու ցաւ կ'տան, ինչպէս նաւուն երերումներն անցորդներուն, եթէ սովի կամ մարդակերութեան մանրավէպ մը չգնեն:

Չգէնք ուրեմն աս տեսակ նկարագրութիւնները և մեր նիւթին դարով բսնք թէ մեր ճամբորդները յօրանջելէ, փսխելէ, ալիքներու ձայնէն քնանալէ և ճամբորդութեան ամեն տեսակ տանջանքները կրելէ վերջը՝ երկու ամսէն ողջ առողջ Կորնթոս հասնելով՝ Մէկարայի ճամբով Աթէնք երթալու համար ցամաք ելան թէոնոս անուամբ յոյն դերիի մ'առաջնորդութեամբ՝ զոր նաւապետը իրենց ընծայ տուած էր: Արևը պայծառ՝ Իմիէթի գագաթներուն ետևէն կ'երևէր երբ մեր երեք ճամբորդները Բօսիլը անցնելով՝ Ադրիէնի քաղաքը մտան: Խուռն բազմութիւն մը ամեն կողմէ եկեղեցիները կը կ'վազէր, վասն զի այն օրը ուղղափառութեան կիւրակէն՝ այսփնքն սուրբ պատկերներու վերահաստատութեան օրն էր: Ասոնք ալ բազմութենէ քշուած թէսէոսի տաճարը մտան որ սուրբ Դէորգի նուիրեալ եկեղեցիի փոխուած էր:

Գրիստոնէութիւնը կռապաշտութիւնը սպաննած էր, բայց այս անմեղ զոհը իւր սպանիչը ընդհանուր ժառանգորդ բրած էր իւր ամեն տաճարները, տօները, զոհերը, ուխտերը քահանաները և երազահանները անոր ձգելով, երբ քրիստոնեաները աս հարստութեանց տէր եղան ուղածնուն պէս գործածելու և սկիզբն ալ անյայտ ընելու համար քիչ մը փոփո-

խութիւններ ըրին ինչպէս բանաքաղները կ'ընեն ուրիշներու գաղափարները: Ահա այս կերպով տաճարները եկեղեցի եղան, ինչոյքները ագապներ, հանդէսները թափօրներ և շատուածներն ալ սուրբեր:\*

Վատ թէօֆիլի մեռնելէն վերջը (որ քահանաներուն արմուկը կտրել կ'տար և սուրբ պատկերներն ալ կիրով կ'ծեփէր (ինչպէս գայեակները իրենց ստինքները հալուէով կ'օծեն մանկիկները կաթէ կտրելու համար) իւր խեղճ հպատակները՝ որոնք տասնբմէկ տարիէ 'ի վեր իրենց պատկերներէն զրկուած էին՝ մեծ անձկութեամբ և կարօտով կ'սպասէին աս պատկերներու վերահաստատութեան: Ամեն կողմէ և լեռներէ՝ ուղղափառ քահանաները և բռնաւորին աքսորած պատկերահանները կ'իջնէին: Նոյն իսկ եթէ քանի մը պատմաագիրներու հաւատանք, այն ինչ ասոնք խուռն բազմութեամբ եկեղեցի կ'լեցուէին՝ պատկերահալածներու զոհ եղող խելմը մարտիրոսներ գերեզմաններէն կ'երնէին աս վսեմ հանդիսին ներկայ գտնուելու համար, ուր պատկերները կ'խօսէին և ածուխները բուրվառներուն մէջ ուրախ զուարթ կ'խայտային: Աս բաւական չէ, ամենէ կատաղի պատկերահալածները յանկարծ պատկերապաշտ եղան երբ թէօտօրա թէօֆիլի յաջորդեց: Ծնողքները իրենց զաւակներուն մազերը սուրբ պատկերներուն վրայ կ'փակցնէին, քահանաները իրենց մազերը զոհ կ'նուիրէին, կ'ինները պատկերները կ'քերէին և աս սուրբ փոշին ջուրի հետ խառնելով կ'խմէին: Շատ քահանաներ ամբաստանուեցան թէ հաղորդութեան գոյափոխութիւնն ասանկ ներկերով աւրած են: Աթէնքի մէջ՝ որ կուռքերու դասական երկիրն է, հաւատացեալներու եռանդը ան աստիճան բորբո-

\* Մեր սուրբերուն շատերը յոյն շատուածներ կամ կիսաստուածներ են որոնք թէև անունին փոխած են բայց պաշտօնին միևնոյնն է: Այն 'Նիօլ' որ ալիքները կ'յուզէ և կ'խաղաղէ՝ Պոսիդոնի տեղը բռնած է, սուրբն Միքայէլ մեռելներու հոգիները դժոխք կամ արքայութիւն կ'տանի՝ ինչպէս ատեն մը Հերմէս, այն Տիֆէթի քրիստոնեայ հովիւներուն Պան շատուածն է, և արևը կամ էլիօ՞ գեռ այսօր լեռներուն վրայ կ'պաշտուի այն իլիօ անուամբ:

քեցաւ որ եպիսկոպոսը ստիպուեցաւ սուրբ պատկերները ապակիով ծածկել, որոնցմէ շատերուն գոյնը քիչ օրուան մէջ համբոյրներով աւրուած և փոխուած էր ինչպէս Յիսուսի դիմաց պատկերը սրբուհոյն Վերօնիքայի դաստառակին վրայ:

Օրէնսդիրներու ըսածին նայելով՝ մէն մի օրէնքի զեղծուիլէն կամ չարաչար գործածուելէն նոր օրէնք մը կ'ծնի: Քրիստոսի եկեղեցւոյն մէջ ալ ամեն ուղղափառ վարդապետութեան ծնունդը հերետիկոսութենէ ծագած է: Պատկերահալածներու կատաղութիւնը պատկերապաշտութիւնը ծնած է, Աստուծոյ որդին Հօր գոյակից հրատարակուած է Արիօսի հակառակ, Կոյսը Աստուածածին անուանած է Նեստորիոսի հայհոյութիւններուն վերջ տալու համար: Պիոս Թ. բարն ալ իւր քանի մը ամբարիշտ հպատակներուն Յիսուսի երկնային թաղման վրայ ունեցած կասկածները փարատելու համար ու Կոյսին մօրը՝ նոյն իսկ Աստուծոյ հանիին Աննայի որովայնին մէջ անարատ յղութեան վարդապետութիւնը տարածեց. — Ո՞վ պիտի կրնայ ըսել թէ ինչ արդիւնքներ պիտի ունենան օր մը Ռքնանի գործերը որուն հայհոյանքները, ինչպէս կ'ըսէ արքա Գրէլիէ, արդէն կրօնքի մեծ ծառայութիւններ ըրած են թէ Ռքնանի և թէ իւր համամիտ հեղինակներուն Յիսուսի աստուածութիւնը արեւուն լոյսէն աւելի պայծառ հանդիսացընելու առիթներ տալով:

Երկու տարիածուները իրենց ծառային հետ թէսէոսիտաճարը մտած էին և անչափ շատ էր բազմութիւնը որ տեղ մը չկրցան գտնել կենալու: Ան օրը Նիսէթաս՝ Աթէնքի եպիսկոպոսը պատարագ կ'ընէր, և նոր սըքէնի պէս (վենետիկի ոսկի) կ'փայլէր իւր ոսկեհուռն կերպաներով:

Հիւսիսի մեր աս զաւակները ափ 'ի բերան կ'նայէին աս եպիսկոպոսին չքեղ հանդերձին, որ անանկ Աստուծոյ մը ծառան էր որ աղքատութիւն կ'քարոզէր, և հաւատացեալներուն կ'խոստանար որ իրենց մեռնելէն վերջը զիրենք պիտի վարձատրէ ոսկիէ, շափիւղայէ և գոհարներէ զարգարուած արքայութեան մէջ, բայց անատենուան վարդապետները արդէն սովորած էին այսօրուան հակիթը վաղուան հաւէն նախամե-

ծար սեպել, ցնցոտի կնգուղները, ցիցերը և արքայութեան գոհարները խոտակեաց ճգնաւորներուն ձգելով՝ որոնք շնականներուն ժառանգորդներն են, ոսկիով կ'սիգային անոնք ճիշդ ան տաճարներուն մէջ ուր Պլուտարքոսի ըսածին համեմատ՝ կռապաշտ մը զգեստին վրայ ոսկեզօծ ժապաւէնի կտորով մ'անգամ չէր կրնար մտնել:

Թէօնաս որ ատենօք եկեղեցւոյ լուսարար ըլլալու պատիւը ունէր, Յովհաննայի ականջին գճկուելով՝ յունական պատարագին ծէսերը կ'մեկնէր: Սկսաւ հասկցնել թէ Արևելքք ցիք երեք առաջին մատերով խաչ կ'հանեն 'ի նշան Երրորդութեան, նախ մատերնին ճակատնին կ'տանին ցուցնելու համար թէ Աստուածութիւնը երկինք կ'բնակի, վերջէն կուրծքերնին կ'իջեցնեն՝ Յիսուսի դժոխք իջնելը ցուցնելու համար, աջ ուսերնին՝ վասն զի Որդին Հօր աջ կողմը նստած է, և վերջապէս ձախ ուսերնին՝ սատանան իրենց սրտէն հեռացնելու համար: Ասկէ վերջը Թէօնաս՝ պատարագիչ քահանային զգեստներուն թէ անունը և թէ գործածութիւնը մեկնեց: Գօտին՝ զանի ուժով կ'պնդէ, ուրարը՝ զխոտին վրայ կախուած էրը սայրասուր թուր մ'է, շուրջաւը՝ որուն ոսկեղէն եռանկիւնները կ'նշանակեն Յիսուս Բրիտոս՝ անկիւնաւոր վէմ Եկեղեցւոյ, դաւազանը՝ զոր պատարագիչը կողմնակի հաղորդութեան հացին մէջ կ'խօթէր, Հռոմայեցի զինուորին Փրկչին կողք խօթած նիզակը կ'նշանակէր:

Այն ինչ Թէօնաս կ'խօսէր՝ պատարագիչը երկրորդ հացմը կտրելով՝ զան գոյափոխապէս սուրբ Կոյսին մարմնոյն կ'վտխէր: Աս զոհին մէջ իւր իրական ներկայութիւնը անատենուան Արևելքեցոց ծէսերուն մէջ անհրաժեշտ էր, մանաւանդ ան օրէն 'ի վեր որ պատարագիչը այն ինչ կ'ըսէր, « Տէր, յիշեան զԿոյսն անարատ », հաղորդութեան հացը՝ գեղանի աղջկան մը փոխուած էր գիրկը մանուկ Յիսուսը բռնած: Միւս հացերը Յովհաննու Մկրտչին, մարգարէներուն, մարտիրոսներուն և ամեն կարգի սուրբերուն նուիրուեցան:

Վերջէն ալ կարգը կենդանի էակներու եկաւ, այսինքն եպիսկոպոսին, քահանաներուն, Եկեղեցւոյ բարերարներնե-

րուն և այլոց անունները յիշեցին: Երբ ամենքն ալ աս պատարագէն իրենց ինկած բաժինը առին՝ ինչպէս կ'ըլլար ատենօք միեւնոյն տաճարին մէջ Թէսէոսի տօնախմբութեան օրը, սարկաւագը բուրվառով խնկարկեց թէ սեղանը և թէ խորանը, վերջէն 'ի խորոց մը կարդացին և վերջապէս . . . բայց կարծեմ՝ թէ անօգուտ է պատարագին լմննալուն սպասել, մանաւանդ այսօրուան բիւզանդեան ձէսերէն ամենեւին չէր տարբերէր այն, որոնք՝ կաթոլիկներուն ըսածին նայելով, մինչև վերջին դատաւորանին օրը ասանկ անփոփոխ պիտի մնան 'ի պատիժ հերետիկոսութեան և միշտ հաստատ միջին դարու սովորութեանց՝ ինչպէս ոտարէները իրենց ժայռերուն:

Գերմանիայի այս երկու զաւակները պատարագին աս անվերջանալի երկայնութեան կ'զարմանային, թէպէտ ասի սուրբ Յակոբի պատարագին համառօտութիւնն էր\*: Միւս կողմէն Բէրիքլէսի թողները զարմացմամբ կ'նայէին աս օտարականներուն, ինչպէս բնագէտ մը երբ կենդանական արտադրութեանց հրէշային երևոյթ մը տեսնէ և չէին կրնար հասկնալ թէ ինչ կերպով անոնց վեղարը անմօրուս կզակնուն և կարծ մագերնուն կ'յարմարի:

Պատարագը լմնցած և օրհնեալ հացն ալ հաւատացեալներուն բաշխուած էր, աս երկու բենետիքտեաններուն շուրջը խուռն բազմութիւն մը հաւքուեցաւ որ գլխերնէն մինչև ոտքերնին զանոնք կ'զննէին և կ'հարցնէին թէ ո՞սկից կու գան, ո՞ւր կ'երթան, և ինչ կերպ քահանաներ են որ չեն ամչնար մօրուքնին ածիլել և ինչ որ աւելի գէշ է վարտիք հագնիլ:

Վարտիքը Արևելքի քահանաներուն համար մեղկութեան աններելի նշանն էր:

\* Սուրբ Յակոբի պատարագը ամբողջ վեց ժամ կ'սեւէր, վերջէն սուրբն Վասիլ տեսնելով որ հաւատացեալներուն ջերմեռանդութիւնը կ'պաղի՝ զան կէսի իջեցուց, վերջէն ալ Յովհան Ոսկերեբան քիչ մը պակսեցուց և մինչև այսօր ան վիճակին մէջ մնացած է: Անորմէ վերջը ոչ ոք վերանորոգում մ'ընելու փորձ ըրաւ, անանկ որ մենք միայն այսօր միւս քաղաքակրթեալ ազգաց մէջ երկու ժամ տևող պատարագ մ'ունինք, որու հպիւ տարին անգամ մը կ'երթանք:

Յովհաննա և Թէօնաս դժուարաւ պատասխան կ'հասցնէին բոլոր աս հարցմունքներուն . սակայն բազմութիւնք անաստիճան կ'խառնէր որ մեր բննետիքտեանները ալ դժուարաւ շունչ կ'առնէին : Արդէն Փրիւմանս՝ որ յունարէնի մէջ քաջ չէր և համբերութիւնն ալ քիչ՝ կ'պատրաստուէր բռնի ճամբայ բանալու երբ եպիսկոպոսը վրայ հասնելով՝ զանոնք ազատեց և ծուխերուն ալ յանդիմանեց իրենց շաղակրատութեան համար : Եւ աս երկու օտարականները իւր պատգարակին մէջ առնելով՝ զոր ութ նորընծայ պուլկարներ կ'տանէին որոնք Ն. Վերապատուութեան ձիու տեղ կ'ծառայէին, եպիսկոպոսարանը տարաւ ուր մեծ խնջոյք մը պատրաստուած էր Սուրբ պատկերներու վերահաստատութիւնը տօնելու համար :

Սեղանք պարտէզին մէջ՝ հինաւուրց եղենիի մը ստուերին տակ պատրաստուած էր, և կուժերու ու միսերու ծանր բռնին տակ կ'ճնշուէր, որոնց հօտերը ծաղկանց անուշարօյր հօտերուն կ'խառնուէին : Հանդիսականները սկսան հետզհետէ դալ : Ասոնց մեծագոյն մասը քահանաներ էին որոնք պատկերահալածման ժամանակ քարայրները և լեռները ապաստանած էին Թէօֆիլի ձեռքէն փախչելու համար որ զիրենք բռնի կ'ստիպէր կամ պատկերներուն թքնել կամ հրապարակի վրայ կոյսի մը հետ ամուսնանալ :

Աս խտտակեաց ճգնաւորները սակալի և վայրենի եր'ւոյթ մ'առած էին կատաղի գազաններու հետ երկար ատեն ազրելնուն համար : Ասոնց մէջ կ'տեսնուէր Հայր Պաթէօս՝ որուն բերանը խիստ ծոմապահօթիւններէն որդերով լեցուած էր : Աթանաս՝ որ կենացը մէջ ոչ երեսը լուացած էր, ոչ ձեռքերը, և ոչ ալ եվուած կերակուր կերած էր, վասն զի խոհանոցին կրակը տեսնելով դժօխքին կրակը կ'յիշէր և կու լար : Մեղեթիոս՝ որուն մարմինը գլուխէն մինչև ոտքը Յոր երանելիին պէս խոցերով լեցուած էր, սա տարբերութեամբ միայն որ այն ինչ Գալտէացին խեցիով մարմինը կ'քերէր, Մեղեթիոս ընդհակառակն ամեն անգամ որ վէրքերէն որդ մ'ընկնէր գարձեալ տեղը կ'գնէր, մարմինը աւելի տանջուելով՝ հոգւով աւելի վարձատրուելու համար :

Ասոնցմէ վերջը եկաւ հայր Բաֆնիւս որ երկնային տեսիլներով յափշտակուած այն առտիճան հոգ չէր բներ աշխարհային գործերու՝ որ շատ անգամ ջուրի տեղ կանթեղին իւղը կ'խմէր : Պատկառելի Տրիփուն որ կենացը մէջ մեծաւորին հանուած աղտոտ լաթերէն զատ ուրիշ մաքուր ճեքմակեղէն հագած չէր, Նիքօն անապատականը՝ որ անժուժկալութեան մեղք մը գործած ըլլալուն՝ աս մեղքը քաւելու համար երեսուն տարի գերեզմանատան մը մէջ փակուած՝ ձիերու պէս ոտքի վրայ կ'քնանար և իւր արտուքովը բուսած խտտերը կ'ուտէր : Վերջէն ուրիշ լեռնցի քահանաներ ալ եկան յամր և դողդոջուն քայլերով և գաւազանի վրայ կ'կոթնէին : Ասոնցմէ ոմանք նախնի կուռքերուն պէս կրճատուած էին, բայց ամենքն ալ առանց բացառութեան՝ աղտոտ, ձենճոտ, ոջլոտ, ծոմի, սխտորի և սրբութեան անտանելի հոտ մը կը բուրէին և խեղճ Յովհաննա ահուդողով կ'նայէր արևելեան մոլեռանդութեան աս սոսկալի օրինակներուն . մերթ քիթը կը խցէր, մերթ աչքը կ'գոցէր : Իւրովի կ'հարցնէր թէ անդեօք ասոնք մարդկային արարածներ են թէ ոչ նախնեաց զքած շնագլուխներ և բլութիսեաններ և կամ թէ վարք սրբոցին մէջ յիշուած սամիրներն էին որոնք Թէփոյիտի մէջ սուրբ Անթօնին հետ կ'քնակէին և աստուածարանութեան վրայ կ'վիճաբանէին :

Աս որդակեր և աղտոտ կմախքները, աս արարածները որոնց համար զուարճութիւն կամ սուգ, դժսխք կամ մաքրութիւն միենոյն բաները կ'նշանակէին, աս քահանաները, աս ճգնաւորները, աս մենակեացները, կ'ըսեմ, որոնց յիշատակը միայն մեր սիրտին գուժ և զզուանք կ'ազդէ, Թէոտօրա բարեպաշտ կայսրուհւոյն օրով մեծ պատիւ կ'վայելէին : Իրենց ազդեցութիւնը շատ մեծ էր, ինչպէս Միշել Գի օրով կրկեսի կառապաններուն ազդեցութիւնը, Յուլիոս բաբին օրով կապիկներուն ազդեցութիւնը և անիշխանութեան օրով յունաց սրիկաներուն ազդեցութիւնը :

Ահա Նիսէթասի փառամոլ եպիսկոպոսը ստիպուած էր ասանկ արարածները իւր սեղանը հրաւիրել, ասանկ են նաև Հեղենական խորհրդարանին երեսփոխանները որոնք ստիպուած

են քաղաքին բեռնակիրներուն և լեռան աւազակներուն ճեռքերը սեղմել։ Քահանաներէն զատ երկու վարժապետ, մէկ աստղաբան և բիւզանդեան արքունեսոց երեք ներքիններ հրաւիրուած էին որոնք սուրբ պատկերներու վերահաստատման հրովարտակը բերած էին Աթէնք։ Երբ ամեն հրաւիրեալները եկան՝ Հայր մերը բսին և Նիսէթաս հացի կտոր մը ոսկեղէն սկուտեղին մէջ դրած սուրբ Կոյսին պատկերին նուիրեց որ անատենուան քրիստոնէից ամեն հացկերոյթներուն առաջին բաժինը կ'ընդունէր ինչպէս հին ատենը Սիպէլի աղջիկը\*։

Երբ ասի լմնցաւ, դանակը՝ ոսկորները հանուած ուլի մը փորը խոթեց և աս ահագին ծակէն իսկոյն սխտորի, սոխի և փրասի հոտ մը ծաւալեցաւ, ուլէն վերջը ձկնկիթով (caviar) համեմուած ձուկեր, մեղրով և սերկելով եփուած գառնուկ մը բերին։ Յովհաննա՝ որ Գերմանիոյ պարզ և նախնական կերակուրներուն սովորած էր, ուր հացկերոյթները իլիականին պէս միշտ խորտիկներով կ'սկսէին և կ'վերջանային, պատառաքաղը կասկածով և վարանելով կ'խոթէր բիւզանդեան խոհարարներու աս հրաշակերտներուն մէջ ինչպէս ճամբորդները կ'ընեն այսօր Աթէնքի պանդոկներու կասկածելի պնակներուն մէջ։ Բայց երբ շուրթերը Ատիկէի գինիին մօտեցուց որ ձիւթով, գաճով և ռետինով խառնուած էր, զզուանքով երեսք դարձուց վախնալով որ գուցէ աս Աթենացիները իրեն մոլախինդ տուած էին ինչպէս տուած էին Սոկրատին, կամ քաջախ՝ ինչպէս բրած էին հրեաները Յիսուսին։

Յովհաննայ քովը նստող քահանան գաւաթ մ'ուրիշ բմպելիք տուաւ։ Ասի վանական պալանիում անուն բմպելիք մ'էր որ առելի մեծ զզուանք պատճառեց մեր դիւցազնուհւոյն, և կ'երևի թէ սուրբ Անտոն հնարած է իւր խոզին կաղնիները խաշելով, և այսօր Յունաստանի մէջ ալ սրճարանի

\* Ասի կռապաշտական սովորութիւն մ'էր և մինչև ժէ դարը Աթոս լեռան վանքին մէջ դիմացաւ։ Կռապաշտները անանկ կ'կարծէին թէ աստուածները ներկայ են և վեստա միշտ առաջին մասը կ'ընդունէր։

տէրերն իրենց խեղճ յաճախորդներուն կ'իմցնեն խահուէի կեղծ անունով։ Մէկ խօսքով Յովհաննա և Յրիւմանս ստամոքսին գատարկ և կոկորդին չոր պիտի հեռանային աս սեղանէն երբ հիւրասէրն Նիսէթաս անոնց վիճակին գթալով՝ խորոված տատրակներ, Իմիէթի մեղր և Գիոսի զուտ գինի բերել տուաւ։

Կարմիր հողէ կուժին տեսքէն որ աս աստուածեան նեկտարը կ'պարունակէր, անպատականներուն տխուր դէմքերը ուրախութեամբ փայլեցան, ինչպէս փայլած էին զժոխքին անդունդները երբ Յիսուս իջաւ։ Ամենքն ալ փութացին գաւաթնին Հոմերոսի հայրենեաց աս զուարթարար նեկտարին երկնցնել։ Ասով կ'հաստատուի թէ եթէ մարդկային բնութիւնը յղի կնկան պէս կերպ կերպ ճաշակներու ենթակայ է, և կարող է պալանիէօմ, անմաքրութիւնը, խոզերը և ռետինի գինին սիրել, երբ բարին և գեղեցիկը որևէ կերպիւ երևին՝ իսկոյն ան կողմը կ'դառնայ. ինչպէս մագնետը բւետին՝ ասանկ ալ Նիսէթասի հանդիսականները Գիոսի կուժին դարձան։ Իսկ ես իմաստակ կ'համարիմ զանոնք որ կը պնդեն թէ ամեն աղբ և ամեն անհատ իրենց յատուկ կերպը ունի գեղեցկութիւնը զգալու, և de gustibus non disputandumի առածը մեծ անմտութիւն կ'համարիմ։ Միևնոյն խմորէ չաղուած են Ագամի սերունդներուն աչերը, ականջները և շուրթերը, Ամենքս ալ մէկ հաց եւ մէկ մարմին ենք \* և ամենուս ալ հաճելի են Սիրքասիայի նորատի աղջիկները, Հնդկաստանի գոհարները, արաբացի նժոյգները, սպանուհիներու ոտքերը, ամառուան մէջ պաղպաղակը, Իտալական երաժշտութիւնը և Ֆրանսայի գինիները։ Ափրիկէի խափշիկները անգամ ճերմակ կիները եթովպացի կիներէն նախամեծար կ'համարին։

Անանկ կ'յուսամ նաև որ եթէ դիպուածով մեր եկեղեցիներէն մէկուն մէջ Ռաֆայէլի մատուցած մը երևի, կամ յանկարծ Ռօսինի կամ Մօզարի նուագ մը հնչէ ամեն աչերը և

\* Ս. Պօղոս Ա. Կորնթացի։

ականջները դէպ 'ի հոն պիտի դառնան , և իրօք անոնք հե-  
րետիկոս պիտի անուանուին որ բիւզանդեան ռնգային ձայ-  
ները և մրտա պատկերները նախամեծար կ'սեպեն :

Նիսէթաս իւր հիւրերուն գինի կ'հրամայէր Առակաց աս  
կտորը արտասանելով , Խմեցէք ան գինին որ ձեզի համար խառ-  
նեցի , և հիւրերն ալ գաւաթնին կ'երկնցնէին Եսայիի աս խօս-  
քը երգելով , Լեցնենք մեր բաժակները եւ գինովութիւլ ծը-  
ծենք : Չիմամ՝ շերմեռանդութեամբ աչերնին կ'գոցէին Սա-  
ղոմոնի պատուէրին համեմատ որ խմողներուն կ'արգիլէ չիւր-  
մած գաւաթնուն նայիլ , ինչպէս Մէհէմէտ հաւատացեալնե-  
րուն կ'պատուիրէ որ կինը չառած չնային :

Իբրաւ գինովալը ժուժկալութեան նշան է , ինչպէս կին  
մը տեսնել և բաղձալը պարկեշտութեան նշան է : Ուստի զար-  
մանալ պէտք չէ որ աս խոտակեաց անապատականները ու-  
րոնք այնչափ տարիէ 'ի վեր միայն աղօթքի գինովութիւնը և  
հրեշտակային արբաութիւնը կ'ճանչէին՝ գինովալով գլուխ-  
նին դարձաւ ինչպէս երկիրը կ'դառնայ արևուն բոլորտիքը :

Ասոնք թէպէտ գինով՝ բայց սուրբերու վրայ կ'խօսակցէ-  
ին , և ինչպէս որ ծեր զինուորները կերուխումէ վերջը կ'ա-  
խորժին իրենց քաջագործութիւնները պատմել , ասանկ ալ աս  
քահանաները սկսան իրենց հրաշքները և երկնային պատե-  
րազմները պատմել : Մին կ'պատմէր թէ զիշեր մը խեղճ ծե-  
րունիի մը տունը մտալով որ միայն քանի մը հաս ոսպ ու-  
նէր՝ ծերունիին մօրուքին մէջ ցորենի հատ մը ցանեց , և ան  
աստիճան շատցաւ որ խեղճը աս հրաշալի հատէն յիտուն պարկ  
ցորեն լեցուց : Ուրիշ մ'ալ կ'պատմէր թէ իւր մեծաւորէն՝  
պարտէզին մէջ հովուական գաւաղանք տնկելու հրաման ըն-  
դունելով՝ ան աստիճան հոգ տարած էր աս գաւաղանք  
չուրով և իւր արցունքներովը ուռուցելու որ երեք տա-  
րի վերջը աս ցեցը ամեն տեսակ պտուղ տուած էր առատո-  
րէն , խնձոր , դեղձ , թուզ և խաղող : Անորմէ վերջը ամենա-  
երջանիկ Նիքօն պատմեց թէ սուրբ Կոյսին անմասն գեղեց-  
կութիւնը նկատելու մեծ փափաք մը զգալով՝ ամբողջ օրերը  
և գիշերները ծովերով և աղօթքով կ'անցնէր , մինչև որ գը-

թասիրտ Դշխոյն երեցած էր իրեն անանկ պայծառ և վեճ՝  
որ աս երևոյթէն շլացած աչքին մէկը կորսնցուցած էր և ե-  
թէ ժամանակին միւս աչքն ալ չգոցէր բոլորովին պիտի կուր-  
նար : Երբ ասոնց պատմութիւնները լմնցան ուրիշները սկսան :  
Բանքրաս՝ եթէ անգամ մը միայն գաւաղանք ժայռերուն զար-  
նէր՝ շուշաններ կ'եղնէին : Ժիլ՝ աթենացի մենակեաց՝ ստուե-  
րը կ'բաւէր հիւանդները բժշկելու , անանկ որ երբ փողոցնե-  
րէն կ'անցնէր հիւանդները ասոր ստուերը իրարու ձեռքէ կը  
յափշտակէին ինչպէս հիները իշուն ստուերը : Պաթիաս՝ զոր  
խարոյկին բոցերը կ'զովայնէին , ինչպէս պղպեղը Հոլանտա-  
ցիները կ'զովայնէ :

Ահա ասանկ հրաշքներ կ'պատմէին այս շերմեռանդ մե-  
նակեացները իրենց ուղղափառ և ամենափրկի տիկնոջ՝ Թէո-  
տորայի կենացը Քիոսի գինին տնկելով : Մի կարծեր , սիրելի  
ընթերցող , թէ աս հրաշքները ես հնարած եմ և ծաղրել  
կ'ուզեմ , քաւ լիցի , աս հրաշքները Եկեղեցիէն ընդունուած  
և վաւերացուած են , և ամեն ուղղափառ ու ողջամիտ քրիս-  
տոնեայ ստիպուած է Նիկիոյ եկեղեցական ընդհանուր սուրբ  
ժողովոյն հրահանգին համեմատ ճանջել եւ ընդունիլ ամե-  
նայն հաւատքով , եւ եթէ ընդունի կամ ջիւաւատայ կամ  
ճուռ մեկնէ նզովեալ եղիցի :

Այն ինչ ճգնաւորները հրաշքներ կ'պատմէին , Նիսէթաս  
երկու Բենեդիկտեաններուն և բիւզանդեան ներքինիներուն  
հետ հաւատոյ վարդապետութեանց վրայ կ'խօսէր : Ամեն բա-  
նէ յառաջ Յովհաննայի հարցուց թէ Արևմտեան աստուածա-  
բանները ինչ կարծիք ունէին սուրբ Հաղորդութեան վրայ ,  
կ'հաւատային թէ հացը և գինին Փրկչի մարմնոյն և արեան  
փոխուած ըլլայ թէ ոչ զանի Մարդաստուծոյն նշանաբանը կը  
սեպէին : Ասի անատենուան կնճռալի խնդիրն էր ինչպէս այս-  
օր Արևելեան խնդիրը : Յովհաննա որ չէր գիտեր թէ իր  
ասպնջականք ինչ կարծիք ունի աս մասին , քաղաքագէտի  
պէս պատասխանեց թէ ինչպէս արևը երկինքն է և տաքու-  
թիւնը ու լոյսը երկրի վրայ , ասանկ ալ Յիսուսի մարմինը  
Հօրը աջ կողմը նստած հաղորդութեան հացին և գինիին մէջ  
նստած է :

Աս այլաբանօրէն պատասխանէն չհամոզուեցաւ Նիսէթաս որ իսկական ներկայութեան կուսակից էր:

Յովհաննայի բացատրեց թէ հայը և գինին բուն իսկ Փրկչին մարմինն են և մեր ստամոքսը գերեզմանն է ուր աս մարմինը կ'դրուի քահանային ձեռօք յարութեամբ անկէ դուրս ելնելու յուսով, ինչպէս Քրիստոս խաչելութենէ երեք օր վերջը յարութիւն առած էր:

Վերջէն Յովհաննայի հարցուց թէ Արեմուքի մէջ Քրիստոնեաները Ս. Կոյսը՝ աստուածածին (Déipare) անուամբ կ'պաշտեն: Յովհաննայ պատասխանեց թէ կատուները կենդանածին կ'անուանուին և հաւերն ալ ձուածին (ovipare), ուստի բառերուն նշանակութեան համար կ'վախցուի որ աստուածածին բառը քրիստոնէից ականջները չգայթակղեցնէ, և կուսակցաներն ալ առիթ չունենան Աստուծոյ մայրը Կիւրէլէյի հետ բաղդատել ինչպէս Իբաթիայի աշակերտները բրած էին Եգիպտոս: Մեր աստուածաբանուհին ալ ուզելով եպիսկոպոսը շփոթել, հարցուց թէ ինչ պատճառաւ Արեւելքի կրօնաւորները կ'ձգեն որ մազերնին երկնայ Պօղոսի պատուէրին հակառակ որ կ'պնդէ թէ երկայն մազ ունեցողը կնամարդի է և անպատիւ:

Նիսէթաս ձեռքին տակ յարմար պատասխան մը չունենալով վայրկեան մը բաշերը քերեց, ու խօսքը դարձեալ աստուածաբանական խնդիրներու դարձուց, ինչպէս՝ անարատ յղութեան, Յիսուսի կրկին բնութեան, Բանին միաւորութեան Փրկչին մարմնոյն Ս. Կոյսին արգանդին մէջ՝ կամ ծնելէ վերջը և ուրիշ աստուածաբանական անլուծելի հանգոյցներ, զոր Եփեսոսի ժողովին հայրերը լուծեցին ինչպէս լուծեց Մեծն Աղեքսանդր Կորտեան հանգոյցը դանակով կամ աքացի հարուածներով\* ինչպէս կ'ընեն էջերը երբ սիրոյ կամ խոտի կռուներ ունենան:

\* Եվակրը կ'ըսէ թէ Յլավիէ՝ Կ. Պօլսոյ պատրիարքը Եփեսոսէ ելլալէ շուտով Դէլ Աղեքսանդրիոյ պատրիարք՝ Տիօնքօրէն մեռաւ աքացի հարուածներով՝ որ Զօնարասի ըսածին նայելով Լորէն պէս ասացի եօրտօծ գալստ զաւալի սովորութեանը աներ:

Այս միջոցին գիշերը վրայ հասած էր, սարկաւազները կանթեղները բերելով ծառերուն վրայ կախեցին: Կոչնականներն ալ բնազանցական վիճաբանութիւններէն ձանձրացած՝ փաստերը դաւաթներուն և շիշերուն կ'ձգէին:

Յովհաննայ գինիէն և քահանաներուն ազմուկներէն շփոթած՝ որոնք արդէն սկսած էին դաւաթներուն թռչիլ և պնակներուն ալ պարել սորվեցնել, կամաց մը ռօք ելաւ և իւր հաւատարիմ Պրիւմանսին հետ եպիսկոպոսարանէն մեկնեցաւ:

Արդէն բսինք որ պարտէզը Արքովօլի ստորտը շինուած էր, անանկ որ մէկ երկու քայլով մեր տարիածուները ան մարմարիտեայ ժայռիկէ կատարը հասան որուն համար կրնանք բսել թէ գիտմամբ հօն դրուած էր Բերիլլէյի հօյակապ շէնքերուն պատուանդանի տեղ ծառայելու համար, ինչպէս քիթը աշերուն տակ գրուեր է ակնոց կրելու համար: Ան ժամն էր ուր ամեն անասկ սգիներ, պայեր, առէջներ, թմբկայիններ\*, լամիներ և ուրիշ խառքի բնակիչները գերեզմանի կամ դժոխքի որդերէն կ'փախչին, (մանաւանդ ան ատենէն ի վեր որ ալ Կերբերոս եռագլխի շունը դրան առջև չհակեր) դաշտերուն մէջ կ'յաժին՝ թափառիկ և ոչխարներուն երազները և սիրահարներու համբոյրները կ'վրդովեն: Մեր օտարականները վիզերնին սրբօրհայն Սապինայի մէկ ակրամ՝ ունենայով աս ահարկու հանգիպումներէն ազատեցան անվտանգ: Միայն հեռուանց գունդ մը իշազլու խներ § տե-

\* Եկեղեցիէն բանադրուելով և առանց ապաշխարութեան մեռնողները ասանկ կ'անուանէին յոյները: Ասոնց մարմինը կ'կարծրանար, փորերնին թմբուկի պէս կ'հիշէր ասոր համար Բեֆկայն ըստածէն: Քիշերը գերեզմանէն ելնելով մարդերու վրայ կ'յարձակէին: Երեսնց դիակը հողին տակ չէր հալեր մինչև որ սիրտը մէջէն հանելով կրակը չնետէին:

§ Յոյները միջին դարուն ասանկ կ'անուանէին քանի մ'երեւակայական հրէշները, որոնք իշու գլուխ և կապիկի պոչ ունէին, քառուղիներուն մէջ լուսինը կ'պաշտէին և օձերով ու զեռուններով կ'անանէին: Քանի մ'եկեղեցական հեղինակներ կ'հաստատեն թէ աս կենդանիները յարութիւն առած հրեաներ են և կ'գան Մեսիան փնտռելու:

սան՝ որոնք երկայն ականջնին կ'երերցնէին սիրահարաբար լուսինին նայելով, որուն լուսով Մեսիան կ'վնասէին :

Երկու երեք անգամ Բրոփիլէյի սալարկներուն վրայ պառկած քահանաներու մարմիններուն զարնուեցաւ ոտքերնին : Ասոնք չչարժեցան անգամ : Ափսոս, Յոյները անատենէն սովորած էին խաղողի պէս՝ օտարականներէն ոտնակոխ բլլալ :

Յովհաննա՝ որ տաճարներու մասին միայն Տրուխտան ասու մէններ, Հռոմէական շէնքերու տաճակներ և հայրենեայը եկեղեցիները տեսած էր, որոնցմէ շատերը զանոնք շինող գերմանացիներուն պէս կոշտ տախտակներով շինուած էին, Յովհաննա կ'ըսենք՝ չէր կրնար Բարթենօնի սիւները և Էրէքթէյի խորանին նայելէ կշտանալ, որոնց՝ ոտքերը պաղներով միամիտ Յրիւմանս, իր բարեկամուհւոյն կ'հարցնէր թէ արդեօք քարացած հրեշտակներ են : Կոյս Աթենասի տաճարը անատենը կոյս Մարիամին կ'վերաբերէր : Բայց ան միջոցին ոչ երկար բարակ սաղմոսերգութիւններ կ'լուսէին, ոչ գլխի ցաւ տուող զանգակի ձայներ : Միայն մի քանի բուերներսերը մտած երբեմն տխուր ձայներ հանելով իբր թէ կ'ողբային իրենց տիրուհւոյն դրքերուն աքսորմանը : Քէպէյի կըլըր երեսը թափանցիկ ամպերով պատած՝ ինչպէս նորատի աղջիկ մը իւր գիշերուան քօղերով՝ անշարժ կ'փայլէր, իւր գէնիթը այս անմահ մարմարիտներուն զրայ պայծառ և գըզուող լոյս մը թափելով՝ ճիշդ ինչպէս որ կ'ընէր ատեն մը քնացող Ատօնիսին վրայ երբ կ'երթար Լաթմոսի գագաթանց վերայ անոր այցելութիւն բնելու :

Ոլիմպեան Արամազդի տաճարին սիւները, Իլիսիւսի ընթացքը, Փալէրի կապոյտ ալիքները, ձիթենիները, վարդասարդերը եկեղեցիներով կամ գերեզմաններով զարդարուած բլուրներու կատարները, բոլոր ասոնք պարմանիներուն շացած աչերուն Աստղիկին գօտիէն աւելի փայլուն գօտի մը կը ձևացնէին :

Աւելցնենք նաև որ աս տեսարանը իրենց համար ուրիշ վեհութիւն մը ևս ունէր, վասն զի գինով բլլալով ամեն բան կրկին կ'տեսնէին :

Յովհաննա յուզուած՝ մարմարիտնեայ սանդուղի մը վրայ նստած էր, Յրիւմանս՝ իւր սիրուհւոյն առջև ծունր դրած Յաղթութեան տաճարը կ'յուցնէր մաղթելով որ իրենց սէրն անթեւ բլի որպէս զի երբէք չթուչի :

Ասանկ խօսելով և խօսակցութիւննին ալ համարոյրներով ընդմիջելով՝ ինչպէս գրագէտները իրենց դարձուածքները շեշտերով և բութերով կ'ընդմիջեն, սկսան ուրախ զուարթ քնանալ Բէնթէլիւրի կողերէն կորզուած սալարկներուն վրայ, ինչպէս Յակոբ քնացած էր Քարոնի քարերուն վրայ :

Առաւօտուն կանուխ՝ քունը աչերնէն և կնգուղնուն վրայէն ալ առաւօտեան ցօղը թօթուելէն վերջը իջան Աթէնքը տեսնելու համար : Յովհաննայի սիրտը հետաքրքրութեամբ և վախով կ'իմնդար, որ պիտի տեսնէ կուռքերու քաղաքը որ սուրբ Գրիգորի ըսածին նայելով՝ բրիտաննէից հօգւոյն շատ վտանգաւոր է, ինչպէս զուարթ և գեղանի հին սիրուհիի մը տեսքը վտանգաւոր է ան մարդուն որ ագեղ և դէգ կին մը առած է : Բայց մեր դիւցազնուհւոյն յոյսերը և վախերը ամենևին հրմ չունէին : Շատոնց ՚ի վեր Բիւզանդիոնի բարեպաշտ կայսրերը Միրոնի, Ալքմէնի և Բօլիքլէթի հրաշակերտները ապալած էին, զորս սուրբն Ղուկաս անգամ՝ զարմացած էր և Ալարիկոս անգամ՝ ինայած էր : Կործանման գործը Կոստանդինի օրով սկսաւ և Փոքր Թէօտօրի օրով վերջացաւ : Եւ աս անխոնջ արձանահալածները ոչ միայն արձաններու և քարերու դէմ կատղած էին, այլ նաև ամենուն խիղճերուն դէմ որոնց համար կարծած էին թէ իրենց պապերուն կրօնքին մէջ հաստատա մնալ կ'ուզեն :

Ընտանեկան տօնի մ'առթիւ ոչխար մերթել, հօր մը գերեզմանին վրայ ծայրիկներ սփռել, լուսնին լուսովը երկցուկ ժողովել, սենեկին մէջ հոտեր վառել կամ վիզը տենդի դէմ յուռութուլունք կախել, մէյմէկ պատճառներ էին ժողովին լրտեսներէն՝ իբրև կախարդ կամ կռապաշտ՝ բռնուելով չըթթայակապ Սքիթօփօլի զրկուելու, ուր քրիստոնէութիւնը իւր սպանդանոցը հաստատած էր : Հոն բարեկրօն դատաւորներ կային՝ որոնք իրարու հետ կ'մրցէին թէ ով աւելի բարե-





պաշտ պիտի այրէ կատկորային վրայ, ո՞վ աւելի պիտի յօշէ կամ ո՞վ աւելի հրատապ իւզին մէջ պիտի նետէ: Հազարաւոր պատմագիրքեր պատմած են առ քրիստոնեայ մարտիրոսներու կրած տանջանքները սրոյ վէրքերէն կաթ կ'հոսէր և բոցերն ալ զանոնք կ'զովացնէին երկնային ցօղի պէս: Կարծեմ թէ ոչ ոք ճշգիւ պատմած է առ խեղճերուն տանջանքները որ հրաշագործ կաթի տեղ ճշմարիտ արիւն թափած են, և փոխանակ զովանալու՝ յունական եկեղեցւոյ մուկռանդութեան բոցերէն այրած են, որոնք կ'երևի թէ կռապաշտութեան անգթութեան բոցերէն աւելի հրակէզ էին:\*

Երկու Բենեդիկտեանները քաղաքը կ'ստըտէին Թէօնասի ընկերութեամբ, որոնց ետեէն խումբ մ'ալ Աթենացիներ կ'երթային: Ասոնք՝ ինչպէս Առաքելոյն օրով, միշտ լուրեր լսելու կամ պատմելու զբաղած էին: Փողոցները և հրանդարակները իրենց կուռքերէն և սեղաններէն այրիացած՝ Ողբիս սէն կուրցած Բօլիփէմին կ'նմանէին: Հոն՝ ուր ատենով արձան մը կը բարձրանար, փայտէ խաչ մը անկած էին: Սեղաններուն տեղ մանր մունր եկեղեցիներ շինած էին բիւզանդեան գմբէթով ծածկուած, որ քարէ կեղծամի կ'նմանէր: Աս մանուկները Աթենուհի Եւսօքսիայի ջանքով շինուած էր որ ուղած էր տօնացուցի մէն մի սուրբերուն անուան մէյմէկ խորան շինել:

\* Միջին դարու սկիզբները Վալէնս, Վալէնթինիէն և Թեօտորոս կայսերաց օրով Սրեկելի մէջ բուն հաւատաքննութիւն մը հաստատուած էր որուն անգթութիւնները, հալածմունքները և ջարդերը սպանիական հաւատաքննութեան ըրածներէն վար չեն մտար: Ասի միայն կասկածելի անձերը կ'ըռնէր ու կ'զատէր, իսկ արևելքցիք Բամբոլին կ'ըռնէին անոնք որ կ'իմաստասիրէին: Աս մասին ժամանակակից պատմագիրքերուն ըսածները ամենեկին կասկած մը չեն թողուր և մեզ սարսափ կ'ազդեն անոնց զէմ որ եկան Վիրոյ տեղ սուր բերելուն: Եկեղեցական պատմագիրքերը պէտք են քիչ մը լեզուին կարճ բունեն կռապաշտներուն անգթութեանց դէմ, որոնք միայն դաւաճանները և կրօնքի դէմ գործողները կ'պատժէին: Պէտք է որ յոյներուն լեզուն ալ կարճ ըլլայ Սրեկուտըցուց դէմ, երբ Ս. Պարթէէմի կոտորածներուն կամ Հաւատաքննութեան վրայ խօսք կ'ըլլայ, վասն զի նա օրինակները իրենք սուած էին Սրեկուտըցուց:

Սուրբերուն թիւին շատութենէն ստիպուած էր մէյմէկ խրճիթ շինել որոնց երեոյթը աւելի կուղբերուն հանճարեղ ճարտարագիտութիւնը կ'ցուցնէր մեղի քան թէ անծանօթ Աստուծոյ մեծութիւնը: Աս խեղճ տաճարներուն դուռը խել մը քահանաներ և ճգնաւորներ կ'ծկտուած նստած էին և իրենց վէրքերը կամ ձեռագիրներ կ'քերէին որոնք Յայսմաուուրքի պիտի փոխուէին. կողով կ'հիւսէին, սոխ կ'ուտէին և գուցէ Աստուծոյ ալ շնորհակալ կ'ըլլային որ Յոյն ծնած են եւ ջէթէ բարբարոս: Աթենուհիներուն նախատիպ գեղեցկութիւնը աս երկու օտարականներուն զարմանքը կ'գրաւէր: Ան ատենները կայսրերը և Բիւզանդիոնի արքունեաց աւագանին Աթէնքէս կ'առնէին իրենց կիները\* ինչպէս Սուլթանները այսօր իրենց կիները Սիրքասիայէն կ'առնուն: Ատաիկեան սերունդին աս գեղեցկութիւնը պատկերամարտներուն օրէն ըսկսած է:

Բիւզանդեան պատկերներուն վերցուելէն ետքը կիները շարունակ աչքերնուն առջև անճոռնի կոյսեր և այլանդակ սուրբեր շունէին: Ուստի իրենց աչքերը դարձեալ Բարթենօնի հրաշակերտներուն վրայ կ'յառէին, ասով իրենց ծնած զաւակները տաճարին արձաններուն վրայ քանգակուած կու պիտօններու կ'նմանէին: § Ուստի մեր եկեղեցական պատկերները կարգի կանոնի խոթելը սերունդը գեղեցկացնելու անգամ մեծապէս պիտի օգնէ: Պատկերներուն՝ ճննդարեգութեան վրայ ունեցած ազդեցութեան իբր ապացոյց կրնանք Բրուսիոյ Հըրէայ վախճաններու կանանց օրինակը մէջ բերել: Ասոնք առաւօտէն մինչև իրիկուն կ'իյոմ թագաւորին թագանիշով թալէրները և մարքերը համրելով ծնած զաւակին անանկ

\* Ութերորդ դարուն Իրէն և Թէօֆան կայսրուհիները Աթենուհի էին:

§ Էմբէտօքը կ'ըսէ թէ կին մը յղացած ատեն ինչ երևակայութեամբ որ պաշարուի անոր համեմատ զաւակ կ'ծնի:— Շատ անգամ կիները պատկերներու և արձաններու սիրահարուած և վերջէն անոնց նման զաւակներ ծնած են:

ճշգրիտ թագաւորին կ'նմանի որ ասի՝ իրաւամբ իւր հպա-  
տակներուն հայրը կոչուած է: Կանանց գեղեցկութենէ զատ՝  
պարմանաւ հիներուն համեստութեան ալ շատ կ'զարմա-  
նային, որոնք իրենց մօրը քով կ'խօթուէին ինչպէս սուրբ զի-  
նուորին գիստին վրայ կ'կախուի և աչերնին գետին կ'յառէին  
չաահեղու կամ ոտքերնին քարի շղարնուելու համար, և ա-  
մեն անգամ որ հովը զգեստնուն մէկ ծալքը կ'վերցնէր սաս-  
տիկ կ'կարմրէին, և այսօրուան նորասի Աթենու հիներուն շէ-  
ին նմաներ որոնց ամենքն ալ կարգուած կնիկներու կ'նմա-  
նին և կ'զարմանանք թէ ինչպէս իրենց ծնողքը անանկ մեծ  
եռանդով կ'ուզէն անոնց էրիկ ճարել: Երկու օտարականնե-  
րը Հովերու գզեկը և Ակօրան անցան ուր մեծ զարմանքով՝  
բաթրիկեաններ և եկեղեցականներ տեսան որոնք անձամբ ե-  
կամ էին օրուան բանջարեղէնները գնելու: Քիչ մը վերջը  
Բօէսիլի սիւներուն քով հասան: Հոն՝ փիլիսոփաներու տեղ  
աստղաբաններ, կախարդներ, այսահալածներ և Հիմիէթ լե-  
ռան քանի մը դասախօսները գտան, որոնք շարաթը անգամ  
մը լեռէն կ'իջնէին իրենց լեղուին և մեղրին քաղցրութեամ-  
բը աշակերտներ գտնելու համար:

Ասոնք դասախօսութեամբ չկրնալով իրենց պիտոյքը հայ-  
թայթել քիչ մ'ալ մեղուի առուտուրով կ'զբաղէին, ինչպէս  
Փիօրէնցայի քահանաները խորանին շահերէն զատ օղի ծա-  
խելու ալ կ'զբաղին: Յովհաննա վեց օր բնկերոջը հետ Աթէն-  
քի հնութիւնները, եկեղեցիները և շրջականները ժուռ եկաւ  
և այնչափ օր ալ Տափնի վանքը հանգչեցաւ: Ան վանքին  
արեղաները շատ գոհ էին որ այս երկու սիրուն բենեգիկ-  
տեանները միշտ իրենց քովը պահէն, որոնց յաջորդները քա-  
նի մը գար վերջը զիրենք բոլորովին պիտի վաճառէին նոյնտե-  
ղէն: Բայց շուրի մէջ եփուած բանջարեղէններ, երկար բա-  
րակ աղօթքները, յարգէ անկողինը և բարեկրօն հայրերուն  
աղտեղութիւնը չէր կրնար յարմարիլ Արեմուտքի ասզաւակ-  
ներուն, որոնք Գերմանիոյ մեղկ և հեշտակեաց վանքերու մէջ  
սովորած էին աղէկ ուտելու և ամեն օր լուացուելու:

Աս պատճառաւ Հրեշտակայիններու փառքէն ետ կեցան

վերջէն Մինօրիթներու կարգը անգամ խիստ գտնելով՝ Ան-  
կախներու գրօշակին գրուեցան:

Ասոնք իրենց ուղածնուն պէս կ'ապրէին, եթէ ուզէին  
արքայութեան մէջ քիչ կամ շատ տեղ մ'ունենալ՝ աղօթ-  
քով, տանջանքներով և ապաշխարութեամբ կ'անցնէին, իսկ  
եթէ ուզէին դժոխք երթալ միտ կամ գիտին կ'սիրէին. վան-  
քէն քիչ մը հեռու ճգնարան մը կար որ սուրբն էրմիլի  
մեռնելէն 'ի վեր պարապ էր: Աս սուրբ մարդը միայն սուրբ  
հաղորդութիւնով մաններու փորձ փորձած և տասը օր ա-  
սանկ ապրելէն վերջը անօթութենէ մեռած էր: Մեր երկու  
սիրահարները անոր խրճիթին մէջ հաստատեցին իրենց բնա-  
կութիւնը, ունեցած քիչ մի սաակնին պէտք եղած բաները  
գնելու վասնելով, այսինքն հաստ վերմակ մը, երկայն շամ-  
բուր մը, պղինձէ կաթսայ մը, կուժ մը իւղ, երկու այծ,  
տասը հաւ և մեծ շուն մը աս բաները պահպանելու համար:  
Իսկ հոգւոյն վրկութեան համար պէտք եղած գործիքները՝  
մեռելի գլուխ, բարի օրինակ և բարի վարք ննջեցելոյն ժա-  
ռանգութենէ ձրի ստացան:

Առաջին օրերը մեր Բենեգիկտեաններուն համար անընդ-  
հատ տօն մ'եղաւ: Մեծ պահքը կ'լմննար և Յիսուս յարու-  
թիւն կ'առնուր: Ամեն կողմէ ուժգին համբոյրներ կ'լուռէին  
և կրակորանի վրայ դարձող ոչխարներ կ'տեսնուէին: Բնու-  
թիւնը անգամ ինք իր կերպով Խաչեցելոյն յարութիւնը տօ-  
նել ուզելով ձմեռուան զգեստները ձգած էր՝ ինչպէս այրի  
մը էրկանը սուգի զգեստները կ'ձգէ: Ապողոնի դափնիները  
կարմիր գոյն մ'առած էին, աւերակներուն մէջ դալարիքը  
կ'աճէր և գալնան զով զեփիւռը էչերը դաշտերուն մէջ կը  
խաղցնէր իրենց բնկերներուն շուրջը: Յովհաննա արշալոյսին  
հետ կ'արթննար, ուրախութեամբ առաւօտեան քաղցր բուր-  
մանքները կ'վայելէր, այծերը կ'կթէր, ցօղալից կեռանները  
կ'ժողվէր, հաւկիթները կ'եփէր, վերջէն ալ Փրիւմանսը կ'ար-  
թնցնէր: Նախաճաշէն ետքը ասի կ'երթար ձուկ որսալու  
կամ նապաստակներ բռնելու, թէ՛օնաս ալ պարտէքը կ'մշա-  
կէր: Իսկ Յովհաննա մենաստանին մէկ անկիւնը քաշուած մերթ

որոց վարքը կ'օրինակէր զոր վերջէն կ'ծախէր բնակարանին հասոյթը աւելցնելու համար, մերթ Պղատոնի երազները կամ Թէօփրիթի երգերը կ'կարդար ան ձեռագիրներուն մէջ՝ զոր բէրտէրները իրեն փոխ կամ նուէր կ'ապին ան անշահախնդրութեամբ որով առակին սղուէսը իւր գարին ձիուն կը թողուր:

Իրիկունը խրճիթին գրանառջև հինաւուրց եղենիին տակ՝ զոր գիւղացիները պատրիարք կ'անուանէին, սեղան կ'դնէին. պարտէզին և ձկնորսութեան բերքերով մեր ճգնաւորներուն սեղանը եզակի բան մ'էր լեռան մէջ: Մանաւանդ մեր գիւցաղունները թէ Սաքսօն և թէ Բենեդիկտեան ըլլալով՝ բնութեամբ ամենակեր էին: Յովհաննա՝ գիշեր ցորեկ յոյն փիլիսոփաները երբեմն ալ առաքելական կամ հերետիկոսական Հայրերը կարդալու զբաղած ըլլալով՝ որոնք ծովերու, հաւատոյ վարդապետութիւններու և սուրբերու փառաբանութեանց գիւտէն առաջ կ'ապրէին, քիչ քիչ վանական ժանգը թոթուած էր վրայէն: Եւ որովհետև վառվռուն և հանճարեղ միտք մ'ունէր, իւր գործածութեան համար տեսակ մը կրօնք շինած էր որ այսօրուան իւր հայրենակիցներուն գրութեանց շատ կ'նմանին, որոնք Պէրլինի և Թիւրէնիի աստուածաբանական վարժարաններու շնորհիւ յաջողած են քրիստոնէական շինել առանց Քրիստոսի, ինչպէս քաղաքակրթեալ իսահարարները սխտորդեղ (թերաթուր) կ'շինեն առանց սրբատորի, և Պէրմօնթէ ալ տաղեր կ'գրէ առանց բանահիւսութեան: Իսկ Պրիւմանս միշտ իւր սիրուհւոյն աչերովը կ'տեսնէր: Վիպական դիւցազանց պէս միշտ պատրաստ էր անոր հետ երկինքը կամ դժոխքը բաժնել, ուստի հոգը չէր ուրբաթ օրը հաւ, չորեքշաբթի օրերն ալ ոչխար ուտելով: Հին Հռովմի մէջ ամեն անգամ որ հանրապետ մը կ'ընտրէին՝ ամեն իշխանութիւն կ'դադրէր: Ասանկ է նաև երբ սէրը բացարձակապէս տեղ մը իշխէ ամեն զգացմունք կ'մարին սրտին մէջ ինչպէս աստղերը կ'նսեմին երբ արեւը հորիզոն կ'եղնէ: Արամազդ՝ իւր աստուածութիւնը մոռնալով մերթ փետուր կ'դնէր գլուխը, մերթ եղջիւր դինքը սիրուհիներուն հաճելի

ընելու համար: Արիսթօթ ուսին վրայ համեա, բերանը սանձ, իւր եօթանասնամեայ գաւակը Գլէօֆիլի կ'ներկայացնէր, որ իւր վրայ հեծնելով Հնդկաստան երթայ:\*

Իսկ Պրիւմանս ոչ միայն յանձն պիտի առնուր ուրբաթ օրերը միս՝ այլ նաև ամեն օր ալ ծեծ ուտել: Աս ամբարիշտ խոհանոցին հատերը յոյն վանականներուն բարեպաշտ քիթերը անհանգիստ կ'ընէին: Ամեն անգամ որ ճգնարանին առջևէն կ'անցնէին, ասոնցմէ շատերը խաչ կ'հանէին կամ քիթերնին կ'գոցէին ինչպէս Ողիսևս ականջները կ'խցէր Սիրենաներուն երգերը չլսելու համար: Շատերն ալ աւելի յանդուգն գտնուելով ներս կ'մտնէին աս մտակեր մենակեացները դժօխքին կրակով և եկեղեցւոյ շանթերով սպառնալու համար: Բայց Յովհաննա անոնց անանկ աղէկ ընդունելութիւն կ'ընէր և այնչափ շնորհալից կերպով ամենէն պարտա կտորը կ'նուիրէր որ աս սուրբն Վասիլի աշակերտները՝ որոնք հաւեղէնի մասին իրենց պնակին մէջ դիպուածով ինկած ճանճերը միայն կ'ուտէին՝ շատ անգամ ճգնարանէն դուրս կ'ելնէին փորերնին տատրակով մը և խիզճերնին ալ մեղքով մը ձանրացած:

Սակայն եղբայր Յովհաննէսի գեղեցկութեան և հանճարին համբաւը լեռան մէջ տարածուած էր և կ'սկսէր քաղաքն ալ տարածուիլ: Իմիէթի աստուածաբան վարժապետները իրենց մեղուները և աշակերտները ձգելով սոյն ճգնարանը կուգային աստուածաբանութեան, սատանաներու, կախարդութեան կնճապի խնդիրներու վրայ վիճելու համար:

\* Միջին դարու մէջ միայն Արիսթօթ ճանչցուած էր իբր փիլիսոփայ: Անատենուան սովետները սիրոյ գործութիւնը ցուցնելու համար առասպել մը հնարեցին թէ փիլիսոփաներու աս իշխանը Գլէօֆիլի սիրահարելով՝ յանձն առած էր կունակը համեա և բերանն ալ սանձ դնել. բայց ապերախտ կիներ փոխանակ ի գութ շարժելու՝ կրունակը հնձած և մտրակելով զանի իւր աշակերտ՝ Աղէքսանդրին առջև տարաւ, ան ալ իւր վարժապետին առջև յարդ նետեց: Աս առասպելը մեզի գուարճալի երեցաւ, ասկէ զատ մեզի սա ճյմարտութիւնն ալ կ'սորվեցնէ թէ շատ կիներ կ'ուզեն իրենց տարժածուները կիրկէպին պէս՝ դազանի փոխել:

Նիսէթաս եպիսկոպոսը անգամ շատ հեղ կ'գար հինաւորաց եղենիին տակ նստելով՝ Բեթրարքի պէս գիտութեան աս պտուղին վրայ զարմանալու համար որ այնչափ շուտ հասունեցած էր աս քսանամեայ գլխին խարտեաչ գանգուրներուն տակ ։ Քահանաներէն և գիտուններէն վերջն ալ աս նոր Հրուովի աւագ անին և բաթրիկեանները կամաց կամաց մենաստանին ճամբան սորվեցան ։ Ալ ոչ ոք Տաֆնէյէ կ'անցնէր առանց բենեգիկտեաններու դրան զարնելու ։ Աս այցելուններէն շատերը Հայր Յովհաննէսի քնքուշ թեկերը տեսնելով և սպիտակ ձեռքերն ալ պագնելով կ'յուզուէին իբր թէ հեշտութեան սատանան սիրտերնորին կարեվէր խօցէր ։ Յովհաննա կ'յուսար թէ իր առնացի զգեստը ամեն ցանկութեանց դէմ վահան մ'է, և աս նոր պղատոնականներուն բնութիւնը չճանչելով անոնց գովեստներուն միշտ մտադիր կ'ըլլար ։ Ամեն օր իւր ընդարձակ գիտութեան և կարմիր շուրթերուն նոր սիրահար մը կ'աւելնար ։ Շատ անգամ ալ հառաչելով կ'մտածէր թէ սրչափ շատ և սրչափ անձնուէր պիտի լինէին իրեն զարմացողները եթէ փոխանակ իւր գեղեցկութիւնը վերջապէս տակ պահելու՝ ինչպէս ոսկեղէն թուր մը կապարեայ պտտեանի մէջ, կանացի հագուստով երևէր՝ կուրծքը մտաքսեայ պատմութեան տակ և խարտեաչ մտղերն ալ ուսերուն վրայ սփռու ։ Խեղճ աղջիկը չէր գիտեր որ եթէ աս հըրաչքը կատարուէր աս Արևելքցիներէն շատերը կռնակնին պիտի դարձնէին իրեն, ինչպէս ըրած էր Լիւսիէնի դիւցազնուհին իւր իշուն երբ ասի մարդու փոխուած էր ։

Փրիւմանս նախ կ'ուրախանար իւր բարեկամութեան յաջողութեան վրայ, բայց շատ չանցաւ գիտեց որ ասի քիչ մը փոխուած է և հետք յառաջուան պէս չվարուիր, ուստի սկսաւ սիրտը խաղալ, ճիշդ ինչպէս սիրամուկ կնիկ մը երբ երեսին վրայ առաջին փոթը կ'տեսնէ ։ Նրիտասարգ արեղան իւր կարծր և առնացի պտտեանին տակ թուզէ աւելի կապուողսիրտ մ'ունէր ։ Ասի ծնած էր սիրելու համար ինչպէս վարդը անուշ հոտ ծաւալելու և էչն ալ աքացի հարուածներ տալու համար ։ Ինք կրնար Յովհաննայի սիրոյն համար

երկու հարիւր շագանակ կլլել առանց ստամուքսին վրայ ծանրութիւն մը զգալու, բայց անոր մէկ յորանջելը կամ պաղ օրինակը անկարող էր մարտել՝ եօթը տարի զանի ամբողջովին վայելելէն վերջը ։ Իսկ ես զանի Եղորոսի շունչին կ'նմանցնեմ որ երբեմն տաք կ'փչէր երբեմն պաղ ։ Ինչ որ կ'ուզէր թող ըլլար՝ նորաօր աղջկան համբոյրները և զգուանքները բարեմիտ Փրիւմանսի պիտանի եղած էին առօրեայ հացին պէս ։ Որչափ քիչ կ'ընդունէր այնչափ ալ բաղձանքը կ'աւելնար, ինչպէս նաև եթէ իւր կերակուրէն բան մը պակսեցնէին ախորժակը կ'աւելնար ։ Սմիւններ և տարիներ կ'անցնէր, Յովհաննա որչափ որ կ'տեսնէր որ իւր երկրպագուներուն թիւը կը շատնայ այնչափ աւելի կ'պաղէր Փրիւմանսէ ։ Խեղճ երիտասարդին վիշտը օրէ օր կ'սաստկանար ։ Ատեն մը թարմ ու վարդագեղ երեսին վրայ տխուր ամպ մը տարածուած էր ։ Նրկար ատեն աշխատեցաւ իւր վիշտը պահել, ինչպէս Սպարթացիք զիրենք փարատող աղուէսը ։ Բայց վերջապէս առաւօտ մը ալ չդիմանալով սկսան արցունքները աչերէն, յանդիմանութիւններն ալ շուրթերէն վազելու ։ Յովհաննա աշխատեցաւ իւր սիրահարը հանդարտեցնել ։ Ուզեց զանի համոզել թէ այն տխուր ամպերը սրննցմով սիրաք ահուգողի մէջ ինկած էր երեակայութեան արտադրած սև թիթեռնիկներն ։ Բայց Փրիւմանս դիւրաւ չէր համոզուեր, կրներն ալ մեղամագձոտ մարդերէ չեն ախորժիր ։ Գիցուհիները անգամ միայն մէկ օր կեցան Կովկասի կատարը շղթայակապ Պրօմէթէոսը սփոփելու համար, բայց երբոր հառաչանքները ու գանգասանները տեսան՝ զանի միտ մինակ թողուցին ժայռին վրայ անգղին հետ որ իւր աղիքը կ'ըրծէր ։ Ասանկ ալ Յովհաննա իւր բարեկամին թեթև միտթարութիւն մը կամ արագ համբոյր մը տալէն վերջը, իբր թէ աղքատի մը ափը սու մը կ'նետէր, կռնակը կ'գարձնէր՝ զիչերը քնանալու համար, ցորեկն ալ իւր գիրքերուն կամ այցելուներուն հետ խօսակցելու համար, որոնց երթեկը առաւօտէն մինչև իրիկուն անընդհատ կ'չարունակէր ։

Փրիւմանս սովորաբար մեկուսի կ'կենար Հոմերոսի դիւցա-

զուններուն պէս իւր բարկութիւնը զսպելու աշխատելով: Երբ  
չէր կրնար ալ արցունքը կամ բռունքը զսպել՝ սենեկէն դուրս  
կ'ցատկէր և կ'երթար համայն կամ ապրիմ մեռնիմ մը փեթ-  
տելու, հասկնալու համար յէ Յովհաննատ գեռ զինքը կ'սիրէ  
թէ ոչ: Իրաց առ փեճակը երկար ատեն չէր կրնար տեսլէ  
Երիտասարդ արեղան մերթ կ'մտածէր Յովհաննայի ոսկորները  
կտարել մերթ իւր յարաբերութիւնը:

Մեր գիւցազնուհւոյն սիրահարական պչրասիրութիւնները  
ամեն օր ծանր երայարանք մը կ'առնէին: Ինչպէս կ'ըսեն խրմ-  
բազիրները: Արդէն արքայ մը, երկու վառօդապետ և Ատի-  
կէի կուսակալը իմացած էին թէ ինչ պահուած է իւր վե-  
ղարին տակ, շատերն ալ կ'կասկածէին, մնացորդ մասն ալ  
եղբայր Յովհաննէսի պղատոնական սիրոյ խնկարկութիւն կ'ը-  
նէր:

Փրիւմանս միշտ կ'գանգատէր և կ'հայհոյէր իւր սիրուհին,  
անոր ալ համբերութիւնը և սուտերը հասնելով՝ սկսաւ Գա-  
լամաթ այի թուզի պէս չոր պատասխաններ տալ: Աս երկու  
սիրահարներու մտերմութիւնը ճիշդ Աթէնքի արքունի պար-  
տէզին շուրջը պատող Հնգիկ թղենիներու կ'նմանէր որոնց  
պտուղը օր մը միայն կ'տնէ, փուշերն ալ ամբողջ տարի մը:  
Սակայն երբ Փրիւմանս կ'մտածէր իւր ընկերուհիէն զատուիլ  
մազերը սարսափէն գլխին վրայ կ'ըստմնէին: Ալ չէր կրնար  
ոչ անով ապրիլ և ոչ առանց անոր: Ինչո՞՞ երիտասարդը չէր  
գիտեր թէ կնկան մը սիրտը շարժուն աւազ է ուր փոքրիկ  
վրան մը պէտք է կանգնել զիչեր մը ապաստանելու համար,  
մինչդեռ նա ահագին պալատ մը շինած էր բոլոր կեանքը հոն  
լու գիտմամբ:

Հայհոյութիւններով և աքացի հարուածներով առ երա-  
նելի դրախտէն վճռուելուն պէս՝ փոխանակ Ագամին պէս իւր  
գատապարտութեան հնազանդելու կ'ուզէր նա առ արգիլեալ  
պարտէզը վերստին մտնել որուն դրան մուտքը Յովհաննայի  
պաղ կերպերը և շարութիւնը իրեն կ'արգիլէին՝ ինչպէս հրեշ-  
տակին թուրը արքայութեան մուտքը: Երբեմն բարեկամուհ-  
ւոյն ոտիցը առջև պառկելով՝ կ'աշխատէր անոր գուլթը շար-

ժել իրենց համբոյրները և երդմունքները յիշեցնելով: Բայց  
իւր խօսքերը գեղանի միանձնուհւոյն կարծրացած սրտին վրայ  
կ'սահէին ինչպէս անձրևը կղմինտրէ յարկի մը վրայ, երբեմն ալ  
վիրաւորեալ եղնիկի պէս անտառներուն մէջ կ'թափառէր հը-  
րաշագործ գաւազան մը գտնելու և Յովհաննայի չորցած աչե-  
րէն քսնի մը կաթիլարցունք հանելու համար, ինչպէս ոս Սով-  
սէս իւր գաւազանովը անապատին ժայռէն ջուր հանած էր:  
Երբեմն ալ ճարը հատած կ'աշխատէր այս սէրը սիրտէն խլել,  
ինչպէս պարտիզպան մը հեղիօթիւքներու մէջտեղը բուսած  
գարշահոտ սոխը կ'խլէ կ'հանէ: Բայց այս չար խոտը անանկ  
խորունկ արմատներ ձգած էր որ 'ի զուր աշխատելէ վերջը  
խեղճ գետին կ'ընկնէր քրտնաթոր և Յոբ երանելիին պէս  
կ'անիծէր ան օրը որ ծնած էր եւ ան ժամը ուր մայրը զին-  
քը յղացած էր: Սակայն պէտք չէ կարծել թէ բարեմիտ փրիւ-  
մանս Երթօքրիթոս մ'է, կամ Սուցոյի գիւցազն մը, կամ  
վիպական պարտիզին մէկ լալկան երկոտանին էր, այլ գիւցազ-  
նական Ալմանիայի խոհեմ և բարեպաշտ զաւակ մը, ինչպէս  
որ գարեջուրի և չորգամի այս երկիրը կ'արտադրէր միշտ Վէր-  
թէրի հառաչանքներէն և Սթրաուսիու Հէկէլի հայհոյանքնե-  
րէն աւրուելէն յառաջ: Գուցէ Յովհաննան ալ կ'սիրէր ինչ-  
պէս Արիստիթ՝ Լաիսը, կամ ինչպէս կատունները կաթը կը  
սիրեն: Բայց Աթէնքի մէջ ուրիշ կին չէր ճանչեր, ուստի ի-  
րեն խիստ դժուար էր սիրուհին փոխել: Սողոնի զաւակները  
ան ատեն այսօրուան պէս քաղաքակրթուած չէին: Մայրերը,  
էրիկները, եղբայրները և ուրիշ ան ամեն անտանելի արա-  
բածները որոնք կ'ինները կ'պահէն ինչպէս փուշերը վարդերը  
կ'պահէն, դեռ օտարականներու առջև մոմ բռնելու պատի-  
ւը իրարու ձեռքէն չէին յափշտակեր: Նորատի Աթենուհիք  
միայն Բիւզանդիոնի կայսրերուն ձեռք կ'երկնցնէին, ան  
ալ աջ ձեռքերնին: Ասով խեղճ Փրիւմանսի վիճակը խիստ  
անտանելի եղած էր և իւր հառաչանքներն ալ ներելի էին,  
վասն զի կին մը իւր երիտասարդական կիրքերուն խիստ կա-  
րևոր կահ կարասիք մ'էր ինչպէս նեցուկը կաղերուն և աղբն  
ալ գաշտերուն:

Թէ բանահիւսները և թէ դիցաբանները առասպելախառն ժամանակներու մէջ զետեղած են թէ բուսական և թէ կենդանական թագաւորութեան արտագրած տարօրինակ և անհնարին ծնունդները, ինչպէս մեղրակաթ լօծիւս, խօտուն ծառեր, թռչող վիշապներ, այծոսն սամիրներ, հսկաներ, սիրենաներ, կախարդներ, վշուկներ և ուրիշ աս տեսակ էակներ զորս միայն պատկերներու կամ երազի մէջ կ'տեսնենք:

Բարոյական աշխարհն ալ, եթէ կրնանք աս ոճը գործածել, իւր դիցաբանութիւնը ունի, դիւցազնական անձնուիրութիւններ, ջերմեռանդ արբշուութիւններ, անբաժանելի բարեկամութիւններ, գերմարդկային զոհողութիւններ և ուրիշ աս տեսակ վիպական կամ ողբերգական արտագրութիւններ: Կարծեմ թէ անցեալ ժամանակներու այս արտագրութեանց մէջ պէտք է զնեւ սերը ինչ կերպով որ կ'իմանային միջին դարու ասպետները և Պղատոնը չհասկցող մարդիկը, բայց ստոյգ փիլիսոփայութեան համեմատ սերը ուրիշ բան չէ բայց երկու մարմիններու իրարու շփուիլը: \*

Եւ եթէ Յրիւմանս ամեն բան կ'զոհէր Յովհաննայի համար, եթէ անոր օտից առջև կ'պաղատէր իւր ծնած օրը անհիծերով, պատճառը՝ Ադամին պէս, որ իւր անհաւաստարիմ կնոջը ներեց՝ ուրիշ կին չունենալն էր:

Մեր դիւցազնուհին ալ՝ թէպէտ բոլորաթիւք խնկարկուններ չէին պակսեր, վարդերու վրայ չէր հանգչեր: Յրիւմանսի հառաչանքները և լացերը թէպէտ չէին կրնար իւր սիրտը յուզել, սակայն ջիղերուն կ'դպչէին և թէ քունը և թէ տխրութակը կ'կարէին, և աւելի դէշը ան է՝ որ գաղտնիքն ալ ամենուս կ'յայտնէին: Աթենէոսի ըսածին համեմատ՝ անկարելի է սերը և հազը պահել:

Իսկ ես՝ եթէ ներելի է գինով բարոյագէտներու ըսածը ջրեւ, կ'սխալեմ թէ ասի պահելը (խօսքս սիրոյ վրայ է և չէ թէ հազի) շատ դիւրին է երբ սիրահարները երջանիկ են: Նախանձ, մտատանջութիւն, յուսահատութիւն և ուրիշ խեղ

\* Աս խօսքը Եանֆօրէ առնուած է:

մը սիրահարական համեմանքներ երեսի վրայ կ'տպաւորուին դահիճին ապտակներուն պէս: Եւ այի աղջիկները անանկ մեծ ազահութեամբ կ'բաշխեն մեզի ուրախութիւնը և երջանկութիւնը որ շատ դիւրին է պահելը ոչ միայն կրօնաւորի կնդուղի տակ այլ նաև բաճկոնակի մը նեղ դրպանին մէջ: Իբժբաղդաբար բոլոր կիները աս կէտին՝ ճիշդ ան կատաղի հոռմայեցիներուն կ'նմանին որոնք կ'պահանջէին որ ամբիթէատրօնի մէջ խողխողած զոհերը շնորհայի կերպով իյնան և առանց միմնջելու վիզերնին երկնցնեն դահիճի սուրին: Աստանկ ալ Յովհաննա խեղճ Յրիւմանսը, նախանձով, պողկերպերով, պչրասիրութիւնով և ուրիշ խեղ մը կանացի դիւտերով տանջելէն վերջը՝ սաստիկ կ'բարկանար եթէ Յրիւմանս ասչափ տանջանքներու և յուսահատ միջոցին բերնէն վշտագին հառաչանք մը հանէր կամ եթէ երբեմն ակուան ցուցնէր կամ իւր հակառակորդները վռնտէր: Մենաստանին գայթակղութիւնները Տաֆնէի վանքին բոլոր սևազուլիս բնակիչները սաստիկ կ'յուզէին:

Յովհաննայի սեռը ամենուն յայտնի էր, և զանի՝ Քրանկերէն զրկուած հրէշ մը կ'համարէին որ եկած էր ուղղափառ եկեղեցին կործանելու: Ստոյգ է որ շատ կիներ, Մաթրօն, Բէլլաթի և Մարինոս սրբուհիներ և դեռ շատեր անորմէ առաջ վեղար հազած և վեղարաւորներու հետ ապրած էին, բայց անոնցմէ ոչ ոք վեղարը հագած էր վարդապետները գլուխէ հանելու և տատրակ ուտելու նպատակաւ: Աս զայրացեալ և սևազուլիս խո միին մէջ կային քանի մ'աբեղիկներ որոնք գեղանի Ալմանուհին կողմը կ'բռնէին, բայց իրենց ձայնին ոչ ոք ականջ կ'կատէր: Ամենև աւելի Անժէլիք ըստած տեսակ մը կրօնաւորներ կատղած էին Յովհաննայի դեմ: Ասոնց ամենքն ալ հոտած և կեղտոտ մարդեր էին, ինչպէս ամեն անոնք որ կ'ուզեն միայն Աստուծոյ հաճելի ըլլալ, և (խօսքն ալ մէջերնիս մնայ) աշխատած էին մեր դիւցազնուհոյն աչքը մոռնելու:

Յովհաննա անոնցմէ մէկ քանին բաղնիք զրկած էր, մէկ քանին ալ մազերնին կտրելու, ուստի ասոնք ալ աս անգութ

միանձնուհիին դէմ բարկացած ամեն անգամոր նէ կ'անցնէր նզովքի և անէճքի կարկուտ մը կ'տեղային վրան, երբեմն ալ տոխ կ'ներտէին, ինչպէս կ'ընեն Աթէնքի շփրթիկները Իգալական թատրոնի դերասանուհիներուն երբ Աւզոնիայի աս սիրենաները իրենց հառաչանքները տաղակալի կամ նուէրնին խիստ թեթև գտնեն:

Յովհաննա խիստ նեղի մէջ էր, ներսէն Փրիւմանսի գանգատներովը կ'տանջուէր, դուրսէն հասարակաց կարծիքովը, իւր մտերիմներուն եռանդն ալ նզովքի վախէն օրէ օր կ'պաղէր, իսկ թշնամիներուն թիւն ալ կ'աւելնար, ուստի մտածեց մեկնիլ աս տեղերէն: Բաւական ժամանակ Աթէնք բնակելով՝ քաղաքին շէնքերը տեսած, ձեռագիրները և բնակիչները ճանչցած էր, ուստի աս քաղաքին բնակութիւնը Փրիւմանսի համայնքներէն աւելի անհամ կ'երևէր իրեն:

Աւելցնենք նաև որ բաւական ատենէ 'ի վեր շատ կ'բաղձար իւր հմտութիւնը, գեղեցկութիւնը և տաղանդը աւելի բնդարձակ ասպարէզի մը վրայ ցուցնել:

Մեր դիւցազնուհիին տարիքը երեսունին կ'մօտէր, տարիք մը՝ որու մէջ ոչ թէ կիները միայն իրենց սեռին թերութիւններովը գոհ չըլլալով կ'ուզեն մեր թերութիւններն ալ առնել, այսինքն՝ փառասիրութիւն, իմաստակութիւն, գինեմուրութիւն և ուրիշ առնացի մոլութիւններ որոնցմով կ'ջանան իրենց սիրտը կանացի կատարելագործութեան տիպար մը հանդիսացնել, ճիշդ ինչպէս այսօր Յունաստան՝ իւր քաղաքագէտներու միջոցաւ Արևելքի մէջ թագաւորութեան օրինակ մ'եղած է: Յովհաննա Օվիդիոսի հովուհիներուն չէր նմաներ որոնք երբ իրենց ծաղկազարդ ճակատը յստակ ջուրի մէջ տեսնէին կամ Աթոս լեռը իրենց երգերը լէր գոհ կ'ըլլային: Ընդհակառակն նէ՝ շատ անգամ գիրքերուն վրայ գծուած կ'լար, մտածելով որ իր տաղանդը Ատիկէի աս անկիւնը անձանօթ կ'մնայ: Ասանկ են նաև շատ նորատի միանձնուհիներ որոնք երբ ամեն գիշեր կ'հանուին հառաչելով կ'մտածեն որ իրենց սպիտակ և քնքուշ անդամները աննիւթական և անբռնայթ էրիկ մը միայն կ'տեսնէ: Ահա այս մգածմունքներով

պաշարուած մեր դիւցազնուհին աշնան իրիկուն մը Բիրէայի ամայի ծովեզերքը ման կ'գար, ուր իջած էր՝ Նիսէթաս եպիսկոպոսին իւր վերջին բարեք տալու որ Կ. Պօլիս կ'գառնար: Աս միջոցին օտարական նաւ մը տեսաւ որուն ճերմակ առագաստները իրեն հրեշտակէ թևեր երեցան որ կ'գար զինքը աս վտարանդի հողէն ազատելու: Նաւը Իգալական էր և Փորը կիյով՝ ճենովայի եպիսկոպոսին կ'վերաբերէր և եկած էր աս կողմերը Աստուծոյ համար խունկեր և իւր պաշտօնեաներուն համար զարդեր գնելու: Յովհաննա դուրս ելլող նաւաստիներուն հետ լատիներէն խօսեցաւ: Ասոնք պատմեցին թէ իրենց նաւը բեռը ամբողջացուցած ըլլալով՝ առաւօտուն պիտի մեկնէր Հոմ երթալու համար: Ըսին նաև թէ պատրաստ են զանի նաւը բնդուներու իրենց ողորմաբաշխին տեղ, որ ալեկոծութեան ատեն՝ երբ նաւուն խելը կայնած՝ հռոմէական կաթողիկոսներուն սովորութեան համեմատ, սուրբ հացի կտորներ նետելով ծովը խաղաղեցնել կ'ջանար, ծովը ինկած ու խղզուած էր:

Յովհաննա անոնց հետ ամեն կէտին համաձայնելով՝ Փրիւմանսի քովը գնաց: Երիտասարդ արեզան զանի՝ Միւնիքիայի նաւամատոյցին վրայ բացուող քարայրին մէջ կ'սպասէր, ուր բնթրիք մը և անկողին մը պատրաստուած էր:

Օդը խոնաւ էր, հովը կծու, ծովն ալ քարայրին տակ տխուր կ'մռնչէր:

Երիտասարդ բենեդիկտեանը կրակ վառեց, որու քով Յովհաննա նստաւ ալիքներէն թրջուած զգեստները չորցնելու համար: Մեր դիւցազնուհւոյն սիրտը թէպէտ շատոնց 'ի վեր իմաստակութեամբ և պշրասիրութեամբ կարծրացած էր, սակայն այս միջոցին մեծ յուզմունքի մէջ էր մտածելով որ այլ պիտի բաժնուի աս բարեկամէն որուն հետ տասնհինգ տարի ապրած և օր մ'ալ զատուած չէր: Բայց խեղճ արեղային այլանդակ բնաւորութիւնը՝ որ դեռ ան փժուն կարծիքը կ'տածէր թէ կիները պէտք են մէկ սիրահար մ'ունենալ, ինչպէս էչերը մէկ համեա և ժողովուրդներն ալ մէկ թագաւոր, իրեն փառասիրութեան մեծ խոչընդոտ պիտի ըլլար: Զեր

կրնար նաև իւր մեկնիլը իմացնել, աս ամայի տեղը անոր ար-  
ցունքներէն կամ բռնցի հարուածներէն վախելով: Ուստի մտա-  
ծեց որ աւելի աղէկ պիտի բլլար զանի բաղկացը մէջ քնացնել  
Հրէաստանի դահիճներուն պէս որոնք դատապարտեալներուն  
քնաբեր բնպելիք մը կ'տային խաչելէ առաջ: Պրիւմանսի գը-  
լուխը ծոնկերուն վրայ դրաւ և սկսաւ ձեռքերովը մազերը  
գգուել, շուրթերովն ալ ճակատը:

Աս բարեսիրտ երիտասարդը որ անչափ տանջուած, խա-  
բուած և ոտնակոխ եղած էր, մէկ վայրկենի մէջ մտաշաւ կը-  
րած բոլոր անհաւատարմութիւնները, տանջանքները և դառն  
ցաւերը: Յովհաննայի մատերուն հպումը իւր բոլոր վէրքերը  
գոցած էր, ինչպէս յեղափոխութենէ առաջ Պրանսայի թա-  
գաւորները ձեռքերնին դնելուն պէս իրենց հպատակներուն  
վէրքերը կ'բուժէին: \* Պրիւմանս՝ ուրախութենէն այլայլած,  
չէր գիտեր թէ աս անակնկալ փոփոխման համար ո՞ր սուրբին  
չնորհակալ բլլայ, վասն զի իր յուսահատութեան ատեն ա-  
մենուն ալ աղաչած էր: Շատոնց ՚ի վեր քունէ զրկուած բլ-  
լալուն՝ աս կակուղ բարձին վրայ քնացաւ ամեն սուրբերուն  
աղօթք և մամեր ուխտելով:

Հետեւեալ օրը՝ արշալոյսէն առաջ երբ բազուկները երկն-  
ցուց բարեկամուհին գրկելու համար՝ անկողնին յարդը ձեռ-  
քը անցաւ: Ահաբեկ՝ ոտք ելաւ, ձեռքերը կարկառեց խար-  
խափելով, ինչպէս Բօլիֆէմ'երը կուրցած՝ Ուրիսեսը կ'փնտռէր:

Բայց Յովհաննայի հետքը չէր տեսնուեր: Երկու երեք ան-  
գամ բլուրին կողերը վազեց, բայց ՚ի զո՛ւր: Անտան դէպ  
ի ծովեզերքը վազեց վարազի պէս և Ստենտօրի ձայնով «Յով-  
հաննա» կ'պուռար:

Միայն խոռոչաւոր ժայռերը աս ձայնին կ'պատասխանէին  
և իբր թէ վշտակից անոր ցաւերուն՝ ամեն անգամ որ փախս-  
տական պարմանուհին կ'կանչէր՝ իրենք ալ մէկտեղ կ'կանչէ-  
ին: Արեք՝ որ աս միջոցին կ'ծագէր, կարծես թէ կ'ուզէր ա-  
նոր խուղարկութեանց օգնել: Ծովեզերքը ամայի էր, բայց

\* Շատ պատմադիրեր պատմած են Պրանսայի թագաւորներու աս  
հրաշագործ զօրութիւնը:

նաւակ մը տեսաւ որ արագապէս Միւնիքիայի ջուրերուն վրայ  
կ'սահէր: Նաւակին ետևի կողմը Յովհաննա՝ երեսը կնգուզով  
ծածկած՝ ոտքի վրայ կեցած էր: Գուցէ փախտականը իւր  
սիրահարը տեսաւ որ ձեռքերը դէպ ՚ի իրեն կ'երկնցնէր և  
ծովը նետուելու շարժմանքներ կ'ընէր, բայց երեսը դարձուց  
և նաւավարներուն պատուիրեց որ արտօրնօք քաշեն թիակնե-  
րը: Քանիմը վայրկեան վերջը նաւակը նաւուն կողերուն վրայ  
քաշեցին, և առագաստներն ալ բացին: Պրիւմանս՝ ոգեսպառ  
և յուսահատ՝ տախտակի կտորի պէս ծովեզերքը ինկաւ:

Երբ ինքզինքին եկաւ իրեն գէշ երազի պէս երեցաւ: Մա-  
կայն ժամերը կ'անցնէին, արևը զգեստները կ'չորցնէր, բայց  
իւր վիշտը գեռ կ'տուէր: Վայրկեան մը մտածեց զան ծովուն  
մէջ ընկղմել, ինչպէս Սողոմոն իւր վիշտերը զինի մէջ կ'ըն-  
կղմէր: Բայց ջուրերը խորունկ չէին: Ասկէ զատ՝ գժօխքէն  
ալ կ'վախէր ուր պէտք էր երկար ատեն Յովհաննայի սպա-  
սել: Աչերը դէպ ՚ի վեր վերցուց ան կաթոզին անձերուն պէս  
որոնք ալ երկրի վրայ բան չեն յուսար: Բայց վերէն սրբու-  
հի մը չիջաւ որ իր շուրթերով զանի մխիթարէ ինչպէս Բա-  
գոս զԱրիանա մխիթարած էր: Նաև Պրիւմանս կնիկ չէր և  
իւր բնաւորութեամբը, սրբուհի Թաիսի կամ խարտիչագեղ  
Մատրէնէ գգուանքները անգամ պիտի մերժէր:

Քարայրը վերադարձաւ: Թէ ինչպէս անցուց ան գիշերը,  
ան անկողնոյն առջև ուր իւր սիրուհոյն հետքերը ապաւո-  
րուած էին, ան կրնայ միայն պատմել որ իւր սիրուհին կամ  
բոլոր հարստութիւնը խաղի մէջ կորուսած է: Իւր արցունք-  
ները կերակուրէ վերջը խմուած աղսէնմէ աւելի դառն է-  
ին: Ամբողջ տանուհինգ օր հոն կեցաւ և իւրովի կ'հարցնէր  
թէ ինչո՞ւ լոյսը տարաբաղդներուն տրուած է եւ կեանքն ալ  
անոնց՝ որոնց սիրտը դառն վիշտերով համակուած է: Յոր. Գ.)

Խեղճ Պրիւմանսին բանը բուսած էր եթէ իւր պաշտպան  
սուրբն Պօնիֆաս չփութար իրեն օգնութեան հասնելու: Քիչեր  
մը երբ իւր բոլոր արցունքները հատցնելէ վերջը կ'քնանար,  
սաքսոններու առաքեալը երկինքէն իջաւ, քնացողին կուրծ-  
քը դանակով բացաւ, նուիրական մատերը վէրքին մէջ խօ-



թեց և սիրաբ հանելով շուրի մէջ նետեց զոր առաջուց օրհնած էր: Այս՝ այրուելով ճերմկցած սիրաբ՝ շուրին մէջ դողաց ինչպէս ժայռածուկը կրակին վրայ: Երբ սիրաբ պաղեցաւ՝ սուրբը զան տեղը զետեղեց և վերքը գոցելէն վերջը գէպ ՚ի արքայութիւն սլացաւ: \*

Ինչի պատահած է, սիրելի ընթերցող, որ անտանելի հազով մը պառկիս, քունիդ մէջ դժուարաւ շունչ առնես, և առաւօտուն երբ արթննաս ինքզինքդ բժշկուած գտնես: Իեռ առողջանալդ չգիտնալով՝ մեքենայաբար բերանդ կ'բանաս անիծեալ հազին սովորական տուրքը վճարելու համար. բայց օրչափ կ'ուրախանաս կոկորդիդ խորը աս անտանելի գազանը չգտնելով:

Ասանկ ալ Փրիւմանս էրբ աչերը բացաւ պատրաստուեցաւ ապերախտ Յովհաննայի արտասուաց սովորական հարկը նուիրել: Առանց ինք յուսալու աչերը չորցած էին և քանի մ'օր ծոմ պահելէ վերջը բարեմիտ բենեղիկտեանը աւելի նախաճաշ ընելու ախորժակ կ'զգար քան թէ լալու:

Աս միջոցին՝ նորատի հովուհի մը կ'անցնէր, գլխին վրայ կաթի ամանով՝ ձեռքն ալ բոկեղներ (gimblettes սիմիթ) բրնձնած: Փրիւմանս զան կանչեց և ուրախ զուարթ ճաշեց: Երբ աս Ամարիլիսը պղնձէ գրամ մը ընդունելով՝ և արեղային ձեռքը պահներով հեռացաւ, իւր երգն արտոյտներուն երգերուն միացնելով այն ինչ առաւօտեան զով հովնալ զգեսները տակնուվրայ ընելով մինչև սրունքները կ'վերցնէր. Փրիւմանս՝ որ զանի աչքէ չէր կորսնցներ, առաջին անգամ զգաց թէ Յովհաննայէ զատ աշխարհիս մէջ ուրիշ կիներ ալ կան: Իւր բժշկութիւնը ալ կրնար գիւրաւ կատարուիլ: Ահա սուրբին հրաշագործ միջամտութեամբ իւր խօլ սէրէն ալ ազատուած էր, ուստի ալ իբրև գիւցագն մեր պատմութեան ա-

\*Սրբուհին Կատարինէ Յիսուսի աղաչեց որ սիրտը ամեն մեղքերէ մաքրէ. դիչեր մը երբ կ'քնանար թափանցիկ վանակնայ սիրտ մը ընդունեցաւ: Տաճիկներն ալ ասանկ բան մը կ'պատմեն Մէհմէտին համար: Երկու հրեշտակ քնացած ասեն սիրաբ բացին և ամեն ազտերը մաքրելէ վերջը դարձեալ տեղը դրին և գոցեցին:

նօգուտ է այսուհետև: Ընդհակառակն ան օրէն ՚ի վեր կրնար անիկա ընկերութեան օգտակար անգամ մ'ըլլալ, և եթէ մեր օրերը ապրէր որ և իցէ պատուաւոր ասպարէզի մէջ կրնար երևելի հանդիսանալ, թղթատան ցրուիչ ըլլալ, լրտես, երեսփոխան, օժիտի կամ պաշտօններու հետամուտ, վաճառականի մը տուժարները կամ կախուելիք չարագործի մը ոտքերը բռնել, բայց ան ատենները քիրիէ Էլէիսօնի տուրևառը ամենէ ընտիր և շահաւոր արուեստն էր: Փրիւմանս առաջուան պէս արեղայ մնաց և շատ աղէկ բրաւ:

Ես ալ Յովհաննայի ետեէն Հոռոմ չգացած պիտի խնդրեմ քիչ մը հանգստանալ: Մեծ պուէտները՝ Հոմերոս և Ժ. Մ. Կանեք՝ Իւնիթիէտի հեղինակը, քնացած ատեն շատ գեղեցիկ տաղեր գրած են: Բայց ես դիչերուան գղախս գլուխս չգըրած՝ միշտ գրիչս կ'սրբեմ: Միայն ընտրեալ մարդերուն ներելի են քնային դարձուածքները: Մենք խեղճ համբալիներ ենք և պէտք է որ միշտ արթուն մնանք Կապիտոլի սագերուն պէս որոնք Հռովմէացիները արթնցուցին:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՒԿ

Deū τῆς Θηλείας, πῆ προῦσεται, φρενος :  
Τί τίρμα τόλμης καὶ θράσους γενήσεται ;  
(Ե-ԵԻԻԻ, ՀԵԲԵ 955):

Մեծ դիւցազուններու խանձարուրը թանձր մուշով պատած է : Միայն բանահիւսը և վիպասանը կ'յանդգնի թափանցել իւր երևակայութենէ առաջնորդուած՝ — մոգական լապտեր — որուն լուսովը բիւր ուրուականներ կ'տեսնուին տփռոյն կամ զուարթ : Բայց հազիւ թէ դիւցազնը կ'մեծնայ, հազիւ թէ ծաղիկը պտուղի կ'փոխուի՝ պատմագիրներու խումբ մը կ'վազէ քննադատութեան բոցավառ և լուսաւոր ջահը՝ ի ձեռին : Առջահակիրները երևնալուն պէս ոսկեթև առասպելները կ'փախչին կ'երթան, աստղերու և քառասնամեայ կիններուն պէս որոնք աղօտ կամ սքոյեալ լոյսը միայն կ'սիրեն : Եւ եթէ ջահին բոցը շատ փայլուն է, ստէպ դիւցազնը անգամ քննադատներու աչքէն աներևոյթ կ'ըլլայ, ինչպէս Հոմերոս Ուոյֆի աչքէն և Յիսուս ալ Սթրաուսի :

Յովհաննա մինչև այսօր իւր բարձր պատուանդանին վրայ անսասան կեցած է առանց լոյսէն վախերու : Ան թեթև պսակները որոնցմով եօթննետասնամեայ պարմանուհւոյն խարտեալ մազերը կ'զարգարէինք՝ ալ չեն վայլեր աս գլխուն որ սուրբ Պետրոսի խոյրը պիտի հագնի : Պատմութեանս նիւթը փոխանակ ուղեղէս հանելու ստիպուած եմ արժանայարգ պատմագիրներէ առնելու : Եթէ ընթերցողը գիրքին աս մասը զուարճալի չգտնէ շնորհակալ կ'ըլլամ :

Հոռոմ՝ տիեզերքը կորուսելէ վերջը, զոր սուրին ծայրովը շահած էր, իւր զօրութիւնը հաստատելու կ'ջանար նախնի զէններու տեղ աս հին նուաճեալ քաղաքները հաւատոյ վարդապետութիւններ զրկելով : Լուրեայն ան ահագին սարդի ոստանը կ'հիւսէր, որուն մէջ հեռզհետէ բոլոր ազգերը պիտի բռնուէին : Այն սարդը՝ որ կ'հիւսէր ան ոստանը, երբ մեր դիւցազնուհին Հոռոմ հասաւ՝ Լեոն Գ. սուրբ բարն էր որ Սէրփ բարին յաջորդեր էր : Ան ատենուան ամեն բարբը կամայ ակամայ սուրբի տիտղոսը կ'ընդունէին : Բայց պէտք էնք բսել որ Լեոն Գ. ճակտին քրտինքովը շահած էր աս տիտղոսը : Իւր շնորհիւր Սէմբրոնիոս, Նիքոսթրաթ և Քասթորիւս երանաւէտ մարտիրոսներուն մարմինները գտնուած էին : Իւր հովուական գաւազանով՝ ինչպէս Պոսիդոն իւր եռաձանիով, ուժգին մրրիկ մը հանած և Սարակինոսներու տորմիղը ցիր ու ցան բրած էր : Վիթխարի վիշապ մը որ Սէնթ—Լիւսի եկեղեցւոյն մէջ հաստատած էր իր որջը՝ ազօթքովը սատկած էր, և իւր նզովքներովը շատ անգամ անհաւատներու բանակները ցրուած էր : Եւ ինչ որ ամեն բանէ աւելի հաճելի պիտի երևէր Աստուծոյ, իւր պալատին մէջ կնիկներու վանք մը հաստատած էր, ուր՝ Հոռոմի ամենէն գեղանի կոյսերը իւր հայրական հովանաւորութեան տակ կ'սրբանային : Սակայն բարբ կոյսերէն զատ Մուսաներն ալ կ'մշակէր : Մէկ ժամ Յովհաննայի հետ խօսակցելէ վերջը զմայլեցաւ անոր խելքին և զանի իսկոյն Սէն—Մարթէնի վարժատան աստուածաբանութեան դասատու անուանեց, ուր՝ ատեն մը Ս. Օդոստինոս անգամ դաս տուած էր : Յովհաննա՝ կամ լաւ ևս բսելու համար Հայր Յովհաննէս (վասն զի կանացի անունը ասկէ վերջը գէշ ազդեցութիւն բնելուն միայն առանձին եղած ատեննիս աս անունը պիտի տանք իրեն, ինչպէս Աղեքսանդր կայսրը գող անունը կ'տար իւր պաշտօնեաներուն), հայր Յովհաննէս՝ կ'բսենք, առաջին օրերը սկսաւ յաւիտենական քաղաքը ժուռ գալ : Ան ատենուան Հոռովի շէնքերը տեսնելու համար հինցուցած մուճակին գինը անգամ չէր արժեր : Լօրտ էլթինի տէրը՝ Շարլըմանքը՝ արևմտեան

տովորութեան համեմատ նախնի տաճարները քանդել տուած էր անոնց սիւներովը էքս—լա—Շարէլի մայր եկեղեցին զարդարելու համար: Իսկ Լեւոնի նախորդներուն օրով շինուած քրիստոնէայ եկեղեցիները Հռոմէական և արեւելեան արուեստի անճորնի և տձև խառնուրդ մ'էր: Ճարտարապետութեան այս ձևը ան ատենուան քրիստոնէութեան հաւատարիմ պատկերն էր, Հրէութեան և կռապաշտութեան այլանդակ տիպար մը, զոր վերջէն Գաղղիացի աստուածաբանները պիտի հայէին և զտէին, ինչպէս ասոնց սերունդն ալ Լաւրիօսի քրէական կղկղանքները զտեց:

Բայց ան ատեն ոչ ոք կ'մտածէր վարդապետել: Հինչաստուածները՝ գէթ անոնք որ քրիստոնէից արքայութեան սուրբերու փոխուած չէին, Ոլիմպոսէն աքսորուելով Դիօսք ապաստանած էին: Հոն՝ քրիստոնէից սատանային և Հրէից սաղանին հետ հանդարտ կ'ապրէին, աստուածաբաններէ ընդունուած էին, կախարդներու կ'հնազանդէին և երբեմն ալ քրիստոնէաներուն մարմինը կ'մտնէին, որոնք անատեն այսակիր կ'անուանուէին: Յովհաննայի Հռոմ հասած օրը եկեղեցիներուն շուրջը այլանդակ տօնախմբութիւն մը կ'կատարէին ի պատիւ հին շատուածներու: Գինոֆներու խումբեր կ'արբէին և սրբապիղծ երգեր երգելով՝ *Εσοε! Εσοε!* կ'պռուային խարազանի հարուածներով զիրար հալածելով:

Աստղիկի քրմուհիներ մերկ՝ վիզերնին յուռութուլունք և ոտքերնին ալ զանգիկներով կ'վազվառէին և քանի մը դանկի՝ պարողներուն գինի և համբոյր կ'ծախէին: Նոր մկրտուած օտարականները խիստ կ'գայթակղէին աս տեսարաններէն կարծելով թէ աս բաները քրիստոնէական ծէսեր են, ինչպէս առաջին անգամ Ամերիկեան խորհրդարանի խռովայոյց նիստի մը ներկայ գտնուողը կ'կարծէ թէ աքացի հարուածները Հանրապետական ազատութեան մասերն են:

Ահա ասանկ էին ան մարդերը զորս մեր դիւցազնուհին կ'յուսար Ատտիկէի աղով համեմել: Առաջին օրերը աշխատեցաւ քրիստոնէական վարդապետութեան գաղանիքները հաղորդել: Բայց իւր ունկնդիրները՝ Սուրբ Երրորդութեան վրայ

թեան վրայ եղած հակաճառերը բիւզանդեան երկայն մօրուքնէն աւելի անօգուտ կ'սեպէին: Անմահ Պղատոնի սերունդները գեռ Արեւելքի մէջ Աստուծոյ բնութեան վրայ կ'վիճէին, իսկ Կատոնի և Կինկինատոսի սերունդները աստուածաբանութիւնը ծանր արուեստ մը կ'սեպէին ուսկից քահանան իւր առօրեայ հացը կ'ճարէր, առանց հաշուելու պատիւները, տիտղոսները, ձիերը և ուրիշ ան ամեն բաները զորս շահելու համար գործունեայ և ճարար բլլալ պէտք է: Փոխանակ երկնից գաղանիքը խառնելու, իբր խելացի մարդեր՝ կ'զբաղէին Աստուծոյ թագաւորութիւնը ամեն կողմ տարածել և անոր անուամբ ամեն ազգերէ հարկ պահանջել: Յովհաննայ՝ որ օձի պէս դիւրաթեք և խորամանկ էր, իսկոյն իւր աշակերաններուն ճաշակը հասկցաւ: Ուստի մէկ զի ձգեց բիւզանդեան իտէաբանութիւնը և երկինքէն երկիր իջաւ, և բնազանցութեան ձիւնատաա կատարներէն հաւատոյ վարդապետութեան պարարտ և դալարագեղ հավիտները անցաւ: Հետեւալ օրը Բարին մարմնաւոր իշխանութեան ու Շարլեմանիկի նուէրին, հարկերու, տասանորդներու, սկեհուան զգեստներու և ուրիշ եկեղեցական բաներու վրայ խօսեցաւ, որոնցմով կնգուղաւորները կ'աշխատին արքայութեան սպանելու ցանկութիւնը աւելի քաղցրացնել, ինչպէս Բենեդիկտի հետամուտները նաժիշտներուն հետ կ'զուարճանային օր մ'ալ զինքը վայելելու յուսով: Աս խօսքերով մեր դիւցազնուհին ունկնդիրներուն սիրտը իրեն գրաւեց ինչպէս Որփէոս քնարին քաղցրութեամբը ժայռերը կ'ամոքէր: Աս բաղդատութիւնը տարազանց չէ, վասն զի թէպէտ անատենուան Իդալացիք քարի կտորներ չէին սակայն չըջակայ ազգերը զանոնք էլ կ'անուանէին և իրենց ժողովքներն ալ յաւանակի խումբեր: Եթէ քանի մը կըրթեալ մարդեր ալ կային՝ Իուլանտայէն, Սկոպիայէն և Կօլէրէն զրկուած էին աս Կիկերոնի խեղճ թռուներուն ինչպէս վերջէն Ալմանիայի հեյլենականներն ալ Յոյներուն: Ան ատենները Քլօտ, Տունկալ, Վինթիմիլ և ուրիշ շատ օտարական գիտուններ կամ մեռած էին կամ ծերացած: Միջին դարու խաւարին մէջ Իդալիան իւր դրացի ազգերը կ'դերազանցէր

տգիտութեամբը՝ ինչպէս Կալիփսո՝ իր կողմէն յաւերժահարսերը կ'գերազանցէր իւր վեհ հասակովը։ Քահանաներէն շատերը կարդալ չէին գիտեր։ Փոխանակ ամպիոնի վերէն բարիլուրը հաղորդելու հաւատացեալներուն՝ առակներ կ'պատմէին։ Աս տգէտները մտիկ ընողը պիտի հաւատար թէ Ս. Կոյսը իւր ճերմակ ձեռքերովը կախաղանէ կախուած չարագործներուն օտքերը կ'բռնէ եթէ իւր պատկերներուն առջև կենդանութեան ժամանակ մոմ վառած են։ Զերմեռանդ միանձնուհի մը մեղքէ ազատելու համար՝ անոր դէմքը և անկողինը կ'առնու և անոր տեղը ինք կ'ընդունի սիրահարը։ Անոնք որ զԱստուած ուրանալով Ս. Կուսին անձնուէր և հաւատարիմ մնացած են՝ գաղտնի կերպով արքայութիւն կ'մտնեն Ս. Կուսին միջոցաւ։ Աստուծոյ գթասիրտ Մայրը իւր Չերմեռանդ երկրպագուներուն մեղական բմպելիքներ կ'մատակարարէ որ իրենց սիրուհւոյն սէլը ստանան։ Աս տարօրինակ առասպելները այնչափ մեծ տպաւորութիւն ըրած էին Լոմպարներու, Փրանկերու, Պուրկօններու և ուրիշ բարբարոսներուն որ Հռոմէացի մականունն անոնց մէջ մեծ արհամարհական հայհոյանք մ'եղած էր, ինչպէս այսօր խաղի տուններուն մէջ Յոյն անունը գող կ'նշանակէ։

Մեր գիւցազնուհւոյն հանճարը տգիտութեան աս թանճր խաւարին մէջ փարոսի պէս կ'փայլէր։ Ունկնդիրներու խումբ մը՝ շատ անգամ ալ Լեոն բարբ անձամբ՝ Սէն—Մարթէնի վանքը կ'լեցուէր միշտ աս նոր Օգոստինոսը լսելու համար, որ փոխանակ հաւատոյ սոսկալի գաղտնիքներուն դպչելու միայն օգտակար և հաճելի բաներու վրայ կ'ճառէր, Բաբին առաքինութիւնները մինչև երկինք կ'բարձրացնէր, Բիւզանդացիները կ'ծաղրէր, Արիսթօթի տեսական յառաջադրութիւնները կ'մեկնէր կամ Սթափրիթի սերունդին թշուառութիւնը, անոնց սխտոր ուտելը, վէրքերը և ծոմերը կ'նկարագրէր։ Հայր Յովհանէսի դասախօսութիւնները և քարոզները Համպուրկի ան հիւրատուններուն կ'նմանէին, ուր ամեն ճաշակի համար զանազան կերակուրներ կ'գտնուին, ամեն հոտուտելիքի համար ծագիկներ և ամեն գոյնէ կիներ որոնք ամեն

լեզուները կ'խօսին և ամեն ախորժակները կ'գոհացնեն։ Մեր գիւցազնուհին շատ անգամ Թէօսիսէայէն կ'սկսէր և խոհարարի արտօնագիրերով կ'վերջացնէր։ Պէտք է ըսել նաև որ ան ատենները մարդկային ուղեղի արդիւնքները թուանշաններով որոշ տուիներու մէջ շարուած չէին ինչպէս կ'դնեն զեռունները Մուսէօնի շիշերու մէջ։ — Միայն սասուածաբանութիւնը ճանչցուած էր իբր գիտութիւն, որ Պրիարէյի պէս մարդկային միւս ամեն գիտութիւնները բազկացը մէջ սեղմած էր, բայց այս ամեն գիտութիւններն ալ Յովհաննայի խարտեաչ գլուխին մէջ ամփոփուած էին։

Յովհաննա երկու տարի դասախօսութիւն ըրաւ։ Իւր ճարտարախօսութիւնը իրեն մեծ համբաւ տուաւ, վասն զի Հռոմի մէջ ոչ ոք գիտէր թէ ինչ գանձեր պահուած են իւր կնգողին տակ\* Հոն ամեն դէմքերը ածիլուած էին և քահանաներուն միայն քիթը կ'տեսնուէր։ Կամոց կամոց սկսաւ փրանալ ու իրեն այնպէս երևցաւ թէ Թիրէզիասի պէս սեռը փոխած է։ Փրիւմանս շատոնց ի վեր մոռցուած էր և ամենեւին չէր արտորար յաջորդ մը գնել։ Աս մեր փառասէրին միտքը մեծ գիտաւորութիւններով պաշարուած էր։

Աբբայի վերարկու, Նուիրակի հողաթափ, վարդապետի խոյր և երբեմն բարի ոսկեգօծ սանդալներ, աստիճանք էին մեր խարտեաչ գիւցազնուհւոյն երազները։ Իսկ սիրահարները իբր խոհեմ կ'ին՝ տեսարանին խորը կ'դնէր՝ ինչպէս շաքարեղէնները կերակուրին վերջը կ'պահեն։ Յովհաննա միայն երազելով չէր անցներ իր օրերը, գիշեր ցորեկ անդուլ կ'աշխատէր, մեծերը շողքորթելով, դաս տալով, գրելով և ի պատիւ Յիսուսի ու Բարին յանգաւոր ոտանաւորներ շինելով, զորս ինք մտցուց Իդալիա։ Բժշկութեան ալ կ'զբաղէր և վայրահայնութիւն ըսածին նայելով մոգութիւն ալ կ'սիրէր։

Սակայն Լեոն ամենաերեւելի բարբ որ արդէն ծերացած և հարբօխէ ալ անգամայոյժ եղած էր, զոր սուրբ Պետրոսի նմանիլ ուզելով շահած էր օր մը ծովուն վրայ քաշելով՝ ուր ակամայ բաղնիք մ'առած, ոտկեղէն խոյրը և պատիւն ալ կորուսած էր, Լեոն բարբ կ'ըսենք զանի իւր քարտուղայ

\* Բոլոր այս պարագաները պատմական են։ Ծ. 2

անուանեց: Արդէն ան ատենէն 'ի վեր բարական պաշտօնին մէջ պաշտօնական անձերէն զատ ոչ միայն գաղտնի պաշտօնակալներ կային՝ այլ նաև ստորին աստիճանի ծառաներ, գաղտնի խոհարարներ, խափշիկներ, սենեկապաններ և սանդուղի աւրոյններ: Բոլոր ասոնք իրենց ծառայութիւնը կ'կատարէին սանդուղներու, նրբագաւթներու և գաղտնի սենեակներու մէջ ուր Քրիստոսի փոխանորդը շատ անգամ խորհրդաւոր պաշտօններ կ'կատարէր, բայց չգիտցուիր թէ առաքեալները ներկայ կ'գտնուէին հոն թէ ոչ: Երբ առաջին անգամ մեր գիւցաղնուհին Ն. Սրբութեան մասնաւոր սենեակները մտաւ, հազիւ կ'համարձակէր Արևելեան ան ընտիր գորգերուն վրայ կոխել, և կ'բաղձար Երեքթօնիւսի ձիերուն պէս սահիլ, որոնց համար կ'բսուի թէ ծաղիկներուն վրայ անգամ չէին կոխեր: Քրիստոնէութեան վեհապետը ոսկիէ ծիրանի գահի մը վրայ բազմած կ'սպասէր, արծաթէ կոնքերով, սոկեծոյլ սկահակներով, թանկագին դոհարներով զարդարուած բուրվառներով պատած: Մեր երիտասարդ Բենեդիկտեանք ան աստիճան վրդովեցաւ աս շքեղ տեղարանէն որ և թէ դիպուածով այն միջոցին թքնել ուզէր պիտի հարկադրուէր Ս. Հօր խորշումած երեսը թքնել, վաճն գի այս սենեկին մէջ անոր երեսէն տգեղ ուրիշ բան չկար: Հայր Յովհաննէս ծուր գալով՝ Լեոնի սօքերը պագաւ, Բաբբ զանի սիրով վերցուց և մինչև իրկուն հետը աշխատեցաւ: Եւ այն աստիճան գոհ եղաւ որ կրնար դիւրաւ պատարագը զանց ընել, բայց ոչ Հայր Յովհաննէսի ներկայութիւնը:

Լեոնի պաշտականները, սենեկապաններ, մատրուակ, դոնապան, գրագիր, արքանի և ուրիշ խելմը ծառաներ որոնք ինքզինքնուն պատիւ կ'համարէին հին գերիներուն Հռոմայեցի կայսերաց բրած ծառայութիւնը Ն. Սրբութեան քով կատարել՝ սկսան մրմուռաւ աս նորեկին դէմ, ինչպէս կ'ընէին Ռուսիոյ Կատարինէ կայսրուհւոյն թիկնապահները ամեն անգամ որ օտար մը կայսերական պառկելու սենեկին գուռը կը զարնէր:

Սակայն Հայր Յովհաննէս անանկ քաղցր և քաղաքավար ձե-

ւեր ունէր, իւր սնշահախնդրութիւնը ան աստիճան մեծ էր որ կամաց կամաց ամենուն սէրը գրաւեց:

Ամենքն ալ իրեն կ'դիմէին երբ Սրբազան Հօր աղերսագիր մը ունենային տալու: Հայր Յովհաննէս Հռոմի մէջ օտար էր, ոչ քեռորդի ունէր և ոչ սիրուհի, և Բաբին քով ունեցած բոլոր վարկը բարեկամներուն օգտին կ'գործածէր, որոնց թիւը և երախտագիտութիւնը օրէ օր կ'աւելնար, անանկ որ շատ չանցաւ մեծ կուսակցութեան մը պարագլուխը եղաւ: Այն ինչ Յովհաննէս միայն իւր բարեկամներուն հոգ կ'տանէր ինքզինքին համար բան մը չէր ուզեր, չէ թէ փառասիրութիւն չունենալուն այլ իւր գաղտնիքը միայն Ս. Կոյսին կը յայտնէր: Ամեն իրիկուն Տիեզերաց գթառատ թագուհւոյն կ'աղաչէր որ մէկ ժամ յառաջ ծեր բաբին առաքինութիւնները վարձատրէ զանի երանաւէտ կեանքի մը կանչելով:

Ասի ապերախտ և ամբարիշտ աղօթք մ'էր, բայց Հռոմ քրիստոնէաները այն աւաիճան բնտանեբար կ'վարուին Ս. Կոյսին հետ որ արձակ համարձակ անորմէ հարստութիւն, ձիեր, պաշտօն և պատիւ. թշնամիի, հարուստ ազգականի, կամ ուրիշ որ և է ծանրութիւն տուող էակի մը մահը և ուրիշ անանկ բաներ կ'խնդրեն որ պարզ միջնորդէմ'անգամ խնդրելը ամօթ է: Մարդասպանները իրենց դաշոյնը զոհին փորը չխոթած Ս. Կոյսին սեղանին վրայ կ'դնեն: Պոռնիկները երբ կ'մերկանան իրենց գօտին Անոր պաակերներուն առջև կ'կախեն, գինեմոյնները անոր կենացը շիշեր և յուրաններ կը պարպեն: Ուստի Յովհաննէս ալ իբր հանճարեղ կին իւր փառամոլ մաղթանքը Ս. Կոյսին ուղղելով այն տեղոյն սովորութեանց կ'հետեւէր: Եւ որովհետև Սատանային պաշտպանութիւնն ալ օգտակար կ'սեպուէր միջին դարուն՝ մեր գիւցաղնուհին կ'ջանար ան ատենուան սովորական հմայքներով զանի իրեն դաշնակից ընել: Շատ անգամ գիշերը վաղեմի տաճարի մը աւերակներուն մէջ քաշուելով առանձին կ'մնար: Հոն՝ դժոխքի ոգիները հրաւիրելով Լեոն բաբին մամէ պատկերին սիրաք սուր ասեղ մը կ'խոթէր, երբ կաթսաներու վրայ թունաւոր խոտեր կ'վառէին և լուսինն ալ իր ընթացքին մէջ

կանկ կ'առնուր : Գիշերային աստղը՝ ինչպէս արևը Յէտուին՝ հլու կերպով կ'հնօզանդէր կախարդաց հրաւէրներու :

Չեմ գիտեր թէ Ս. կոյսը թէ ոչ սատանան մերգիւցադնուհւոյն ուխտը կատարեց, վասն զի ինք անգամ պիտի չք կրնար գիտնալ թէ ասոնցմէ որո՞ւ պէտք էր շնորհակալ ըլլիլ : Աս միայն կ'ըսենք որ շատ չանցաւ Լեոն հիւանդացաւ : Քահանայապետին վիճակը երթալով կ'դէշնար, անանկ որ ալ բժիշկներուն դեղերը հատան և քահանաներուն ալ սուրբն Միքայէլի բրած աղօթքին տեսակները սպառեցան, որ Ասկղեպիոսի յաջորդն է : Ասոնցմէ վերջը եկան Հրէսյ կախարդները և արաբացի ասաղաբաշխերը, բայց ասոնք ալ 'ի զուր իրենց գիտութեան գաղտնիքը վատնեցին : Վարդապետներու ժողովք մը որոշեց իբր միակ դարման՝ քրիստոնէից վեհապետը Սուրբն Թիպուրս եկեղեցւոյն գետնադամբանը փոխադրել որպէս զի գուցէ երկնային երազով մը աս երանաւէտ սուրբը հիւանդութեան դեղը իմացնէ : Ան ատենուան քրիստոնեաները երբ ալ ճարերնին հատներ երկնային երազներու կ'դիմէին ինչպէս իրենց նախահայրերը Պիլթիայի պատգամներուն և այսօրուան հիւանդներն ալ խօսուն սեղաններու դեղագիրներուն կ'դիմեն : Եկեղեցին թէպէտ կախարդները և վհուկները կայրէր, բայց երազագիտութիւնը կ'ընդունէր և կ'հաստատէր՝ ինչպէս արգի բժիշկները մագնիսականութիւնը կ'ընդունին բայց անոր հեռեւորները կ'հալածեն :

Խեղճ բաբը անկողնէն հանելով սև դագաղի մը մէջ դըրին և չորս յաղթանգամ ու հռօժկու քահանաներ ստորերկրեայ եկեղեցին տարին, ուր խորանին առջև դրին բոցավառ ջահերու, յուսահատ բժիշկներու և քահանաներու մէջ տեղ : Աս քահանայապետը թէպէտ սուրբի տիտղոսը կ'կրէր բայց այնչափ մոլեռանդ չէր : Իւր կենացը մէջ զբաղած էր Հռոմք շէնցնել, գանձեր հաւքել, եկեղեցիէ աւելի բերդեր կանգնել, և իւր եկեղեցին աւելի Սարակինոսաց դէմ պաշտպանել քան թէ Սատանային դէմ : Երբէք հերետիկոս մ'այրած չէր, բայց շատ թշնամի բանակներ ցիրուցան բրած էր :

Ասով աւելի մեծ բտուելու արժանի էր քան թէ սուրբ,

ինչպէս Վոլթէր անգամ բառ է : Երբեմն ալ հրաշքներ կատարած էր չէ թէ իր հոգեւոր զօրութիւնը ցուցնելու այլ իր անպիտան հպատակները գոհ ընելու համար ինչպէս բրած էր Մովսէս Հրէից հաճելի ըլլալու համար : Բայց հիւանդութիւնը առիւծը նապաստակի կ'փոխէ և ամենէն սկեպտիկեանն ալ ջերմեռանդ քրիստոնէի\* : Դարուս ամենէ մեծ պուէտներէն մին՝ Պայրն՝ որուն ուղեղը երկու քլուկրամ կ'կշռէր, կ'խօստովանի թէ հիւանդ ըլլալով երբ առաջին անգամ արիւն առին՝ Մովսէսի հրաշքներուն հաւատաց, երկրորդին՝ Քրիստոսի մարմնաւորութեան, երրորդին՝ անարատ յղութեան և չորրորդ անգամուն՝ կ'ցաւէր որ հաւատալու ուրիշ բան չկար : Աս անկ ալ բարեմիտ Լեոն՝ որ գուցէ իւր դարուն ամենէ հանճարեղ մարդն էր, իւր բժշկութիւնը Սուրբ Թիպուրսէ կ'ըսպասէր :

Ամբողջ երեք օր բաբը անշարժ և ծոմ կեցաւ երկնային երազին գալտեան սպասելով : Բայց իւր դառն ցաւերը քուն անգամ չէին ձգեր ուր մնաց երազ : Երեք օր հոգեվար մընալէ վերջը աչերը գոցեց ուրիշ անգամ չբանալու համար :

Երբ աս երևելի հանգուցելոյն մարմինը իւղով և զինիով օծուած գերեզմանի սրգերուն իբրև խնջոյք նուիրուեցաւ, երբ դանդակները լռեցին և արցունքներն ալ չորցան, վարդապետները, կղերը, կայսեր դեսպանները, պատրիկեանները և բոլոր ժողովուրդը Սուրբ Պետրոսի հրապարակը հաւքուեցան նոր բարին ընտրութեան համար : Իններորդ դարուն Սրբազան Քահանայապետը քահանաներու մութ և գաղտնի ժողովքներով չէր ընտրուեր : Ան ատեն ո՞չ ժողովք կար և ոչ կարգինաշներ որոնք մութ սենեակներու մէջ փակուած ինքզինքնուն համար քուէ կ'տային, և միայն անօթութենէ ըստիպուած անձնատուր ըլլայ : Եկեղեցւոյ գլուխը հրապարակաւ կ'ընտրուէր : Ինին յորդառատ կ'վազէր, շատ անգամ ալ արիւնը, վասն զի կուսակցութիւնները աւելի քարերով և բիրերով կ'կուռէին քան թէ քսութիւններով :

\* Տրանսերէնի մէջ առիւծ (lion) բառը Լեոնի (Léon) անուան հետ բառախառը մ'երած է :

Ան ատենուան բաբբ ժողովուրդը կ'ներկայացնէր, ինչպէս ատենաբաններն ալ Հռոմայեցիները կ'ներկայացնէին, և ժողովուրդը մեծ դեր մ'ունէր իւր ներկայացուցիչին ընտրութեան մէջ: Իւր քուէները արձակ համարձակ ծախու կ'առնուէին խոստումներով, ոսկիով, գինիով և կիներով: Ասոնք մերկ հրապարակները կ'վազէին և քուէներու փոխարէն պաշտեր կը տային: Բարի մը մահը՝ իւր հպատակներուն համար ուրախաւիթ տօն մ'էր որոնք արգի սահմանադրական ազգերուն պէս միայն մէկ սեպհականութիւն ունէին, այն է քուէի իրաւունքը: Մէն մի նոր ընտրութեան ատեն բեռնակիրները անգամ իրաւունք ունէին ոսկեծամուկ պատրիկեանի մը ձեռքը սեղմել, ոսկեղէն գաւաթով Փալէրնի գինի խմել, և աւոր սիրուհւոյն անուշաբոյր կուրծքին վրայ հանգչել: Եթէ սուրբն Բրիւտանսի հաւատանք դժոխքին մէջ օրեր կան ուր յաւիտենական կրակը կ'մարի և դատապարտեալներուն տանջանքները կ'դադրին: Ահա ասանկ էին և ասանկ են ռամիկին համար ընտրութեան օրերը, ուր՝ միայն իրաւունք ունի յիշելու թէ հարուստը և աղքատը, հողէ անօթը և յախճապակեայ անօթը եղբայր են, միևնոյն խմորով շաղուած և միևնոյն բրուտէ շինուած:

Այն ինչ բոլոր Հռոմ հրապարակը կ'խոնէր՝ մեր գիւցաղ նուհին որ շատոնց ՚ի վեր ամեն բան պատրաստած էր իւր փառասէր խորհուրդներուն յաջող ելից համար, սուրբ Մարթէնի վանքին բարձր տանիսին վրայ ելած ու նափոյէօնի պէս ձեռքերը կուրծքին վրայ խաչաձև բռնած՝ ընտրութեան կռիւին դիպուածները կ'դիտէր մտայոյզ: Այն ատրին բարական խոյրին հետամուտներուն թիւը շատ էր: Բայց Յովհաննայի չորս հարիւր աշակերտները, իւր կարգին քահանաները, բոլոր ան պալատականները որոնք իրեն երախտապարտ էին, կիները՝ որոնք իւր գեղեցկութեան և պերճախօսութեան հիացած էին, և Լեոնի ծառաները ամենքն ալ Հայր Յովհաննէսի համար կ'աշխատէին: Բազմութեան ականջին կ'հռչակէին անոր գիտութիւնը, անշահասիրութիւնը և առաքինութիւնները: Աս ամեն ձիրքերէ զատ օտար էր նա, և ոչ աղ-

դական ունէր և ոչ հարէմ, և սուրբն Պետրոսի բոլոր հասոյթը աղքատներուն պիտի բաշխէր: Կուր չորս ժամ տեւեց: Այս միջոցին Յովհաննայի երեսը ամեն տեսակ գոյները առաւ Սիրայի ներկարարներու ձեռքերուն պէս: Այլ յայլմէ և սիրան ալ յուզուած՝ մարմնրիոնեայ նստարանի մը վրայ ինկած էր և աչերը գոց՝ իւր բաղդին կ'սպասէր, երբ յանկարծ՝ իւր բարեկամներուն զուարթ ձայներով՝ որոնք զինքը կ'ողջունէին Յովհաննէս Է. Բաբ անուամբ, սթափեցաւ աս ծանր թմբրութենէն: Նոր բաբը՝ որ ուրախութենէն Յսայիի նկարագրած վրանին պէս կ'երերար, ծիրանին ուսին վրայ նետեց և խաչանիչ սանդախներն ալ ոտքը անցուց:

Բայց աս սանդախները՝ կամ կանացի երկիւղէ՝ կամ շատ լայն բլլալնուն, վանքին սանդուղէն վար իջած ատեն երեք անգամ՝ օտքերէն ինկան: Գոն ան իսուան բազմութիւն մը և ոսկեթել համետով զարգարուած ջորի մը կ'սպասէր: Յովհաննայ ջորին հեծնելով Լաթրանի եկեղեցին գնաց: Հոն ոսկեղէն աթոռի մը վրայ նստելով եռակի խոյրը գլուխը դրաւ որ Հռոմի, տիեզերաց և երկնից վրայ ունեցած իշխանութեան նշանն է: Աս միջոցին դպիրները ընտրութեան արձանագրութիւնը կ'ընէին հասարակութեան կեցցէներու ձայնով, երբ՝ աս հանդիսին իբր թէ նոր փայլ մ'էս տալու համար Անկլիոյ թագաւորը Էթէիւլֆ՝ որ Հռոմ կը մտնէր իբր ուխտաւոր, ուզեց նոր Բաբին ոտքերը ամենէ առաջ պագնել և ասով իւր տէրութիւնը սուրբ Աթոռին աւատատու բրաւ: Վերջէն Կ. Պօլտոյ դեսպանները ներկայացան և Միքայէլ կայսեր կողմանէ թանկագին ընծաներ և Սիրակուսա քաղաքը նուիրեցին: Յովհաննայի երազը վերջապէս կ'կատարուէր. բարձր գահի մը վրայ նստած էր և բոլորտիքը խունկեր կ'ծխէին և աւոր նուշաբոյր գոլորշիքներ կ'հանէին: Սիրտը անպատում ուրախութեամբ լեցուած, զուարթ աչերը՝ առջևը անկիւր բազմութեան վրայ յածելով՝ «Լիօպէ, Լիօպէ, գոչեց, շնորհակալեմ»:

Մեծ արարողապետը զանի աս թմբրութենէ արթնցուց հրաւիրելով որ ցած աթոռի մը վրայ նստի որ ստէրք օրեր կ'անուանուէր: Սովորութիւնը ասանկ կ'պահանջէր որ նոր ըն-

տրուած Բարբ հոն նստի, որպէս զի ընտրութենէ վերջը յիշէ թէ իւր ամենէն յետին հպատակներուն պէս ինքն ալ իւր ստամոքսին պիտոյիցը ենթակայ է: Երբ Ն. Սրբազնութիւնը աս տարօրինակ աթոռը նստաւ՝ քահանաները Սաղմոսին աս կտորը կ'երգէին «Աղքատը փոշիէն կ'ըարձրացնէ»: Նոյն միջոցին յարգ և խծուծ կ'վառէին, յուցնելու համար թէ աս բոցին պէս փառքն ալ շուտով կ'մարի:

Հանդէսները, լուսավառութիւնները ութ օր տևեցին: Այն ինչ կոյր քահանաները իրենց շուրթերը մեր դիւցազնուհւոյն սանդաղներուն կ'չփէին, բնութիւնը աս սրբապղծութեան դէմ իբր թէ զայրացած իւր բարկութեան նշանները կ'ցուցնէր: Ընտրութեան հետևեալ օրը՝ թէպէտ ամառ՝ Հոռմի բոլոր փողոցները ձիւնով ծածկուեցան իբր թէ յաւիտենական քաղաքը սուգ ընել ուզելով՝ մեռելի սաւանի տեղ ձմեռուան տըժգոյն վերարկուով կ'ծածկուէր: Ասանկ աղետալից գէպքեր Փրանսայի և Ալմանիայի մէջ ալ պատահեցան:

Բոլոր կայսրութեան մէջ գետնաշարժեր եղան, Պրէսի մէջ արեան անձրև մը վազեց և Նօրմանտիայի մէջ ալ՝ սատկած մարախի կարկուտ տեղաց որոնց հոտէն ժոնտամահ յառաջ եկաւ: Վատիկանի մէջ ապաստանած բուերը և գիշերային թռչունները տխրագին ձայներ կ'հանէին՝ ինչպէս կ'ընէին Կապիտոլի սագերը երբ Կոլերը Հոռմը կ'սպառնային: Եւ եթէ ան ատենները խօսուն սեղանները հնարուած բլլային արգեօք որչափ պիտի բարկանային և որչափ ոտքերնին պիտի զարնէին: Բոլոր աս նշանները արժանահաւատ պատմագիրներ պատմած են, ես ալ պարտք համարեցի հոս կրկնել զանոնք սուրբ Պետրոսը արդարացնելու համար որ յանիրաւի բամբասուելու թէ մեծ հրաշքով մը իւր պղծուած աթոռը չաղատեց, բայց առաքեալը հարկ չհամարեց Յովհաննայի՝ ագուաներէ, ժանտամահէ, արիւնէ և գետնաշարժէ զատ ուրիշ նշաններ ցուցնել, վասն զի բոտ էքլէսիասթի Կնկան վրայ աղէկ նշան քկայ: Երբ այնչափ յուզմունքներէ վերջը Յովհաննա առանձին մնաց բարին պառկելու սենեկին մէջ, 'ի զուր աչխատեցաւ քնանալ ծիրանի անկոյնին վրայ որ 'ի պատիւ Մոր-

փէոսի շինուած խորանի մը կ'նմանէր: Տրամութիւնը, ուրախութիւնը և սուրճը միևնոյն ազդեցութիւնը ունին մեր արտևանանց վրայ: Մեծն Աղեքսանդր չեմ գիտեր որ պատերազմին նախընթաց գիշերը խորունկ քնացաւ, բայց յաղթութեան օրը չկրցաւ քնանալ: Մանաւանդ՝ ամենեկն իրաւունք չունինք քուն և երազ բաղձալ այն կարճ և հազուագիւտ ժամերուն մէջ ուր իրողութիւնը մեղի կ'ներկայի ամեն երազներէ աւելի քաղցր: Ո՞վ ցաւելով շիշեր այն քաղցր գիշերը զոր անցուցած է վիճակահանութեան մէջ հազարնոց սոմ: սակները, բանաստեղծի մրցանակը, կամ մտերիմ բարեկամի մը պաշտօնը կամ կինը շահելէ վերջը: Յովհաննա առաքելական անկոյնէն ելաւ և սկսաւ բոկոտն իւրնոր բնակարանը պտրտիլ: Ամեն կողմէ իր ճրագին լոյսը վանակնի, ոսկիի, բօրֆիւրի և քլաքարի մէջ կ'ցոյրար: Աս սենեակը ճիշդ գրութիւն կ'նմանէր զոր սուրբն Յովհաննէս բուն հրէայ բլլալուն՝ իւր հայրենակիցներուն ծայրայեղ ագահութիւնը քրքրելու համար շափիւ զանե: րով և մարդարիտներով լի նկարագրած է, և աւի ալ քրիստոնէութեան ծաւալման շատ նպաստած է, վասն զի ո՞վ հրէաներուն դրախտը նախնաց խեղճ էլիզէէն աւելի նախամեծար չէր սեպեր ուր գոհարներու և մարդարիտներու տեղ միայն մերտենիի անտառներ, յստակ վտակներ և փղուկրեայ դուռ մը կար: Յովհաննա սենեկին մէջ ժուռ կ'գար առանց կշտանալու պարունակուած գանձերուն նայելէ: Մերթ ձեռքովը մարգարիտներով բանուած բաժակները կ'կշռէր, մերթ Ս. Կոյսին արձանին վրայ գտնուած աղամանդները և գոհարները կ'համրէր, և ապշած, հիացած, ափիբերան կ'կենար արարական ժամահայրի մը մեքենաները և զարգերը նայելով: Անկողնին մօտը՝ սեղանի մը վրայ Ն. Սրբազնութեան համար թեթիւ կ'անուանեն, երկնային բմպելիք, որու ամեն մի կաթիլն համար գիտցողը մէն մի կաթիլ կ'տայ իւր արիւնէն: Եթէ աս միջոցին մեծ արարողապետը գալով զինքը հրաւիրէր որ ցած



աթուին վրայ նստի, կամ Յիշիփի ծառան բսեր թէ «Յիշէ՛ որ մարդ ես», երկուքին ալ պիտի պատասխանէր թէ յաւանակներ են: Աս ընդարձակ սենեակը Յովհաննայի մեծութեան շատ պզտիկ երևցաւ: Պատուհանը բանալով կռթնեցաւ և սկսաւ լուսնին լուսովը քնացած Հռոմը նկատել 'ի զոր պատմութեան մէջ իրեն բաղդատուելու արժանի դիւցազնուհի մը գտնելու աշխատելով:

Իբրաւ է որ իրմէ յառաջ շատ կիներ բանակներ յայթութեան տարած կամ գլուխնին թագ դրած են: Բայց ի՞նչ կ'արժեն ան դափնիները որոնք դիւրաւ կ'թողմին Բաբին իշխանութեան բաղդատմամբ, որ երկնատուր իրաւամբ թե հոգիներու վրայ կ'իշխէ և թէ մարմիններու, և իւր դաւազանին տակ երկիրը, երկինքը և դժոխքը կ'բռնէ: Ի՞նչ կ'արժեն Շամիրամ, Մօրկան, Օրլէանի օրիորդը և ուրիշ շատեր մեր Յովհաննայի քով: Մենք անգամ համեմատութեան բառ մը չենք գտներ:

Ամեն անգամ որ մահկանացու մը իւր նմանները որևիցէ ձիրքով մը կ'գերազանցէ անատեն անասունի կ'նմանի, օրինակի ազազաւ՝ եզէ կ'նմանի եթէ մեծ թագաւոր մ'եղած է, իշու՝ եթէ քաջութեամբ երևելի հանդիսացած է, աղուէսի՝ եթէ իբր քաջաքազէտ փայլած է, բայց չեմ գիտեր ինչանասունի կ'նմանի եթէ բար քլլայ: Առաւօտեան զով օդը և էշերու զուարթ որոնք իւր հպատակներուն առօրեայ բանջարեղէնները կ'կրէին, Յովհաննայի փառասեր մտածմունքները ընդմիջեցին: Պատուհանը գոցելով անկողին մտաւ: Հետեւեալ օրը ժամը տասին արթնցաւ բարական սովորութեան համեմատ ձեռքերը լուաց և փութաց կառավարութեան սանձը ձեռք առնուլ: Բանի մ'օրուան մէջ իշխելու արուեստը սորվեցաւ: Իւր ընտրութենէ հազիւ շաբաթ մ'անցած էր և ամեն մարդ կրնար անոր ճակատին վրայ կարդալ ինձմէ զատ ուրիշ Աստուած պիտի ջուներնաս: Իւր նախորդներէն և ոչ մին այնչափ քրիստոնէավայել խոնարհութիւն կ'ցուցներ երբ ոտքերը պագնէին: Իբրաւ է նաև որ իբրև կին՝ շատոնց 'ի վեր աս արարողութեան սովորած էր: Զարմանալի կերպով հո-

գեոր իշխանութիւնը մարմնաւորին հետ կ'համաձայնեցնէր, վասն զի Յիսուսի անուամբ հարկահանները կ'առնէին հարկերը, դահիճները գլուխները կ'կտրէին և Յովհաննա ալ կ'գրաւէր, կ'բանտարկէր և վերջապէս ինչոր կառավարելու արուեստին կ'վերաբերի բոլորն ալ կ'կատարէր Յիսուսի անուամբ:

Աս պարագաները կ'գրեմ չէ թէ զանի պախարակելու այլ իւր կացութեան դառն կարեւորութիւնները յայտնելու համար: Յովհաննա քրիստոնէավայել համբերութեամբ կ'հանդուրժէր աս բաներուն: Կիները՝ որոնք սիրոյ, անձնուիրութեան և գթասիրութեան և ամեն տեսակ քաղցր զգացումներու խառնուրդներ են, երբ պէտք քլլայ արեան մէջ անգամ կ'թաթխուին, իբր թէ անուշահոտ բաղնիք մը կ'առնուն: Վեստեան կոյսերը, կամ լաւ ևս բսելու համար հին Հռոմի միանձնուհիները շատ անգամ բթամասնին կ'իջեցնէին դահիճին ցուցնելու համար որ յաղթուած բմբիշը սպաննէ: Սրբուհին Իրէնա հազարաւոր մարդեր սպաննել տուած և իր զաւկին աչերը փորած է, Անկլիոյ էլիզապէթ և Ռուսիոյ Կատարինէ կայսրուհիները կացինի և քնուծի հետ կը խաղային իբր թէ իրենց հողմահարին հետ կ'խաղան: Իսկ բարձրը աս կերպ վարուելու համար իրաւունք մը կամ լաւ ևս բսելու համար երկնային հրամանի մը կ'հնազանդին: Օր մը սուրբ Պետրոս անօթիէր, քունը եկաւ և երազին մէջ տեսաւ մեծ սփռոց մը որուն վրայ ամեն տեսակ զեռուններ, չորքոտանի և երկոտանի անասուններ կային, նոյն միջոցին ձայն մ'ալ լսեց որ կ'բսէր. «Ոտք ե՛լ Պետրոս, մորթէ՛ եւ կե՛ր»:

Ահա՛ այս եղաւ բաբերու մարմնաւոր իշխանութեան առաջին յայտնութիւնը: Այն օրէն 'ի վեր կ'սպաննէին և կ'ուտէին և ամեն բաներնին ճշդիւ առաքեալին նմանելու համար՝ որուն առջև կ'դնէին հարուստները իրենց դաշտերուն բերքերը, բոլոր աշխարհքը կ'կողոպտէին աղքատներու բաշխելու պատուակաւ: Երբեմն ալ Միջին դարուն մարդ կը մեռցնէին բայց ասոր ալ պատճառը այն է որ ան ատեն յաւիտենական կենաց յոյսը այնչափ մեծ էր որ ամեն մարդ ներկայ կեանքը առ ոչինչ կ'գտնէր: Մարդերը այրելով ամենևին խղճի խայթ

մը չէին զգար, այն աստիճան վատահ էին որ առաքեալները եթէ դահիճ և փայտ ունենային անոնք ալ աս կերպ պիտի վարուէին:

Ամեն պատմագիրերու վկայութեան համեմատ Յովհաննա առջի օրերը ընտիր բար մ'եղաւ: Իւր նախորդներուն աւանդութիւնները ճշդիւ կ'կատարէր և անդադար կ'հիւսէր վարդապետական ուստայնը որ բարեպաշտ քրիստոնէից աշերը լոյսէն պահպանուելու սահմանուած էր: Անատենները ոչ ոք կ'մտածէր հասկնալու թէ աս բարական ուստայնը իրօք երկնային գմբէթն' է: Panem et circensesը զոր հին Հռոմայեցիները իրենց կայսրերէն կ'պահանջէին՝ սերունդնին ալ բարերէն կ'պահանջէր, աս տարբերութեամբ որ կրկէսի խաղերուն կրօնական հանդէսներ յաջորդած էին: Յովհաննա կամ լաւ ևս ըսելու համար Ն. Ս. Յովհաննէս Ը. բարը երիտասարդ, գեղեցիկը սիրող և միշտ մեծ երևնալու բաղձացող՝ կ'ջանար կրօնական արարողութիւնները աւելի շքեղ կերպիւ կատարելու: Գիշեր ցորեկ խունկը կ'բուրէր, մոմերը կ'վառէին և զանգակներու ձայնը ամբոխին կեցցէներուն կ'խառնուէր: Միայն հռոմայեցի տիկիները կ'տրտնջային նոր բարին գէմ որ կ'ուշանար կատարել ինչ որ իրաւունք ունէին յուսալու իր երիտասարդութենէ և գեղեցկութենէ: Սակայն կ'յուսային որ Նորին Սրբազնութիւնը պիտի փութայ ճանչել, իւր սխալմունքը ուղղել և աս մասին ալ իր նախորդներուն հետեիլ թէ սրտին և թէ սնտուկին բանալիները իրենց յանձնելով:

Գրեթէ երկու տարի տևեց Յովհաննայի փառասէր ընթացքը և անխոնջ աշխատութիւնը: Աս երկու տարուան միջոցին մէջ տասնչորս եպիսկոպոս ձեռնադրեց, հինգ եկեղեցի շինել տուաւ, Հաւատամքի նոր վարդապետութիւն մ'աւելցուց, պատկերամարտներու գէմ երեք գիրք գրեց, Լօթեր կայսեր մաղերը կտրեց և կայսրութիւնն ալ Լուիի տուաւ: Աս երեւելի գործերը և խելմը ասոր նման գործեր մեծ զարմացմամբ յիշատակուած են շատ ժամանակագիրերէ: Իսկ անոնք որ չեն ուզեր Յովհաննան իբրև բար ճանչել աս գործերը մերթ իր նախորդին կ'յատկացնեն, մերթ իւր յաջորդին, շատ

անգամ բարական պատմութենէ ալ կ'սրբեն: Ասանկ կ'ընէին նաև օրինականները Լուի ԺԸի թագաւորութեան համար երբ եղբայրը մեռաւ, առանց յիշելու թէ ինչ դափնիներով պսակուած է Նաբոլէօն և որչափ երկիրներ շահած է սուրովը: Եւ եթէ սուրբն Լուիի թոռները մինչև վերջը յաջող երթային, եթէ կարենային Գորսիքացիին բոլոր արձանները տապալել և անունը ամեն գիրքերէ սրբել, ինչպէս ըրին կաթողիքները Յովհաննայի համար, գուցէ ան հսկան դարեր անցնելով իւր առասպելական նախորդ հսկաններուն պէս բան մը պիտի ըլլար, որոնք լեռները լեռներու վրայ դիզեցին երկինք ելնելու համար: Հազար կամ երկու հազար տարի վերջը եթէ Յրանսան Յունաստանի պէս յիշատակներու երկիր մ'ըլլայ՝ գուցէ հետաքրքիր հնախօս մը պիտի ելլէր Նաբոլէօնի հետքերը փնտռելու համար, ինչպէս մենք Յովհաննայի հետքերը փնտռեցինք և իւր ընթերցողներուն պիտի պատմէր թէ պատմութեան մթին և մառախլապատ ատենները յանդուգն մարդ մը ապրած է, զոր ոմանք Նաբոլէօն կ'անուանէին, ոմանք ալ Պրօմէթէ, և յանդուգնած է թագաւորներու գաւազանը յափշտակել, ասոնք ալ զանի ամայի ժայռի մը վրայ գամած են աշխարհիս մէկ ծայրը ուր Հուտսօն\* անուամբ անյագ անգղ մը իւր աղիքը կ'կրծէր: Բայց դառնանք Յովհաննայի:

Մեծ մարդիկ լեռներու կ'նմանին, հեռուանց աչքի գեղեցիկ և շիտակ կ'երևին ամպերու քօղով պատած և իրենց գոյներովը՝ վաճառականներու ոսկիի գոյնով և թագաւորներու ծիրանիի գոյնով կ'երևին: Բայց երբ անոր կատարը կը հասնիս՝ չորս կողմէն փուշեր, տատակներ և ամենհի գազաններ կ'տեսնես որոնց՝ եթէ Ատտիկէի մէջ ըլլաս, պէտք է աւելցնել նաև աւազակները: Շատ չանցաւ ասանկ եղաւ նաև Յովհաննայի համար սուրբ Պետրոսի աթոռը: Գիշեր ցորեկ քարտուղարներով, պալատականներով, չորքորթներ

\* Հուտսօն Լօվ, Նաբոլէօնի բանտսպահը Ս. Հեղինէ կղզին:

րով և ուրիշ անյագ մուրացիկներով պատած՝ որոնք գահե-  
 րու շուրջը կ'պաշարեն ինչպէս ագռուները դիերու շուրջը :  
 Չանձրացաւ նա իր ուղքերը անոնց պագցնելէ, և սկսաւ ան  
 գեղեցիկ օրերը յիշել ուր սանդալներուն տեղ իր շուրթերը  
 կ'ներկայացնէր Փրիւմանտի հրակէզ համբոյրներուն : Փառա-  
 սիրութիւնը տգրուկի կ'նմանի, երբ կշտանայ կ'մեռնի :  
 Խուսկի հոտը ալ գարշահոտ կ'երևէր Յովհաննայի ինչպէս  
 լորամարգի հոտը խոհարարներուն : Շատ անգամ կ'յօրանջէր  
 սուրբ Պետրոսի խորանին առջև պատարագած՝ կամ Վատի-  
 կանի վերէն իւր օրհնութիւնը տուած ատեն :

Որչափ որ փառասիրութեան մուխերը կ'ցրուէին, նախնի  
 բաղձանքները վերստին կ'ծնէին սրտին մէջ : Ինչպէս կրակը  
 մոմը, ձանձրութիւնն ալ կանանց սիրտերը կ'կակղցնէ, և դա-  
 տարկ կենայը ու աղէկ կերուխումը միևնոյն ազդեցութիւնը  
 ունին կիրքերու վրայ՝ որչափ իւրը կրակին : Նախնի եգիպ-  
 տացիք փորձառութեամբ դիտէին աս բանը, ուստի իրենց  
 թագաւորներուն խիստ ազահութեամբ կ'տային հացը, միսը,  
 անկողինը մինչև անգամ քունի ժամերը, ինչպէս կ'ընեն այ-  
 սօր Անկլիացիք իրենց ձիերուն : Պետրոսի յաջորդները ուրիշ  
 տեսակ կեանք կ'վարէին, կարապի փետուրներու անկողինի  
 վրայ կ'պառկէին, կաքաւի բուրգեր և եղնիկի կոթողներ  
 կ'կլլէին և պահք օրերն ալ թեւաւոր ձուկեր կ'ուտէին այս-  
 ինքն բաղեր և սագեր, առանց հաշուելու ձուկի հաւկիթ-  
 ները, սատրէները, խեցգետինները, սունկերը և ուրիշ ասոնց  
 նման համադամ կերակուրներ, որոնք գրախտի այնչափ գով-  
 ուած խնձորներուն տեղը կ'ընեն և որոնք օտարներուն ք-  
 սածին նայելով կոյաղնդիր կ'պարունակէին և ոչ թէ կուտ :  
 Աս կերպ ապրելով մեր գիւղազնուհին սահմանադրական թա-  
 գաւորի մը տիպարը հանդիսացաւ որ Եպիկուրեան շաստուա-  
 ծի մը պէս իւր բարձր գահին վրայ պէտք է խորդայ, հպա-  
 տակներուն կունակը իւր պաշտօնեաներուն մկրատներուն յանձ-  
 նելով՝ ճիշդ ինչպէս որ Արարիչը՝ Մանիքեցոց քսածին նայե-  
 լով՝ աշխարհս սատանային ձեռքը յանձնած է :

Սակայն գործերը (Հռոմի գործերը իմացէք) օրէ օր եր-

թալով կ'գէշնային : Լեւանի դիզած գանձերը ձիքնթացներու,  
 թափորներու, օտճիկներու և խնջոյքներու փոխուած էին : Բա-  
 բական դրամարկիզը թէպէտ շատոնց 'ի վեր պարպուած էր,  
 բայց պաշտօնեաները չէին հեռանար Իրոպինէսի պէս որ գի-  
 նի խմելէ վերջը տակաւին մէջ մտած էր : Յովհաննէս Լ.  
 բարնալ գործերէ, հպատակներէ, կոնդակներէ և նզովքներէ  
 զուրած Օսթի քաշուած էր, որ ան ատեն բաբերու զուար-  
 ճութեան յատկացած քաղաքն էր : Հոն՝ անմօրուս քահանա-  
 ներով պատած խաղաղ օրեր կ'անցնէր : Միջերկրականի կա-  
 պոյտ ալիքներով և քնարներու ու նուագարաններու ներ-  
 գաշնակութիւններով օրորուած՝ որոնց խումբը միշտ Նորին  
 Սրբութեան ետեէն կ'երթար ինչպէս կառավարութեան թեր-  
 թակալը և հպատակներուն մտատանջութիւնները մեր գահ-  
 քնկէց թագաւորին (Յովն Ա.) ետեէն կ'երթային : Յովհաննա  
 աս միջոցին կենաց ճամբուն մէջ կ'գտնուէր ինչպէս Տանթէ  
 երբ անտառին առիւծին, վազրին և գայլին հանդիպեցաւ :  
 Նէ ալ ուրիշ գազաններու մօտիք կ'զգար որոնք կանանց՝  
 գայլերէ և առիւծներէ աւելի երկիւղ կ'ազդեն, այսինքն Ե-  
 րեսի փոթերը և ճերմակ մազերը : Իւր գեղը վերջին բարեք  
 կ'տար. սակայն թէպէտ արգիլեալ պտուղին շատ խածած էր  
 բայց ակռաները դեռ ճերմակ և անարատ էին, և ախորժակն  
 ալ թէպէտ բաւական ատենէ 'ի վեր իւր փառասիրութեանը  
 զոհուած էր՝ կ'սկսէր իւր պնդակազմ՝ կուրծքը յուզել :

Ամեն օր փառատոր սեղանի մը շուրջը կ'հաւքէր իւր բո-  
 լոր գեղեցիկ պալատականները, ազաղերի ատեն աս վեղա-  
 բաւոր Ատօնիսներու գասերը կ'ըջէր ինչպէս կ'ընէր Կատա-  
 րինէ Վեհափառ կայսրուհին իւր թիկնապահներուն : Ամեն  
 բանէ աւելի չէ թէ կ'վարանէր խնձորը որոն նուիրելու մասին  
 այլ կ'ուզէր վայելուչ կերպիւ նուիրել զայն : Երբ կ'մտածէր աս  
 գործին հետեւութիւնները ահուգողով ետ կ'քաշուէր, ինչ-  
 պէս սահմանադրական թագաւոր մը երբ ինք իր գլխուն բան  
 մ'ընելու կ'պատրաստուի, որ աս թագակիր Էնթիփիօններու  
 արգիլեալ պտուղն է : Շիտակը խօսելու համար Յովհաննա ոչ  
 աս սրբապղծութեան մեծութենէ կ'վախնար և ոչ երկնային

դատաստանին վրէժխնդրութենէ, որ մէկ վայրկենի տկարութիւնը երկնային բոցերով կ'պատժէ և միևնոյն կաթսային մէջ կ'եփէ թէ զան՝ որ իւր նմանին գէշութիւն ըրած է և թէ զան՝ որ ուրիշի մը հրճուանք և զուարճութիւն պատճառած է: Իբր հանճարեղ կին չէր հաւատար թէ Աստուած այնչափ զանազան բարիքներ դրած ըլլայ աշխարհիս վրայ որպէս զի մարդս զրկուի, ինչպէս անկիական սեղաններու վրայ խաղող կ'դնեն չուտուելու համար. բայց գայթակղութենէ, յընթե- նէ և վայրահաչ լեզուներէ կ'վախէր որոնք կանանց առաքինութեան երեք պահապաններն են: Ես վատահ եմ որ եթէ մարդիկ ջորիի պէս ամուլ և ձուկերու պէս ալ համր ըլլա- յին Եւայի աղջիկները անոնց ժամանակ պիտի չձգէին ոչ միայն հառաչելու այլ նաև շունչ առնելու:

Ամբողջ երկու ամիս Յովհաննա սատանային դէմ կռուեցաւ: Ամեն իրիկուն անկողնին վրայ հազնիի տերևներ կ'սփռէր, ինչ- պէս կ'ընէին Աթենուհիները Դեմետրէի տօնին: Քրքումի խաչուած ջուրը կ'խմէր Պիինիոսի խրատին հետեւելով, հազարի կոթերը կ'ուտէր սրբոյն Յովհաննու ծոմապահին պէս: Մէկ խօսքով միջին դարու ամեն գեղագիրերը կ'գործածէր իւր քառանամեայ սրտին մէջ վառուած արիւիները զսպելու հա- մար:

Դժբաղդաբար աս տեսակ բազմանքները կիրի կ'նմանին, որչափ ջուր թափեն մարելու այնչափ աւելի կ'վառի: Իւր մարմնային ցանկութեան վրայ տարած մէն մի յաղթանակին փոխանակ ուրախանալու Բրուտոսի պէս կ'լար երբ իւր զաւա- կը հայրենեաց զոհեց: Ասանկ յաղթանակ մ'եւս, եւ կորսուած եմ, կ'գոչէր Պիւռոս պատերազմի դաշտին վրայ ինկած զի- նուորները համբելով: Յովհաննա ալ այսպէս գոչեց երբ գի- չեր մ'անքուն անցնելէ վերջը զլիսէն երեք ճերմկցած մազ քաշեց:

Իւր յաղթուելուն տարակոյս չկար, ուստի անօգուտ սե- պեց կռիւը երկարել: Իւր ընտրութիւնը շատոնց 'ի վեր ըրած էր. սուրբն Լեոն չմեռած իրեն յանձնարարած էր իւր միակ գաւակը կամ լաւ ևս ըսելու համար իւր քեռորդին (վասն զի

ասանկ կ'անուանուին բարբրու զաւակները, մանաւանդ երբ բարերն ալ սուրբի անունը կ'կրեն): Ասի քոսնամեայ պատանի մ'էր Լաքօնիայի շան պէս խարտեաչ, և Յովհաննայի համար ալ աս կենդանուոյն երախտագիտութիւնը կ'ցուցնէր նա: Նո- րին Սրբազնութիւնն զանի իւր գաղտնի սենեկապանը անուա- նած էր, որ ան ատենները բարձր և նախանձելի պաշտօն մ'էր:

Բարական աս սերունդը Յլօրիւս կ'անուանուէր, պառկե- լու սենեակն ալ Յովհաննայի սենեկին կից էր, որպէս զի բա- բական զանգակին իսկոյն վաղելու պատրաստ ըլլայ:

Մեր դիւցազնուհին՝ հին Աթենացոց պէս ինչ որ մտա- ծէր անմիջապէս կ'գործագրէր: Բայց այս անգամ մեծ մտմը- տուքի մէջ էր և չէր գիտեր թէ ինչ կերպով աս երիտա- սարդին շուրթերուն՝ իւր սանդալներուն անդ ուրիշ բան ներ- կայացնէ, Շատ անգամ գիշերը անկողնէն կ'երնէր և բոկոտն յուշիկ Փրիւմանսի յաջորդութեան սահմանուած երիտասար- դին սենեակը կ'մտնէր: Հոն՝ մատերովը ճրագին լոյսը ծած- կած (ինչպէս լուսինը երբ Լաթմիւս հովիւին այցելութեան կ'երթար ամպերու վարագոյրի մը ետև կ'պահուէր) երկար ժամեր կանցնէր քնացող երիտասարդին նայելով: Գիշեր մը յանդգնեցաւ քնացողին ճակտին մօտեցնել իւր շուրթերը, բայց անոր արսևանունքին թեթև շարժմունքէն ահաբեկ խոյս տուաւ: Բարեմիտ Յլօրիւս հետեւեալ տաւալտ պատմեց թէ գիշերային տեսիլ մ'երեցած է ոսկեթել բանուած շապիկով մը պատած: Բայց ան ատենները տեսիլները, երազները և ուրուականները հասարակ բաներ էին ինչպէս այսօր խօսուն սեղաններու մէջ բնակող դիւցազանց սգիները, ուստի երի- տասարդ սենեկապանին պատմութիւնը փոխանակ զարմանք պատճառելու յօրանջելու տեղի տուած էր: Սակայն Յլօրիւս քաջ համոզուած էր որ իւր ուրուականը հասարակ ոգի մը չէ: Հետեւեալ գիշերը սաւաններով փաթթուած բոլոր ան- դամներովը կ'գողար և չէր կրնար աչերը փակել: Պարտին մէջ խոր լուսութիւն մը կ'տիրէր, զոր միայն բուերը և ժամա- հարերը կ'ընդմիջէին, երբ յանկարծ՝ գիշերային թռչունի մը հանած թեթև ձայնին կամ առաջին անգամ սիրահարութեան

ժամադրեալ տեղ մը գացող պարմանուհիի քայլերուն ազմուկին պէս թեթև աղմուկ մը լուսեցաւ նրբագաւթին մէջ։ Մենեկին դուռը յուշիկ բացուեցաւ, կարծես թէ ոգիի մը շունչովը կ'մղուէր, և ուրուականն ալ մերկ ոտքերուն մատերուն վրայ կոխելով դէպ 'ի անկողինը յառաջացաւ։ Փլորիւսի շապիկը Մթիքսի ջուրերէն աւելի պառք քրտինքով թրջուեցաւ (Արքատիայի գետին համար կ'ըսեմ և ո՛չ թէ Դժոխքի գետին՝ որուն ջուրերը կ'եռային)։ Մութը իւր սարսափը կ'աւելցնէր, վասն զի ուրուականը փոսփորական չէր ինչպէս կ'ըլլան ընդհանրապէս միւս ուրուականները և ո՛չ ալ ձեռքը լապտեր բռնած էր։

Կրակարանին հանած աղօտ լուսովը հազիւ կրնար ամպի պէս ձերմակ և անորոշ բան մը նշմարել որ յուշիկ և սպառնալից դէպ 'ի անկողին կ'յառաջանար։

Աս ամպը, աս ուրուականը, աս ոգին, մէկ խօսքով Յովհաննան վերջապէս երիտասարդին գլխին քով կանկ առաւ և անոր անշարժութենէն քաջալերուած սկսաւ շուրթերովը լիզել ան արգիլեալ պտուղը որուն չէր կրնար դեռ ակոսները դպցնել։ Աս տաք հպումը երիտասարդ սենեկապանին ցուրտ սարսուռը վարատեց։ Իսկոյն ոտք ելաւ անկողինին մէջ կանգնեցաւ և ձեռքերը երկնցուց ան ուրուականը բռնելու համար որ հազիւ ժամանակ ունեցաւ պրծիլ շապիկէն կտոր մը և գլուխէն հինգ թել մազ ձգելով։ Բայց Փլորիւս չէր կրնար ասանկ թեթև աւարով մը գոհ ըլլալ։ Արիւնը կ'եռար։ Սկսաւ ուրուականը հալածել որ արտորնօք կ'փախչէր։ Երկու երեք անգամ աս կերպով սենեկին մէջ չըջեցան, մինչև որ ուրուականին ոտքերը շապիկին կամ պատուած սաւանին ծալքերուն մէջ փաթթուելով՝ բաց պտուտահանի մը տակ գորգին վրայ ինկաւ։

Փլորիւս դարձեալ ձեռքերը երկնցուց, բայց փոխանակ ոսկորներ, որդեր և փտած բաներ բռնելու, ձեռքը սպիտակ և քնքուշ մարթ մ'անցաւ որ կ'երևէր թէ կենդանի սիրտի յը պատեանի տեղ կ'ծառայէր և աս սիրտն ալ ուժգին կը բազխէր։ Արդէն միւս ձեռքն ալ կ'երկնցնէր երբ յանկարծ

լուսինը ամպերուն ետեէն ելնելով՝ իւր նշոյլներով ն. Ս. Յովհաննէս Ը. բաբին երեսը և մերկ սախնքը լուսաւորեց։

Հոս, սիրելի ընթերցող, կրնայի արբա Գասթիլէ, վերապատուելի Բուլչիյէ, պատկանելի Ռապըլէյէ և ուրիշ որ և է եկեղեցականէ մը բան մը փոխ առնուլ պատմութեանս քիչ մը համ տարու համար որ կամայ կամայ կ'սկսի Աւետարանի թուղենիէն աւելի չոր ըլլալ։ Բայց որովհետև ոչ աստուածաբան եմ, ոչ քահանայ և ոչ իսկ օարկաւագ իրաւունք չունիմ ո՛չ ձեռքերս աղտեղել և ոչ ականջներս։ Աս միջոցին Տօն Ժուանի հեղինակին պէս նեղի մէջ եմ, որուն դիւցազնին ձեռքը երկար ատեն խարխափելէ վերջը իւր երրորդ կամ չորրորդ դիւցազնուհւոյն սախնքին վրայ հանգչեցաւ ինչպէս Տապանը Արարատ լեռան վրայ։ Պայրն չգիտնալով թէ ինչ վայելուչ կերպիւ պատմէ հետևութիւնը՝ ձգեց իւր քերթուածը և բանահիւսութիւնը և յուսահատութենէն մարդատեսաց և հելլենասէր ըլլալով վաղեց գնաց Միսօլունկիի տըղմուտ ճահիճներուն մէջ թաղուելու։ Բայց ես որ ճշգրիտ պատմութիւն մը կ'գրեմ, ստիպուած եմ կամայ ակամայ խոստովանիլ որ գործերը քանի մը բացատրութիւններէ վերջը ան աստիճան երկնցան Փլորիւսի և Յովհաննայի մէջ տեղ, որ Ս. Կոյսին այտերը՝ զոր մուցած էին ծածկել, ամօթէն կաս կարմիր եղան, Սուրբ Պետրոսի այտերը կապարագունի փոխուեցան, խաչելութիւնը ինկաւ և կտորեցաւ և Յովհաննէս Ը. բաբին պահապան հրեշտակը՝ որ դեռ չէր գիտեր թէ երկնից բանալիները կրողը կին է, թևերովը երեսը ծածկած երկինք սլացաւ։ Եթէ աս պղծութիւնը կատարուած ատեն ցուրեկ ըլլար անշուշտ արևն ալ պիտի խաւարէր, ինչպէս Կեսարի սպաննուած օրը, Օգոստինոսի մեռած ատեն և Յիսուսի խաչուած օրը։

Բայց որովհետև գիշեր էր, Բաբուհւոյն արժանահաւատ պատմագիրերը միայն կ'ըսեն թէ Լուսինը արեան գոյն մ'առնելով ամպերու կոյտի մ'ետև պահուեցաւ։ Ուրիշ պատմագիրերու բօածին նայելով աս հրաշքը մինչև հետևեալ օրը տեսց և յաւիտենական քաղաքին բնակիչները 'ի զուր ցո-

րեկուան փայլուն աստեղ սպասեցին : Ուստի աս գիշերը եւ  
 աակի էր Արամաղղին Հերակլէսը ծնած գիշերուան պէս : Չենք  
 կրնար ըսել թէ ան գիշերը Յովհաննայի երկար երեցաւ, վասն  
 զի ինչպէս կ'ըսէ Սողոմոն «Դժոխք, կրակ եւ կնկան սէրը եր-  
 բէք ջնն ըսեր բաւ է :» Աս եռակի գիշերին հետեւալ օրը  
 երբ բարձր իւր պալատականներուն երեցաւ, երեսը ուրախու-  
 թենէ կ'ցոլար, ձեռքերը և շուրթերը աղօթք, շնորհք և  
 օրհնութիւն կ'սփռէին և բարական աս ուրախութեան նշոյլը  
 պալատականներուն ճակտին վրայ ալ արտագրուած էր որոնք  
 զուարթօրէն գլուխնին վեր կ'վերցնէին, երկար երաշտութենէ  
 վերջը առատ անձևով թրջուած հասկերու պէս :

Քրիւտոնէութեան պարագլուխը այն օրը չորս եպիսկոպո-  
 սական թեմեր բաշխեց, տասնըվեց սարկաւազ քահանայ ձեռ-  
 նադրեց, տօնացուցին մէջ երկու սուրբ աւելցուց, կախաղա-  
 նէն հինգ շարագործ և խարոյկէ ալ քսան հերետիկոս աղա-  
 տեց և ինքզինքը խիստ երջանիկ պիտի համարէր եթէ Պրիա-  
 ըէյի հարիւր ձեռքը ունենար աւելի շնորհքներ բաշխելու  
 համար :

Նորին Սրբութիւնն վերջէն եկեղեցի գնաց ուր Անտիշիզ  
 իշխանին դեսպանները բնդունեցաւ որ Սարակինոսաց դէմ  
 օգնութիւն կ'հայցէր : Յովհաննա բոլոր աս բաները մեքենա-  
 յաբար կ'կատարէր, իսկ աչքովք բազմութեան մէջ Փլորիւսը  
 փնտուելով և խելքք միտքն ալ իրանկողնին բոլորաիքը կ'յա-  
 ծէր ինչպէս մեղուն ծաղիկին շուրջը և այն օրը շատ անգամ  
 Մարգարէ — թագաւորին պէս մրմնջեց. «Ո՞վ ինծի աղաւնիի պէս  
 թեւեր պիտի տայ, որ դէպ 'ի բեզ սաւառնիմ եւ կուրծքիդ  
 վրայ հանգքիմ :»

Երկու ամիս անցած էր և Յովհաննա կարապի պէս քաղցր  
 հրճուանքներու լճակի մը մէջ կ'լողար : Իր նոր սիրահարը  
 զինքը կ'պաշտէր թէպէտ քառասունի հրուանգանք անցած  
 էր : Բարեբաղդաբար Փլորիւս ան տարիքը ունէր ուր փուշերն  
 անգամ անուշ հոտ կ'բուրեն, ամեն կիներն ալ գեղանի կ'ե-  
 րկն և մեր սիրտը ու շուրթերը աճուրդի կ'հանենք մեզի  
 բացուած ամեն թևերուն մէջ նետուելու պատրաստ, ինչպէս

Դանիէլ Առիւծներու փոսը, և անպատի Արարացիին պէս չենք  
 մտածեր թէ վտակը յստակ է թէ աղմուտ : Մեր դիւաղնու-  
 հին թէպէտ քառասնամեայ բայց շատ գեղեցիկ էր : Ակաւ-  
 ները մազերէն աւելի ճերմակ էին, և պատանեկութեան ա-  
 զուամաղին և անոյշ հոտին տեղ նէ քնքուշ և լեցուն մարմին  
 ու վէս հասակ մ'ունէր որ անմօրուս երխասարգներուն շատ  
 քաղցր է, որոնք իրենց սիրտին սանձը կ'ուզեն քաջ և փար-  
 ձառու ձեռքերու յանձնել :

Կան քննադատներ (ուղղափառ կամ հերետիկոս հոգ չէ)  
 որոնք Ոգիականը Իլիականէն դեր 'ի վեր կ'դասեն, պատ-  
 կերհաններ ալ կան որոնք աւերակները նոր չէնքերէն աւե-  
 լի նախամեծար կ'սեպեն, որկրամոլներ ալ կան որոնք փասիա-  
 նով խառն եփուած կաքաները կ'սիրեն : Ասանկ ալ եթէ  
 Սողոմոնի աշակերտները ընենք, միայն հասուն կիները կրնան  
 արուեստիւ համեմել արդիւեալ պտուղը և ծառին տանող  
 ճամբան ալ ծաղիկներ սիւսել, ինչպէս Յիսուսեանները ար-  
 քայութեան ճամբան : Բեթրարք ծերացած ատեն պառաւ կին  
 մը կ'երազէր և 'ի զուր պարտէզները ու անտառները կ'թա-  
 փառէր ան երեսակայական ցնորքը իրացնելու համար զոր կ'ա-  
 նուաներ *Frutot virile su giovenil fiore*, երխասարդ ծաղիկ տակ  
 առնական պտուղ : Բայց Փլորիւս դեռ ճերմակ ճնճղուկներ  
 երազելու ատեն չունէր, և իւր քառասնամեայ Յովհաննան  
 քսանամեայ երկու աղջիկի հետ չէր փոխեր :

Ամառը արդէն անցած էր և Սրբազան հայրը չէր փութար  
 իւր աթոռը վերագառնալու :

Տարուան վերջին տերևները ծառերուն տակ կ'գիզուէին,  
 ծովը փոխանակ մրմնջելու՝ կ'մռնչէր և զայլերը լեռներէն  
 կ'իջնէին : Բայց մեր երկու տարփածունքը տատրակի պէս  
 կ'մնջէին իբր թէ ամառուան մէջ են : Շատ փիլիսոփաներ խել-  
 քերնին միտքերնին ճաթեցուցած են հասկնալու համար թէ  
 մարդս ինչով անասունէն կ'տարբերի : Հին եբրայեցիները կը  
 պնդէին թէ աս երկուքին մէջ տեղը ամեննին տարբերութիւն  
 չկայ, քրիստոնեաները կ'հաստատեն թէ անմահ հոգի մ'ու-  
 նի, փիլիսոփաները կ'ըսեն թէ խոհուն էակ մ'է, և Արիստոթ

ալ կ'ըսէ թէ միւս անասուններէն աւելի կ'փոնգտայ: Ինծի կ'երևի թէ ամենէն աւելի Սոկրատ աղէկ մեկնած է բսելով թէ մարդս ամեն եղանակի մէջ իր ուղածը կրնալով բնել անասունները կ'գերազանցէ, քանի որ անասունները գարնան մէջ կրնան բնել ուղածին: Արամազդ՝ իւր ամուսնական չափազանց պահանջումները արդարացնելու համար յանցանքը գարնան վրայ կ'նետեր և ամեն անգամ որ ուզէր Հերայի հետ խօսակցիլ երկրի կ'հրամայէր որ ծաղիկներով ծածկուի: Մեր դիւցազնուհին ալ չկրնալով միևնոյն հրաշքը կատարել գարնանային պայծառ արևուն տեղ ջահեր և փայտեր կ'գործածէր, ծաղիկներու անուշաբոյր հոտերու տեղ հալուէ և կինամոն, և թուշուններու քաղցր ճուղիւնի տեղ սրինգներու և երգեցիկներու ներդաշնակութիւնները:

Խաղերը, խնջոյքները, կապիկները, միմաները, խեղկատակները և վերջպէս միջին դարու սովորական ամեն տեսակ զբօսանքները անբնդհատ կ'շարունակուէին բաբական պաշտին մէջ, և ժամանակագիրներու բսածին նայելով՝ բազոսեան երգեր և պարոզներու ոստիւններ կ'լուէին ստէպ:

Քահանայապետը առաւօտեան ժամերգութեանց ներկայ չէր գտնուեր Սողոմոնի աս պատուէրը կատարելու համար. «Անօգուտ է արեւէն յառաջ արթննալ», իսկ աղօթքները, պատարագները և պաշտօնները նորին Սրբութիւնն Աւետարանի պատուէրին համեմատ կարգադրած էր, որ քրիստոնեաներու կ'արդիլէ շատախօսութիւնը: Շատ անգամ երբ երջանիկ գիշեր մը անցնելէ վերջը իւր սիրելոյն գիրկէն կ'բաժնուէր, կ'պատահէր նաև որ ինչպէս Հաւատամքը փոխած էր Հայր մերն ալ կ'փոխէր, փոխանակ բսելու Տուր մեզ զհաց մեր հանապազօրեայ՝ Տուր մեզ զՓլօրիւնն հանապազօրեայ բսելով:

Պարսիկ թագաւոր մը՝ Կիւրոս կամ Կամպիս, Քսերքսէս, կամ Խոսրով՝ ճիշդ չեմ յիշեր, առատ վարձատրութիւն մը կ'խոստանար նոր և անլուր զբօսանք մը հնարողին: Ես Ագամի անկմանէն մինչև այսօր եղած զբօսանքներէն գոհ կ'ըլլամ բայց դժբաղդութիւնը սա է որ անոնցմէ և ոչ մին երկար կ'աւել: Մեր ծարաւը չմարած հեշտութեան գաւաթը մեր

ձեռքերէն կ'սահի կ'իյնայ, կամ երկնային նեկտարը քացախի կ'փոխուի, մենք ալ զզուանքով և գարշելով երես կ'գործենք: Մեր Յովհաննան՝ առագաստները բացած զուարճութեան ընդարձակ ծովուն մէջ կ'նաւէր երբ իւր նաւակը յանկարծ վտանգաւոր ժայռի մը զարնուեցաւ որուն վախը շատոնց 'ի վեր մտքէն ելած էր: Փրիւմանսի և հակառակորդներուն հետ տաննահինգ տարի անպատիժ մտերմաբար ապրելէ վերջը ալ կ'յուսար թէ արձակ համարձակ կրնայ արդիւ լեալ պատուով յղիանալ առանց փորը ուռելու: Եւ որովհետև երկար տտենէ 'ի վեր Ս. Գիրքը չէր թղթատեր՝ մտացած էր թէ Ս. Գրոց բոլոր գիւցազնուհիները, Սառա, Ռէբէկա, Ռաքէլ և ուրիշ շատեր իրենց պառաւցած ատեն յղի դրացած և նահապետներ ու մարգարէներ ծնած են, \* որչափ մեծ եղաւ իւր զարմանքը երբ Արիւթօտի չարբող Գիրքին մէջ գրուած նշանները իրեն իմացուցին ինչպէս հրեշտակը՝ Սամսոնի մօրը՝ թէ Աստուած իւր աղիքը օրհնած է: Իսրայէլի աղջիկը զուկին առաջին սարսուելուն ուրախութենէ խայտայ, իսկ ընդհակառակն Յովհաննա անանկ սաստիկ դողաց որ բաժակը ձեռքէն ինկաւ: Հրախրեալները թափուած գիւնին աղէկ նշան սեպեցին, բայց նէ՛ վաղեց սեննակը մտաւ իւր դժբաղդութիւնը լալով: Պալաւին մէջ ամեն աչերը գոց էին, բայց Յովհաննա դեռ արթուն էր գլուխը ձեռքերուն կոթնած՝ ճիշդ Ս. Պետրոսի պէս Գրիստոսը ուրացած միջոցին: Ի զուր ճար մը կ'մտածէր աս մտալուտ վտանգէն պրծելու: Երբեմն կ'մտածէր ձգել Հոռմը և արքայութեան բանալիները ու Փլօրիւսի հետ հեռաւոր և անձանօթ տեղ մ'երթալ պահուիլ: Երբեմն ալ կ'մտածէր այսահալածներու կամ գեղերու միջոցաւ աղիքներուն աս անտանելի հիւրը վռնտել: Գժբաղդաբար իւր մէն մի խորհուրդը փուշերով և վտանգներով պատած էր, վասն զի Յովհաննա կ'բաղձար թէ առա-

\* Ս. Գրոց մէջ դիւցազնուհիները և մարգարէները սովորաբար ծեր ծնողքէ կ'ծնին, որպէս զի չկարծուի թէ հեշտ միտ որութեան պտուղներ են, այլ Աստուծոյ պարգևներ, (Սթրաուս, Եր Կեանք Յիսասի):

քելական ամբողջ չկորսնցնել և թէ կեանքը, ուստի 'ի զուր  
աս անել ճամբուն ելը մը գտնելու կ'աշխատէր: Գլուխը ծանր  
էր, ականջները կ'ընդախնէին և աչերուն առջևէն կ'անցնէին  
ու կ'դառնային ան մթազին ամպերը զորս Սթափիրիթ յըռ-  
թեան բուն նշանները կ'համարէր, երբ թեւերու աղմուկ մը  
հնչեց ականջին. Յովհաննա գլուխը վերցուց: Առջևը ճերմակ  
թեւերով երիտասարդ մը կեցած էր: Զգեստը փայլուն էր և  
ճակտին վրայ լուսաւոր պսակ մը կար: Այլ ձեռքով բոցավառ  
ջահ մը բռնած էր ձախ ձեռքով ալ բաժակ մը: Յովհաննա՝  
որ միայն պատկերներու մէջ տեսած էր հրեշտակները, ան  
աստիճան շփոթեցաւ աս երևոյթէն որ աս այցելուն ընդու-  
նելու համար ոչ ոսք ելաւ և ոչ ամուռ մը տուաւ: Սակայն  
աս երկնային դեսպանը իւր երկայն թևերը ծալելէ և ճակ-  
տին վրայ սփռու խորանայ մաղերը ետին նետելէ վերջը՝  
«Յովհաննա, ըսաւ տարաբաղդ Բարուհւոյն վրայ բարկացայտ  
ակնարկներ նետելով, — աս բոցավառ շահը յաւիտենական  
հուրը կ'նշանակէ որ մեղացի համար քեզ պիտի պատժէ,  
աս բաժակն ալ վաղածամ մահ մը և երկրիս վրայ ալ ամօթ  
ու նախատինք կ'դուռչակէ, ընտրէ ուրեմն, կամ մին կամ  
միւսը: »

Հրեշտակին աս առաջարկութենէ մեր դժբաղդ դիւցադ-  
նուհին մեծ մտատանջութեան մէջ ինկաւ: Երկար ատեն ան-  
որոշ մնաց Դաւիթին պէս երբ ստիպուած էր սով, պատե-  
րազմ, կամ ժանտամահը ընտրել: Մահուան երկիւղը և դը-  
ժոխքի սարսափը խեղճ Յովհաննայի խելքին մէջ իրարու կը  
զարնուէին ինչպէս Եսաւ և Յակոբ Ռեբեկայի արգանդին մէջ:  
Նախ ձեռքը դէպ 'ի շահը երկնցուց հանդերձեալ կեանքը  
ներկային զոհելով, բայց անդունդի ոգիները որոնք միշտ ա-  
ռանց երևնալու աս տեսակ տեսարանները կ'դիտէին անանկ  
վայրագ կերպով խնդացին և հրեշտակին դէմքն ալ անանկ  
տխուր ամպով մը ծածկուեցաւ, որ խղճահար՝ միւս ձեռքը  
երկնցուց և ամօթի բաժակը առնելով 'ի մի ումպ խմեց:

Հրեշտակին աս երևիլը առաքինի ժամանակագիրբեր կ'հաս-  
տատեն: Իսկ դուն, ընթերցող, եթէ եվհէմերեանց կարծիքը

կ'ընդունիս, որոնք Ս. Գրոց հրաշքները բնական պատճառնե-  
րով կ'մեկնեն, ինչպէս Պղատան գիցարանութիւնը, և կ'ըսեն  
թէ Մոգերու երեցած աստղը պարզ լապտեր մ'էր, Ս. Կու-  
սին երեցած հրեշտակը ծպտեալ տօրփածու մը, և թէ Ղա-  
զարոս յարութիւն առած ատեն խորունկ կ'ընանար\*, եթէ  
կ'ըսեմ ասոնց կարծեաց համամիտ ես, անանկ պիտի կար-  
ծես թէ Յովհաննա երազին մէջ տեսած է հրեշտակը կամ չա-  
րածճի սարկաւազ մը անոր գազանիքը իմանալով վախցնե-  
լու համար թևեր հագած է:

Իսկ եթէ Սթրաուսի կարծիքը կ'ընդունիս, որ փոխանակ  
անմեկնելի բաները մեկնելով ժամանակ կորսնցնելու աւելի  
յարմար և դիւրին սեպեց հրաշքները և Աւետարանները ա-  
ռակի տեղ գնել, դուն ալ մեր դիւցազնուհւոյն տեսած ե-  
րևոյթը իւր վեղարաւոր կենսագիրբերու մէկ գիւտը կրնաս  
համարիլ: Իսկ ես որ ամենևին որ և է կուսակցութեան մը  
կողմնակից չեմ, աւելի ազէկ կ'սեպեմ՝ հաւատալ ինչպէս որ  
կարդացի, վասն զի բոս Սողոմոնի «Մրտին մէջ ջարուծիւն  
ջունեցող մարդը ամեն խօսքի կ'հաւտայ:

Հետեւեալ օրը երբ Ֆլորիւս բարին սենեակը մտաւ զանի  
գորգին վրայ տարածուած սոսկալի տագնապի մէջ գտաւ: Ե  
զուր խեղճ երիտասարդը, իրը նոր Բիկմայիտն կ'ջանար շուր-  
թերովը ահ ու դողէն քար կտրուած սիրուհին տաքցնել: Ամ  
բողջ տասնըհինգ օր Յովհաննա անկողնին վրայ դամուած մը-  
նաց մահու և կենաց մէջ տեղ: Երբ իւր փիճակը քիչմը բար-  
ւոքեցաւ Հռոմ վերագառնալով իւր աղօթարանին մէջ փալ-

\* Հրէաները երբևէ ընդունած չեն թէ Աստուած զաւակ ծնի, և  
աս կարծիքը յունական դիցարանութենէ առնուած կ'սեպեն: Ուստի  
առասպել մը հնարած են որ կ'ըսէ թէ Կոյսին երեցած հրեշտակը  
Բանթէր անուամբ զինոր մ'էր, որ աս հնարքը գործածած էր անոր  
հետ իտէլո-համար (Տե՛մ Թալմուս): Աս կարծիքը ատեն մը Արև-  
նիսյի մէջ ալ ընդունուեցաւ ռասիօնալիսթներէ՝ որոնք աւետարա-  
նական հրաշքները կ'ընդունին բայց բնական պատճառներ կ'տան ա-  
նոնց: Բայց Սթրաուս իրաւացի բարկութեամբ կ'ընթէ անոնց աս կար-  
ծիքը, որ ոչ հաւատացեալները կ'դոհացնէ և ոչ ըննադատները:



ունեցաւ, որուն մուտքը ամեն պաշտօտականներուն՝ արեւուն ճառագայթներուն անգամ արդիւնց: Հոն՝ գիշեր ցորեկ տը-  
խուր ուրուականներէ պաշարուած՝ ինչպէս Սաւուղ Սամուէ-  
լին ստուերը տեսնելէ վերջը, Յովհաննա քիչ ատենուան մէջ  
ինքզինքին ստուերը եղաւ և պղտի շուկէ մը կ'ցատկէր և  
եթէ գիշեր ատեն բուի մը ձայնը լսէր իսկոյն կ'նուաղէր: Եր-  
կինքի բնակիչներու երևոյթը միշտ աղէտք պատճառած է ան  
մահկանացուաց որոնք երես առ երես շատուածներ, հրեշ-  
տակներ կամ սուրբեր տեսնելու պատիւը ունեցած են: Սէ-  
մէլէ՝ Արամազդի ճառագայթներէն մոխիր դարձաւ, սուրբն  
Նիքօն՝ սուրբ Կոյսին շքեղ գեղեցկութիւնը տեսնելուն հա-  
մար միականի մնաց, սուրբն Պօղոս՝ Յիսուսի վեհ շքեղութենէ  
կուրցաւ և Զաքարիա հրեշտակին երևնալէն վերջը համր մը-  
նաց: Ուստի հրեաները ան աստիճան կ'վախէին երկնային ե-  
րևոյթներէ որ ամեն իրիկուն պառկած ատեն Եհովային կ'ա-  
ղաչէին որ զիրենք պահպանէ ան առարկայէն որ խաւարին  
մէջ կ'շրջի:

Այն ինչ սրբազան Քահանայապետը միւս աշխարհի բնա-  
կիչներէն կ'վախէր, աւելի սոսկալի թշնամիներ իւր իշխանու-  
թեանը կ'սպառնային: Հոռմայեցիք շատ դժգոհ էին: Ան ա.  
տենուան իգալացիք արդի սահմանադրական ազգերուն չէին  
նմաներ, որոնք իրենց թագաւորը՝ քաղաքական չէնքին գա-  
գալթը դրուած ճարտարապետական զարդ մը կ'համարին, ինչ-  
պէս արձան մը տաճարի մը յարկին վրայ: Ստուգարանա-  
կան ուսմանց անվարժ՝ դեռ չէին կրցած հասկնալ թէ ինչ  
տարբերութիւն կայ իշխել եւ կառավարել բառերուն մէջ տեղ,  
և կ'ուզէին որ իրենց վեհապետը հրամայելու արուեստը բա-  
նեցնէ: Ուստի տեսնելով որ դրամարկղերը պարպուած են,  
եկեղեցիները լուռ, վանքերը դինեաունի փոյտուած, Սարա-  
կինոսներն ալ դուրսը կ'աւրջակեն և աւաղակներն ալ յաւի-  
տենական քաղաքին արուարձանները, բարեմիտ Հոռմայեցի-  
ները սկսան իւրովի հարցնել նախ՝ զարմացմամբ, վերջէն սըր-  
դողելով և վերջապէս բարկութեամբ թէ ինչ կ'ընէ Նորին  
Սրբութիւնն, և թէ ինչ պատճառաւ այնչափ թշնամիներու

առջև իր հոգեւոր և մարմնաւոր զէնքերը պատեանին մէջ կը  
թողու: Կրօնամոլները կ'գանգատէին որ ալ իրենց օրհնու-  
թիւններ չեն տար, մուրացիկները կ'մրմուային որ ալ ոլուն  
չեն բաշխեր, մուլեռանդներն լալով կ'պատմէին թէ վեց ամ-  
սէ 'ի վեր ոչ կախարդ այրած են և ոչ հերետիկոս, իսկ կա-  
ղերը, այսակիրները և անդամալոյճները կ'ուզէին հասկնալ  
թէ ինչո՞ւ բաբը հրաշքներ չէր գործեր ալ: Բայց ամենէն ա-  
ւելի Սրբազան Հօր դէմ բարկացողները առանց թեմի քա-  
հանաները, առանց վանքի արքաները, դիւանապետները և  
մարաջախտներն էին որոնց համար պաշտին մէջ պաշտօն  
չկար: Մանաւանդ բարական խոհանոցներուն մէջէն վռնտուած  
պնակալէզները, կաւատները և սափրիչները շատ կատղած  
էին, ուստի չէին կրնար հասկնալ թէ ինչ պատճառաւ պա-  
շտէն աքսորուած են քանի որ աւանդութիւնը կ'ներէր որ  
Եկեղեցւոյ Գլուխը ածիլուի և սիրուհիներ ունենայ: Բոլոր աս  
բարեսիրտ մարդերը հազար անգամ զուր տեղը իրենց անձ-  
նուիրութիւնը, ծառայութիւնը, ածելիները և սանուհիները  
նուիրելէ վերջը, յուսահատ՝ կատաղի ապստամբներ եղան:

Չկրնալով դգալ մը ձեռք ձգել որ կարենան բարական  
առատաձեռնութեան կաթսային մէջ խոթել, կ'աշխատէին զան  
տապալել ինչպէս կ'ընեն Հնգիկները ան ծառերը որոնց պը-  
տուղին չեն հասնիր: Բնութիւնը անգամ կարծես թէ այն  
տարին ապստամբութեան նշաններ կ'ցուցնէր:

Տիբեր գետը յորդելով՝ թումբերը, նաւակները և կա-  
մուրջները կ'քշէր կ'տանէր, ծաղիկները կ'ուշանային բացուել  
և կեռասներն ալ հասուննալ թէպէտ մայիս ամսոյն կէսը ան-  
ցած էր: Թռչուններն անգամ ծառերուն վրայ անշարժ և  
տխուր կ'կենային ինչպէս Աւագ շաբաթ՝ Երուսաղէմի բարե-  
պաշտ աքաղաղները: \* Նոր փորձանք մ'ես Հոռմայեցւոյ զայ-  
րոյթը գրգռեց:

\* Տօմէնիքօ Նասի իգալացի ճամբորդը կ'պատմէ թէ Պաղեստինի  
Յոյն քահանաները կ'պատմեն եղեր որ Աւագ շաբաթը վանքին մէջ  
գտնուած ընտանի թռչունները լուռ մուռլ կ'կենան, և շաաերն ալ  
կերակուր անգամ չեն ուտեր:

Մարտիններու անհամար խումբեր Հռոմի շրջակաները կ'զողէին։ Ասոնց գունդերը ան աստիճան խիտ և բազմաթիւ էին որ ամբողջ ութ օր արևուն ճառագայթները ծածկուեցան, և իրենց թևերուն հանած շառաչիւնը՝ պատերազմի գացող սայլերու գղրդիւնին կ'նմանէր։ Աս ֆլուսակար միջատները ութ ոտք ունէին, վեց թև, կանանց մազերուն պէտրկար մազեր և կարիճի պէս ալ թունաւոր պոչեր։ Չեմ գիտեր թէ աս նկարագրութիւնը պատմական է թէ ժամանակագիրերը Յայտնութեան գիրքէն քաղած են Աւետարանիչներուն օրինակին հետեւելով՝ որոնք Նոր Կտակարանը հինէն քաղած են։ Աս միայն կրնամ հաստատել որ աս մարտինները ան աստիճան շատակեր էին որ հունձքերը և ծառերը ուտելէ վերջը՝ սկսան տուները և եկեղեցիները թափել և Հազորդութեան հացը ու մոմերը անգամ լափեցին։ Երբ ալ բան չմնաց սկսան զիրար ուտել օդին մէջ անանկ կատաղի կռիւներ ընելով որ գիականները աշնան կարկուտէն աւելի կարծր կ'իյնային, ուստի ոչ ոք կ'համարձակէր առանց հովանոցի կամ անձրենոցի դուրս ելնել։ \* Աս վերջին աղէտքէն հաւատացեալներուն զայրոյթը՝ իրենց յորդած գետին պէս ալ չափ չունեցաւ։ Քաջ համոզուած ըլլալով որ Բարին մէկ նշանք կը բուէ աս թևաւոր հրէշները ցիրուցան ընել յուսահատ՝ իւրովի կ'հարցնէին թէ ինչո՞ւ Քրիստոսի փոխանորդը իւր հզօր ձեռքերը զգեստին գրպաններուն մէջ կ'ձգէր և հպատակներն ալ մարտիններուն կատաղութեան յանձնած էր։ Վերջ յիշուած դժգոհները մօտալուտ փոթորիկը գուշակելով՝ քիթերնուն ծակերը խոշոր կ'բանային ինչպէս արաբացի զամբիկները վտակիմը մօտեցած ատեն։ Երբ ժամը հասաւ Հռոմի սրիկաները ժողովելով գունդագունդ վայրագ և կատաղի ձայներով Վատիկանի պատուհաններուն տակ գացին։ Աս ամենի ամբոխը տեսնելուն պէս՝ պահապանները դռներուն ետին պահուեցան և պալատականներն ալ խաչելութիւնները

\* Հովանոցը այսօրուան ձեռով հին ատենէն 'ի վեր ծանօթ էր Զինացւոց :

և սուրբ պատկերները պագին ինչպէս Թէրէյի կոյսերը Ակրօփօլի պատկերները՝ երբ եօթ զօրավարները իրենց ասպարները կ'ճօճէին քաղաքին դռներուն առջև։ Միայն Պլորիւս՝ որ երկար ատենէ 'ի վեր իւր սիրուհիէն զրկուած գիշեր ցորեկ բաբին աղօթարանին առջև կ'կենար ինչպէս Ադամ կորուսեալ գրախտին առջև, Պլորիւս, կ'ըսենք, ուրախութենէ խայտաց արգիլեալ սեմը անցնելու աս պատրուակը գտնելուն։

Խեղճ Յովհաննա՝ վշտաբեկ նստած էր. Եգիպտական քիւսթիսի մը տէս աչերը ուռած փորին վրայ յառած էր, ուսկից չէ թէ երկնային լոյսը պիտի ելնէր այլ ամօթ ու նախառինքը։ Երկար ատեն Պլորիւս աղաչեց, պաղատեցաւ որ իւր հպատակներուն երևի փոթորիկը խողաղելու համար։ Երբ Քահանայապետին տժգոյն և վշտայոյզ երեսը պատուհանք երեցաւ՝ արևու նշոյլ մը մարտիններու ամպերու մէջ տեղէն սահելով ճակատը լուսաւորեց։ Ապստամբներէն շատերը ակնկոյր մինչև գետին խոնարհեցան ինչպէս Հռոմայեցի զինուորներուն արծիւները՝ երբ Քրիստոս Պիղատոսի առջև ներկայացաւ։ Բայց այս միջոցին շատ ամբարիշտ ձեռքեր քարերով և փածած լեմոններով զինուած վեր բարձրացան, և շատ փարիսեցիներ Յիսուսի փոխանորդին դէմ խել մը հայհոյութիւններ տեղային։ Քահանայապետը իւր պատկառելի ձեռքեր կնցուց լռութիւն ուզելով և իմացուց թէ հետեւալ օրը՝ Ռօկասիօնի\* առաջին օրը հանդիսաւոր թափօրով մարտինները պիտի նզովէ, բայց եթէ անմիջապէս ամբոխը չցրուի զանի ալ պիտի նզովէ։ Աս խոստումով և սպառնալիքով ապստամբները ցրուեցան, և բարեմիտ հռոմայեցիներուն բարկութիւնը անցաւ, օրոնց ամեն օրուան հանած խռովութիւնները Բրօքօնթիսի միջրիկներուն կ'նմանէին, որոնք Արիստօթի ըսածին նայելով՝ քանի մը կաթիլ իւղով կ'խաղաղէին։ Հետեւալ օրը առաւօտուն կանուխ պալատին մէջ ամեն մարդ պատրաստուած էր։ Քահանաները իրենց սկիւթել զգեստները կը

\* Համբարձման տօնէն առաջ պողաբերութեան համար հանդիսաւոր թափօր մ'է որ երբ օր կ'անէ։

հազնէին, սարկաւազները պատարագի մաղղմանը կ'շփէին, ձիւպաններն ալ շորիները, իսկ հրապարակին վրայ ամբօխը ուրախ զուարթ ձեռքերը կ'շփէր: Աս հանգէսը՝ ինչպէս միւս ամեն քրիստոնէական արարողութիւնները կուպաշտական ժառանգութիւն մ'էր և տարւոյն այն օրերը դաշտերուն արգասաւորութեան համար զոհեր կ'ընէին Դեմէարէի և Բագոսի սեղաններուն շուրջը խաղալով և պարելով և անոնցմէ կ'ընդգրէին որ հունձքերը, այգիները և շողգամները օրհնեն: Ասոնց սերունդներն ալ միևնոյն տրարողութիւններով սուրբ Մարթէնի և Նօդրը—Տամ—տէղ—էփիի պաշտպանութիւնը կ'հայցէին որոնք Բագոսի և Դեմէարէի յաջորդներն են: Սակայն նոյն օրուան հանգէսը կրկնակի շքեղ կերպիւ պիտի կատարուէր, վասն զի նոյն առթիւ մարախներն ալ պիտի բանադրէին: Հաւատոյ աս ոսկեղէն գարուն մէջ ոչ միայն ամբարիշտները կ'բանադրէին այլ նաև ամեն վաստարար անասունները, մուկ, ագռաւ, վարազ, որդ, թրթուր, մլուկները անգամ Եկեղեցւոյ շանթերով կ'պատժուէին ամեն անգամ որ կ'յանդգնէին բանջարեղէնները ուտել կամ քրիստոնէից քունը վրդովել: \* Մարախներու թիւին և գէշութեանը պատճառաւ բանադրածքի հանգէսը պէտք էր վեհ և ազգու կերպով կատարուիլ, ուստի Հռոմի և շրջականերու ջերմեռանդ քրիստոնէաները վաղած հոն եկած էին:

Այն ինչ պալատականները Վատիկանի գահլիճներու և նրբագաւթներու մէջ իրար կ'անցնէին, Յովհաննան՝ արտասուալից աչերով իւր վերջին բորեւը կ'տար սիրելոյն: Մեր խեղճ դիւցազնուհին գէշ գիշեր մ'անցուցած էր՝ մերթ հոգւոյն անմահութեան վրայ մտածելով, մերթ իր զգեստները փորձելով՝ փորին ահագին ուռեցքք ծածկելու յարմար զգեստ մը գտնելու համար: Հրեշտակին սոսկալի խօսքերը խեղճ կըն-

\* Միջին դարուն՝ բոլոր վաստակար կենդանիները սատանայէն զրկուած պիղծ ոգիներ կ'սեպուէին և անոնց դէմ բանադրանք կ'արձակէին: Թէոդոս սուրբ արքան փոխանակ մարախները բանադրելու իւր ճարտարախօսութեամբը զանոնք համոզեց որ ուղղափառներու դաշտերուն չդպչին:

կան ականջին կ'հնչէին դեռ, որ աս երևոյթէն իւր բոլոր փիլիսոփայութիւնը կորուսած էր: Ահաբեկ կ'յիշէր ան կշիռները որոնց մէջ Միքայէլ հրեշտակապետը հոգիները կ'կշռէ: Սատանային ապտակը, կաթսաները, ածուխները, խարազանները և Միջին դարու Դժոխքին բոլոր գործիքները աչացը առջև կ'կանգնէին: Սկսած էր փիլիսոփայական զանազան դրութեանց վրայ, հոգիներու լուսնի մէջ փոխադրութեան և վերջապէս գետնաշարժերուն, մարախներուն, բորոտութեան և ժանտամահի վրայ մտածել և միշտ աս հետևութիւնը կ'տար թէ Աստուած ամենաբարի և ամենահզօր բլլալով՝ շատ գէշ բրած էր ներկայ կեանքը վիշտերով և ցաւերով լեցնելով և ապառնի կեանքն ալ՝ սատանաներով և բոցերով: Ահա ասոնք էին Յովհաննայի այն գիշերուան մտածմունքները առանց յիշելու նաև խել մը աս տեսակ խորհրդածութիւններ զորս ստիպուած եմ լուել պատմութիւնս վերջայնելու համար: Եթէ պուէտ բլլայի՝ պիտի ըսէի թէ Բեկասո ախոռին հոտը առած է և զիս կամայ ակամայ գէպ 'ի հոն կ'քաչէ: Բայց իմ Մուսայս հետևակ բլլալուն աւելի իրաւունք ունիմ բսելու թէ ալ յոգնած եմ և ախոռիս պէտք ունիմ այսինքն պատմութիւնս լմնցնելու:

Բարեսիրտ Յլորիւս իւր ամեն ճիգը կ'թափէր զանի համոզելու համար որ թափօրը ուրիշ օրուան ձգէ: Բայց Յովհաննան քանի որ խօսք տուած էր կ'ուզէր բաժակին մրուրը ամբողջ քամել: Մանաւանդ որ ետ քաշուելու միջոց չկար: Պալատին պատուհաններուն տակ խոնած ամբօխը անհամբեր ոտքերը գետին կ'զարնէր, գարգմանակաւոր շորիններն ալ անանկ կ'ընէին, մոմբը վառուած էին, զանգակները կ'հնչէին, խունկերը կ'ծխէին: Սրբազան Հայրը խոյրը գլուխը գրաւ, հովուական գաւազանք բռնեց և իւր սիրելոյն գիրկէն բաժնուեցաւ սիրտը՝ կրաքոսի մեռած օրը գլխուն վերևը թռչտող ագռաւներէն աւելի սև նախազգացմունքներով համակուած: Այն ինչ քրիստոնէութեան պարագլուխը՝ Վատիկանի սանդուղին վրայ երևցաւ քսան հազարէ աւելի Հռոմայեցիք թագորի ձևով շարուած էին: Երբ Բարը շորին հեծաւ մարդ-

կային անհուն և երկայն օձք սկսաւ յուշիկ՝ իւր վեղարաւոր օղակները տարածել զէպ 'ի Սէն—ժան—տը—լաթրան եկեղեցին։ Առջևէն՝ քաղաքին սուրբ պաշտպաններու պատկերները և խաչերը կերթային, ետևէն ծիրանազգեստ եպիսկոպոսները կ'ըսէին, անոնցմէ ետքը արքաները և քահանաները՝ բոկոտն, և մոխիրով ծածկուած դրուխնին գետին խոնարհած էին։ Միանձնուհիներ և սարկաւազուհիներ սուրբ Մարտէլէի դրօշակին տակ կ'ըսէին, կարգուած կիները սբբուհի Էֆէմիայի դրօշակին տակ, Աստուծոյ վերջը կ'գային նորատի կոյսերը կիսամերկ և հերարձակ և չափազանց վշտացած կ'երևէին վասն զի մարտնները ոչ վարդ ձգած էին և ոչ նարկիս, որոնցմով ասանկ հանդէսներու մէջ սովորած էին ճակատնին և կուրծքերնին զարդարել։ Ստորին կղերը, զինւորները և խառնիճազանն թաղմութիւնը վերջէն կ'ըսէր և ասոնց ետևէն կ'գային խուսիք մը բնակչիքի վաճառականներ և շրջուն կապերաներ որոնք գարեջուրով, մեղրաջուրով և սերկիկի խաշուած շուրով հաւատացեալներուն շերմեռանդութիւնը կ'տաքցնէին։ Բոլոր առաքոյսք Յիսուսը և սուրբ Պետրոսը կ'փառաբանէր։ Եւ որովհետև բաղմութեան մէջ նոր մկրտուած Սարակիստներ, Գերմանացի բենեդիկտեաններ, Յոյն քահանաներ, Անկիլացի աստուածարաններ և ուրիշ շատ օտարականներ կային որոնք լազիներէն սորվելու ժամանակ ունեցած չէին դեռ, իւրաքանչիւր ոք իւր լեզուով կ'ընէր փառանութիւնը, ասով անճոռնի և այլանդակ ձայն մը կ'ելլէր զրեթէ Շաթօպրիան լսէր անտարակոյս պիտի բռէր թէ Ամեն ազգերու ներդաշնակ ձայները միացած են զԱստուած փառաբանելու համար։ Թափօրը Տրայիանոսի հրապարակէն անցած՝ և Փլավիէնի ամիսիթէատրօնը աջ կողմը ձգելով Սէն—ժան—տը Լաթրանի հրապարակը կանկ առած էր շունչ առնելու համար։ Այն օրուան տաքը և փոշին ան աստիճան օոսկալի էր որ ժամանակագիրներուն ըսածին նայելով Սատանան անգամ օրհնեալ շուրով պիտի լուացուէր։ Մարտիներու դիակները՝ որոնց կռիւր դեռ կ'չարունակուէր օգին մէջ՝ քրիստոնէից և իրենց ձիերու ստիցը տակ կ'կոխկրտուէին։ Ասով խեղճ

Յովհաննայի անձկութիւնը և սրտին տագնապը կ'աւելնար և հազիւ կրնար շորիին վրայ կենալ։ Ասկէ զատ՝ քանի մը վայրկենէ 'ի վեր աղիքները անանկ տակնուվրայ կ'ըլլային որ հրապարակին մէջ տեղը պատրաստուած փառաւոր աթոռին վրայ ելլելու առեն սահեցաւ երկու անգամ, ուսկից մարտիներուն դէմ բանադրանքը պիտի արձկէր։

Նորին Սրբութիւնն մշտիկը օրհնեալ շուրի մէջ խօթելով երեք անգամ սրսկեց Արևելք, Արևմուտք, Հարաւ, Հիւսիս, ու փղոսկրեայ խաչելութիւն մ'առնելով վեր բարձրացուց մարտիներէ ապականեալ մթնոլորտը օրհնելու համար։ Բայց յանկարծ սուրբ խաչելութիւնը ձեռքէն իյնալով կտոր կտոր եղաւ, ինքն ալ գետին թաւալեցաւ տօգոյն և կիսամեռ։ Աս անակնկալ տեսարանէն քրիստոնեաները ահաբեկ զիրար կր սեղմէին գայլէ վախցած ոչխարներու պէս։ Ն. Սրբութեան քղանցակալները Եկեղեցւոյ վեհապետին օգնութեան կ'վազէն, որ կէս մէջքէն կտրուած օձի պէս փոշուոյն մէջ կ'թաւալէր։ Ոմանք կ'ըսէին թէ Ն. Սրբութիւնն մանրագորի վրայ կոխած է, ուրիշները կ'պնդէին թէ նուիրական ներբանը կարծ մը խայթած է, ոմանք ալ կ'ըսէին թէ թունաւոր սունկ կերած է։ Բայց շատերը կ'հաստատէին թէ Բարը այսակիր է։ Բօթթոյի եպիսկոպոսը՝ որ ան ատենուան ամենէ մեծ այսահալածն էր, վրան օրհնեալ շուր թափեց, չար ոգին ստիպելով որ ուրիշ բնակարան մը գտնէ։ Բոլոր հաւատացեալները աչերնին Քահանայապետին տօգոյն երեսին վրայ յառած անձկանօք կ'սպասէին որ կամ բերնէն կամ ականջէն չար ոգոյն դուրս ելնելը տեսնեն։ Բայց սատանայի տեղ՝ ժամանակէն յառաջ ծնած և կիսամեռ մանկիկ մը՝ քրիստոնէութեան գլխաւորին զգեստին տակէն սահեցաւ ինկաւ։

Ն. Սրբութիւնը բռնող քահանաները ահարեկ ետ քաշուեցան, իսկ հետաքրքիրներու թիւը երթալով կ'աւելնար ահագին գոռիւններ և երեսնին ալ խաչ հանելով։ Կիները էրիկնուն ուսին վրայ կ'եղնէին աւելի աղէկ տեսնելու համար, ձիււորները ձիուն վրայ կ'կանգնէին, սարկաւազները խաչերը և դրօշակները լախտի տեղ կ'գործածէին ճամբայ բանալու հա-

մար: Սակայն քանի մը եկեղեցականներ՝ որոնք հոգևով մարմնով Ս. Աթոռին անձնուէր էին, կ'աշխատէին ամբոխին զայրոյթը ջերմեռանդութեան փոխել բարձրաձայն Հրա՛շք պուռարով՝ և հաւատացեալներն ալ ազօթքի հրաւիրելով: Բայց ասանկ հրաշք մը շատ նոր և տարօրինակ բան մ'էր քրիստոնէական սքանչելագործութեան մէջ: Իրաւ է որ քրիստոնէութիւնը խել մը հրաշքներ փոխ առած էր կռապաշտութենէ, բայց ամենեւին յարմար ռեպա՛մ չէր որ և իցէ սուրբ մը ներկայացնել որ յղի մնայ և զաւակ ծնի Ոլիմպոսի թագաւորին պէս: Զերմեռանդ քահանաներուն ձայնը կատաղի ամբոխին գոռում գոչումներով խղզուեցաւ, որ կ'պուար, կ'թքներ և կ'ուզէր թէ Բաբուհին և թէ Բաբիկը Տիրեր գետը նետել:

Փլօրիւս՝ բազմութիւնը ճեղքելով խեղճ Յովհաննան բազկացք մէջ կ'բռնէր որուն երեսի գոյնը մեռելի գոյն մ'առած էր: Աչերը դէպ 'ի երկինք վերցուց իբր թէ ասով կ'ուզէր իմացնել հոն բնակողին թէ միւրը ամբողջ քամած է և հոգին աւանդեց Եսայիի աս խօսքերը մրմնջելով. Այտերս ապտակներու թողուցի եւ երեսս ալ նախատական թուքերէ ջր դարձուցի:

Հագիւ թէ այս մեղաւոր հոգին իւր վաղանցուկ բնակարանէն մեկնեցաւ սատանաներու գունդ մը անդունդէն ելնելով վազեց այս որսը բռնել որուն վրայ երկար առնէ 'ի վեր հաստատ իրաւունք մ'ունենալ կ'յուսար: Բայց նոյն պահուն երկնային հրեշտակներու փաղանգ մը իջաւ և կ'պուար թէ Յովհաննայի անագան բայց կամաւոր ապաշխարութիւնը Դժոխքին ամեն իրաւունքները ջրած էր:

Սատանաները դիւրաւ չէին համոզուեր և հրեշտակներու զօրաւոր փաստերուն իրենց եղջիւրները կ'ցցունէին, ասոնք ալ ստիպուեցան իրենց սուրբը քաշել: — Կուիւր երթալով կը մեծնար, իրենց զէնքերուն շառաչիւնը փոթորիկէ մղուած ամպերուն հանած աղմուկին կ'նմանէր, և արեան յորդ անձրև մը կ'աեղար քրիստոնէից վրայ երբ յանկարծ Յովհաննայի երեցած հրեշտակը աս կուռոյներուն գունդերը ճեղքելով՝ բբուսեց աս վշտաբեկ հոգին — ո՛ւսկից — չենք գիտեր — և ամ

պի մը վրայ ցատկելով զանի տարաւ . . . Գաւարանը հարկաւ:


Աս հրաշքները Հրէաստանի հրաշքներու պէս չորս ձրկնորսներէ պատմուած չեն, այլ չորս հարիւրէ աւելի՝ վեղարաւոր պատկառելի ժամանակագիրեր հաստատած են: Ասանկ արժանահաւատ վկայութեանց առջև մենք ալ կ'խոնարհինք և թէրթիւլիէնի պէս կ'գոչենք, Credo, quia absurdum. Կ'հաւատամ, թէպէտ անհաւատալի է:

Խեղճ Յովհաննայի մարմինը զաւկին հետ թաղեցին ճիշտ հոն՝ ուր հոգին աւանդած էր: Գերեզմանին վրայ մարմարիտնեայ արձան մը կանգնեցին որ կին մը կ'ներկայացնէ ծննդաբերութեան միջոցին: Փլօրիւս ճգնաւոր եղաւ, և ջերմեռանդ ուխտաւորները այսօր Լաթրանի եկեղեցին գացած առեն սրբապիղծ Բաբուհոյն հետքերը կոխելով իրենց սանգալները չը պղծելու համար ուրիշ ճամբէ կ'երթան:



ԱՊՓՊԱ

Երես	տող	սխալ	ուղիղ
9	8	կար	կայ
16	27	օգնութեան	յորնութեան
39	6	cardinaux	cardinaux
40	17	առանց կրնայ	կրնայ առանց
67	6	ճի	ճրի
—	20	գինի	գինիի
68	12	ամբութիւնը	մոլութիւնը
69	14	քնդհատ	քնդոստ
71	11	Ռալից	Ռալիկ
73	32	Ահա	Աս
89	—	փառաւորութեամբ	միաւորութեամբ
91	26	աւազակներէն	աւազակները
93	23	կ'պատէին	կ'պարէին
—	29	լերնային	լերնայի
96	14	կ'հալածէր վանքէն	կ'հալածէր՝ վանքին
—	23	ուրուականներովը	արձաններովը
112	10	կշտամբուած	կշտամբանքը
117	18	սուրերուն	նաւերուն
120	6	որ	երբ
152	19	ոչ թէ	(պիտի ջկարդացուի)
223	23	Մեծ մարդիկ	Բարձր պաշտօնները



3043

2013



